Христофоръ Тумасовъ

[illegible] N9/2

Գրքույկ. 1) Զինատուն [illegible] 1900 թ.

2) Գ. Հովհաննիսյան, աշուղներ [illegible] 1892 թ.

(որոնք [illegible])

ԶԻՒԱՆՈՒ

ՔՆԱՐԸ

ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՒԱՔԱԾՈՒ

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԵՒ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՈՏԱՆԱՒՈՐ ԵՒ ԱՐՁԱԿ

Ա. Բաժանմունք— Ոտանաւորներ

ՀԱՏՈՐ I.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԸ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի. || Тип. К. Мартиросіанца
Орбеліановская ул., д. № 1|2.
1900

Дозволено цензурою, С.-Петербургъ, 7 мая 1899 года.

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԸ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Ջիւանու Քնարի» հրատարակութեան գործն ու նպատակը

Ներկայ հրատարակութեան նախաձեռնողների գլխաւոր նպատակն է եղել տալ հայ գրականութեան, հայ երգասէր-գրասէր ընթերցողին աշըղ-Ջիւանու աշխատութիւնների լիակատար հաւաքածուն, այն և հեղինակի կենդանութեան օրով, երգերի սրբագրութիւնը նրա աչքից անցնելով։ Բացի այդ, գործը ձեռնարկողների ցանկութիւնն է եղել, որ «Ջիւանու Քնարի» հրատարակութիւնը կարողանայ հանդիսանալ մի խրախոյս, մի քաջալերական ձեռութեան շեմքում կանգնած մեր ժողովրդական երգչին ու բանաստեղծին՝ ոյժ տալու նրան այսուհետև էլ շարունակելու այն գեղեցիկ գործը, որ մի քանի տասնեակ տարի է սիրել ու պաշտել է նա — ստեղծել, տարածել է ու պահպանել է հայ ազգային-ժողովրդական երգ ու եղանակները։

Ջիւանին նոր գրող չը լինելով, իւր ամբողջութեամբ ծանօթ է արդէն նրանց, որոնք սիրում ու հասկանում են մեր ինքնուրոյն երգ ու եղանակի արժէքը և որոնք են, որ անցեալում սպասել են աշուղի մտաւոր գործերի տասնեակ հազարաւոր օրինակները։ Այդ մեզ քաջ ծանօթ փաստը խրախոյս էր տալիս մեզ վստահելու, որ ներկայ հրատարակութիւնս էլ այն յաջողութիւնը պիտի գտնի, ինչ որ Ջիւանու նախընթաց գործերը։ Մնում էր հոգ տանել գրքի արտաքին մասին, ընդունելով որ մի որևէ հրատարակութիւն, աւելի ևս երբ գեղարուեստական գրականութեան մասին է խօսքը, չենք ասում փառահեղ, գոնէ պարզ ու գեղեցիկ տեսք պիտի ունենայ։

«Ջիւանու-Քնարը» աւելի ժողովրդական հրատարակութիւն լինելով քան զուտ գիտական, պարզ բան է որ գնի վերաբերմամբ

պէտք է ուշադրութիւն դարձնուէր նրա մատչելիութեան վրայ։ Դրա համար աւելի յարմար գտուեց Պետերբուրգի ցենզուրայից անցկացնելուց յետոյ տպագրել տալ Թիֆլիսում և ոչ մայրաքաղաքում որ կրկնակի թանգ էին վերցնում Կովկասից։ Լուրջ նշանակութիւն տուինք նաև այն բանին, որ Թիֆլիսում հեղինակն ինքն վրահասու կը լինի երգերի իրենց իսկական հոգով դուրս գալուն իր ուղղագրութեամբ։ Հազարների կարօտութիւն ունեցող մի գիրք ինչ միջոցներով պիտի տպագրուէր, երբ՝ նրա հեղինակն, ինչպէս հայ գրող, անկարող էր հոգալ։ Թիֆլիսում գործը սիրողների և երգչին համակրողների մի բարեկամ շրջանում հիմք դրուեց ստորագրութեան ու հայ պարբերականների հետ ցրուած առանձին թերթերով յայտարարուեց բաժանորդագրութեան բացումը։

Նիւթերի ընտրութիւնն ու դասաւորութիւնը

Լիակատար հաւաքածու կազմել այն գործերից, որոնց հեղինակն ապրում է, եթէ չասենք անհնար, գոնէ խիստ դժուար է, որովհետև մինչ մամուլի տակ է հրատարակուելիք գիրքը, այն կողմ, տպարանից դուրս, նոր նիւթեր են յօրինւում նոյն հեղինակից։ Մտադրութիւն կայ Ջիւանու այդպիսի գործերն էլ կարելոյն չափ տեղաւորացնել վերջին հատորների մէջ։

Ձեռքում ունենալով աշըղ Ջիւանու տպուած և անտիպ բոլոր աշխատութիւնները, դաֆտարները, թէ ոտանաւոր թէ արձակ գրուածների, ինքնուրոյն թէ փոխադրական, մեր ցանկութիւնն էր և ոչ մի տող բաց թողնել. բայց յետոյ արդէն երեւաց, որ հրատարակութիւնից դուրս են մնում՝ ա) այն գրուածները, որոնք հեղինակի պատանեկական շրջանի արդիւնք են, բ) այն երգերը, որոնց հեղինակը ոչ մի անգամ գրի չանցնելով տարածել է միայն բերնից բերան ու ժամանակ անցնելուց յետոյ թափառական աշըղների բերանում աղաւաղուել, կրճատուել ու կերպարանափոխուել են ու հեղինակի յիշողութիւնից էլ դուրս եկել, գ) երգեր, որոնք Ջիւանու գաւառներում ման եկած միջոցներին գրուել են հատ ու կտոր թղթերի վրայ ու մնացել են սրա նրա մօտ կամ կորցուել, երևի մի օր լոյս աշ-

խառն գալու մտքով, դ) այն երգերը, որոնք մեծ մասամբ նիւթ էին բ. հատորի և դուրս մնացին խմբագրութիւնից անկախ պատճառներով։

Ներկայ դէպքում չենք հաւանում նիւթերի այն դասաւորութեանց, ինչ որ ընդունուած է առհասարակ, այսինքն ժամանակագրական կարգով. գեղեցիկ չէ նաև դասաւորել երգերը այբբենական կարգով, ինչպէս որ յարգի էր ճանաչուած ժամանակ առաջ երգարանների կամ տաղարանների համար։ Յարմարագոյնը մնում էր նիւթերը բաժանել ըստ բովանդակութեան՝ ամփոփելով նիւթին համապատասխան ընդհանուր խորագրերի տակ, որը և հեշտացնում է ընթերցողի մի որևէ երգ շուտով գտնելու գործը։ Այդպիսով ամբողջ հրատարակութիւնը բաժանւում է չորս հատորի։

ա. բաժանմունք – ոտանաւորներ

I. Ժամանակակից կեանքը
II. Ազգի դրութիւնը
III. Աշխարհի բանը
IV. Աշըղի խրատը
V. Ազնիւ սէրը
VI. Ջիւանին մենակ
VII. Սրտաբուղխ խնդիր և նուէր
VIII. Երգեփունջ
IX. Աշըղի դափտարը

բ. բաժանմունք—արձակ

X. Հայ ժողովրդի՝ աշըղի բերնից լսած ու սիրած հեքիաթները։

Յաւելուածներ. Բացի բուն նիւթը որպէս յաւելուած տպագրում ենք.

ա. «Հայի հոգով թիւրքի խօսքով», թիւրքերէն երգեր։

բ. Աշըղական արուեստը, համառօտ տեսութիւն աշըղական մրցումների, երգ ու եղանակների և գործիքների վրայ։

գ. Գուսանական բառերի համառօտ բառգիրք։

Պատկերներ. Պատրաստում ենք «յաւելուածի» հետ տալու հետեւեալ լուսանկար պատկերները.

1) Ջիւանին և իր խումբը
2) Ջիւանին և նրա անբաժան ընկեր Ջամալին 30 տարի առաջ
3) Ջիւանին և իւր ջութակը
4) Ջիւանին փողոցով անցնելիս

(X-դ հատորը լինելու է պատկերազարդ.)

Շնորհակալութիւն. Վերջում բարոյական պարտք կայ մեզ վրայ խորին շնորհակալութիւն յայտնելու մեծարելի պարոններ Գ. Եւանգուլեանին, Գրիգոր Ջանշեանին, դօք. Աւետիք Բաբայեանին, դօք. Բագրատ Նաւասարդեանին, Ստեփան Տէր-Խորայէլեանցին, Մկրտիչ Բարխուդարեանցին, Կոստանդին Մարտիրոսեանցին և այն անձանց, որոնք որպէս գործի նախաձեռնողներ պատճառ դարձան «Ջիւանու Քնարի» հրատարակութեան և այսպէս թէ այնպէս մասնակցեցին գործի յաջողութեանը։

ՑԱՆԿ

ՄԵՐ ՆԵՐԿԱՆ

Ամէն տեղ բռնութիւն, ամէն տեղ ճնշում 1
Ի՞նչ վատ ժամանակի հասանք, ո՛վ Աստուած 2
Համ լաւ է, համ շատ վատ է իմ կարծիքով այժմեան դարը 6
Այս ինչ դարի հասանք ինչ օրեր գտանք 7
Ո՛հ, ո՛հ արարիչ աշխարհը խաբեբայ է դարձել 8
Ո՞վ էր տեսել այսպէս տարի, այսպէս բան 9
Մեր աշխարհի դրութիւնը ինչու այսպէս վատացաւ . . 10
Անմիտ ճնճղուկը բազէի ճանկից 11
Ցեցերը, թրթուրները չլինէին պարտէզը 15
Անդադար վատ վատ լուրեր հնարում է զրպարտիչը . . 16
Հերիք է անիրաւ բախտ, հերիք է ինձ չարչարես 17
Կաւկազ սարի գլխին նստած մի ագռաւ 18
Թէ ուզում ես քեզ գիտնական անուանեն 20
Անմտածել վեր վարէ խօսքերով ճարտար եղիր 21
Տգէտ բամբասողները անծանօթ լուր կսպասեն 22
Ամբոխի սուտ փայփայանքը 23
Անկիրթ մարդը իւր բանը չգիտնալով 24
Ամենասաստիկ ցաւերը ինձ վրայ խնդիր տուին 28
Ինչու՞ց է բան հասկացող մարդոցը միշտ բամբասում են 29
Անգործ, պարապ ման եկողը 30
Արջն անտառից խռով է 34
Աքլոր եղբայր ձանձրացուցիր դու մեզի 35
Իմ սիրուն, հագած հայաւդ 37
Ի՞նչ է դու ամեն ժամ տան համար կերվիս 38
Ծոյլ անպիտան, անգործ մարդը 39

Չարախնդաց չար մարդիկը թող վերջանան, ցաւ չէ ինձ 43
Աչքերիդ լոյս հայ ժողովուրդ 44
Սրտիդ չարութիւնը երեսիդ վրայ 45
Պարոն հարուստ ինչո՞ւ այդքան հպարտ ես 46
Ո՛վ անիրաւ անխղճմտանք մտքիս քնարը քանդեցիր . . 47
Լայն օրերս ուրախացող կեղծ ընկեր 49
Տգեղ ագռաւ, նոր փետուրներ գտնելով 50
Ո՞ւմ ես խաբում կեղծ քարոզիչ 51
Խնդացէք ինչքան կուզէք սև հոգի մարդիկ 52
Դուն այս աշխարհիցը ինչ պէտք է տանիս 53
Կախարդներուն էր ես հաւատում ով մարդ 54
Ո՛վ արտաքին քարոզիչներ Փրկիչն Աստուած է քաջ գիտենք 55
Չընեղանաս գեղեցիկ արարքդ ինձի դուր չեկաւ 56
Երեք արմատացած ցաւ ունիս ընկեր 57
Ո՛վ պարտիզատէր ինչո՞ւ գոհունակ չունիս վարդդ . . . 58
Ով անզգայ անխիղճ կեղտոտ իմաստակ 59
Խղճալի կոշտ քեզի լաց քարի մասին իզուր մի՛ լա՛ . . . 60
Ո՛վ գոռոզ մարդ բաւ չէ՞ այդքան յիմարանաս 61
Անմտածել վեր վարող սուտ խելագար բարեկամ . . 62
Գարունդ անցել է աշնան պտուղ ես 63
Սև հօրից, սև մօրից ծնուել ես հաստատ 64
Կարմրագոյն հին տարի գնա մտիր գետինը 65
Կակաչի պէս գոյնդ կարմիր 67
Շատ մի մեծամտիլ ուռիլ ծեփած պատ 68
Ով դու ամբարտաւան դու անգութ տիկին 69
Վարդին սոխակից հեռացնող, ո՛վ անիրաւ փող 70
Համընթաց կեանքիս յարմար ո՛վ սիրելի ինձ մխիթար չես 71
Կեղծ ու նենգամիտ մարդիկ շատերի տուն քանդող են 72

ՄԵՐ ՎԷՐՔԵՐԸ

Հայը հային կը վնասէ 73
Քո աշխատանքովդ հաց պիտի ճարես 74

Անզգամ ու անխիղճ մարդու գրպանից 75
Գետնառիւծին նմանութիւն շատ ունի 77
Չկամ, մաղձոտ սրտից ծնած օձաձև 81
Գիշերի պէս կանցկացնէ, իւր տիւը 82
Մէկ կիրակի առաւօտ խաչփումը նորան դադար . . . 83
Մարդու և կնոջ մէջ որոմ ցանողը 85
Օձի ձագը ընտանենալ չի գիտէ 86
Միամիտ ու անփորձ մարդու գրպանից 87
Մի առաւօտ ես տանիցը շուտ դուրս ելայ միայնակ . . 88
Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ 90
Չարասիրտ նախանձոտ մարդը ընկերին 91
Գիտունը տգէտի բանից չի ցաւեր 92
Եօթը տարի պաս պահեցի քո մասին 93
Փթած ու բորբոսնած մքլած ապրանքդ 64
Գոմէշ մորթէ, արիւն դուրս գայ 96
Յոյս դրի կարողութեան 97
Մութ ու խաւար աշխարհից լոյս աշխարհ գնալ կուզեմ . 99
Սխալուեցայ տեղիք տուի անմտին 101
Ով որ իւր ազգն ուրանայ 103
Աշխարհումս ում որ բարեկամ գիտցայ 106
Շատ քնեցար սիրելի լոյսը կտուրից անցկացաւ 107
Ով որ ինձ չի սիրիլ խնդրում եմ ասէք 108
Բարոյական ճանապարհից շեղուողին 110
Այս տարի ինձ դուր չեկար ով բոթաբեր մարտ ամիս . . 114
Վերջդ ինձ դուր չեկաւ 116

ՄԵՐ ՆԵՐԿԱՆ

ՉԸԿԱՅ, ՉԷ...

Ամեն տեղ բռնութիւն, ամեն տեղ ճնշում,
Երբէք խղճի ազատութիւն չըկայ, չէ,
Ամեն մարդ ընկճըուած, ամեն մարդ տրտում,
Ցաւոյ բժիշկ, փարատութիւն չըկայ, չէ։

Բռնակալը կը հարուածէ քամակից,
Ստիպուած շեղւում է մարդ նպատակից,
Անվնաս պահելու ջրից, կրակից,
Ապահովուած հաստատութիւն չըկայ, չէ։

Ով հզօր է, նա է հարուստ գործավար,
Բայց խեղճ աղքատն է միշտ հողին հաւասար,
Մարդիկ կը խեղճանան զրկելով իրար,
Բնականից աղքատութիւն չըկայ, չէ։

Հզօրները խեղճերուն խորտակել են,
Ով ազատ է խօսել, միշտ մտրակել են,
Ագահները ամեն մի դուռ փակել են,
Ամենևին առատութիւն չըկայ, չէ։

1880.

ՄԵՐ ԴԱՐԸ

Ի՞նչ վատ ժամանակի հասանք ո՛վ Աստուած,
Շատ վատ է երևում աշխարհի կեանքը.
Բազմացան անկամորթ ագահները ցած,
Խաբում, կլանում են այլոց ապրանքը։

Ժամանակիս քի՛չ կայ լաւ երիտասարդ,
Ըստ մեծի մասին են խաբեբայ կախարդ.
Որտեղ որ տեսնում ես մի շրջմոլիկ մարդ,
Ծուլթիւն է նրա բոլոր բաղձանքը։

Կեղծ քարոզիչները ելած են հանդէս,
Խաբում են շատ մարդու երեխայի պէս,
Ներքուստ գայլի նման հօտն անում են կէս,
Արտաքուստ՝ հովուի հետ տե՛ս քուքուանքը։

Կարծեմ չի՛լնիր այսպէս մի շփոթուած դար,
Երթալով կըշատնայ անխիղճն անհամար,
Մարդկանց թոյն են տալիս շատ արուեստաբար,
Կուտեն, չե՛ն հասկանայ գալած փորձանքը։

Մի խումբ մարդիկ կան որ, ողջը բացբերան,
Ո՛չ Աստուած կըյիշեն, և ոչ դատաստան,
Ձեռքերն ընկած մարդը ճիշտ սագի նման,
Կըպլոկեն խեղճի ողջ գարդարանքը։

Կխոստում մարդու խօսած առակը,
Կըմարէ միամիտ մարդկանց կրակը.
Դեղ տալու փոխանակ՝ կըհանէ ակը,
Կ՝աւելցնէ առողջ մարդու տանջանքը։

Այս կերպ բժիշկները շատ են յառաջել,
Տգէտ, բան չըգիտեն և չեն ամաչել,
Հազարից մէկ վարպետին չեն ճանաչել,
Ջատ պակաս է իմաստունի յարգանքը։

Մի տեսակ Հարուստ կայ նման տզրուկի,
Կըծծէ արիւնը աղքատ ծերուկի,
Հաշիւը չի՛ լինի ոսկեաճամուկի,
Կըկին աղքատներին կպճելն է ջանքը։

Արարչից է այս պատիժը մեզ Համար,
Օրը մի նոր վատ բան կըստանայ աշխարՀ,
Դի ասելով կըվազվըրզեն անդադար,
Բազմացել է գայլերի արշաւանքը։

Սրբկայի համար խրատն է տնազ,
Նա մարդ ատրելու կըչարբի վռազ,
Աչքն է ապօրինի գործի հանապազ,
Անխիղճ մարդը բան չի սեպել զըկանքը։

Ո՞ւր է մարդկութեան հետ զգաստութիւնը,
Ո՞ւր է բարոյական պատրաստութիւնը,
Այժմ փող չի՛ անիլ նուաստութիւնը,
Ամեն կողմով շատ է խեր տառապանքը։

Անամօթն աշխարհին շատ վնաս կուտայ,
Ճշմարտութիւն, երկիւղ նորա մէջ չըկայ,
Որտեղ որ կըտեսնի մի համեստ տղայ,
Կսկսէ ետևից նա հաչհոյանքը։

Քննէ, գիտուն, այժմեան առաքեալն խստակ,
Ազգ յառաջ տանելու չունի նպատակ,
Ցերեկը մարգարէ, գիշերն աւազակ,
Լաւ հասկացէ՛ր սըրբի դու խղճմտանքը։

Վատ ու չար գործերից հոգիքս է տխուր,
Զոքել են սրտերիս ցաւերն ընդհանուր,
Հիմա աղբիւրներից չեն վազեր պարզ ջուր,
Պղտոր է գետերու վճիտ հոսանքը։

Անգործ, պարապ մարդիկ շատ, չեն ուտեր հող,
Հարկաւ դրանք վերջը պիտի լինին գող,
Հարիւր մարդու իննսունը արբեցող,
Քննող չըկայ, ո՛րտից է աշխատանքը։

Թէ որոնես հինգ անկիւնը աշխարհին,
Դեռ ուշ կըշխտկըրուի սիւնը աշխարհին,
Սիրտ, մի՛ կարդա պատմութիւնը աշխարհին,
Յաւիտեան չե՛ն հատնի ցաւոց դրեանքը։

Լաւել է, չի՛ խօսիլ մեծ իմաստունը,
Զզուելով աշխարհից՝ փակուել է տունը,
Դառն ժամանակի անգութ անունը,
Փակել է զգայուն մարդկանց բերկրանքը։

Տուրք ու ողորմութիւն, մէկ նուէր չըկայ,
Մարդկանց մէջը յոյս ու հաւատ, սէր չըկայ,
Բացի Աստուած խեղճ մարդկանցը տէր չըկայ,
Ինքն է թեթեւցնող մեր չարչարանքը։

Ուրեմն այդպէս է, Ջիւանի երգիչ,
Շատ դատէ, շատ լսէ, ինքդ խօսիր քիչ,
Ամեն բան կըուզզուի, կանչէ Արարիչ,
Քեզանից հեռացո՛ւր զուր բամբասանքը։

1876.

ԱՅԺՄԵԱՆ ԴԱՐԸ

Համ լաւ է, համ շատ վատ է, իմ կարծիքով, այժմեան դարը,
Բարութեան հետ հաւասար մրցում է անիրաւ չարը,
Մէկը անշարժ կեցած է ծանըր ու մեծ իրան տեղը.
Մէկը շատ ծայրայեղ է, անցել է սահմանը-սարը։

Տեսնում ես կռուի մէջ են նորն ու հինը հաստատապէս,
Ամէնը պաշտպանում է իւր ունեցած գաղափարը.
Մէկը պաշտպան է կեցած իւր հաւատոյ հիմունքներուն,
Մի ուրիշը թաւալել կուզէ նրա հիմնաքարը։

Մէկը լոյս է քարոզում իւր մտքովը մեր աշխարհին,
Մէկն էլ ամուր գրկել է մառախուղը, մութ խաւարը.
Թող վրայից անցկենան հազարաւոր դարեր նորից,
Յաղթող է հանդիսանում ճշմարիտը և արդարը։

Դանդաղը յետ կըմնայ, արագը կ՚երթայ անխոտոր,
Պարզ բան է՝ ոտաւորից միշտ յառաջ է ձիավարը.
Այսպէս էլ ստութիւնը պաշտպանողը կըյոգնի շուտ,
Ճշմարիտը, ո՜վ Ջիւան, կ՚երթայ իրան ճանապարհը։

1885.

ՄԵՐ ՆԵՐԿԱՆ

Այս ինչ դարի հասանք, ինչ օրեր գտանք
Ամենեւին հաւատարմութիւն չըկայ,
Ի՞նչ օրեր կորուսինք, ինչ կեանք ստացանք,
Հազարից մէկի մէջ լաւ արիւն չըկայ։

Ասում են՝ թէ լուսաւոր է այս դարը,
Լաւութեան փոխարէն կ՚երթանք վատթարը.
Կարծես թէ ծռուել է ամբողջ աշխարհը,
Իսկ ուղիղ մնացած՝ մէկ անկիւն չըկայ։

Պարզակրօն կ՚ասուինք վերին Րաբբունով,
Ափսո՜ս, խառնուած ենք այլ և այլ գունով.
Մէկ տուն ունինք ճշմարտութիւն անունով՝
Նրա մէջն էլ անծուռ, հաստատ սիւն չըկայ։

Պէտք է միշտ ճշմարիտ մտքով վերանաս,
Աշխատիր ուղղութեամբ, մինչև ծերանաս.
Ջիւա՛ն, լաւ հասկացիր չը ընկերանաս՝
Խաբեբայ խմբերից օգնութիւն չըկայ։

1881.

ԱՇԽԱՐՀԸ

———

Ո՛հ, ո՛հ, Աբարիչ, աշխարհը խաբեբայ է դարձել,
Ուխտը ուրացող, Տէրը ատող՝ Յուդայ է դարձել.
Կարծես վերացել է հողային գնդից ամբողջ,
Ճշմարտութիւնը կեղծ ստութեան ծառայ է դարձել:

Ինչպէս Սողոմոնն յիշել է իր առակի միջով,
«Խղճուկ քաղաքիս դատաւորը տղայ է դարձել»,
Լսուել է գիւղի տանուտիրոջ վրայի լոյսը,
Եւ հաստատել է իր մշակը, վկայ է դարձել:

Երեկ-միւս օրը սարերում ոչխար արածողը,
Մարդկանց քարոզիչ ծայրագոյն աբեղայ է դարձել,
Դատաստանի տակ ընկնողը՝ հնար մտածելով,
Իսկոյն անունը փոխել է, քահանայ է դարձել:

Տե՛ս, բարոյախօս, առաքինի ողջախոհը, տե՛ս,
Հռչակ ունեցող հոմանիին փեսայ է դարձել,
Չէ՛, չէ՛, Ջիւանի, բաւական է խաբուեցար այդքան,
Գիտցածդ հրեշտակն հիմայ սատանայ է դարձել:

1874.

ԱՇՈՒՂԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Ո՞վ էր տեսել այսպէս տարի, այսպէս բան,
Ոչ հարսնիք կայ, ոչ փեսատես, ոչ նշան,
Թէ որ գործը այսպէս գնայ մշտական,
Երգիչները դիփ կըլինին մուրացկան։

Ժողովուրդը խեղճ ու մոլոր շուարած,
Ճտերը ծուռ, կարծես մխերն է մարած,
Արհեստներս է, պիտի տանենք, ինչ արած,
Ինչ էլ որ կայ, պիտի լինինք բաւական։

Արհեստաւոր դասի վրայ ճար չըկայ,
Չէ՛ աշխատիր, որ ծախս անէ անխնայ,
Ո՞րտից ունի աւել փող որ մեզի տայ,
Խեղճը հազիւ պահպանում է ինքն իրան։

Վաճառականներու դրութիւնը վատ,
Մուտքերը սաստիկ քիչ, ելքերը միշտ շատ,
Առեւտուրը ընկած՝ վէրքերն անփարատ,
Ձեռքերը ծոցերում, գործերը խափան։

Գիւղացուց հոգսերը աւելի բազում,
Աղքատ, հողերը քիչ, սրտերը տրտում,
Երբ չըլինի հանդէս, խնջոյք, կերուխում,
Էլ ո՞վ կըմտածէ, թէ ունինք Ջիւան։

1885.

ԺԱՄԱՆԱԿԻՍ ԲԱՐՔԵՐԻՑ

Մեր աշխարհի դրութիւնը ինչո՞ւ այսպէս վատացաւ,
Անմաքրութեան գարշահոտ պտուղը խիստ առատացաւ.
Բռնակալ, անմարդասէր, անխիղճ ագահի ձեռքից,
Առատասիրտ ողորմածը կցկըթաւ, աղքատացաւ:

Կարելի է թէ փոխուել ենք, մենք կրում ենք ջոկ արիւն,
Արդարութեան շինութեան մէջ մեղքն է դրել հիմք ու սիւն.
Համեստութիւնը վերացաւ տեղը եկաւ ցոփութիւն
Նրա համար մարդկութեան մէջ հոգսն ու ցաւը շատացաւ:

Քաշուել են յետ, ջիւանի, հսկայ, ուժեղ, պարթեւները,
Հիմա մեծ դեր են խաղում թզուկները, թեթեւները.
Աֆրոդիտեան թագուհին բաժանում է պարգեւները
Սրբութեան վեհագնուհին նուէր չի տալ, ժլատացաւ:

1897.

ԽԵԼՔԻ ԱՇԵՑԷՔ

Նուէր Ալեքսանդրապոլցի պ. Յովհաննէս Խօջայեանցին

Անմիտ ճնճղուկը բազէի ճանկից
Ուզում է որս խլել, խելքի աշեցէք,
Կարծես ձանձրացել է գլխից ու ղանկից,
Պատերազմ է մտել,–խելքի աշեցէք:

Խելքին զօռ տալով է հիմա ամէն բան,
Յիմարն էլ իմաստուն կարծում է իրան,
Նիհար հաւը, պարարտ մեծ սագի նման
Ուզում է ձու ածել, խելքի աշեցէք:

Աղնիւ մարդը անարգւում է գէշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,
Երկու տարուայ հորթը ցուլ գոմէշի հետ
Բերել, կամ են լծել, խելքի աշեցէք:

Գայլը վրան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապան հսկող է դառած,
Աքլորը քարոզչի վերարկու հագած
Ամբիոն է ելել, խելքի աշեցէք:

Ուղտը մետաքսագործ, եզը նաւավար,
Գայլը հովիւ դառած կարածէ ոչխար.
Աղուէսը հաւնոցի դրանն յուշարար,
Ի՞նչ հսկող են գտել, խելքի աշեցէք:

Փափուկ ջէնթըլմէն է հաստ ղուեհիկը,
Ամբոխի գլուխն է խելքից բոբիկը,
Կենացը մէջ ծառ չըտեսած ռամիկը
Այգեպան է եղել, խելքի աշեցէք:

Երեխան ձեռն առած փըթած հին լարը,
Բռնել կամի դարձող ջաղացի քարը.
Գաճաճ մուկը շրջել կուզէ մեծ սարը,
Կողքը դէմ է տուել, խելքի աշեցէք:

Ուրացողը խիղճ չունի ամենևին,
Զըգգալով, սպիտակ ասում է սևին,
Կոյրը չըտեսնելով լոյսը արևին,
Աշխատում է սըտել, խելքի աշեցէք:

Աւել հոգսը վնաս կուտայ իւր անձին,
Ուրիշի ցաւերը առնելով վզին,
Գայլը յօշոտել է մարդացեց մէկին,
Խենթը սև է հագել, խելքի աշեցէք:

Գործը մեծ պարոնն է տաքուկ ջրհորին,
Փուլս ելաւ, բաժինն է վիշապի փորին,
Իրար հետ սուտ կռուել են ձին ու ջորին,
Էշը մէջ է ընկել, խելքի աշեցէք։

Փլատն աշխատելու է շատ ընդունակ,
Իւր հացը ուտելու չունի ախորժակ,
Խեղճ անձը զրկելով դիզել է տակ,
Ուրիշն է վայելել, խելքի աշեցէք։

—

Ցանցաւոր հարուստը ուրախ խնդալով,
Մեղքից ազատուել է մեծ գումար տալով,
Խեղճ մարդը սխալմամբ մի հաւ գողնալով,
Բանտի մէջն է փթել, խելքի աշեցէք։

Մարդ կայ գերդաստանը պահում է ցամաք,
Կերթայ, դուրսը կուտէ մեղր ու սեր, կարագ,
Այլոց համար կանէ ձայնով պատարագ,
Իրան ժամ չի անել, խելքի աշեցէք։

Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար,
Բնակիչները հայ մոտ քսանհազար,
Իրանք սնունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցէք։

Ինչ կենդանի ուզէ լինիլ շանսատակ,
Կերթայ ու կըմտնի ծանր բեռի տակ,
Նապաստակը առիւծի դէմ համարձակ
Կռիւ է սկսել, խելքի աշեցէք:

Ցորենը մի անգամ լինելով տկար,
Այնպէս բոյս չեն գտել, որ անեն նշխար.
Կորեկ հացը իրան կարծելով յարմար,
Սեղան է բարձրացել, խելքի աշեցէք:

Ո՛չ մի գիտուն չի հասել իւր փափագին,
Սպառելով լոյսը կենաց ճրագին.
Խենթի մէկը հազար տարուայ քաղաքին
Կուզէ նոր կարգ դնել, խելքի աշեցէք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Ասպարէզը համբակներուն են թողած,
Ջիւանն էլ կաղ իշով կարաւան մտած
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցէք:

1883.

ՑԵՑԵՐ

Ցեցերը, թրթուրները չըլինէին պարտէզը,
Ծառերու արմատները չըլիզէր յարալէզը,
Բախտախնդիր, հացկատակ, փոքրոգի մարդիկները,
Երանի չըմտնէին գիտութեան ասպարէզը:

Աղտեղի բնութիւնով, մեղրի համը փոխելով,
Քանդում է մեղուի տունը անպիտան մէկ բզէզը.
Խելօք թզուկը լաւ է թեթեւամիտ հսկայից,
Ինչո՞ւ է պէտք անօգուտ բլուրը՝ մսաղէզը:

Շատացել են գայլախեղդ, խշու նահատակները,
Իւր յարգը կորցրել է ճշմարիտ ողջակէզը.
Բարձրամիտ իմաստակը մի գրօ էլ չէ այնտեղ,
Եթէ գիտնայ քննել նա գիտութեան քարտէզը:

Նոր հաւերը մի տեսակ խատուտիկ հաւկիթ կ'ածեն,
Կարծես, ամեն մէկի մէջ բուն է դրել մողէզը:
Անհմուտ խոհարարի կերակուրը ուտելուց,
Ջիւա՜ն, լաւ է ամէն ժամ վայելել վայրի սէզը:

1883.

ԶՐՊԱՐՏԻՉԸ

Անդադար վատ վատ լուրեր հնարում է զրպարտիչը,
Մշտական շատցընելով տարածում է լսած քէնը.
Լաւ բանի համար ամենեւին չի շարժուիլ տեղիցը,
Երբ լսեց մի վատութիւն ձեռք կառնէ աղտոտ գրիչը։

Քանի որ օգուտ չունինք, վնասներուն ինչ ենք տալիք,
Վերցնէ թող մեր միջից այդպէսները Տէր Փրկիչը.
Ժողովուրդը քաջ գիտէ լաւն ու վատը, չարն ու բարին,
Յուդայի դասն է դասում նա նենգաւոր գէշ մատնիչը։

Ծառի պէս մեր որդերը մեր միջից են, ո՞ւմ ինչ ասենք,
Մեր տանից է դուրս եկել մեր կեանքի ցեցը՝ կերիչը,
Այդպիսեաց խրատ տալը քահանայից պարտքն է յատուկ,
Ի՞նչ կարող է բան շինել Ջիւանու պէս խեղճ երգիչը։

1887.

ԲԱԽՏ

Հերիք է անիրաւ բաղդ, հերիք է ինձ չարչարես,
Հերիք է թշնամու պէս հալածես, դուռս քարես,
Հերիք է, քեզ խնդրեցի, հարուածդ դադարեցուր,
Կուրծքս ամրոց կարծելով հերիք է նետահարես։

Ասա՛, քեզ ինչ եմ արել, ինչ վնաս եմ հասցրել,
Իմ ունեցած գործերս մինչեւ երբ դու խանգարես.
Տարին մի մարդու դուռը ուրախ սրինգ ածելով,
Հոմանի կնոջ նման շատի համար կը պարես։

Արժանաւոր տիկինը ապերջանիկ թողնելով,
Անարժանի ճակատին մինչ երբ ոսկիներ շարես.
Դուն էլ երկերեսանի—հզօրի կողմն ես տաշում,
Ստոր կծատի նման ցած դերեր կըկատարես։

Կըթողնես խեղճ ու մոլոր առանց սատար ինձ նման,
Վա՜յ կուտաս նրա գլխին՝ հիմա ինչ մարդ որ ճարես,
Յուսով եմ գիտութիւնը քու քողդ կը պատառէ,
Աշխարհը կը կործանուի թէ միշտ դու կառավարես։

Հաւատ, խիղճ ու խղճմտանք չունիս որ քեզ բան ասեմ,
Մէկի տունը թէ շինես մէկ ուրիշին կաւարես,
Լաւն ու վատը չես ջոկում այդ Ջիւանը քաշ գիտէ,
Հազար մարդ կողոպտելով մի հատ եզ կըզարդարես։

1897.

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԻ ԱԳՌԱՒ

Կաւկազ սարի գլխին նստած մի ագռաւ,
Քաջ բազէին տանկ ու տնազ է անում.
Գտնելով մի պլինդ ու ամուր քարանձաւ,
Դէսից-դէնից հաւի ձագեր է որսում:

Անմաքուր փետուրը շինելով ղալամ,
Ճառեր ու յօդուածներ գրում է անհամ.
Բազէն շատ է տեսել ագռաւի երամ,
Եկել գնացել են գունդագունդ բազում:

Երաժշտապետի հանդերձ է հագել,
Ուզում է սոխակից իւր տեղը խլել.
Խռպոտ ձայնով մարդկանց վրայ չի ազդել,
Նրանք գիտեն երգի պատիւն ումն է, ո՛ւմ:

Նա կուզէ որ մտնի այգի բուրաստան,
Քաղել վարդ, մանիշակ, մեխակ, պալասան.
Բայց պարտէզը ունի մի քաջ պահապան,
Հրացանը ուսին միշտ արթուն հսկում:

Վայրենի սարեակն էլ իւր ծառի վրայ,
Նուագելով պառաւի անէծք կը կարդայ.
Երբեմն էլ բազէին բռունցք ցոյց կուտայ,
Սագերին էլ նրա դէմն է գրգռում։

Բազէն չըփոխելով բնական բարքը,
Կ՚արհամարհէ վախկոտներու արարքը.
Գիտէ որ ապուշներ ունի աշխարհքը,
Ճանճերը ուղտերուն գրող են չափում։

Ջիւանի, վայրախօս մարդիկ բազմացան,
Իզուր հարուածում են սրան ու նրան.
Սրատես արծիւը գիտէ ամէն բան,
Ագռաւի ղռռոցով գործը չի փոխւում։

1897.

ԳԻՏԻ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թէ ուզում ես քեզ գիտնական անուանեն,
Եւրոպայի ձեւով հալաւ ունեցիր.
Թէ կը ցանկաս պատիւդ լաւ պահպանեն,
Ձինծու դիպլոմ, չինծու համբաւ ունեցիր։

Ժողովրդի կամքը, բերանը չինէ,
Չի հասկանալ, նորա համար դիփ մին է,
Այն որ հիմա հաստ ու բարակ մի գին է,
Անվնաս է, խելք էլ սակաւ ունեցիր։

Այնքան որ ունեցիր մի վկայական,
Կասեն, որ մտել ես դու համալսարան.
Վախենաս թէ հազարներով քեզ չըտա՜ն,
Հոգաբարձուաց հետը քեզ լաւ ունեցիր։

1882-83.

ԽՐԱՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԳՈՒՆ ՀԱՄԵՄԱՏ

Անմտածել վեր վարէ խօսքերդ, ճարտար եղիր,
Քեզ ճոռոմախօս կասեն, ուզում ես յիմար եղիր.
Քանի մ' նախադասութիւն գրքերից բերան արա՛,
Միշտ ռամիկ դասի մէջ գիտնական հանճար եղիր։

Կշեռքի ծանր կողմը աչքի առաջ ունեցիր,
Ճշմարտութիւնը ստէ, համ նորից արդար եղիր,
Ուխծասիրտ անձի մօտ կզկըթիր, եղիր կատու,
Եթէ տեսար տկար մարդ, արիացիր, չար եղիր։

Ժամանակի պահանջն է անուժին կողոպտելը,
Թէ խիղճդ քեզ խայթում է, արտաքուստ արդար եղիր.
Ջիւան, քեզ ո՞վ կիմանայ, դու գիտես քո հաշիւը,
Խօսքերով սուտ ազգասէր, փողի սիրահար եղիր։

1885-86

ԽԱՉԱՏՈՒՐ ԿՆՏԵՂՑԵԱՆՑԻ ՍԻՐԱԾ ԵՐԳԸ

Տգէտ բամբասողները անծանօթ լուր կըսպասեն,
Կամ [illegible], կամ [illegible]՝ պատրաստ են՝ որ քեզ ասեն.
Ողջ այնպիսի մարդիկը խելքերիցը պակաս են,
Իրանց փորը անօթի ուրիշին կալ կըկասեն։

Պարապ ու անաշխատանք, անուսում ցանցառները,
Մտքերովը չափում են շատ տեղի անտառները.
Իբր զազան կըծախեն խեղճ անուշիկ գառները,
Իրանց դատողութեամբը նրանց շարքում կըդասեն։

Կռիւ տեսնին կըցնծան, մատներն իրար կըքսեն,
Ուզում են այնտեղից էլ մի քանի լուրեր լսեն.
Ուրիշներին որկրամոլ, [illegible] դառած կասեն,
Ողջ մարդկանց միսը կուտեն, գիտեն թէ մաքուր պաս են։

Ճշմարիտ խօսողները նրանց գերի են դառել,
Ազգութիւնից հեռացած կարծես վերի են դառել,
Հաւատից գայթակղուած, յատուկ թերի են դառել,
Վերոյիշեալ մարդիկը մեր ազգին շատ վնաս են։

Ջիւան, յառաջ մի խաղար, քար կըխփեն քո թեւին,
Նրանք այնպէս մարդիկ են՝ խաւար կասեն արեւին,
Արդարութիւնը ինչ է, չեն գիտեր ամենեւին,
Բարութեան միշտ հակառակ, չարութեան մակարդ-մաս են։

1870.

ԸՄԲՈԽԸ

Ամբոխի սուտ փայփայանքը,
Երբես սեւցնող մոծիր է.
Նրա տուած գովասանքը,
Սառուցի վրայի գիր է:

Փսխաթը նուրբ կտաւ է,
Վայրենի մարդկանց հալաւ է.
Էշը նժոյգ ձիուց լաւ է,
Քանի որ անմեղ երկիր է:

Փայլողը հոմանի կինն է,
Աւազակը ամուսինն է.
Դարը լիրբ անամօթինն է,
Խեղճ մարդը հող ու մոխիր է:

Վաղանցուկ փառքը խաբեբայ,
Շատի գլխին խաղ կըխաղայ.
Որքան կուզէ մեծ օգուտ տայ,
Ցռեսը վերջը գգիր է:

Ճաշակով մարդ ո՞ւր ամեն տեղ,
Որ ջոկէ անհամ ու համեղ.
Երեխան կըսիրէ պղպեղ,
Քանի որ գոյնը կարմիր է:

1895.

ԸՆՀԱՒԱՆՔ

Անկիրթ մարդը իւր բանը չըգիտնալով՝
Կատարեալի լաւ վիճակին չի հաւնի.
Իրան մէջը մէկ գիտութեան յուսալով՝
Վարժապետի օրինակին չի՛ հաւնի։

Կատուից կըխնայէ մէկ կտոր չոր հաց,
Ամէն օր ծեծ, կնոջ աչքերումը լաց,
Մէկ նոր հագուստ չունի՝ ողջ մարմինը բաց՝
Մեծատանը ժամանակին չի՛ հաւնի։

Մէկ տուն ունի անլոյս, խաւար, կեանք մաշող,
Խնդութիւնից զրկող, ստամոքս խաշող,
Զորթանէ ապուրի միշտ կարօտ քաշող՝
Արքայի մաքուր խորակին չի՛ հաւնի։

Բոլորովին թողած իւր գործը, բանը,
Փորն անօթի, բաց մնացած բերանը,
Հինգ հատ պղինձ դրամ չունի գրպանը՝
Ոսկով լեցուն գանձանակին չի՛ հաւնի։

Ամէն մարդ երեսին կուտայ արատը,
Չի՛ մաքրուիլ, թէ լողանայ Եփրատը.
Արծիճէ մատանիք չունի իր մատը՝
Սողոմոնի մատնու ակին չի հանի։

Երեսը թարշամած վարդի տերեւ է,
Ձրթունքներն անշնորհք, քիթը տձեւ է,
Գոյնը գործելից հնդպատիկ սեւ է,
Անշամանդաղ նոր լուսնակին չի՛ հանի։

Հարիւր կարկատանէ վերարկուն ճերմակ.
Մրկի նման որոնում է գաղտնի ծակ.
Գլխին խոտ կրփաթթէ՝ չունի մէկ գտակ՝
Հին փափի արտախուրակին չի՛ հանի։

Վիզը ծուռ կրնայէ ծեր ուղտի նման,
Իսկ մարաց հովուի պէս հանդերձն անարժան,
Ամէն մի ատամը մի մուրճ իսկական
Մարգարիտ-բուստ շարունակին չի՛ հանի։

Երկու հիւր շահելու մէկ սեղան չունի.
Թափառական մարդ է, օթեւան չունի.
Կէս կոպեկ ցանելու անդաստան չունի՝
Մեծ իշխանի ագարակին չի՛ հանի։

Որ տեսնի ստուերը՝ քարերից կըգայ,
Երկիւղից կըլինի նա տակն ու վրայ,
Հաւի ահից տասը պտոյտ կըդառնայ,
Նժոյգ նստող շահատակին չի՛ հաւնի։

Կեանքը առողջ տարին-բոլոր չի՛ գտնի,
Հնութեան մէջ զբաղուած՝ նոր չի՛ գտնի.
Հիւանդանայ՝ թթու խնձոր չի՛ գտնի,
Արքայավայել կամակին չի՛ հաւնի։

Մէկ ուղիղ խրատից բարեկամ չունի,
Միշտ օրերը տխուր, ուրախ ժամ չունի.
Իւր տանը վառելու մարխ անգամ չունի՝
Ուրիշների աշտանակին չի՛ հաւնի։

Իւր գլուխն ազատ չէ ցաւից վտանգից,
Հանդերձը տարբեր չէ կարած պատանքից.
Մէկ նոր սխալ բան է հանել իւր հանքից՝
Հազարամեայ յիշատակին չի՛ հաւնի։

Չի՛ գիտեր կրօնը քրիստոնութեան,
Չի՛ գիտեր անուշիկ լեզուն հայկական,
Այլ և այլ չար ոսոխ թշնամեաց նման,
Հայկ և Արամ, Արմենակին չի՛ հաւնի։

Իւր տգիտութեանը աշխարհն է վկայ,
Կրձեւանայ բարձր մէկ փիլիսոփայ.
Իւր փորիցը այբի կտոր դուրս չի գայ,
Մեղա——ին, Փորչ-ին և Մշոէ-ին չի հաւնի։

Թող չըձանձրանայ իմ քաջ բարեկամը,
Որ ես շատ յիշեցի այս անգգամը,
Վնաս չունի, թող քիչ վաճառէ ժամը,
Ջիւա՛ն, ով քո նպատակին չի հաւնի։

1869-77.

ԴԻՒԱՆԻ

Ամենասաստիկ ցաւերը ինձ վրայ խնդիր տուին.
Տխրութեան մեծ դատաւորին, ողջը ձեռագիր տուին,
Խըմբերով բողոք բացին՝ գնալ դէպի իրաւարան,
Մեղքերս հաստատեցին, փաստերը լիալիր տուին։

Ինձ վրայ մեղքեր գտան երբ՝ ցաւոց իշխանները,
Ամենը վա՜յ կրկնելով՝ գլխիս հող ու մոխիր տուին.
Լսելով իմ մտերիմ ուրախակից եղբայրներս՝
Խաբեբայ ցաւապետի խորհուրդը ցանուցիր տուին։

Կանգնեցան տէր՝ Ջիւանուս ուրախութեան դիւցազները,
Վերջին ազատութեան վճիռ արդար ու ընտիր տուին։

1872.

ԲՈՒՊԱՅԻ ԴԻՒԱՆԻ

Ոնչի՞ց է՝ բան հասկացող մարդոցը միշտ բամբասում են,
Մականուններ կնքելով՝ կարգէն մոլորեալ դասում են.
Եզուիտ ու ցածրահոգի անխիղճները հարուած տալով,
Ջգայուն թարմ սրտերը ամեն միջոց վնասում են։

Ովքե՞ր են, բամբասում են ազնիւ խոհեմ գիտուններուն,
Մանաւանդ ազգի համար զոհուող խելօք արթուններուն.
Խաբուելով եզուիտական կարգէն եղած բաբբուներուն,
Զարգացած, մտքով խելօք մարդուն անիրաւ ասում են։

Ո՛վ Ջիւան, մեր երկրի վրայ խաւար, մութն է տիրում,
Մարդ չըկայ Քրիստոսին լսող թէ ինչ է պատուիրում.
Քաջ լուսաւորեալներից, պառաւներին շատ են սիրում,
Նէտ դնել տալով նրանց, մեծ մեծ բաներ են սպասում։ *)

1876.

---

*) Նէֆ դնելու անմիտ սովորութիւնը դեռ այժմս էլ գոյութիւն ունի Հայաստանի գիւղերում երբեմն և քաղաքներում. պառաւ կանայք մաղը ձեռքերի վրայ պտտացնելով երբ գուշակում են պէտք եղածը կամ այն սրբի անունը տալիս, որի „խեչիցը“ հիւանդացել է նէտ դնել տուողը, բայց թէ ինչ կայ նաղի և նէֆի մէջ, այդ մութն է մեզ։
Ծ. Հեղ.

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Անգործ-պարապ ման եկողը
Անմիտ, խելագար չէ՞ ինչ է,
Միշտ մոլութեան հետեւողը
Բնութեամբ տկար չէ՞ ինչ է։

Օրէնքներէն պատառուածը,
Իրան խօսքով յամառուածը,
Անօթեւան թափառածը
Բուին հաւասար չէ՞ ինչ է։

Գլխին առնողը մութ քողը,
Չըտեսնող բարեբեր ցօղը,
Անկիրթ, անուսում մեծցողը
Անտաշ, կոպիտ քար չէ՞ ինչ է։

Իրան արդար մարդ դասողը,
Աստիճանի սպասողը,
Իսկ ճշմարտին սուտ ասողը
Միշտ հոգւով խաւար չէ՞ ինչ է։

Բնական բարքից ելնողը,
Սրբազան վարքից ելնողը,
Մարդկության շարքից ելնողը
Անասուն, չիմար չէ՝ ինչ է։

Չըպահող իւր բերնի սանձը,
Ծուռ մտքով նայող կանանցը,
Միշտ պղծութիւն սիրող անձը
Գազանից վատթար չէ՝ ինչ է։

—

Կենդանության կաթն ու կոգին
Թողած՝ սիրէ աննիւթ շոգին,
Պատուիրանազանցի հոգին
Բելիարին աւար չէ՝ ինչ է։

Անունը թանգ չունեցողին,
Բարութեան ջանք չունեցողին,
Երջանիկ կեանք չունեցողին
Աշխարհը օտար չէ՝ ինչ է։

Գործը շատ ցրիւ է թոյլին,
Հաստագլուխ մտքով գոյլին.
Տեղից չըշարժուող ծոյլին
Դիւրինը դժուար չէ՝ ինչ է։

Ո՞ւմ տայ իւր ընծայ նուէրը,
Ո՞ւմով աւելանայ սէրը,
Անզաւակ դրամատէրը
Իսկ անմխիթար չէ՝ ինչ է։

Չի՛ սիրուի թառամած վարդը,
Քամուն ճաշակ կըլնի յարդը,
Փթած ծառի նման մարդը
Կրակի պաշար չէ՝ ինչ է։

Սառել է սրտի եռանդը,
Չունի ողջութեան աւանդը.
Անբժշկելի հիւանդը
Մեռնելուն յօժար չէ՝ ինչ է։

Յուսահատն է արմատախիլ,
Նրա բոյսը չունի նոր ծիլ,
Անյուսալի բանը գտնիլ
Բերելը անկար չէ՝ ինչ է։

Բարկացող յուսահատներուն,
Անզուսպ և անխրատներուն,
Երկմիտ թերահաւատներուն,
Խելքերն անկատար չէ՝ ինչ է։

Չունեցող վարժապետ ազգը՝
Սէր չունի իրար հետ ազգը,
Անօգնական, անպետ ազգը
Անհովիւ ոչխար չէ՝ ինչ է։

Ջիւան, ցաւին ճար չըգիտցող,
Ապրելու հնար չըգիտցող,
Պանդուխտ, ճանապարհ չըգիտցող
Ջինուորը շուար չէ՝ ինչ է։

1870.

ՊԱՏԱՀՄՈՒՆՔ

Աշխարհն անտանելի խռով է,
Անտանելի համար ոչինչ.
Ողջ աշխարհը փնովէ,
Յանցանի համար ոչինչ։

Խելացին լաւ կըմնայ,
Բայց յիմարին չափ չըկայ,
Էշը անպայտ ման կուգայ,
Պայտանի համար ոչինչ։

Այնպէս մարդ կայ, ասածը
Չի հասկանար խօսածը,
Վատ օր տեսած-լսածը,
Թշուառի համար ոչինչ։

Մարդիկ կան, որ գիրանան
Կըրցնդին եզի նման.
Իրանց գլխին հող կուտան,
Խելառի համար ոչինչ։

1880.

ՍՔԼՈՐ ԵՂԲԱՅՐԸ

Սքլո՛ր եղբայր ձանձրացուցիր դու մեզի
Անտեղի, ամեն օր միշտ ճվալով սուր,
Հիմա ժամացույց կաչ, կարոտ չենք քեզի,
Գնա՛, այսուհետև ուրիշ տեղ ձայն տուր։

Վրայիդ գույները շատ այլանդակ են,
Մինչ Նոյից մնացած հին օրինակ են,
Թևիդ բմբուլները մէկ-մէկ նիզակ են,
Ո՛չ մի թռչուն չունի քեզ նման փետուր։

Է՜հ, շատ անճոռնի է ձայնդ սքլո՛ր ջան,
Դու չե՛ս կարող լինել երգիչ, երգաբան,
Քեզի պէտք է մի գեղեցիկ հաւարան
Պատրաստել մինչի մահ քեզի կուտ ու ջուր։

Տեսակդ շատ հին է, նման չո՛ւնիս, ո՛չ,
Մտել ու ելել ես ամեն մի խոռոչ.
Ոչ մի թռչուն չունի՛ պոչիդ նման պոչ,
Կատարիդ պէս կարմիր փունջ հերադանդուր։

Իմացայ, ուզում ես, որ լինիս կաքաւ,
Քայլերդ կըշինեն քեզի սև ագռաւ.
Դու մեր հին աքլորն ես, թէ վատ, թէկուզ լաւ,
Պահել պէտք է քեզի, տալ հին կերակուր։

Սանտրը ունիս գլխիդ վրայ աչագին,
Յօպօպի պէս դու բուն չունիս առանձին,
Ջիւանս քաջ գիտէ, դու ես Հաւածին,
Երբեմն էլ կըլինիս հաւագող ուրուր։

1882.

ԴԻՒՊԼԻՏ

Ք'մ սիրուն, հագած հալաւդ
Գեղեցկութեանդ յարմար չէ.
Տարածուել է քո համբաւդ,
Աւա՜ղ, որ քեզի համար չէ։

Կորուցիր թանդ ժամանակդ,
Չըճանաչելով վիճակդ.
Իմանում եմ նպատակդ.
Գաղափարդ գաղափար չէ։

Մի՛ ձգեր այլոց գլխին քօղ
Որ տեսնելու չըլնին կարող.
Չըկայ քո լուսիդ կարօտող,
Հիմա դարը շատ խաւար չէ։

Քանի չի իմացուել լուրդ,
Տեղը դիր դաշոյնդ, սուրդ.
Քո կերցրած կերակուրդ,
Ախորժակի օգտակար չէ։

Յայտնի է գործած դարանդ,
Ո՞վ չիգիտեր ծուռ է բանդ.
Չի՛ համոզուի ստութեանդ,
Հոգիս, Ջիւանը յիմար չէ։

1875-76.

ՀԵԳՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է դու ամեն ժամ տան համար՞ կ'էրուիս,
Այլոց տունն էլ մէկ օթևան չէ՞ քեզի,
Ինչո՞ւ անբաղդութեան մէջը դեգերուիս,
Դատարկ յոյսն էլ մէկ ապաստան չէ՞ քեզի։

Հաշիւ չունի քո ապրանքդ համարով,
Մտքէդ կանցնի հարիւրներով, հազարով.
Երևակայութեան բերած պաշարով,
Քամիով լի շտեմարան չէ՞ քեզի։

Դու կաշխատիս, դեռ մանուկ ես պատանի,
Շատ կայ ծնողացդ տուող երանի.
Անունդ մեծ, ջեպըդ դատարկ Ջիւանի,
«Ապրիս» ասելը բաւական չէ՞ քեզի։

1870-73.

ԵՂԱԾ՝ ՉԵՂԱԾ—ՄԷԿ ՀԱՇԻՒ Է

Թոյլ, անպիտան, անգործ մարդը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է.
Ինչպէս անգոյն, անհոտ վարդը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Ի՞նչ պէտք է թոյլ գլխաւորը,
Որ միակ լցնում է փորը.
Տգէտ, մոլի կարգաւորը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Լաւ մարդու ոտացն է կացին,
Թէ որ վատ է իւր դրացին.
Հօրը համար անպէտք որդին,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Ինքն է իւր քսակի գողը,
Տանը վրայ մաղող հողը,
Շռայլ մարդու համար փողը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Ներքինին ինչ պէտք է կին,
Ձքեղ սեւից չունի բաժին.
Կոյրի համար արեւ, լուսին,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Անասունին տուր գովասանք.
Նա ինչ գիտէ այդպիսի կեանք.
Անզգամին պատիւ, յարգանք,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Մօտ է այնպէսի կորուստը,
Զորս չափ կտաւ է հագուստը.
Փլատ անօգուտ հարուստը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Կենդանի մարդուն է արժան,
Պատիւ, յարգանք, շքանշան.
Մեռած մարդու համար արձան,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է,

Խելօք հմուտ գիտնականը,
Հիմքը ամուր կանէ տանը.
Կիսատ պռատ շինուած բանը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Առողջ տղին տուր երիվար,
Որ թռչի երթայ սարէսար.
Անոտք մարդուն հարթ ճանապարհ,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Նրանք չունին շնորհք ու շէնք,
Գանգատուիլն է նրանց օրէնք.
Երկչոտներուն զրահ ու զէնք,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Կտրիճ ազգն է ինքնին հնոց,
Միշտ կ՚արձակէ կրակ ու բոց,
Փախչող զօրքին բերդ ու ամրոց,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Սկզբէն է հարկաւոր ջանք,
Քանի որ հիւանդն ունի կեանք.
Հոգեվարքին դեղ ու դեղրանք,
Եղած չեղած—մէկ հաշիւ է։

Խեղճին ի՞նչ օգուտ իշխանը,
Որ չի հասնի նեղութեանը.
Անտարբեր պաղ ազգականը,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Երբ որ տեղը գայ ճշմարիտ,
Հարկաւոր չէ լինել կրկիտ.
Ջատկից յետոյ կարմիր հաւկիթ,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Ուրախութեան օրը յատուկ,
Կ'ուրախանան ծեր ու մանուկ.
Հարսանիքից վերջը թմբուկ,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

Ջիւա՛ն, բարեսիրտն է յարմար,
Լսել սիրով երգ ու քնար,
Չար ու դաժան մարդկանց համար,
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է։

1880.

ՑԱՒ ՉԷ ԻՆՁ

Զարախնդաց, չար մարդիկը թող վերջանան, ցաւ չէ ինձ.
Թող կորնչին բոլորովին, անհետանան, ցաւ չէ ինձ.
Աշխարհաւեր, անիրաւ, անխիղճները կերուկ ցաւ են,
Սուրբ օրէնքի զօրութեամբ մեռնին, չքանան, ցաւ չէ ինձ։

Բռնակալ, արիւն քամող, տզրուկի պէս հարուստները,
Վաղահաս կործանումով աղքատ կը մնան, ցաւ չէ ինձ.
Չը խրատուող, ծնողաց զայրացնող զաւակները,
Տաժանակիր բանտերում աքսոր կըգնան, ցաւ չէ ինձ։

Ժողովուրդը բարութեան ճանապարհից շեղողները,
Տարուայ մէջ տասը հատը, եթէ մահանան, ցաւ չէ ինձ.
Բարոյապէս ընկնելու վրայ են, ափսո՜ս, հայերը,
Ինքն իրանց կորստեանը ճանբայ կըբանան, ցա՛ւ է ինձ։

1887.

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

Աչքերդ լոյս, Հայ ժողովուրդ,
Բանաստեղծներդ բազմացան.
Անլօգիկա, առանց խորհուրդ,
Ես էլ ունիմ մի երգարան։

Թէ որ բանը այսպէս գնայ,
Տուն-գլուխ մէկը դուրս կուգայ.
Անշուշտ բանաստեղծ կըդառնայ,
Թէ հորթարած, թէ նախրապան։

Ամեն մի խենթ, մտամոլոր,
Վաշվախկոտ, արիւնը պղտոր,
Յօրինում է ոտանաւոր,
Իսկոյն վազում է տպարան։

Չի հասկանալ քաղցր է, դառն է,
Ճաշակ չունի, քիմքը սառն է,
Ամբոխը փող կուտայ կառնէ,
Ուր որ տեսնի մի տպած բան։

Խօսքերը սուր, ապղու ասող,
Կծու բանին կծու ասող,
Իրան ճանին թթու ասող,
Քիչ կայ քեզ պէս, աշըգ Ջիւան։

1899.

ԸՆԿԵՐԱՏԵԱՑ

Սրտիդ չարութիւնը երեսիդ վրայ,
Հոգեբանը միշտ կարդում է, ով նախանձ.
Ասածիս ապացոյց գործերդ ահա,
Կենացդ մէջ միշտ եղել ես մարդախանձ։

Կմախքով լի, փայլուն մէկ գերեզման ես,
Անհոգի ման գալող, մարդու արձան ես.
Ամեն մի վատութիւն, ցածութիւն կանես,
Աշխարհումս միայն թէ տան քեզի գանձ։

Արտաքին տեսքովդ որպէս մի սուրբ մարդ,
Պղտոր ջրում ձուկ կորսաս, ունիս կարթ,
Կեղծաւոր, մանկանենգ, խորամանկ, կախարդ,
Լեզուդ երկսայրի սուր, խօսքերդ անսանձ։

Ջիւանուս յայտնի ես դու վաղուցուանից,
Դուրս ես եկել սադայէլեան շրջանից,
Բազում մարդիկ ձանձրացել են քեզանից,
Անտեղի շարունակ միշտ ունիս թախանձ։

1884-85.

ՀՊԱՐՏ ՀԱՐՈՒՍՏԸ

Պարոն հարուստ, ինչո՞ւ այդքան հպարտ ես,
Ունայն աշխարհի մէջ բաղձանքդ ինչ է.
Վերջ 'ի վերջոյ դուն էլ կեանքդ կ'աւարտես,
Իզուր մտածմունքդ, տանջանքդ ինչ է։

Փարթամացիր հին Դարեհին հաւասար,
Որ կըգայ չես գտնիր վէրքիդ դեղ ու ճար.
Ոչ հոգուդ ես և ոչ մարմընուդ համար,
Ուրեմն, սիրե՛լիս, զուր ջանքդ ինչ է։

Թէ մեղքի մէջ մեռար՝ մեծ ցաւ է վերջը,
Գիտե՞ս, դատաստան կայ, իրա՛ւ է, վերջը.
Երկուսիս էլ չորս չափ կտաւ է վերջը,
Քու ինձանից աւել ապրանքդ ինչ է։

Ջիւանս լաւ գիտէ, փառքդ մէկ ձև է,
Աշխարհումս շատ անցաւոր պարգև է.
Հարիւր տարի ապրիս մեծ մասը սև է,
Քու երջանիկ սեպած լաւ կեանքդ ինչ է։

1883-84.

ՄՈՒԽԷՄՄԷՍ

Ո՛վ անիրաւ անխղճմտանք, մտքիս քնարը քանդեցիր,
Փափուկ սրտիս Նուրբ ապակին, գցելով քարը քանդեցիր,
Սիրտ կոտրելով, լաւ իմացիր, Տիրոջ տաճարը քանդեցիր,
Տնաքանդ ես. մէկ իմս չէ, որքա՜ն հազարը քանդեցիր,
Ուրտեղ մի հին կոթող տեսար, ելար կատարը քանդեցիր,
Գաղտնի ականներ փորելով, համարեա սարը քանդեցիր։

Իշխան էի, հովիւ դառայ, մի քանի ոչխար ճարեցի,
Թողի բեհէզն ու ծիրանին, թաղիքէ հանդերձ կարեցի,
Գեղջուկ հովուի բիրդ մահակը ինձ դայխոն համարեցի.
Փափկութիւնից ձեռք վերուցի, շինականի կեանք վարեցի,
Ճալակովս քար կրելով ձեռքովս պարիսպ շարեցի,
Հօտս մնաց բաց օդի մէջ, փարախս պատուարը քանդեցիր։

Վաճառատունս փակեցիր, ես մնացի անմխիթար,
Ման եմ գալիս գժուածի պէս ձեռս ծոցս, խեղճ ու շուար,
Քեզանից քեզ գանգատ ունիմ, կարծըրուած անգին բարերար,
Խլեցիր հացս ձեռիցս, վարուեցար՝ խիստ անխղճաբար,
Բանալով պապիս կապոցը միջից անգին ակը տարար,
Անձեռնմխելի պահուած կնքած ծրարը քանդեցիր։

Օր չի լինի որ քեզանից մի նոր հրաման չ՚ստանամ,
Ազատուելու տեղ չըգիտեմ որքան էլ փախչելու ջանամ,
Այսպիսի դառն վիճակից, ասացէք ես ի՞նչ իմանամ,
Յոյս դնեմ ո՞ր բարեկամիս գոնէ մասամբ ուրախանամ,
Որդիքս դուրսը մնացին, չըգիտեմ ու՞մ դուռը գնամ,
Տուն շինեցի ներս չըմտած տուիր, կամարը քանդեցիր։

Սառեցուցիր վառ եռանդս, աշխատելու ջանք չըթողիր,
Ո՜հ մեռուցիր յոյս ու սէրս, հաւատ ու բաղձանք չըթողիր,
Դու մարդկային սրտերու մէջ ցնծութիւն բերկրանք չըթողիր,
Խանգարեցիր բոլորովին, հին մնացած ցանք չըթողիր,
Ջիւանս, քեզ էլ ի՞նչ ասեմ. դու ինձանում կեանք չըթողիր,
Խորտակելով սրտիս սիւնը հոգուս աշխարհը քանդեցիր։

1883.

ԿԵՂԾ ԸՆԿԵՐ

Լայն օրերուս ուրախացող կեղծ ընկեր,
Այժմ նեղն եմ ընկել, արի՜ ո՞ւրտեղ ես,
Պատառներուս կտորներու շատակեր,
Մեծը քեզ եմ տուել, արի՛, ո՞ւրտեղ ես։

Երբ ունէի փայլուն մետաղ բաւական,
Ինձ կասէիր «չըկայ մարդ քեզի նման»,
Քու ձեռքովդ կազմում էիր ճոխ սեղան.
Ո՞ր անկիւնն ես մտել, արի՛, ո՞ւրտեղ ես։

Քանի տունս հաց կար, չէիր պակասի,
Կուգայիր, կանչելու չէիր սպասի,
Իմ ունեցած կարողութեանս մասի
Ճատը դու ես խլել, արի՛, ուրտեղ ես։

Ասում էիր «մի վախենալ փորձանքից,
Քեզ աւել կըսիրեմ իմ բոլոր կեանքից...»
Եթէ հնար ունիս փրկէ վտանգից,
Վերջին օրս է հասել, արի, ո՞ւրտեղ ես։

Ջիւանը հասկացաւ քո կեցութիւնը
Հետազօտեց սրտիդ ամեն անկիւնը,
Ճողոքորթելով ծծում ես արիւնը,
Սրդեօք ո՞ւմ ես գտել, արի՛, ո՞ւրտեղ ես։

1888.

ԽՐԱՏ ԱԳՌԱՒԻՆ

Տգեղ ագռաւ, նոր փետուրներ գտնելով,
Իզուր մի աշխատիր, սոխակ չես դառնալ,
Սիրուն թռչնոց երամի մէջ մտնելով
Չես փոփոխուիլ, նոյնն ես, տատրակ չես դառնալ։

Հանդերձը խելք չի տար, դարձեալ դու խև ես,
Ձայնդ տաղտկալի է, կերպով տձև ես,
Նրա ոտքերն է սև, դու ամբողջ սև ես,
Սիրամարգին անգամ մշակ չես դառնալ։

Թէ ուզում ես հագիր լուսեղէն հալաւ,
Ձայնդ քեզ մատնելով, ասում են ագռաւ,
Կաղ 'ի կաղ քայլելով չես լինիր կաքաւ,
Քեզ կրծաղրեն, լաւ օրինակ չես դառնալ։

Դու ձմռան խօսնակ ես, հագիր տաք մուշտակ,
Խռպոտ ձայնով բարձրացրու աղաղակ,
Հոգիդ խարդախ, արդարութեան հակառակ,
Դևի սեռ ես, դու հրեշտակ չես դառնալ։

Ջիւանուս հետ կասեն թռչուններն համայն,
Սոխակի շնորհիւ ապրում ես միայն,
Ոչ նուագել ունիս և ոչ քաղցր ձայն,
Մեռնիս, տրաքիս, որ երգակ չես դառնալ։

1884.

ՄԻ ՄԱՐԴ

Ո՞ւմ ես խաբում կեղծ քարոզիչ,
Ինչո՞ւ ես այլոց նախատում.
Այլոց լինում ես համոզիչ,
Քու խօսքին դու չես հաւատում։

Սուտ զրոյցներ յօրինելդ
Խարդախ կերպով բան շինելդ,
Խաբեբայ ու կեղծ լինելդ
Բռնած գործերդ են հաստատում։

Երբ դու քեզի կըվնասես
Այլոց համար պատուհաս ես,
Էլ ուրիշից ի՞նչ կըսպասես
Ինքդ քեզ չես գնահատում։

Ունիս ճարտար լեզու, բերան
Խօսում ես կոկիկ բաւական,
Ինքդ գտիր ցաւիդ դարման
Օտարը ցաւ չի փարատում։

Ջիւանի, ընթացքդ վատ է
Մտածիր, քեզուքեզ դատէ,
Մէկը քե՛զ պէտք է խրատէ
Դուն ես ուրիշին խրատում։

1895.

ՅԱՆԴԻՄԱՆԱՆՔ

Խնդացէք ինչքան կուզէք, սևհոգի մարդիկ խնդացէք,
Յայտնեցէք տեսակ տեսակ մեզ վրայ կարծիք, խնդացէք.
Այսքանը յայտնի գիտենք, նախանձն է ձեզի դրդողը,
Թափեցէք որքան կամենաք մեղք ու չարիք, խնդացէք։

Տեսել ենք, փորձուել ենք, ման ենք եկել ծով ու ցամաք
Կրծքերուս շատ են դիպել ծանր ու թեթև նետ ու սլաք
Ձեր տուած բրմբուլներու տեղը երկաթ կստանաք,
Չէք ունենալ պատառող, կծելու ժանիք, խնդացէք։

Հալածանքը, նեղութիւնը մեր ճակատին գրուած է,
Ձեր բաժին կերակուրը եփուած, առանձին դրուած է.
Կապկի պէս տանկ ու տնազ անելը ձեզի տրուած է,
Անուանում ենք մենք ձեզի մէկ շնազգիք, խնդացէք։

Ստացէք հայոց Ջիւանուց ձեր տուած նուէրը ձեզ,
Խնդրում եմ խելքի բերէ եղբայրական սուրբ սէրը ձեզ,
Ինչ կամենաք ուրիշին, նոյնը կամենայ Տէրը ձեզ,
Մաշեցէք, գալարեցէք սիրտ թոք ու աղիք, խնդացէք։

1898.

ԱԳԱՀ ՀԱՐՈՒՍՏ

Դուն այս աշխարհիցը ինչ պէտք է տանիս
Ագա՛հ հարուստ, ժլա՛տ հարուստ, չա՛ր հարուստ,
Որպէս դաշտի ծաղիկ դու շուտով կանցնիս,
Վատ անունդ միշտ կըմնայ անկորուստ։

Թէ այսպէս մէկ Կրեսոս կար Հայաստան,
Ագահ, անկուշտ, նախանձ իժ օձի նման,
Ո՛չ աղքատ կըսիրէր, ո՛չ ուսումնարան
Ո՛չ տանը մէջ ունէր կատարեալ ապրուստ։

Թէ խելք ունիս արի խեղճերուն սիրէ,
Առատասիրտ լինելը մեծ խնդիր է,
Ուսումնարաններուն գումար նուիրէ,
Խեղճ սաներուն նոյնպէս մշտական հագուստ։

Այդ քո տուած գանձդ ազգին որ կուտաս,
Կը աճի միշտ և կը մնայ անվնաս,
Ազգութիւնը քեզ կըտօնէ անպակաս,
Գովասանք կըլսես անթիւ ամենուստ։

Թէ Ջիւանուս լսես, ո՛վ մեծ ամիրա,
Շատ պատիւ կունենաս աշխարհի վրայ,
Հոգիդ արքայութեան ժառանգ կըդառնայ,
Օրհնութիւններ դու կըստանաս միշտ յերկնուստ։

1880.

ԿԱԽԱՐԴ

Կախարդներուն էր ես հաւատում, ո՛վ մարդ,
Խաբում են, քո գլխին անում են բժիժ,
Ապագադ չե՛ս գիտեր, որ կընկնես թակարդ
Իզուր տեղը յետոյ կըքաշես պատիժ:

Ստին յուսացողը իսկ բնաջինջ է,
Միտ խաբողաց ուղղութեան հետ կռւինճ է,
Նրանց գրի զօրութիւնը ոչինչ է,
Եւ չէ՛ կարող սրբել արտասուք կամ բիժ:

Ջիւան, կարծես ստութիւնն էլ մէկ ծէս է,
Ստախօսին մարդ խաբելը հանդէս է,
Կախարդներու ճշտութիւնը այսպէս է,
Ցաւած աչքին կպցնում են ծառի խիժ:

1873.

ՀԱՅ ԱԶԳԻ ԵՐԿԳԻՄԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Ո՛վ արտաքին քարոզիչներ, Փրկիչն Աստուած է, քաջ գիտենք,
Աւետարանի խորհուրդը մենք ձեզանից առաջ գիտենք,
Դուք գնացէք քարոզեցէք կռապաշտներուն սուրբ գիրքը,
Հաւատացողին նոր հաւատ քարոզողին գաճաճ գիտենք։

Մեր նախնիքը ոսկու հանքը հալել են, զուտն են դուրս բերել,
Ձեր նոր գտած փայլուն իրը վաղուց քննել ենք, գաճ գիտենք
Դուք վարձկան էք փող էք առնում, նրա համար մարդ էք որսում,
Դուք ճշմարիտ քարոզիչ չէք, մենք ձեզի մարդահաճ գիտենք։

Խղճով մարդ էք, մեզ ցաւում էք, հացի ճանապարհ ցոյց տուէք,
Աստուածաշէն մեր Սիօնը, անկարօտ, բարգաւաճ գիտենք.
Մի քանի մարդ գողանալը գայլի արհեստ է, սիրելիք,
Ձեր ջանքը դէպի մեր հօտը ձախ է՝ և միշտ անյաջ գիտենք։

Ձեր մտքերը խաղաղ տան մէջ ատելութիւն սերմանելն է,
Մենք այդպիսի համոզմունքը մէջը սև փուտ, կակաճ գիտենք
Թէպէտ մեր դրախտը հին է, ինքը անմահ հոգին նոր է,
Ջիւան, երբէք չի թառամի, մշտադալար կանաչ գիտենք։

1886.

ԴՈՒՐ ՉԵԿԱՒ

Չը նեղանաս գեղեցիկ, արարքդ ինձի դուր չեկաւ,
Այլասեռուած ես երևում, վարքդ ինձի դուր չեկաւ,
Ոչ մի սիրուն քու ունեցած գործերիդ պէս գործ չունի,
Գործ դրած կանոններդ, քու կարգդ ինձի դուր չեկաւ.

Կեղծ լացդ տուն կաւիրէ, հոգի կը հանէ ծիծաղդ,
Նման է տարտարոսին օթևանդ, կեցած թաղդ,
Չեմ կարող մօտդ մնալ, սիրտս չսիրեց կենցաղդ,
Արտաքուստ փայլուն, շինովի, սարքդ ինձի դուր չեկաւ.

Դժուար է մէկին ճարել աշխարհի մէջ քեզ հաւանող,
Հարճի պէս ոտքդ լիզող, գերու նման նազըդ տանող,
Որդիքդ արիւն խմող, ծառաներդ մարդ կլանող,
Քու սիրած հայրենիքդ, աշխարհքդ ինձի դուր չեկաւ։

Կերպարանքդ թառամեցաւ, անցկացաւ բանը բանից,
Սիրուններըը դուրս հանեցին քեզի իրանց շրջանից,
Սառուցի վրայի գիր է շուտ կը խլուի քեզանից,
Ստացած կեղծ պատիւդ, արարքդ ինձի դուր չեկաւ։

1897.

ԸՆԿԵՐԻՍ

Երբեք արմատացած ցաւ ունիս, ընկեր,
Համ աղքատ ես, համ հպարտ ես, համ յիմար,
Դարձրել են քեզ վաղվաղկոտ, անհամբեր,
Ման ես գալիս որպէս անմիտ խելագար։

Գիտեմ քու կարծիքով, հիմա ես վատ եմ,
Որ միշտ ամէն անգամ քեզ կընախատեմ,
Քիչ սպասէ, որ փաստերով հաստատեմ,
Թողած միւս արարքներդ քո վատթար։

Աղքատ ես, որ գիշեր ցերեկ չունիս քուն,
Եւ հպարտ ես, որ չես նստիլ էժան տուն,
Յիմար ես, որ քեզ կարծում ես դու գիտուն,
Ահա՛ իմ փաստերս ամենաճարտար։

Ստախօսութիւնդ որպէս մի նիզակ,
Աշխարհք իմացել է չի մտնիլ տոպրակ,
Արբեցող, թղթամոլ կեանքդ անառակ,
Ափրոդիտեան ախտով վարակուած, տկար։

Իւղը շատ տկի մէջ ինչ համ որ կուտայ,
Քո շնորհքդ էլ այնքան բանի պէտք կուգայ.
Խարդախ, շողոքորթիչ, քծնող, խաբեբայ,
Սուտ, անիրաւ, կեղծ համբաւի սիրահար։

1893

ՎԱՐԴԸ

Բիւլբիւլ քո նման քեզ վերայ փափագ չունի վարդ.
Ճիւէն

Ո՛վ պարտիզատէր ինչո՞ւ գոհունակ չունի վարդ,
Ճատ կարելի է բաղդը յաջողակ չունի վարդ.
Անուանը համեմատ գեղեցիկ չէ երևում ճիշդ,
Նման շուշանին փայլ ու սպիտակ չունի վարդ:

Ոտերը չորացել են, որը միշտ ծարաւ է անցնում,
Անձրևի կաթիլ երկնից օժանդակ չունի վարդ.
Նարդոս, շուշանը, նարգիզ ու շահպրակը տես մէկ,
Ափսոս, նրանց նման բարի վաստակ չունի վարդ:

Նա վառւում է, հառաչում է, դա նստած է հանգիստ,
Երբէք սոխակին սէր ու նմանակ չունի վարդ,
Ցերեկը արև չէ տեսանում, ամպերի տակն է,
Իսկ գիշերը խաւար, լուս ու լուսնակ չունի վարդ:

Բայց դու գովում ես թէ բոլոր ծաղկանց թագուհին է,
Ո՞ւր է, չէ դրած գլուխը պսակ՝ չունի վարդ,
Լո՛ւր իմ Ջիւանուս խօսքերը, ո՛վ պարտիզատէր դու,
Հասկացի՛ր նոր օդ ծծելու ճաշակ չո՛ւնի վարդ:

1876.

ՂՈՃՄԸՑ

Ո՛վ անզգայ, անխիղճ, կեղտոտ, իմաստակ,
Մինչ երբ վիրաւորես անմեղ սրտերը,
Ո՛վ Նեռի կարապետ, Հոգւոյ աւազակ,
Ինչո՞ւ կըպղտորես շքեղ սրտերը։

Հողմերից հալածուած ամպերի նման,
Թափառիս անդադար միշտ աստանդական,
Դարձեալ քեզի դու կանուանես գիտնական,
Միթէ կըհամոզուի՞ն ուժեղ սրտերը։

Ջիւա՛ն, թափի՛ր աչքիդ մարգարիտները,
Աստուած կուզէ հոգւով ճշմարիտները,
Կըպահէ անվնաս միամիտները,
Չի՛ թողներ անբժիշկ, անդեղ սրտերը։

1876-77.

ԿՈՇՏԸ

Ողճալի կոշտ, քեզի՛ լաց, քարի մասին իզուր մի՛ լայ,
«Ի՞նչ կըլլնի խեղճ քարը, անշուշտ վաղը անձրև կուգայ»,
Շատ սխալ է կարծիքդ, ինքդ շուտով ցեխ կըլլնիս,
Ջրհեղեղ էլ պատահի, քարը էլի քար կըմնայ։

Ձմեռը քիչ սառելով միթէ քարին հաւասարար,
Գարունը շատ մօտիկ է, տեսնենք քու ուժդ կերևայ.
Սպիտակ տաք վերմակդ յանկարծ մէկէն կըդառնայ ջուր,
Տաքութիւնից քեզ համար բնաւ յաւիտեան յոյս չկայ։

Յանապազ երաշտութիւն ո՞րտեղից է ամէն տարի,
Անպակաս է անձրևը, երկինքը առատ, միշտ կուտայ,
Իմ ցաւս խօմ կոշտը չէ, տկար Ջիւանի, քեզ հետ եմ,
Ընկերդ միշտ ուժեղ է, լաւ է մտածես քեզ վրայ։

1889.

ՅԱՆԴԻՄԱՆԱՆՔ

Ո՛վ գոռոզ մարդ, բաւ չէ՞ այդքան անխոհեմ, չիմար մնաս,
Ցաւ չէ՞ քեզ—լայն աշխարհը միշտ աղքատ ու անճար մնաս.
Մի՞թէ Աստուած քեզ կուզէ, որ վատ դրութեան մէջ մնաս,
Ինչո՞ւ այդպէս երեսանկեալ, ամենավատթար մնաս։

Աշխատանքդ թէ մէկ է, ծախքդ նրա պէս երկուս է,
Գործերդ քեզ չի երևայ, արածդ խելքից դուս է
Տե՛ս, քո այդ շռայլութեանդ տրտմողը իսկ Յիսուս է,
Դուն կուզես արդէ՛ն նրանով աշխարհը արդար մնաս։

Բաւակա՛ն է մոլութիւնը, ո՛վ տղէտ, քեզի տիրէ,
Աշխատի՛ր վատ գործերից փախի՛ր քանի անձդ ժիր է,
Ինքն Աստուած բարի է, գիտցի՛ր, բարութիւն կըսիրէ,
Զղջա՛, ո՛վ մարդ, սխալմունքդ, քանի՛ մէկ դու չար մնաս։

Ե՛կ Զիւանուս ասածը գոնէ խրատ ընդունէ քեզ,
Դուն հայի գաղափ ունիս, ամօթ չէ՞ որ մնաս դու եզ,
Հասկացի՛ր մարդկութիւնը, եղի՛ր համեստ և բարի հեզ,
Աշխարհը լոյս, աչքերդ կապ, ինչո՞ւ միշտ խաւար մնաս։

1873

ԲԱՐԵԿԱՄ

Անմտածել վեր վարող, սուտ խելագար բարեկամ,
Ափեղցփեղ խոսքերու թունդ սիրահար բարեկամ,
Աջ ու ահեակ չես նայում, խփում ես քար, բարեկամ.
Սրտեր է որ կոտորում ես յիմարաբար, բարեկամ,
Բերնիդ մողոտը քաշէ, խօսէ դադար, բարեկամ,
Ընտեղի մի բառաչիր, որպէս տաւար, բարեկամ,
Ասած է՝ թէ ամեն ձի չեն վարիլ մէկ մտրակով,
Դու փոխանակ խփելու՝ վէրք կըբանաս դանակով,
Երեխան չի կրթուիլ հայհոյանքով, ապտակով,
Կծողին են խփոտում երբ որ հաչէ՝ մահակով,
Անուանդ ափսոսալով խօսում եմ քեզ առակով,
Վարքդ պատիւ չի բերիլ քեզի համար, բարեկամ:
Վերջապէս քո հասակին չեմ կարող ձևել շապիկ,
Երբեմն մարդ ես լինում, երբեմն էլ պուրպատիկ,
Մարտ ամիսն ես իսկապէս փոփոխակի, շրջմոլիկ,
Մերթ ուռչում ես քեզուքեզ լոկ քամիով, ինչպէս տիկ,
Մերթ խելացի ես լինում, մերթ վայրենի գուեհիկ,
Մերթ լինում ես հողերուն դու հաւասար, բարեկամ:
Սովորել ես անտեղի այլոց դռները քարել,
Որովհետև անառակ մարդոց հետ ես կեանք վարել,
Քո գործըդ է ամբոխի խաղաղ կեանքը խանգարել,
Կենացդ մէջ բարի գործ երբէք դու չես կատարել,
Դու չես կարող ինձ նման անկեղծ մէկ հատը ճարել,
Ես կըճարեմ քեզի պէս մինչի հազար բարեկամ:

1886.

ԾԱՂԻԿ

Գարունդ անցել է, աշնան պտուղ ես,
Բայց նոր ես երևում, դեռ լաւ ես ծաղիկ,
Միամիտն հենց գիտէ գարնան պտուղ ես,
Չէ հասկացել ներկած կտաւ ես, ծաղիկ:

Պարտիզպանը միշտ մօտդ հարկաւոր է,
Որ քեզ հոկէ, բնութեանդ սովոր է.
Թէև գոյնդ լաւ է, տերևդ չոր է,
Ձեռք դիպաւ, կըփշրես, պառաւ ես, ծաղիկ:

Թարմութիւնդ վաճառել ես, սև երես,
Ի՞նչպէս քեզի առնեմ, սրտով սիրեմ ես,
Ինձ ասում ես վա՛րդն եմ, բայց դու վարդը չես,
Հոտ չունիս, առնողիդ մեծ ցաւ ես, ծաղիկ:

1890.

ՍԵՒ ՀՈԳԻ

Սև հօրից, սև մօրից ծնուել ես հաստատ,
Սիրտդ սև է, բախտդ սև է, գոյնըդ սև,
Վիշապազուն ես ծագումից հարազատ,
Փոփոխուելով ստացել ես հայի ձև։

Քու լեզուդ հայի է, սիրտդ օտարի,
Միամիտները քեզ կարծում են բարի,
Ինքդ գայլ ես, մորթից նման ոչխարի,
Քեզ չըճանաչողը կոյր է, կամ թէ խև։

Դու մինչև երբ մեր փարախի մէջ մնաս,
Մեր հօտը պառակտես, հասցնես վնաս,
Գայլի հետ կը խնդաս, հովուի հետ կուլաս,
Գիշատիչ թռչուն ես խօսուն առանց թև։

Արամազդի սիրելին ես առաջին,
Պատիւդ կ՚աւելնայ կրկին ու կրկին,
Քեզ չըդիպաւ դաժան մահի գերանդին,
Մեր բախտից ունեցար շատ երկար արև։

Սև ես, էլ կը սևնաս դու դատաստանին,
Հոգիդ պիտի սատանաները տանին,
Ինչ խօսք որ քու մասին ասաց Ջիւանին,
Սխալ չըկայ, դու այնպէս ես արդարև։

1885.

ՀԻՆ ՏԱՐԻ

Կարմրագոյն Հին-տարի, գնա մտիր գետինը,
Եւ չըտեսնենք քեզպէսը և դու լինիս վերջինը.
Հայոց համար չար տարի, արիւնարբու մարդակեր,
Բուի նման մարդատեաց, այրող, քանդող տնաւեր,
Որպէս նաև ջարդել տուիր անտէր եղբայրները մեր,
Անգութ գազան թշնամու ձեռքը տալով կացինը:

Քո նախորդն էլ անգութ էր, հայատեաց քեզի նման,
Նա էլ քիչ հայ չըկերաւ որպէս բորենի գազան.
Այդ քո արարմունքովդ մոռացրիր դու նրան.
Եւ գիւղ, քաղաք չըթողիր, դարձրիր աւեր խոպան,
Հայի արնով ներկեցիր բոլոր Տաճկա-Հայաստան,
Մայրը մանուկը մոռցաւ, այրը իր սիրած կինը:

Դու նեռի զաւակներու ձեռքը տուիր սուր դանակ,
Տարածեցիր ամեն տեղ, որպէս ցաւ համաճարակ,
Քեզի ո՞վ թելադրեց չար տարի, չար աւազակ,
Որ վարուեցար անտերունչ հայերու հետ այդ տեսակ,
Լաւութեանդ փոխարէն տար Բէլեարից յիշատակ,
Յուդայի պէս քեզի վարձ հայերի արեան գինը:

Ծնած օրիցդ ահռլիկ տխուր աղաղակեցիր,
Մահագուշակ ձայնովդ հայ սրտերը ծակեցիր,
Մեծամեծ ատեաններում հային պախարակեցիր,
Նրա կողմը խօսեցար, թշնամին շարակեցիր,
Ողորմութեան, գթութեան ողջ դռները փակեցիր,
Մնաց անտէր անպաշտպան անբախտ թորգոմածինը։

Խառնափնթոր արիւնոտ գործերդ թողիր կիսատ,
Փաթաթեցիր նոր տարու վզին ցաւերն անփարատ,
Տկարները ընկճուած կիսակենդան յուսահատ,
Ուժեղները անկամորթ խղճով բթացած, ժլատ,
Դարձրիր բոլորովին շէն երկիրը անապատ,
Դեւերուն պարգեւեցիր հրեշտակաց բաժինը։

Տայ Աստուած, չըհետեւէր նոր թիւը քո շաւիղին,
Դէպի լաւը և բարին գծէր իրան նոր ուղին,
Խաղաղութեամբ վերջանար դատը անբախտ հայ ազգին,
Վնասը չհանդիպէր ազգերի մէջ ոչոքին,
Թէ Ջիւանուս խնդիրը լսէ ազնիւ նոր-տարին,
Արիւնով չի ներկուիր քեզ պէս նրա մարմինը։

1896.

ՆԱԽԱՆՁՈՏ ՍԻՐՏ

Կակաչի պէս գոյնդ կարմիր
Սիրտըդ սև է, նախանձոտ սիրտ,
Դրսից երևում ես ընտիր,
Հոգիդ դև է, նախանձոտ սիրտ։

Ներքուստ տգեղ, մութ, խաւար ես,
Արտաքուստ քեզ կըզարդարես,
Ցեխը կրով կըշպարես, —
Դա էլ ձև է, նախանձոտ սիրտ։

Զարդարուն ծեփած գերեզման,
Գիտեմ մէջըդ թէ ինչեր կան,
Այժմ տեսնում եմ ամեն բան,
Լոյս, արև է, նախանձոտ սիրտ։

Բերանդ մեղրի պուտուկ է,
Լեզուդ թունաւոր մամուկ է,
Քեզ չ'իմացողը մանուկ է
Կամ թէ խև է, նախանձոտ սիրտ։

Ջիւանը գիտէ դու գէշ բոր ես,
Ցեղական ժանտ, նենգաւոր ես,
Դու նրանից թունաւոր ես,
Օձն անթև է՝ նախանձոտ սիրտ։

1898.

ԾԵՓԱԾ ՊԱՏ

Շատ մի մեծամտիլ, ուռիլ, ծեփած՜ պատ,
Կտորներդ քարհանքից են դուրս եկած,
Թէ չըլլինէր հմուտ վարպետ-քարահատ,
Կը մնայիր հողի տակը ծածկուած։

Քու մօտիդ խրճիթն էլ քեզի պէս մինն է,
Քեզ սիրունցնողը չափ ու կարկինն է.
Շնորհքը վարպետի ճարտար դրչինն է,
Որ դու այժմ այդպէս բարձըր ես կանգնած։

Կարո՞ղ ես դիմանալ ջրին, կրակին,
Օդի բարկութեանը, ահեղ կայծակին,
Մի ծաղրիլ հին ձեւով շինած տնակին
Նրա հիմքը քուկէդ ամուր է դրուած։

Միջինդ աւազ է, մի մաս կիր չրկայ,
Գաղտնիքդ ես գիտեմ, մի հպարտանայ,
Ո՞վ գիտէ շատ շուտով հետքդ չերեւայ,
Տեսնեմ որ քու տեղդ ջոկ տուն է շինուած։

1881.

ՏԻԿԻՆ

Ով դու ամբարտաւան, դուն անգութ տիկին,
Մինչեւ ե՞րբ անտեղի մարդկանց բեռ դառնաս,
Այդ ուժդ տուողը յետ կառնէ կրկին,
Թոյլ չի տալ որ դու խեղճերուն սպառնաս։

Միշտ երազ կըմնայ տեսած երազդ,
Միայն քե՛զ պէտք կուգայ ձեւած տարազդ,
Վերեւից ցած կիջնես, կըհատնի գազդ,
Օդապարիկի պէս, որքան համբառնաս։

Ջիւանի, ջրերը գլխէն ցածրանալ,
Նաւը ծովում միշտ յաջող չի ընթանալ,
Կայծ լինելուդ մասին մի հպարտանալ,
Բոցդ կը սպառուի, մոխիր կըդառնաս։

1890.

ՄԻՒՃՏԷՋԷՏ

Վարդին սոխակից հեռացնող, ո՜վ անիրաւ փուշ,
Կեանքերու զլրաւ փուշ.
Յուսամ կըլլնիս վառ կրակին մի օր գլրաւ փուշ,
Չես ճարի թաթաւ փուշ.
Մինչ երբ, ասա՛, անմեղ ծաղիկներուն խաբես անցնիս,
Կայծով լափես անցնիս.
Ո՛վ անպիտան արմատ 'ի բընէ, այտերդ սեաւ փուշ,
Պատճառում ես դաւ, փուշ,
Ոհ, որպիսի՜ անխիղճ թունալից խայթ կայ քու մօտդ,
Զօրանայ արօտդ,
Որքա՜ն նորահաս սրտերու ընծայում ես ցաւ, փուշ,
Արիւն ու շարաւ փուշ,
Թրթուրը, ճճին քեզանից խղճով են, ով անգութ,
Սակայն դու սեւ ու մութ,
Տարին քանի՜ հատ բերում ես սոխակ ու կաքաւ, փուշ,
Ջոհուած, դուռդ խաւ փուշ.
Վերջդ ձիւանս քաջ գիտէ, որ չորանում ես շուտ,
Անվարձ ու անօգուտ.
Ներգործութիւնդ անց չի կենայ էլ քու, պառա՛ւ փուշ,
Այրէ՛ դու ծարաւ փո՛ւշ:

1879.

ՍԷՄԸՑԻ

Ժամընթաց կեանքիս յարմար, ո՛վ սիրելիս, ինձ մխիթար չես,
Հակառակ կերպով ես վարվում, դու ակըմբի կառավար չես.
Գնա՛, ինձնէն հեռացի՛ր, ո՛վ անիրաւ, անբարիշտ, անգութ,
Գիտեմ անշուշտ, որ անբարեսէր ես և ինձի յարմար չես։

Խենէշ կերպարանքդ, բարքդ գրեմ, տամ քեզի, դու կարդա՛,
Կիմանաս դու սխալմունքդ, գիտեմ այնքան էլ յիմար չես՝
Նախանձոտ, վատասիրտ օձի նման միշտ խայթում ես այլոց,
Որ ունիս այդպիսի արատ, քեզ կըկարծես թէ վատթար չես։

Ցերեկը մինչ երեկոյ բամբասելով ման կուգաս մարդկանց,
Գիշերը միամիտ պարկած տեղդ անգամ դու դադար չես.
Ջիւանի երգիչը ամեն մի կերպով քեզի լաւ փորձեց,
Նկատեց վարք ու բարքդ, լաւ տեսաւ անկեղծ ու արդար չես։

1876.

ԱՅԺՄԵԱՆ ԿԵԱՆՔԸ

(Անկատար)

———

Կեղծ ու նենգամիտ մարդիկ շատերի տուն քանդող են,
Սրբութիւնը պղտորող և բարին անարգող են,
Բարոյական նուրբ ուղին յատկապէս խանգարող են,
Միշտ չարութեան հակամիտ, ցոփութեան յարմարող են
Այժմեան իմաստակները բոլորը սուտ ասող են.
Պորտաբոյծ և անառակ խառնակեաց շնացող են…

ՀԱՅԻ ԹՈՅԼ ԿՈՂՄԸ

Հայը Հային կը՛վնասէ,
Օտարք երբէք մեղաւոր չեն.
Հայերու սէրը պակաս է,
Իրար սիրելու սովոր չեն։

Հայերը այս բանով վատ են,
Իրարու ծուռ կընկատեն.
Մէկ-մէկու այնպէս կասեն,
Կարծես իրար հարկաւոր չեն։

Օտարին կըգովաբանեն,
Բայց իրար միշտ դաւաճան են,
Պապերէս մնացած բան են,
Այս ցաւերը մեզի նոր չեն։

Ջիւանս կասեմ անկասկած,
Մենք ենք տուել մեզի հարուած,
Օտարին մեզի հասուցած,
Բացած վէրքերը շատ խոր չեն։

1884.

ՄՈԼՈՐՈՒԱԾԸ

Դու աշխատանքովդ հաց պիտի ճարես,
Ինչ ազգի մէջ գնաս, ո՛վ մտամոլոր.
Այդ դու չես հասկանալ այնքան յիմար ես,
Կրօն փոխելով դու չես լինի ունեւոր։

Ինչո՞ւ ես հեռանում ազգից, երամից,
Քու հարազատ մօրից, քու բարեկամից,
Ազգիդ համար մեռնում ես միանգամից,
Գերեզման ես մտնում առաւել շատ խոր։

Աւազակաբարոյ անձը մարդասպան
Վերջ ու սկիզբը պիտի ելնէ կախաղան.
Որ ազգի մէջ գնաս պատիժ պիտի տան,
Երբ օրէնքով ճանաչուես դու մեղաւոր։

Քու բռնած ընթացքդ սխալ է, սխալ,
Ազգից հեռանալով քեզ օգուտ չես տալ,
Կրօնդ փոխելով դրախտ չես գնալ,
Արքայութեան համար գործ է հարկաւոր։

Ջիւան, մարդ չես դառնալ ազգիդ փտնելով,
Բան չես շահիլ հարուստ ծանօթ գտնելով.
Ճանճը փղի պոչի տակը մտնելով,
Կարծում է թէ ինքն էլ եղաւ մեծաւոր։

1895.

ՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Անզգամ ու անխիղճ մարդու գրպանից
Երբ պակասեց փողը—կըդառնայ դաշան,
Կուտէ ինքն իրան.
Դուրս կըգայ գայլի պէս իւր օթեւանից,
Կըխածէ ամենին կատղած շան նման,
Պէտք է զաւազան։

Այդ անբարոյական, անդըամ մարդը,
Թշնամի կը կըկարծէ բարեկամ մարդը.
Մանաւանդ որ խմեց անզգամ մարդը,
Այլ նա չի ակնարկեր ծանօթ, ազգական,
Կատէ ամեն բան։

Հոգու զգացումից չուզելով բաժին,
Կըդառնայ անասուն, անհոգի մարմին.
Կըկողոպտէ իւր ընկերը, դրացին,
Աչքին չի երեւալ սուրբ Աւետարան,
Եւ ոչ դատաստան։

Մերկ դաշոյնը ձեռին դուրս կուգայ փողոց,
Կըլափէ շատերին որպէս վառ. հնոց.
Կըհարուածէ հանդիպողին, կուտայ խոց,
Մէկին էլ կենացը նա տալով փախճան,
Ղրկեց գերեզման։

Տարածուելով ձայնը ամենայն մի տեղ,
Մինչ կիմանայ լուրը ատեանը աչեղ.
Կալանաւորելու դազանին ուժեղ,
Կառավարութիւնից կըգայ ոստիկան,
Կըբռնէ նրան։

1885.

ԱՆՍԿԶԲՈՒՆՔ ՄԱՐԴԸ

Պետնառւխծին նմանութիւն շատ ունի
Անսկզբունք մարդը, դիւրահաւանը,
Որովհետև հաստատ համոզմունք չունի,
Մարդ չի գիտեր, ո՛րն է աղօթարանը։

Անսկզբունք մարդը անապահով է,
Որովհետև ինքն իրանից խռով է.
Ում սայլին որ նստաւ, նրան կըգովէ,
Ամենին գործիք է նրա բերանը։

Դիւրահաւան մարդը, ինչպէս երեխայ,
Նրա սիրելին է, ով տուեց կակայ,
Դեղ կերած ձկի պէս ջրից դուրս կըգայ.
Շուտով կընկնի իւր թշնամու ուռկանը։

Քանի որ ճանաչում չունի բնական,
Հաստատ գործի՝ խելքը չի պառկի նրան,
Հողմավար, անարմատ, չոր ցախի նման,
Կըչափչփէ հողագնդի շրջանը։

Կատարած գործերն են թերի, ակամայ,
Ինչու որ սրտումը հաւատ, յոյս չըկայ,
Ճօմանու պէս հազար մարդու խօսք կուտայ,
Ո՛չ մէկին էլ չի լինի սիրեկանը։

Խղճիցը տանջուած, ցաւը շատ կապուտ,
Սուտերի պէս կանցնին օրերն անօգուտ.
Ճապկի պէս փոխում է հաւատը շուտ շուտ,
Կորուցել է հոգու նշանաբանը։

Մի բան կորուցածի նման՝ անդադար
Ման կուգայ աստ և անդ մոլոր ու շուար,
Իւր ունեցած վէրքին չըգտնելով ճար,
Քիչ կըմնայ բուկը ձգէ պարանը։

Ուղիղ ճանապարհից շեղուած, մոլորուած,
Հոգին հիւանդ, տխուր, սիրտը տոչորուած,
Խելքը քիչ կարճատես, մտքով պղտորուած,
Մոռացել է նախնեաց չափը-սահմանը։

Այդպէս մարդուն՝ մտքէն հանել է Աստուած,
Պատուի աստիճանից գլորել է ցած,
Ջարդըրուած նաւի պէս ծովումն ընկղմած,
Խաղալիք է դարձել ալեկոծմանը։

Սուրբ գիրքը չի կարդար, միտքն է անմաքուր,
Ղուրանից չի լսար երբէք բարի լուր.
Փրկչի լուսից զրկուած, հոգու աչքը կոյր,
Ոչ Բուդդան ճանաչէ, ոչ Բրահմանը *)։

Ունի կեղծ ու պատիր շողոքորթ լեզու,
Խօսքերը անկապ են, չի խօսիլ ազգու,
Դիւական օրէնքը կարծելով շինծու,
Նրա հետ ջրում է և բնականը։

Այսպէս մարդը գայթակղութեան քար է,
Բարութիւն չի զգայ, խորհուրդը չար է.
Որովհետև չի հասկանայ, յիմար է,
Իւր դէմ կըգըրգռէ իւր հարևանը։

Վերևն ասինք թէ՝ նա չունի սկզբունք,
Ով ինչ ասաւ, նրան կուտայ իրաւունք.
Տարին նոր՝ կըստանայ մի նոր համոզմունք,
Սկսում է ստել անցեալ տարուանը։

Արևելքում նշանաւոր կրօնների՝ բուդդայականութեան և բրահմանականութեան հիմնադիրներն են։

Այսպէս մարդոց միտքը շատացել է շատ,
Ոչ մի բանի, սրտով չեն կպչի հաստատ.
Փոփոխակի ծառ են, չեն ձգեր արմատ,
Ջուր տալով զզուել է խեղճ պարտիզպանը։

Զիւմն, ո՞վ էր տեսել այսպէս ժամանակ.
Մարդիկ առանց գոյնի և տարօրինակ,
Այնպէսներուն նմ կըվիժէ անգիտակ —
Անհոգ, աներկիւղած ուսումնարանը։

1883.

ՍԵՒ ՆԱԽԱՆՁ

Չկամ, մաղձոտ սրտից ծնած օձաձև,
Լոյսին խաւար ասել տուող, սև նախանձ.
Հոգիդ սև է և քու կերպարանքդ սև,
Բուստին ձաւար ասել տուող, սև նախանձ։

Անգութ անզգայ ես, քո խիղճդ մեռած,
Անստուեր մարմին ես անկիւնում ընկած,
Լեզուդ թունաւոր է և սիրտդ նեխուած,
Մարդուն տաւար ասել տուող, սև նախանձ։

Ջիւա՛ն, նախանձ մարդը չի լինիլ ուրախ,
Նրա կերած հացն է արիւն ու թարախ,
Ազնիւ հանքաբանին դարձնող խարդախ,
Ոսկուն կապար ասել տուող, սև նախանձ։

1890.

ՏԳԵՏԸ

Գիշերի պէս կ'անցկացնէ իր տիւը,
Տգէտ մարդը շատ գդալուն չի լինի,
Անզգամը չի գիտեր իր պատիւը,
Նրա մօտը բարի անուն չի լինի։

Սարերում մեծացած քրդի իշխանը
Չի հասկանայ քաղաքական պայմանը.
Հարիւր տարի կրթես անխելք անբանը,
Չըսպասես — նա իմաստուն չի լինի։

Ադամանդ չի լինի սև քարն անարժան,
Հազար գոյն տաս՝ դարձեալ նա է անպիտան.
Գեղեցիկը գեղեցիկ է բնական,
Տգեղը հանդերձով սիրուն չի լինի։

Երբէք խորհուրդ մի տար մարդուն խաբեբայ,
Միշտ որոնէ ճշմարտօրէն առարկայ.
Ջիւան, հիմ մի՛ ձգեր աւազի վրայ,
Կ'ասէ Տէրն, թէ այնտեղ տուն չի լինի։

1876.

Դ Ե Ր Վ Ի Շ

Մէկ կիրակի առաւօտ ղայֆումը նստած դադար,
Երգելով երգ հայերէն, ածում էի իմ քնար,
Ժողովուրդն էլ խռնուած ղայֆումը նստած գումար,
Լսում էին իմ երգը կարծելով իրանց յարմար,
Յանկարծ տեսայ դռնիցը մի մարդ ներս մտաւ օտար,
Տեսքիցը ճանաչեցի, որ սուտ դէրվիշ էր խաւար։

Նստաւ, քիչ հանգստացաւ, հարցրեցի. ո՞վ ես դու,
Ասաց՝ ես լաւ դէրվիշ եմ և բժիշկ եմ ահարկու.
Ես նրան սուտ կարծելով՝ խօսքերին չեղայ հլու,
Տեսայ որ խաբեբայ էր, աղքատաց արիւնարբու.
Հարցուցի կարդալ գիտե՞ս, ասաւ՝ տասներկու լեզու,
Չորս հինգ կտոր գիրք կապած աղլուխով անժումը կար։

Դրան փորձելու համար՝ տարանք մենք գինետունը,
Հարցուցինք, իմացանք որ Ղալանդար էր անունը,
Երբ գրքերը բաց արինք՝ քանդըուեց սրտի սիւնը,
Ճարտար լեզուն մունջ դառաւ, պաղաւ երակարիւնը,
Իսկ հաչելու կողմանէ նրանից լաւ էր շունը,
Նա իշու հէրն ու մէրն էր, ունէր ջորու գաղափար։

Բացի այլ լեզուները իւր լեզուն անգամ չըգիտէր,
Խաս բաները թող տուինք, գռեհիկ էր, խամը չըգիտէր,
Նրա միտքը խաւար էր օրը քանի ժամ չըգիտէր.
Իւր անձը ազատելու, ցոյց տալու պատգամ չըգիտէր,
Մարմնի վրայ կլինի քանի անգամ չըգիտէր,
Բնական կոյր կամ խուլին դեղ ցոյց կուտար օգտակար։

Ալէքսանդրապոլիցը կորեցինք նրա խէրը,
Ասինք՝ էլ կորէր այստից, քեզ անիծէ սուրբ Տէրը,
Երբ ձեռքիցը խլեցինք իւր հաւաքած նուէրը,
Մոռացաւ իւր կրօնը, մոռացաւ սրտի սէրը,
Նոյն րոպէին նա կորաւ, էլ չ'երեւցաւ ստուերը,
Կարծես անդունդը ձգեց նրան Աստուած բարերար։

Քանի՛ մէկ, քանի՛, հայե՛ր, անուններս խանգարենք,
Մեր տները քանդելով ուրիշինը դարդարենք,
Քանի՛ մէկ այս սնոտի մարդկանց կամքը կատարենք.
Արդեօք վարքով ընթացքով մենք ո՞ր ազգին յարմար‿ենք,
Ե՞րբ կըլինի այն օրը՝ մէկ գիտութիւն հնարենք,
Իմաստութեամբ շարժըուինք, Ջիւա՛ն, չըմնանք տխմար։

1874.

ՀՈԳԻ ՈՐՍՈՐԴՆԵՐ

Մարդու և կնոջ մէջ որոմ ցանողը,
Երկնքից աքսորուած Բէլիարն է մոլոր.
Մարդ ունեցող կնոջ ճամբից հանողը,
Եւային հանդիպող օձն է թունաւոր։

Սուրբ գրոց խօսքերով ամեն այր ու կին
Ասուած է, որ պիտի լինին մէկ մարմին,
Սրբացած միութեան մէջ մտնող անձին,
Ինձ հարցնեն, կախաղան է հարկաւոր։

Համայնքի ցեց է մարդն անբարոյական,
Պէտք է ընտանիքից վանել դուրս նրան,
Գնդակով սպանել որպէս մի գազան,
Եւ դիակը անել մինչ հազար կտոր։

Ջիւանի, վատ հոգին վատ է իւր ցեղից,
Մաքրութիւն դուրս չի գալ անասնամեղից,
Այդպէս մարդը պիտի վերնայ մէջ տեղից,
Ձատին կըվարակէ որպէս կեղտոտ բոր։

1890-91.

ՕՁԻ ՁԱԳԸ

Օձի ձագը ընտանենալ չը գիտէ,
Հարիւր տարի կրթես, նա ձուկ չի դառնալ,
Երբէք բնութիւնը թող տալ չը գիտէ.
Ժառանգաբար ոխակալ է, ոխակալ։

Քանի սառն է, փոքր է, խեղճ է երևում,
Երբ տաքացաւ, մեծցաւ, անում է ցնցում.
Յանկարծ տեսար մի վէրք բացեց քո սրտում,
Սկսեց կրծքիցդ արիւնը շռռալ։

Օձին մի՛ հաւատալ, միամիտ արդար,
Գլուխը ջախջախէ ուրտեղ որ տեսար.
Անպիտան սողունը թող չապրի երկար,
Քանի-որ դաժան է, գիտէ վնաս տալ։

Ջիւա՛ն, չ'լնի օձին լաւութիւն անես,
Սառած տեսնես տունըդ տանես, պահպանես.
Թունաւոր ատամը մինչև չըհանես,
Նա այնպէս ցեղ է, որ չի ստրկանալ։

1892.

ԱՆՓՈՐՁԸ

Միամիտ ու անփորձ երիտասարդը
Կանանց միջի հաշմ ծերուկին հաւանեց.
Թողեց բալասանը, մեխակը, վարդը,
Ծաղկոց մտաւ իշկաթնուկին հաւանեց:

Միամիտը խաբուեց, օձն առաւ ծոցը.
Թունաւորուեց. կրծքում բացուեցաւ խոցը,
Անճաշակը մտաւ բանջարանոցը,
Աղբճպանքին, խրխնտուկին հաւանեց:

Ջիւանի, խեղճ քուրդը չտեսած երկիր,
Խնձոր կարծեց, կերաւ պղպեղը կարմիր.
Երեխային ասին միրգ ջոկէ ընտիր,
Հոտած, փխրած ձմերուկին հաւանեց:

1888.

ՊԱՅՏ

Մի առաւօտ ես տանից շուտ դուրս ելայ միայնակ,
Գնում էի փողոցը, տեսայ մի լաւ օրինակ—
Տեսայ մի երիտասարդ, հեծած ձին էր սպիտակ,
Ուզում էր մի պայտ իշի՝ հանելով փողի քսակ,
Հարցնելով տղային՝ ասի այդ ինչ նպատակ,
Մի պայտով չէ՞ պայտուի չորստոտանի աւանակ։

Տղան դարձաւ դէպի ինձ, ասաւ՝ ով իմ բարեկամ.
Այս պայտը պիտի տանիմ մեր գիւղի տէրտէրին տամ,
Այնտեղ կուզեմ մի աղջիկ, որի անունն է Մարիամ,
Ես նրան շատ եմ սիրում, նա երբէք չունի խնամ,
Մեր տէրտէրը կախարդ է. ասաց, ինչպէս մի խախամ,
Շատ գործեր է կատարում պայտով ամեն մի տեսակ։

Ասի որ պայտը տանիս, ինչ կանէ տէր-հայրիկը,
Ասաւ՝ վերան գծում է կախարդական ծաղիկը,
Կրակարանի մօտը թաղում է այս պայտիկը,
Որքան տաքանայ պայտը՝ կտաքանայ աղջիկը,
Այնուհետև սիրուհիս կուղարկէ իւր մատնիքը,
Այլ չէ՛ մնալ նա ինձ հետ երբէք սիրով հակառակ։

Կրկին առաջարկեցի ես տղային գիւղական,
Ասի ճիշտ կը հաւատաս, որ լինի այդպիսի բան.
Տղան քիչ մտածելով տուեց այսպէս պատասխան—
Թէ ես սիրոյ ձեռքիցը եղած եմ Թափառական.
Ինչ ասեն կը հաւատամ, գուցէ տան ցաւիս դարման,
Ընկել է սրտիս մէջը, ասաց, մի անշէջ կրակ:

Տղային ափսոսալով՝ տուի այսպէս մի խրատ,
Թէ, եղբա՛յր, դրանք սուտ են, անմիտ բան են, անհաստատ,
Տէրտէրը քեզ խաբել է, դու մի՛ ընծայի հաւատ,
Նա ինքն էլ չի՛ հասկանում արածը լաւ է Թէ վատ,
Արի՛, եղբայր, հեռացիր, այդ փտանգից լեր ազատ,
Քեզ այդ բանին ղրկողը է ստուԹեանց հեղինակ:

Ինձ Թողնելով՝ հեռացաւ, գնաց տղան իւր գեղը,
Մտքովս ասի՝ շա՛տ ափսո՛ս, խաբուել է խեղճ անմեղը,
Նա կարծում էր՝ Թէ տարաւ ունեցած ցաւի դեղը.
Հիմա դուք լաւ կշռեցէք այս տէրտէրի ուղեղը.
Երանի՛ ժողովրդին, որ սա է հանճարեղը,
Ո՛վ Ջիւան, էլ հայերը ինչո՞ւ կերԹան չէ–Ր–ջ:

1876.

ԳԻՏՈՒՆՆ ՈՒ ՏԳԷՏԸ

Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ,
Տգէտի հետ մեղր ուտելը դժուար է,
Գիտունը կը ճարէ վերջն իրան հանգիստ,
Բայց տգէտը նորէն էլի չիմար է։

Ո՞վ կասէ բնական իմաստուն ծնայ,
Ուսում չըգիտցողը անկիրթ կըմնայ,
Խոզը ցեխը տեսաւ՝ անշուշտ կըգնայ.
Թէկուզ վիզը հարիւր մարգարիտ շարէ։

Գիտութիւնը մէկ արև է անխաւար,
Ծովից ոտով կերթայ առանց նաւավար,
Բայց տգէտը չունի ուղիղ գաղափար,
Որովհետև հոգւոյ աչքը խաւար է։

Ջիւան, մարդկութեան մէջ խեղճ է չիմարը,
Յառաջադէմ է լեզուագէտ, ճարտարը,
Թէ կուզես որոնէ ամբողջ աշխարհը,
Իմաստունի մօտ տգէտը տկար է։

1869.

ԱՊԵՐԱԽՏ

Չարասիրտ, նախանձոտ մարդը ընկերին
Չի ուզեր, որ լինի ապահով, խաղաղ,
Եթէ տեսնի մի նոր դարդը ընկերին,
Ամբողջ տարով նա կը մնայ անծիծաղ։

Այսպէս մարդը միշտ կը քաշէ դէպ իրան,
Իրա կողմն է տաշում ուրագի նման,
Եթէ իւր ընկերին մի չնչին բան տան,
Ինչո՞ւ ինձ չըտուին, կասէ, շատ աւա՜ղ։

Սա իւր վատ կրքերի դարձել է գերին,
Ոչ զաւակ կը սիրէ և ոչ ամուսին,
Թէև մարդ է, սորան կասեն մարդածին,
Մի շան չափ էլ չի ճանաչիլ հաց ու աղ։

Ջիւա՜ն, բարի մարդկանց մօտ սա յետին է,
Անունով ստուեր է, գործով չնչին է,
Այսպէս մարդը հոգի չունի, մարմին է,
Վաղուց խիղճը մեռած՝ մտած է դագաղ։

1878.

ՂՕՃՄԱՅ

Իմաստունը տգէտի բանից չի ցաւիր,
Խելագարի գործը հաշիւ չի լինիր,
Սիրահարը սիրականից չի ցաւիր,
Սիրոյ ապարէգը կռիւ չի լինիր։

Գիտութեան ճրագը յարաժամ վառ է,
Տգիտութեան վերջը մահ կը պատճառէ.
Ազամանդը հասկացողին վաճառէ.
Տգէտներու մօտը պատիւ չի լինիր։

Ամեն մարդ չի կարող լինիլ բաղդաւոր՝
Թէկուզ լինի ճիշտ դահակալ, թագաւոր,
Պայազատը բնական է հարկաւոր,
Յիմարը կարդալով ազնիւ չի լինիր։

Ջիւան, զուր է ցուցամոլներու ջանքը.
Իրանց օգուտ չի տար զուր գովասանքը,
Մօտն է ձայնը, քայլքը իւր կերպարանքը,
Ագռաւը գովուելով արծիւ չի լինիր։

1870.

ՆՈՐ ԵՐԳ

Եօթը տարի պաս պահեցի քու մասին,
Որ ես ու դու ընկեր լինինք միասին,
Ինձ խաբեցիր դտար ուրիշ ամուսին.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

Ագռաւին ինչ պէտք է սիրել աղաւնեակ,
Խարդախ մարդը չըգիտէ սէրն անապակ,
Քեզ չար դեւիդ ես կարծեցի հրեշտակ.
Գնա՛, դնա՛, անխճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

Մինչ չըթողնես քու պատուի հետ խաղալդ,
Լոկ խօսքերով չի ուղղուիլ սխալդ,
Այսուհետեւ ուշ է քու ինձ սիրտ տալդ.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

Սուր դանակ է քու երկսայրի բերանդ,
Գործդ նման չէ հռչակուած անուանդ,
Ո՞րտեղ մնաց ինձ հետ արած պայմանդ.
Գնա՛, գնա՛, անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

1893.

ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԳ

Փթած ու բորբոսնած, մքլած ապրանքդ,
Նորի տեղ չի անցնիլ, Նպարավաճառ.
Անմեղ մի գորգոռալ զուր կանցնի ջանքդ,
Շատ ենք լսել այդպէս կեղծուպատիր ճառ:

Հին ապրանք կայ երկու հազար տարեկան,
Բայց նորից էլ նոր է, անփուտ յաւիտեան,
Ինչպէս ոսկին ադամանդը պատուական,
Քանի աշխարհը կայ չեն մաշուիլ իսպառ:

Ծախած ապրանքներդ իրաւի նոր են,
Բայց լխկած ու մքլած սոխ ու սխտոր են.
Այժմ կերակուրի անհարկաւոր են,
Ո՞վ փող կուտայ կառնի, կըլինի ցանցառ:

Նորութիւն կայ յարգելու է ճշմարիտ,
Ինչպէս զտուած գոհար անգին մարգարիտ,
Բայց կայ նորութիւն էլ, անհոտ է վտիտ,
Որպէս որ սառուցի վրայ գրուած տառ:

Երկուսի մէջն էլ կայ յարգելի խոտան,
Իսկապէս հնութեան և թէ նորութեան,
Երկուսից էլ լաւը ընտրել իսկական,
Այդպէս պէտք է մեզի անել անպատճառ։

Ջիւանի, առանց հիմ երբէք տուն չըկայ,
Որպէս առանց ծնող չի ծնիր տղայ,
Ինչքան որ պտղատու ճիւղեր ունենայ,
Ծառը իրան արմատովն է կոչւում ծառ։

1894.

ԲԱՆ ՉԻ ԼԻՆԻ

Գոմէշ մորթէ արիւն դուրս գայ,
Ճնճղուկից բան չի լինի,
Ծաղիկ ժողուէ որ մեղր տայ,
Իշկաթնուկից բան չի լինի։

Պատերազմի դաշտի վրայ
Ե՞րբ են ուղարկում երեխայ,
Գտի՛ր, ընտրէ՛ հզօր հսկայ,
Խեղճ լամուկից բան չի լինի։

Վախկոտները տղամարդ չեն,
Նրանք կանանց հաշուի մէջ են,
Ազատ մեծցած քաջեր պէտք են,
Խեղճ ստրուկից բան չի լինի։

Ջիւա՛ն, մարդը անօգնական,
Խեղճ կըմնայ միշտ յաւիտեան.
Թէ չունենայ հզօր պաշտպան,
Որբ մանուկից բան չի լինի։

1893.

ՄԷԿԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Յոյս դրի կարողութեան,
Խենթը առայ կնութեան.
Կարողութիւնը գնաց,
Խենթը մնաց անբաժան։

Դարձաւ մէկ թունաւոր լուծ,
Ծոցս մտաւ ինչպէս գլուծ,
Բերած օժիտը մաշուեց,
Ինքը մնաց ինձ պատիժ։

Փողը կարծեցի ես կեանք.
Ո՛չ թէ կինը սփոփանք,
Կուրացայ փողի համար,
Իմ գլխիս բերի փորձանք։

Իբր թէ ես կին առայ,
Ոչ թէ կին պատիժ գտայ,
Մինչեւ ի մահ նրանից,
Երբէք ազատուել չըկայ։

Ինքս եմ սրել սա Հաստատ,
Ու ոքից չունիմ գանգատ.
Ինձ տեսնելով քեզ խղճա՛,
Նո՛ր կի՛ն ուզող, քեզ խրատ։

Աչքդ բա՛ց արա որդի,
Մի՛ հաւատալ ոչ ոքի.
Փող մի ընտրիլ, կի՛ն ընտրէ,
Որ քեզի տայ նոր հոգի։

Թէ չըլսես իմ խօսքիս,
Փողի չետևը ընկնիս,
Դժոխքի վառ կրակում,
Վերջդ ինձ պէս կըլինիս։

1897.

ԿՈՒԶԵՄ

Մութ ու խաւար աշխարհից լոյս աշխարհ գնալ կուզեմ,
Երեսս լոյս աղբիւրի ջրով լուանալ կուզեմ.
Մարմինս թառամել է, հոգով մանկանալ կուզեմ,
Կազդուրիչ, սնունդ տուող գրքերից կարդալ կուզեմ.
Սիրոյ սուրբ հեղինակի տեղը իմանալ կուզեմ,
Թէ ընդունեց, չըմերժեց, իւր մօտը մնալ կուզեմ։

Տանուտէրինը տարեկան նորահաս գեղանի է,
Հուչակաւոր չքնաղ է, սիրուն է, անուանի է,
Ոչ թէ միայն ինձ համար՝ աշխարհին պիտանի է.
Նոր-նոր հանդերձներ կուզէ, մի քիչ մեծարտանի է,
Ճարտարախօս, բանիմաց, կայտառ ու լեզուանի է,
Եղբայրներս թէ թողին, սէրս նրան տալ կուզեմ։

Այծեամի, եղնիկի պէս պտրող որսորդ շատ ունի,
Իւր մօտ եկող-գնացող գինուած անցորդ շատ ունի.
Նազելոյս ձեռքը խնդրող սիրոյ միջնորդ շատ ունի,
Թափառական տարագիր ճանապարհորդ շատ ունի,
Լաւութիւն չըկամեցող հակառակորդ շատ ունի.
Նրա մասին շարունակ սգալ ու ողբալ կուզեմ։

Լուսամուտները փակուած, տունս մութ ու խաւար է,
Խաւարից ազատուելու յոյս չունիմ, անհնար է.
Գիշերուայ զօրութիւնը դեռևս շատ կ՚երկարէ,
Քանի որ առաւօտը, ցերեկը անկատար է.
Իմ սիրոյս հեղինակը վիրաւոր է, տկար է,
Բժիշկ հրաւիրելով ցաւը հասկանալ կուզեմ:

Ջիւանի, կին բժիշկը քու հիւանդիդ դեղ չի տայ,
Նրա համար իւր շահից դէնը ուրիշ բան չըկայ.
Տաք տաք ճառեր կըխօսի, լեզուով շատ կը խոստանայ,
Գործով նա իւր տեղիցը մի քայլ առաջ չի դնայ,
Մէկ բժիշկ կայ թէ օգնեց, հիւանդդ կ՚առողջանայ,
Նրա ասած խօսքերուն հոգով հաւատալ կուզեմ:

1899.

ԱՆՄԻՏԸ

Սխալուեցայ տեղիք տուի անմտին,
Երբես առաւ, ելաւ նստաւ իմ ուսին.
Ես նրան իմ բարև տալս զղջացի,
Որովհետև շատ ու շատ ցաւ զգացի.
Յետոյ դարձայ ես ինձ ու ինձ ասացի —
Անմիտ մարդուն պատիւ զուր է գլխովին։

«Իր չափը չըճանաչողից հեռու կաց» —
Ինձի ասաւ մի պատուելի բանիմաց.
Անմիտ մարդը թէ լինի էլ սրբակեաց,
՚Ի բա́ց վանէ դու քեզանից, միշտ ՚ի բաց,
Նեղը ընկաւ, մօտդ կանէ լաց ու թաց,
Միտքը այլ է — մի՛ խղճար ամենևին։

Անմիտ մէկին եթէ տուիր գովասան,
Մեծ մարդու տեղ նա կըդնէ ինքն իրան,
Կըսկսէ հպարտանալ բաւական,
Ուռիլ, փքուիլ հնդու աքլորի նման,
Կեղծ գովեստը համարելով իսկական,
Կըմոռանայ գրութիւնը առաջին։

Նա սիրում է ակումբներում լինել շատ,
Այլոց գինին անչափ խմել, միշտ առատ.
Խօսելու մէջ չի՛ որոշեր լաւ ու վատ,
Անմտածել վեր կըվարէ անընդհատ.
Փէլթակի մէջ, իշամեղուին համեմատ,
Կըվնասէ բջիջները Թանկագին։

Ջիւա՛ն, չըմտածող մարդն է անզգայ,
Կարծես մէջը ամօթ, պատկառանք չըկայ,
Թէ որ մէկի տունը խնճոյքի գնայ,
Անպատճառ այն տանը մէկ վնաս կուտայ.
Ով որ նրան հրաւիրեց, կըզղջայ,
Ուրտեղ մտաւ, վէճ կըբանայ ահագին։

1885.

ԱԶԳՈՒՐԱՑԸ

Ով որ իւր ազգն ուրանայ,
Երկու աչքով կուրանայ.
Յետնեալ աղքատի նման,
Դռնէ ի դուռ մուրանայ։

Կշտին դիպչի գեղարդը,
Սրտիցը Թափի լեարդը,
Դժոխքի բռնցկելիք
Լինի ազգուրաց մարդը։

Կեղծ ու պատիր հնչողին,
Կատուի պէս մռնչողին,
Աստուած աշխարհից ջնջէ
Հայ անունը ջնջողին։

Հայը որբ ժողովուրդ է,
Օտարաց մէջ խառնուրդ է.
Ազգուրաց, աստուածուրաց—
Երկուսը մէկ խորհուրդ է։

Երբ որ Հայը գումարուի,
Նրան չի՛ հաւասարուի.
Հայերէն չըգիտցողը
Կիսատ հայ կըհամարուի։

Ազգուրացը անմիտ է,
Իւր ազգին ծուռ կըդիտէ.
Բթամիտ շահասէրը,
Ազգութիւնը ինչ գիտէ։

Որոնէ՛ Հայաստանը,
Հայրենիքիդ նշանը.
Ինչպէս հայ ծնար մօրից,
Հա՛յ մտիր գերեզմանը։

Ո՛վ դու հայ մարդ, զօրացիր,
Լուսնի նման նորացիր.
Ոչ այլազգին անարգէ,
Ոչ քու ազգդ ուրացիր։

Ինքնիշխան անձիդ տիրէ,
Կեանքդ Նրան նուիրէ,
Քրիստոսից աւանդուած
Հայի կրօնն էլ սիրէ։

Աստուած տուեց նմանը,
Ամենին իւր արժանը.
Ազգուրացը Վասակն է,
Ազգասէրը Վարդանը:

Թէ կըյիշուի Վասակը,
Բայց վա՛տ է նպատակը.
Պիտի խօսուի միշտ բարի,
Վարդանայ յիշատակը:

Պատմութիւնը բարեւէ՛,
Մէկ ժամ նրան պարզեւէ՛,
Ահա՛ երկու ճանապարհ—
Որին կուզես հետեւէ:

1876.

ԻՄ ՉԸԿԱՐԾԱԾԸ

Աշխարհումս ում որ բարեկամ գիտցայ,
Նա փոխանակ՝ ինձի հակառակ դարձաւ․
Ում որ հաւատարիմ, ուղիղ հասկացայ,
Ազգ ատող, ուրացող՝ չար Վասակ դարձաւ։

Ինձ չ՚օգնեց իմ սիրած լաւ բարեկամս,
Մինչ ուրախ էր՝ տխուր դարձաւ իմ ժամս․
Չըհասկացայ, զուր կորուցի դրամս,
Նժոյգ ձի կարծածս աւանակ դարձաւ։

Ջիւանին եմ, իզուր թառամեց վարդս,
Աւար գնաց կայքս, կալուածքս, զարդս
Արդար ու խելամուտ ճանաչած մարդս
Տես ընդհակառակը—աւազակ դարձաւ։

1874.

ԳԱԶԷԼ ՋԻՒԱՆԻ

Շատ քնեցար, սիրելի, լոյսը կտուրից անցկացաւ,
Մայրը մտաւ լուսինը, դէմի բլուրից անցկացաւ.
Քեթոցը այսուհետև էլ չի կարող պատսպարել,
Մի ահագին այծ դառաւ, ուլը մսուրից անցկացաւ։

Այրի, անբուն, խեղճ հաւի ձագերը մէկ-մէկ որսալով,
Կեղծաւոր նենգ աղուէսը հաստատ ուրուրից անցկացաւ,
Դէպի ծովը հասնելու շտապով արագ վազելով,
Մայր Արաքսը խենդացաւ, ահռելի Քուռից անցկացաւ։

Լուսաւոր ժամանակ է, փոքրը մեծին չի հաւանում,
Տէս, Ջիւան, զարգացումով հարսը կեսուրից անցկացաւ։

1888.

ՀԱՅ ԱՂՋԿԱՅ ԲՈՂՈՔԸ

Ով որ ինձ չի սիրել, խնդրում եմ, ասէ՛ք,
Ես նրան ո՞նց սիրեմ կամ լինիմ ընկեր.
Չէ՞ որ ստիպելով մեզ կը վնասէք,
Շատ կըթշուառանայ յետոյ կեանքը մեր։

Փեսան ինձի է պէտք թէ քեզի, հայրի՛կ,
Քո հաւանած մարդով ես չեմ երջանիկ,
Երբ սիրով կապուած չեն տղայ ու աղջիկ,
Նշանը անհիմն է, պսակն անվաւեր։

Հա՛յրիկ, քու բաղձանքդ բարի բաղձանք չէ,
Այդ քու տուած կեանքդ ինձ համար կեանք չէ.
Աղջիկ սեւն էլ մարդ է, ծախու ապրանք չէ,
Փող շահելու առարկայ չէ օգտաբեր։

Տո՛ւր ինձ այն փեսային, որին կըսիրեմ,
Գնամ ուրախ սրտով կեանքս նուիրեմ.
Այնուհետև հաստատ ես պարտադիր եմ,
Քեզ համար աղօթել ցերեկ և գիշեր։

Դու ինձ մի՛ տար մեր թշնամու զաւակին.
Չեմ կարող դիմանալ ես այդ կրակին.
Ո՞նց թողնեմ իմ սրտի ընտրած Հայկակին,
Ո՞վ ունի նրա պէս գեղեցիկ պատկեր։

Ես չեմ զատուիր իմ Հայկակից յաւիտեան,
Ինձ համար մեռած է քո ընտրած փեսան.
Կրսպանեմ ես ինձի՝ չեմ դնար նրան,
Ծնող ես, մի՛ դառնար որդուդ գլխակեր։

Մի աղջկայ բերնից լսել եմ հաստատ,
Այս խօսքերը հօր դէմ խօսում էր ազատ...
Թէ տեղը չըգտաւ մի աղջիկ արմատ,
Շուտով կը թառամի որպէս վարդի թեր։

1884.

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Բարոյական ճանապարհից շեղուողին,
Զրկող, տուն աւերող սրիկայ տեսայ.
Քննեցի իւր խղճիցը նեղուողին,
Պատժի ու վնասի ենթակայ տեսայ։

Նկատեցի անպարկեշտը անիրաւ,
Խեղճ անձը ցոփութեան արել է զրաւ,
Ով որ իզուր տեղը շատ երդում կերաւ,
Ստախօս, անազնիւ, խաբեբայ տեսայ։

Ուշք դարձուցի անզգամի պատկերին,
Ոչ իրան համար է և ոչ ընկերին.
Օրերը անօգուտ անցուցած ծերին,
Նկատելով խելքը՝ երեխայ տեսայ։

Խենէշ ու պորտաբոյծ երիտասարդը,
Զոյգ ոտքով ընկել է մահուան թակարդը.
Ձեռնունայն, անարհեստ, խղճալի մարդը,
Հարուստներու դուռը միշտ ծառայ տեսայ։

Մէկը ելաւ կեղծ մուրհակներ հնարեց,
Իւր դրացու դէմը որոգայթ լարեց.
Ով որ իրան իրաւախոհ համարեց,
Յանցաւորին պաշտպան՝ սուտ վկայ տեսայ։

Ով իրան հռչակեց հասկացող արթուն,
Թմրած գտայ նրան, ոչ թէ զուարթուն,
Այլոց ձրի եղիք զուարթուն մարդուն,
Ժլատ ու անողորմ հրէայ տեսայ։

Բաղդաւոր չէ՛ լինի ամեն երեխայ,—
Ունենալ լաւ ծնող, բարի ապագայ.
Լաւ կրթութիւն չառնողներուն համարեա,
Մեծ մասը անպատկառ, անզգայ տեսայ։

Ի՞նչ օգուտ՝ ունենալ վիթխարի մարմին,
Հոգին պստիկ լինի, գործերը չնչին,
Մոլի, ուժեղ երիտասարդ կտրճին,
Բանտը պարկած՝ ոտքերում շղթայ տեսայ։

Երկինքը ամպամած, արևը խաւար,
Մշուշով պատած է բլուր, դաշտ ու սար.
Գայլի ահից հօտը ընկած սար ու քար,
Բայց հովիւը քնած՝ բացակայ տեսայ։

Իզուր կըփչանայ տգէտի ձիրքը,
Հոգու վրայ տիրանալով չար կիրքը,
Խաժամուժ ամբոխի կարգալով գիրքը,
Անկապ, առանց մտքի՝ խօրաթա տեսայ։

Ճռայլները իրանց անձը մատնել են,
Իզուր տեղը քսակները հատնել են.
Խելառները ինչ աշխատել, փատնել են,
Խելացիներու մօտ մամօնայ տեսայ։

Ցուցամոլ, նմանող անձն է շատ ճլուն,
Ի՛նչ տեսաւ՝ կըչարի, կարծելով սիրուն,
Հագուստով ու ձեւով մեր Եւրոպացուն,
Զարգացումով միջին Ասիա տեսայ։

Դառն վիշտ է ճախարակի արածը,
Մանողի վրայ է խօսում մանածը.
Սկզբէն մինչ այսօր չըտեսնուածը,
Իմ անբախտութիւնս ես հիմա տեսայ։

Բախտը կարճատես է թէ քննես մօտիկ,
Խեղճ մարդուն կընծայէ սիգաճեմ աղջիկ,
Ըրժանաւորը՝ խեղճ, միշտ ապերջանիկ,
Անարժանը՝ հարուստ ամիրա տեսայ։

Մարդ կայ ծառայում է օտարի շահին,
Քամիով իւր անձը տալիս է մահին,
Մաքրութիւն պահանջող առողջապահին,
Ամիսներով աղտոտ, անլուայ տեսայ։

Ջիւան, բարութիւնը կըյաղթէ չարին,
Ինչպէս լոյսը հակառակ է խաւարին.
Նա է տալու յաղթանակը աշխարհին,
Ում որ արիասիրտ գործունեայ տեսայ։

1884.

ՄԱՐՏ ԱՄԻՍ

Այս տարի դու ինձ դուր չեկար, ով բօթաբեր մարտ ամիս,
Դարձուցիր մեր սրտերը ցրտից աւեր, մարտ ամիս,
Սառուցով վեր շարեցիր սուրբ դուռը մեր մարտ ամիս,
Մանուկների թշնամի, թառամած, ծեր մարտ ամիս,
Թէև գարնան մօտիկ ես, երբեմն ջերմ, մարտ ամիս,
Ունիս դաժան տաղտկալի ձմրան պատկեր, մարտ ամիս։

Եօթն աւուր գալած էիր, գնացիր ցուրտ որսալու,
Մատաղահաս գառները որ չըթողնես մանգալու.
Այն օրուանից երեխայք չըգնացին կարդալու,
Տոչորուած ծնողները սկսեցին ողբալու,
Ցրտի, բուքի երկիւղից մանուկները խաղալու
Տանից դուրս չեն կարող գալ ցերեկ-գիշեր, մարտ ամիս.

Փոխանակ պարզ տաք օրեր, բերիր նոր ձիւն, ցուրտ ու բուք,
Ինչ ունէիր թափեցիր մեզի վրայ գայրացուք,
Հորիզոնդ ամպամած, առանց արև չարաշուք,
Լացուցիր ժողովուրդը թափել տուիր արտասուք,
Գարնան էլ յոյս չըթողիր քո երեսին լինի թուք,
Որ չըներկայացնես այսպիսի դեր մարտ ամիս։

Փետրուարը տիկ եղաւ, խենթ, քեզի շինեց բերան,
Վատ անունը դու եղար, նա յետ քաշեց ինքն իրան,
Ես քու լաւութեանդ դէմ ինչ անուն տամ ածական,
Որ հովանայ սիրտս իմ գէթ մի վայրկեան, ով դաժան,
Անտերունջ խեղճ գառները գիշատող գայլ իսկական,
Բոլոր ամիսներու մէջ չունիս ընկեր, մարտ ամիս։

Խնդրում եմ եկող տարի էլ չըգաս, ով անիրաւ,
Թէ պիտի հետդ բերես մեզի համար հոգս ու ցաւ,
Քեզի գարուն գիտնալով մենք չըհագանք տաք հալաւ,
Ցրտից վէրք ստացանք, սրտերս կապեց շարաւ,
Կտրեցիր աղբիւրներս մնացինք վառուած ծարաւ,
Նոր բըքաբեր հողմովդ դու սառնասիրտ մարտ ամիս։

Այս տարի մեզ խեղճերուս սրտերուն դրիր դանակ,
Ձատիկներս սև արիր պասերըս անընդունակ,
Քանի չորս օր ունիս կարճ է կեանքդ չար մշակ.
Ապրիլին մեծ յոյս ունիմ որ լինի պարզ արեգակ.
Կուգայ մայիս—յունիսը, յուլիսին կասեմ շիտակ,
Պիտի լսես ամաչես մինչ սեպտեմբեր, մարտ ամիս։

1887.

ԶԱՏԻԿ

Կերպդ դուր չի գալիս ինձի այս անգամ.
Տրտում ու տխուր ես, անծիծաղ, զատիկ,
Գարունդ եղկելի, արևդ անհամ,
Օրերդ ամպամած ցուրտ ու պաղ, զատիկ։

Հայրդ հիւանդոտ էր, մայրդ նոյնգունակ,
Հարկաւ կրծնէին քեզ նման զաւակ.
Անդադար անում ես լաց ու աղաղակ,
Քուն ու հանգիստ չունիս անխաղաղ զատիկ։

Յիսուն օր ծում ու պաս պահեցին մարդիկ,
Որ քեզանով գոնէ լինին երջանիկ.
Աւելացաւ հոգս ու ցաւերն հինգպատիկ,
Ոչ խնդում ցոյց տուիր և ոչ խաղ, զատիկ։

Քու շնորհքդ կարմիր ձուն է, այն էլ սուտ.
Հաւ չըկայ, եղածն էլ մնաց անպտուղ.
Բարիքներից թափուր կարաս ու բղուղ,
Տուն կայ որ չունի դեռ հաց ու աղ, զատիկ։

Մթերքներդ խիստ թանկ, փողը սև աղուէս,
Աշխատանքի աղբիւր չըկայ մշտապէս,
Խեղճը ինչով սարքէ կեր ու խում, հանդէս,
Փոխան գառի չունի աքաղաղ, զատիկ։

Պապերդ ունեւոր հայրդ միշտ աղքատ,
Իսկ հօրդ պատճէնը, ճուտն ես հարազատ,
Տարիս քառասունուվեց ապրել եմ լաւ, վատ,
Չեմ տեսել քեզ նման խեղ ու կաղ զատիկ։

Կերթաս հրապարակ՝ ոչ մի բան չըկայ,
Պաշար բերող գիւղացիք են բացակայ.
Իրանց համար ապրուստ չունին առօրեայ,
Ո՞րտեղից ցոյց տան մեզ լաւ կենցաղ, զատիկ։

Երեսները թթուած, աչքերը պղտոր,
Մարդիկ ման են գալիս, բայց մտամոլոր.
Դու անբախտ ես, թէ ամբոխն է չքաւոր,
Այս տարի չեն անում շատ մատաղ զատիկ։

Քեզնից կըսպասէինք ծաղկեալ նոր գարուն,
Ցրտից ազատուէինք մարդ թէ անասուն.
Հակառակը ինքդ եղար ցրտի բուն,
Ոտքդ ու ձեռքդ սառած ձիւնաթաղ, զատիկ։

Ոչ արևդ տաք է, ոչ օդդ պայծառ,
Ոչ ծաղկեալ դաշտ ունիս և ոչ կանաչ ծառ.
Գանգատում է ամեն նպարավաճառ,
Այս տարի շատ ծոյլ ես ու դանդաղ, դատիկ:

Ամեն ոք մի տեսակ ցավով կրտքայ,
Թէ աղքատ թէ հարուստ ամենը կուլայ,
Խակապէս ոչ մի մարդ ուրախ չգտայ,
Մանեկայ տնէտուն, թաղէթաղ դատիկ:

Այսօր քրիստոնեայ աշխարհն ընդհանուր,
Իրար կըհաղորդեն մեծ աւետալուր,
Մեր մեռած գործերուն կենդանութիւն տուր,
Որ մտել են վաղուց ի դագաղ, դատիկ:

Օգնէ Արարիչը ամենաբարի,
Գիւղացոց դաշտերը ցանքոր դալարի,
Մեր Շիրակ գաւառը խեղճ է այս տարի,
Շատ ունի տնանկ ու անսուղ դատիկ:

Գու յարութեան օրն ես սուրբ Կենարարին,
Որ եղաւ փրկիչը բոլոր աշխարհին,
Հասարակաց հօրը, մեծ Բարերարին,
Տուր ոսկի ու արծաթ դանձ, մեսաղ, դատիկ:

Ջիւանս կըպահեմ մաքուր ծում ու պաս,
Որ չըխօսիս ինձ դէն, չանես կամ ու կաս,
Խնդրում եմ միւս անգամ խեղճ չըգաս,
Գիտեմ պիտի դառնաս ուշ թէ վաղ, գատիկ։

1893.

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

[Կր.]

Աշող
728

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՇԻՐԱԿ“ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ.

№ 1

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԱՇԽԱՏ.
Գ. Ջ. ԼԵՒՈՆԵԱՆ.

Ասա՛ աշուղ, առ չունգուրըդ,
Մեզ բան ասա սրտալի,
Կարօտ ենք քու անուշ ձէնին,
Մի բան ասա սրտալի. . .

Յով. Յովհաննիսեան.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
ՏՊԱՐԱ՛Ն ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ։
1892

Дозволено цензурою. Тифлисъ, 9-го Января 1892 года.

Типографія К. С. Саноянца, Александрополь,
Бебутовская ул., соб. д.

ՀԱՅՐԻԿԻՍ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՉ

—

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆՈՒՆ

որդիական ջերմ սիրով

ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ

ԳՐՔՈՅԿՍ.

ՀԱՅՐ!

Քո՛ և քո արհեստակիցների եռանդալից և զգայուն ջանքերը աչքի առաջ ունենալով, վճռեցի Ձեր կեանքից և Ձեզ վերաբերեալ մի տետր հրատարակելու. վերջապէս յաջողուեց դըրքոյկիս լոյս տեսնելը։ Այժմ, հայրիկ, որ չեմ կարող Ձեր դէպի ինձ հասցրած բարիքների փոխարէնը լիովին հատուցանել, գոնէ խնդրում եմ ընդունեցէք Ձեր անդրանիկ որդու այս փոքր աշխատութիւնը։

Ձեր երախտագէտ որդի Գուրգէն.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

Տեսնելով որ աշուղներն էլ մեր ժողովրդի մէջ քիչ շատ հռչակ են ունեցել, գիտենալով՝ որ աշուղներն էլ իւրեանց ածելով և երգելով բաւականին մխիթարել են ազգին, շարունակ ման գալով և մտնելով ժողովրդի ամէն դասակարգի խաւերի մէջ՝ և բաց անելով իւրեանց պարզ սիրտը հասարակութեան առաջ, երգելով իւրեանց կամ մի որ և է բանաստեղծի յօրինած մելամաղձոտ երգերը՝ որ յիշեցնում են իւրեանց հայրենակիցների փառաւոր անցեալը և արծարծում նրանց մէջ քաջութեան տաք արիւն և հայրենասիրական ջերմ ոյժ, մենք չ՚ ուզեցինք որ բուն աշուղների յիշատակները կորչուին, այլ կամեցանք հաւաքել և բոլորը միասին մի ամփոփ գիրք կազմել, կարծելով որ հետաքրքրուողներ շատ կ՚ լինին։

Ահա պէտք է ասել, որ այս դարում մեր ժողովրդի մեծամասնութիւնը, մանաւանդ գիւղացիները դեռ մնում են նահապետական դրութեան մէջ՝ և այդ ստուար բազմութեանը, այդ ահագին հասարակութեանը, հաւատացէք որ մեծամեծ մարդկանց նկատողութիւնները և նրանց գրուածքները այն ազդեցութիւնը, այն դրդումը չեն ունենալ նրանց վերայ, (որովհետև չեն հասկանում) որքան հասարակ աշուղների ժողովրդական պարզ երգերն ու պատմութիւնները։

II.

Յիշեալ աշուղներին և նրանց երգերին մեր ընթերցող հասարակութեանը ծանօթացնելու համար, հարկաւոր համարեցինք որքան կարելի է աշխատել, աւելի բազմակողմանի նիւթեր հաւաքելու։

Թէև մենք շատ կ՚ ցանկանայինք որ մեր այս ձեռնարկութիւնը պատկերազարդ հրատարակէինք, բայց բացի այն որ թանգ կ՚ նստէին, որ մեր ժողովրդին մատչելի չէր լինի, և էլ ո՞րտեղից կարողէինք նրանց պատկերները ձեռք բերել, քանի որ նրանց շատերի ժամանակներում դեռ լուսանկար չ՚ կար իսկական նկարը հանելու։

Գ.

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Ա.

«ԱՇՈՒՂ» ԲԱՌԸ ԻՒՐ ԲՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ.

Ամէն աշուղ երգիչ է. ամէն երգիչ աշուղ չէ։

Գրքոյկիս վերնագիրը Հայ աշուղներ դնելով՝ անհրաժեշտ ենք համարում նախ յայտնել մեր ընթերցողներին՝ թէ ինչ է կամ ով է աշուղը։

Պարսկերէն Աշգ կամ Աշըգ բառը, որ կ՚ նշանակէ առաջինը «սիրահարութիւն» և երկրորդը նոյնպէս «սիրահար», մեր ժողովուրդը այդ բառը հայերէն հնչիւնին մօտ Աշուղ բառնէ արտասանում. թէև իսկ հայերէն չէ։ Աշուղ բառը որ մենք ինչ մտքով ենք հասկանում, հայերէն կարելի է ասել մի քանի բառերով. օրինակ գուսան, երգիչ, նուագածու, երաժիշտ, բայց մենք բուն աշուղ պէտք է հասկանանք նրան, որ բանաստեղծ է տձկ. «շաիր» և երաժիշտ-երգիչ։ Այդ թողնենք, որ Աշուղ բառը մեզանում ծանօթ է դրա համար մենք ընդունեցինք այդ բառը մեր գրքոյկի վերնագիրը դնելու. հիմա գանք այն հարցին, թէ ինչո՞ւ ժողովուրդը երաժիշտ երգիչներին «աշուղ» կամ «աշըղ» է ասում։ Որովհետև Տաճկաստանում և Պարսկաստանում հին աշուղներից շատերը սիրահարուած մարդիկ են եղել, ժողովուրդը նրանց ասելիս է եղել աշըգ երգիչներ, այսինքն սիրահար երգիչներ. յետոյ ամբոխը կարծելով թէ աշըգ երգիչ է նշանակում, մինչև հիմայ էլ երաժիշտ երգիչներին աշըղ կամ աշուղ են ասում։

Բայց պէտք է ասել որ ամէն բանաստեղծ-երգիչ և երաժիշտ աշուղ չէ։ Օրինակ՝ մէկ մարդ լաւ երգում է, ունի գրած երգեր, ոտանաւորներ, և գիտէ մի որ և է երաժշտական գործիքի վրայ ածել. այդպիսի դէպքերում դրան չէ կարելի աշուղ համարել։ Աշուղութիւնը մի առանձին արհեստ է*). կան և եղել են վարպետներ, և նոր սովորողներ. մեզանում գուցէ եղել են և այնպիսիները, որոնք յայտնի չեն մեզ։

Կան և մի տեսակ բանաստեղծներ, որ աշուղական արհեստին լաւ տեղեակ են. ունին յօրինած երգեր աշուղական ձևերով, բայց ածել չ՛ գիտեն. կամ եթէ գիտեն էլ մասնաւոր. և ոչ մի ժամանակ աշուղութեամբ չեն պարապել։ Դրանց ասում են «ղէլէմշուվէրէսի» նէր այսինքն գրչով բանաստեղծներ. օրինակ Գիւրջինաւէն, Քեանհանը, և այլն։ Բայց մեր ծրագրից դուրս լինելով՝ աւելորդ համարեցինք դրանց էլ աշուղական ցանկի մէջ մտցնել։

Բ.

ԱՇՈՒՂԻ ԿԵԱՆՔԸ.

Աշուղների կեանքի հետ մենք բաւականին ծանօթ լինելով, կարող ենք խօսել նրանց բնաւորութեան վերայ։

Մենք նկատել ենք այժմեան աշուղների մէջ, և հին աշուղների մասին էլ լսել ենք և նրանց երգերից էլ հասկանալի է որ աշուղը առհասարակ լինում է խոնարհ, սրամիտ, և վառվռուն մարդ. (կ՛ պատահի բացառութիւններ) այդ յիշեալ ածականները յայտնի երևում են հետևեալ դէպքերում։

Խոնարհ են՝ որովհետև խնջոյքներում կամ մի որ և է մարդաշատ տեղերում համեստ՝ քաղցրաբարոյ, և համբերող կ՛ լինեն, միշտ չեզոք մնալով։ Սրամիտ են՝ որովհետև մի մասնաւոր մարդ կամ մի այլ աշուղ երբ ոտանաւորով մի հարց է առաջարկում, նա անմիջապէս պատասխանում է նոյն ոտանաւորով. կարդացա-

*) Այդ արհեստի մասին տեղեկութիւն Դ. գլխում։

ծը կամ մի տեղից բան լսածը մտքի մէջ պահելու էլ առանձին ընդունակութիւն ունին։

Վառվռուն են՝ որովհետև նրանք շատ ժամանակ պատահելով ուրախութիւնների (քէֆերի) մէջ կամ հարսանիքներում և հրաւէրներում, մեծ մասամբ նրանց կ՚ տեսնենք ուրախ տրամադրութեան տակ, և ծիծաղ դէմքով։ Մենք պատահել ենք մի քանիսին, որ շտապով մի տեղ գործի գնալիս՝ մի ինչ որ եղանակ մտքի մէջ դունդունալով (մեղմ ձայնով) երգում է։ Աշուղ Շիրինի համար պատմում են թէ՝ դեռ պատանի ժամանակ այնպէս վառվռուն այնպէս կրակոտ է եղել, որ ածելու կամ երգելու ժամանակ նստած տեղից օրօրուելով հեռանում էր. և հայրը կամ ուրիշ մարդիկ նորից բերում էին իւր տեղը նստեցնում. ու դարձեալ նա եռանդուն երգելու ժամանակ երեք չորս քայլաչափ հեռանում էր։

Հայ աշուղներից փոքր մասը ունենալով ապրուստի ուրիշ աղբիւրներ, (օր. դերձակ, ոսկերիչ և այլն) կարող չեն դէս ու դէն թափառելու ոմանք էլ իւրեանց տանը նստած կամ գրում են հեքեաթներ և երգեր, կամ շինում նորոգում են երաժշտական գործիքներ և այլն։ Իսկ դրանց հակառակ, կան և թափառական աշուղներ, որոնք չունենալով ապրուստի ուրիշ եկամուտ, ստիպուած են ման գալ գիւղէց-գիւղ կամ երբեմն էլ քաղաք, որ փող աշխատեն իւրեանց ընտանիքը կառավարելու։ Դրանք մեծ մասամբ լինում են գիւղացիներ։ Մեզ շատ են պատահում Ալէքսանդրապոլում Զանգեզուրի կողմերից մանաւանդ Խնձորիկ գիւղից եկած թափառական աշուղներ, որոնք զոյգ-զոյգ կամ մենակ ման են գալիս փողոցներում։

Անցեալ 1890 թուականի Սեպտեմբեր ամսին Ս. Էջմիածնում Ս. Միւռոնի օծման հանդիսի օրն էր, որ պատահեցինք մի խումբ աշուղների, որոնք նստած հրապարակի վրայ ժողովրդի բազմութեան մէջ պատմում և երգում էին Աշըղ Ղարիբի հայերէն հեքեաթը. այնտեղ հետաքրքրուողներ շատ կային մենք էլ կանգնեցինք և լսում էինք. մի քիչ մնալուց յետոյ հեռացանք։

(Դրանք նոյնպէս Զանգեզուրցի էին)։

Պէտք է ասել որ լաւ աշուղները որոնք հմուտ և բանիմաց մարդիկ են, մեզանում բաւականաչափ պատիւ են վայելում թէ բարձր դասակարգից թէ հասարակութիւնից, մանաւանդ գիւղացիներից։ Տեսնում ես գիւղացի աշուղը գիւղում մի տան մէջ նստած սեղանի գլխում, քոսհանայի հանդէպ երգում է. նա քիչ է պատահում որ ազգային նիւթերից մի բան երգէ, նրա պատմածն և երգածը լինում են հեքեաթներ, աւանդութիւններ և առասպելական բաներ (մեր խօսքը ամենի համար չէ)։

Աշուղների կեանքի և բնաւորութեան վերաբերեալ այս չափը գրելով կանգ ենք առնում. մեր ընթերցողները աւելի լաւ կ՚ ծանօթանան աշուղների կեանքի հետ, երբ բոլորը վերջացնեն կարդալուց։

Գ.

ԱՇՈՒՂՆԵՐԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Մեր նոր աշուղները աւելի շատ Ալէքսանդրապոլի կողմերում միմեանց հետ մի գաղտնի բանի վրայ խօսելիս, խօսում են «Թարս» լեզուով. «Թարս» լեզուն կամ հակառակ լեզուն որ ասւում է և աշուղական լեզու, ուրիշ բան չէ՛ եթէ ոչ հայերէն, բայց բառերը դարձուած հակառակ կերպով. բայց ո՛չ թէ տառ առ տառ հակառակ ինչպէս գրիչ բառին «չիրգ» ասելով, այլ գրիչ ասելիս, ասում են «րգիչ» բազմավանկ բառերը այդպէս, իսկ միավանկ բառերը բոլորովին հակառակ են դարձնում. օրինակ փող ասելիս, ասում են «ղոփ» .խօսակիցը ամենաշուտ հասկանում և պատասխանում է. այս «Թարս» լեզուն մեր աշուղներին շատ կ՚ հարկաւորուի հարսանիքատներում կամ ուրիշ տեղերում. ժողովրդի մէջ նրանք ծածուկ բաների վրայ խօսելիս, եթէ օտար լեզու գիտենան էլ, չեն կարող խօսել.քանի որ ժողովրդից էլ հասկացողներ կ՚ լինեն։

Օրինակ աշուղներից մինը հարցնում է իւր սազ ընկերոջը թէ «չի՞ն տիպի լաչենք» այսինքն «ի՞նչ պիտի չալենք (ածենք)»: Նա պատասխանում է «ղտերք Թէյզունի շարմը տապրատցեվէք լաչելու» այսինքն «տղերք Զէյթունի մարշը պատրաստուեցէք չալելու»:

Մենք անձամբ պատահել ենք երկու աշուղների որոնք այնպէս արագ խօսում էին միմեանց հետ «թարս» լեզուն, որ մարդ դժուար թէ կարողանայ ուղիղ կերպով այդպէս խօսել:

Այս լեզուն հին աշուղները չ՚ գիտէին, սա նորերն են հնարել, թէև յայտնի չէ իսկական հնարողը, բայց յայտնի է որ Աշըգ-Շիրինի ժամանակներին է բերուած Ալէքսանդրապոլի կողմերը:

Մի աշուղ երբ նամակ է գրում իւր մտերիմ բարեկամներին մանաւանդ իւր արհեստակիցներից մինին, քիչ է պատահում որ նա արձակ ձևով գրէ. այլ գրում է ոտանաւորով, և պատասխանը ստանում է վերջինից դարձեալ նոյն տեսակ:

Դ.

ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ:

Մրցումը լինում է աշուղների մէջ հետևեալ կերպով. մի որ և իցէ աշուղ երբ պատահում է մի անծանօթ աշուղի, նրանք ծանօթանալուց յետոյ սկսում են միմեանց հետ փորձուել թէ ո՞րը աւելի գիտութիւնով կ՚ յաղթէ միւսին: Առնում են սազերը և միմեանց հանդէպ նստելով «թ է ք ե լ լ ի ւ մ» (բանակցութիւն խօսակցութիւն վրայ) անել, երգելով և ածելով: Նրանցից մինը առաջարկում է ոտանաւորով մի հարց, միւսը նոյն ձևով պատասխանում է. այդպէս սկսում են նրանք երգի և երաժշտութեան հետ խօսքերով էլ վիճել միմեանց հետ և ծաղրելով, «դիպչելով» մինը միւսի վրայ, զուարճացնում են ունկնդիր ժողովրդին: Նրանք այնպէս րոպէաբար պատրաստում և երգում

են որ մարդ զարմանում է․ բայց դժուարն այն է որ նրանց սաած-ների ամենավերջին մանրիկները միատեսակ պիտի լինեն (տես «Նոր-Դար» № 15. 1890 թ. նամակ Ալեքսանդրապոլիցը։) Այդ երկու հակառակորդներից մինը՝ հարցերին պատասխանողը եթէ մի քիչ ուշանում է՝ չի կարողանում շուտով պատրաստել և երգել, կամ այնպէս յարմար մանրիկ չի կարողանում գտնել, (որովհետև մի անգամ ասուածը, չի կարելի կրկնել) իսկոյն միւսը սրա ձեռից սազը խլում է և նրան յաղթած համարում. յաղթողը տեսնելով որ իւր ախոյեանը խոնարհւում է, վերադարձնում է նրա սազը և սպառնում թէ գնա չափդ ճանաչիր, միւս անգամ քեզանից բարձրի հետ չ՛ մրցես։

Աշուղական մրցումը աւելի պարզ է հասկացւում «միւ-ամմմա» (տառ. հանելուկ) կախ արած ժամանակ։ Հանելուկի գրողը որ սովորաբար լինում է վարպետ աշուղներից մինը, որ առաջ գրում պատրաստում է, և կպցնելով մի շալի վրայ կախում է պատից։ Հանելուկը լինում է բաւական դժուար կազմուած և խրթին ձևով, միայն տակը գրուած է լինում հանելուկի բացատրութեան քանի վանկ, քանի տառ լինելը և տառերի բոլոր հաշուի գումարը։ Օրինակ հանելուկի բացատրութիւնն է «մարդ» բառը. վանկ 1. տառ 4. հաշիւը 5205։

Քաղաքի մէջ հանելուկ կախ արած ժամանակ երբ լսում են միւս աշուղները, սազերով գնում են այնտեղ, ուրտեղ հանելուկը կախուած է լինում. երբ նրանք բոլորն արդէն հաւաքուած են լինում, հանելուկ գրողը վար է առնում իւր գրածը և բարձր ձայնով սկսում է կարդալ։ Թէ աշուղները, և թէ այնտեղի հաւաքուած ժողովուրդը ուշադրութեամբ լսում են որ գուցէ կարողանան գտնել (լուծել)։ Երբ վերջացնում է կարդալը, կրկին կախում են իւր տեղը և սկսում են երգել։ Ամենից առաջ մի ոտանաւոր երգում է այն աշուղը, որ նրանց մէջ մեծ վարպետ է ճանաչուած. յետոյ հերթով երգում են բոլորը։ Նրանց երգածները անպատրաստ բաներ են լինում և զանազան նիւթերի վրայ յօրինուած. ամեն մինը մինչև իւր հերթը հաս-

նելը պատրաստում է մի տուն և ասում է (երգում է*)։ պատահում է որ նրանք մինչև 10—15 հոգի են լինում։

Շատ կ՛ ցանկայի մի քանի օրինակներ բերել այստեղ, անցեալ 1890 թուականին Ալէքսանդրապոլում աշուղների մէջ տեղի ունեցած «հանելուկից», բայց մենք այն ժամանակ դեռ դիտաւորութիւն չունէինք ներկայ գրքոյկիս հրատարակութեանը որ մի քանի լաւ կտորներ հաւաքէինք։ Պէտք է ասել որ այդ միմեանց հետ արած մրցումը շատ հեշտ բան չէ՝ համարեայ աշուղական արհեստի մէջ ամենադժուար կէտերից մինն է. ինչպէս լսել ենք մի աշուղի բերանից թէ «ընհորքը հանելուկի մեկնելը չէ, այլ նրա տակ նստած մրցելն է». և ուղիղ որ այդպէս է։ ժողովրդից էլ պատահում են հանելուկը լուծողներ, բայց նըրանցից ոչ մինը ի հարկէ չի կարողանում ինչպէս ասում են «գլխտութեան կրկէս» դուրս գալ։

Ինչպէս ասացինք նրանց բոլորի երգածների վերջաւորութիւնները պիտի միակերպ և համապատասխան լինեն։ Բայց ամենադժուարն այն է որ, հանդիսականների խնդրանօք երգում են այնպիսի ձևերով, ինչպէս անուանում են «տօտաղ-դեկմէզ» այսինքն ասելու ժամանակ «շրթունքները չըդիպչող» (տես «Սոխակ Հայաստանի» հատ. գ. եր.–39) կամ «դիլ-թարփամազ» այսինքն ասելու ժամանակ «լեզուն չ՛ շարժուող» (տես Ղ. Աղայանի «Արութիւն և Մանուէլ» բ. գրքոյկ եր.–81) Այդ միջոցներին էլ երբ տեղի են ունենում «տօտախ դեկմէզներ» և «դիլթարփամազներ», 10—15 հոգուց մնում են 5—6 հոգի, ով չի կարողանում դուրս է գալիս ասպարէզից։

Երբ այդպիսի դժուար ոտանաւորներից երկու երեք շրջան երգում են, յետոյ սկսում են «հանելուկի» մասին երգել. սկզբում հանելուկի տէրը (հեղինակը) երգով առաջարկում է հանելուկից «մի կտոր» կամ հանելուկին յարմար մի բան, թէ իմ հա-

*) Ասել, երգել, միևնոյն նշանակութիւնն ունի աշուղների մէջ։ Լաւ մուխէնմազ է ասում, այսինքն երգում. այս ինչ բանը ո՞ր աշուղի ասածն է, այսինքն յօրինած կամ երգածն է։

նըլուկը այս բանին շատ նման է կամ այս ինչ բանին շատ մօտ է։ (պատահում է որ հանելուկի առաջարկողը դիտմամբ ուրիշ բաների վրայ է խօսում, նրանց շփոթեցնելու համար, նրանց ամէն մի ասածին «մօտ ես» կամ «մօտեցար» ասելով։) Յետոյ միւսները հերթով երգում և յայտնում են իրեանց կարծիքները, թէ «այս ինչ» բանն է, բայց նրանցից մինը եթէ մի մանիկ է գտնում և մի տուն երգ է պատրաստում ասելու, յանկարծ իր հերթը չ՚ հասած, ընկերը իր երգի մէջ ասում է այն բառը որը պիտի ինքն ասէր։ Ի հարկէ մի բառը փոխուելով կորցնում է ամբողջ տան նշանակութիւնը. և այդպէս առաջինը ստիպուած է լինում նորից շուտով մի տուն երգ պատրաստելու ուրիշ մանիկով (որ դեռ բոլորովին չէ ասուած) որ հերթը գալիս երգէ։

Այսպէս շարունակաբար նրանք մի քանի օր գալիս հաւաքւում են այստեղ *) և նոյն տեսակ երգում և ուշ գիշերին ցրւում են։ Մոռացանք ասելու որ հանդիսականներից ստացած ընծաները բոլորը կպցնում են հանելուկի շուրջը շալի վրայ և ով որ հանելուկը լուծեց, (թէկուզ հանդիսականներից) ընծաները կիսում է հանելուկի հեղինակի հետ։ Բայց երբ որ լրանում է մի քանի օր ժամանակամիջոցը և դեռ չեն կարողանում հանելուկը մեկնել, այն ժամանակ հեղինակը ինքը երգով բացատրում է իր պահուստը և ընծաները լիովին ստանում է։ Պատահում է որ հէնց հանելուկը կախ արած օրը լուծումն, բայց հրապարակաւ չեն ասում այլ իրեանց կարծիքը գրելով մի թղթի վրայ, կնքում և տալիս են պահելու այնտեղ ծանօթ մի յայտնի և հաւատարիմ մարդու. ուշ ասելու օգուտը նրանումն է որ ընծաները կ՚ շատանան։ Հարկաւոր է ասել որ ամէն աշուղ ընծայ ստանալու կամ հանելուկը լուծելու իսկական նպատակով չի գնում այլ երբ չ՚ գնայ նա համոզուած է որ իր անունը պակասութիւն կ՚ վերաբերէ, և աշուղները կասեն թէ «չի կարող գալ»։

*) Մեծ մասամբ լինում է սրճատներում։

Ե.

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (շարքը).

Մեր գիւղերի մէջ յիշած բոլոր աշուղները, ածել են միայն չորս երաժշտական գործիքների վրայ։

Ա. —Սազ. (Տաւիղ) Սազի մեծ տեսակը որի վրայ 10 սիմեր են պարկած, մեր հին աշուղների մեծամասնութիւնը սրա վրայ են ածել։ Սազի փոքր տեսակը կայ, որ ասւում է չոնգուր կամ բաղլամայ (ջուռայ)։ Սրանից երկուսն էլ շինում են մասնաւոր վարպետներ։ Սազի մեծութիւնն է—երկայն. 1—2 արշին, լայնութ. 4—5 վերշոկ։

Բ. —Քեամանչա կամ քեամանի, (ջութակ, ջնար.) հին ձևի ջութակներն էլ նման են այժմեան եւրոպական սկրիպկա-ներին միայն քիչ մեծ, ուշտալի, մեծութեամբ պարանոցը ծուռ և երկար, իր վրայ կրում էր 12 թել, որոնց 6-ը լարեր էին վերայից, իսկ 6-ը սազի սիմեր ներքի կողմից։ Վերջինները մի այնպիսի հարկաւորութիւն չէին ունեցել, եթէ ոչ միայն արձագանք տալու համար։ Կայ և սրա մի ուրիշ տեսակը փոքր և միայն 3 լար ունեցող։

Ջութակները շինում են թէ յայտնի գործարաններում, և թէ մասնաւոր արհեստանոցներում։ Մեծութիւնն է—երկայնութիւնը 1 արշին 4 վերշոկ, լայնութ. 5 վերշոկ։

Գ. —Թառ, սա որ պարսկական հին գործիք է, իր վրայ կրում է 6—12 սիմեր։ Թառը նշանաւոր գործարաններից չի դուրս գալիս, այլ շինւում է հասարակ արհեստանոցներում. Մեծութիւնն է—մօտաւորապէս երկայնութիւնը 1 արշին 5 վերշոկ, լայնութիւնը 4—5 վերշոկ։

Դ. —Սանթուր. (քնար, տասնաղի, բամբիռ) նման եւրոպական ցիտրա-յին. իր վրայ կրում է 150 սիմեր, 30 ձայնի։ Մեր հին աշուղները բոլորովին անծանօթ էին այս գործիքին,

սա վերջերս բերուեց Տաճկաստանից։ Մեծութիւնն է.-երկայնութիւնը է 1 արշին, լայնութիւնը $^{3}/_{4}$ արշին։

Գ.

ԱՇՈՒՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԵՐԳԵՐԸ։

> Արի քո քերեկանութիւն, Ճարտասանութիւն ծալը ղրաղ դիր, ու մէկ աշուղ էլ դու դառ. ինչ կուժ կուժ. խանչալիդ քարը հօ վեր չի ընկնիլ, զառ վարաղդ հօ չի գընալ։ „Վէրք Հայաստանի"
>
> Խաչ. Աբով.

Զ'բաւականալով աշուղների լոկ կենսագրութեամբ, որն էլ որ այնքան բաւականացուցիչ չէ, առաջ ենք բերում և նրանց երգերից մի մի հատ որպէս նմուշ, ճանաչելու թէ նրանք ինչ ոճով ու բարբառով են գրելիս եղել. մենք թէև աշխատեցանք որքան կարելի է անտիպ և հայերէն երգեր ժողովել, բայց հակառակ մեր ցանկութեան չ' կարողացանք բոլորը անտիպ գրուածքներ ձեռք բերել. իսկ ինչ վերաբերում է լեզուին, այնպիսի աշուղներ են եղել, որ հայերէն երգեր բոլորովին չեն ունեցել։ Կենսագրութիւններն էլ աւելի դժուար է ձեռք բերում քան երգերը։

Երգերից ոմանք արտատպել ենք զանազան ժողոված ունեւրից, մեծ մասամբ Բագուեցի քարեկրօն Գրիգոր քահանայ Գրիգորեանի «Սոխակ» ներից։

1. **Սայեաթ-նովայ** (պ*) (Որսորդ-համբաւ կամ համբաւաւոր որսորդ) իսկական անունը Արութիւն (Ցարութիւն) ծընուած թուականը իսկապէս յայտնի չէ բայց եղել է 1710-նական

*) (պ) Նշանակում է պարսկերէն։

թուականներին։ Սայեաթ-Նովէն կարելի է հայ աշուղների նահապետը համարել որովհետև նրանից առաջ այնպէս մի հայ աշուղի անուն յայտնի չէ։ *)

Ծնուել է Թիֆլիսի Հաւլաբար թաղում։ Արութինի հայրը բնիկ եղել է Հալէպցի. գնա Արութինի փոքր ժամանակից, տալիս են ջուհլակութեան (կտաւագործ)։ Նա իւր արհեստի հետ սովորում է ջութակ և չունգուր ածելը և բանաստեղծական շնորհք ունենալով, սկսում է գրել ոտանաւորներ։ Նա շատ առաջ է գնացել աշուղութիւնով և մինչև այժմ մենք նրան ճանաչում ենք ոչ թէ կտաւագործ, այլ աշուղ։ Նա երգել է Վրացերէն և Թուրքերէն և յետոյ էլ սկսել է Հայերէն ասել։ Վերջերում թողնելով նա աշխարհային վայելչութիւնները, ինչպէս ինքն ասել է «կու հագնեմ մազեղէն կու հագնեմ շալն, կերթամ ու ման գուքամ վանքերն մէ մէկ»։ Թողնելով երեխայոցը Թիֆլիս, (այդ ժամանակ կինը մեռած է լինում) գնում է Հաղպատ, Ս. Նշանի վանքը, և ձեռնադրւում է աբեղայ։

Երբ լսում է Աղա Մահմետ Խանի հեծելազօրքի Վրաստանի Սահմանին մօտենալը, միտն է բերում իւր զաւակներին, գալիս է Թիֆլիս և նրանց ուղարկում է Մոզդոկ։ Երբ Պարսից զօրքը մտնում է Թիֆլիս, (1795 թուակ. սեպտեմ.) Սայեաթ-Նովէն այն ժամանակ եկեղեցում աղօթելիս է եղել. խուժանը ներս է լցւում եկեղեցի և հրամայւում է Սայեաթ-Նովուն դուրս գնալու. բայց նա իւր հոգին աւանդում է Պարսից թրերի տակ՝ ասելով։

«Ջիմմնամ քիլիսատան, դօնմամնամ Իսատան»

(Եկեղեցուց չեմ դուրս գալ, չեմ ուրանալ Յիսուսին)

ԵՐԳԸ.

Ամէն սաղի մէջըն գոված դուն թամամ ղասնիս քամանչա.
Նաքաղ մարթ քիզ չի կանա տեսնի, դուն նրա պասնիս քամանչա.

*) Թէև մենք մինչև 1400 թուականների բանաստեղծներից, ցեշելենք, բայց նրանք հաստատ յայտնի չէ թէ բուն բուն նշանակութեամբ աշուղներ են եղել, թէ միայն բանաստեղծներ։

Ղաստ արա էլ լաւ օրերուն էտիվըն հասնիս քամանչա,
Քիչ ինձանից ո՞վ կանա խլէ՝ աշուղի բանիս քամանչա։

Անկաճդ էրծաթէն պիտի գըլուխդ ջաւահիր քարած,
Կուլթդ չիրմայէմէն պիտի փուրըդ սատափով նաշխ արած.
Սիմդ օսկէն քաշած պիտի, էրկաթդ փանջարա արած,
Օչ ով ղիմէթըդ չի գիտի լաւ ու ալմանիս քամանչա։

Ճիպուտդ վարաղնած պիտի թահր ունենայ հազար ռանգով
Զարդ ռաշի կուդէն պիտի վուր դուն խօսիս քաղցր հանգով.
Շատին զարթուն կու լուսացնիս շատին կու քնեցնիս բանգով,
Անուշահամ գլինով լիքն՝ դուն օսկի թասն իս քամանչա։

Ածողիդ էրկու կու շինիս առաչ չայի ղափա դուզխ,
Կու մէծըրուես այիմնումն պարապ վախտի բափա դուզխ.
Նի՛ վէր զուքաս մէջլիսումըն քաղցր զօղ ու սափա դուզխ,
Բոլորիդ զօզաններ շարած մէջլիսի կէսն իս քամանչա։

Շատ տխուր սիրդ կու խնդացնիս, կու կտրիս հիւանդի դուզն
Նի՛ քաղցր ձայնդ վէր կօնիս, բաց կուլի հէտդ խաղողն.
Խալխին էս իմթիմաղն արա ասին «ապրի քու ածողն»
Քանի սաղ է Սայեաթ-Նովէն շատ բան կու տեսնիս քամանչա։

«Սայեաթ-Նովայ» (Գ. Ախվերդեան)

*

* *

2. **Դուստի** կամ Տօսթի (Տ*) (բարեկամ, ընկեր, սրտակից, ընտանի) իսկական անուանը յայտնի չէ. Ծնու ած և վաղճանուած թուերը դարձեալ յայտնի չեն։ Դոստին եղել է Սայեաթ-Նովի ժամանակներում. որ ինչպէս ասել է Պ. Գէորգ Ախվերդեանը «Սայեաթ-Նովայ» գրքի մէջ, Սայեաթ-Նովէն յիշել է իւր դաֆտարում (տետրակ մատեան) նշանաւ որ աշու ղ «Դոստի» ին. Միայն այս

*) (տ) Նշանակում է Տաճկերէն։

է յայտնում Պ. Գ. Ախվերդեանը իւր գրքում, որ Դոստին թաղուած է Թիֆլիսում Խօջի-վանքի գ'րեզմանոցում։ Սրա երգերից ոչ մի հատ չեն հասել մեզ։

*

* *

3. **Ծատուր** ծնունդը յայտնի չէ որ թուականին է. մեռել է 1721 թուականին։ Եղել է Մուշ գաւառի Քրդի գիւղից։ Աշըղ Ծատուր-օղլու հայրն է. ածել է ջութակի վրայ։ Իւր թուրքերէն յօրինած երգերով, զարմացրել է Օսմանեան նախարարներին և կղերականներին, իւր Աստուածարան նուագներով. երգը մենք չենք կարողացել ձեռք բերել։

«Փունջ» Բ. 2246

*

* *

4. **Ծատուր-օղլի** (Ծատուրի որդի) Եղել է Մշեցի, Աշըղ Ծատուրի որդին. կոյր է եղել և սազի վրայ ածող։ Կենսագըրական մանրամասն տեղեկութիւններ յայտնի չեն։

ԵՐԳԸ.

Շատ երկիր ման եկայ շատ աշխարհ տեսայ,
Չ'կայ նմանակդ Մայր Աստուածածին.
Թողութիւն շնորհեց դաս մեղաւորաց,
Մեղաց փարատող ես Մայր Աստուածածին։

Ոսկէ սափորն առար ջուրը գնացիր,
Գաբրիէլ ողջոյն տուեց ողբալով լացիր.
Տասնըչորս տարի դու մաքուր մնացիր,
Մեղա՛ քեզի մեղա՛ Մայր Աստուածածին։

Լեզուդ էր մաղզուան բերանդ էր սկիհ,
Սիրուն Սուրբ Յովհաննէս քո Որտիդ գրկի.

Նաւ մեղաւոր կանչէ մեղաց կ'փրկի,
Մեղաց փարատող ես Մայր Աստուածածին:

Ծատուր-օղլին քեզի գովայ գանաղան,
Արեւելք արեւմուտք չ'կայ քեզ նման.
Դատաստանին չսես ինձի անարժան,
Մեղա քեզի մեղա Մայր Աստուածածին:

(անտիպ)

* * *

5. **Շամչի-Մելքօ** (Շամեցի կամ Դամասկոսցի Մելքոն) բնակւում էր Թիֆլիսում 1740-ական թուականներին: Մանրամասնութիւնը դարձեալ յայտնի չէ:

ԵՐԳԸ.

Խարաղ Ջալի իմ մէ շահլին ի՞նչ արիր.
Ծրագուն կերար իմ թանջիրէն ի՞նչ արիր.

Փոշոցումն ման ես գալի դլփի թաքուն,
Ինչ սահաթ ինձ ռաստ եկար անարգ շուն.
Մումը հալեցիր կուլ տուիր ծրագուն,
Մուզդտ կերար բաս քո մայէն ի՞նչ արիր:

Առաւօտենց գնացի դուքանի դուռն,
Պարտատէրերին կտրել էին չորս կուռն.
Երկու շահի հանեց դրեց իմ բուռն,
Ինձ խափեցիր էն մի հային ի՞նչ արիր:

Գանգատելով պօլիցէքն իմաց արի,
Դեսեդնիկ բերի դուքանը բաց արի.
Բան չի գտայ գլխիս տուի լաց արի,
Շամչի-Մելքօ էն ղալմաղալն ի՞նչ արիր:

«Նոր ջնար» Ռոժ. Տէր-Յով. կռձ. 2 տ:

6. **Թուջջար** (առեւտրական) իսկական անունը Յովհաննէս. Ծնուել է 1760ական թուականներին Ղարս քաղաքի Ղանի գիւղում. սա կոյր լինելով, մանկութիւնից սէր է ունեցել աշուղութեան. Ծնողները տուել են սրան երեւելի Աշըղ Դեարկեաշու մօտ և այդպէս էլ վերջը յայտնի աշուղներից մինն է եղել։ Նա սիրելի է դարձել փաշաներին, բէկերին, նրանց միշտ պատմելով տարփական հեքեաթներ, առասպելական զրոյցներ և այլն։

Մի օր փաշան Թուջջարից պահանջում է մի նոր բոլորովին չպատմած հեքեաթ։ Նա խնդրում է երկու օր ժամանակ և իւր աշակերտի հետ հնարում է մի նոր հեքեաթ, «Աշրաֆ և Զէօհրէ» վերնագրով։ Երբ այդ հեքեաթը պատմում են փաշայի մօտ, նա լաց է լինում. փաշայի հետ լալիս է և Թուջջարի աշակերտը. մի քիչ յետոյ Թուջջարն էլ է լաց լինում։ Թուջջարի աշակերտը զարմանալով, ասում է վարպետին։—Չ՞է որ այս հեքեաթը մենք ենք յօրինել սուտ է. դու ինչու ես լաց լինում։
—Ես լաց եմ լինում ոչ թէ հեքիաթի ազդեցութիւնից, այլ այն թէ ինչպէս պիտի վերջացնեմ. պատասխանում է Թուջջարը։

Թուջջարը թէև հայ էր, բայց ինչպէս ասում են տաճիկների կողմն էր տաշում. երբ իւր հայ արհեստակիցները մրցում էին Թուրք աշուղների հետ, սա վերջինների կողմն էր պահում և ձգտում էր որ հայերին խեղճացնէ։

Մի անգամ Թուջջարի մօտ գալիս է մի մոլլա (Տաճկաստանում մինչև հիմա էլ սովորութիւն կայ, որ երբ մի տեղ վարպետ աշուղները երգում են, մոլլաներից ով որ ուզում է երգել. և մրցել նրանց հետ, ծպտեալ գնումէ) և ուզում է երգել. բանը այնպէս է լինում, որ իրար հետ հակառակում են։ Թուջջարը սազը վարէ դնում, ձեռքերով բռնում է մոլլայի բերանը և այնպէս ուժով քաշում է, որ վիրաւորում է։ Մոլլան ուղղակի գնումէ փաշային գանգատ. փաշան կանչումէ Թուջջարին։ Թուջջար բաբայ այդ ինչ ես արել, չէ որ դու մեծ մարդ ես ինչու ես մոլլային անպատուել։ Ես չ գիտէի թէ նա մոլ-

լա էր ապա ինչո՞ւ էր եկել աշուղների մէջ նստել. պատասխանումէ աշուղը:

Թուջջարը իւր կեանքում ամենեւին օղի չէ գործածել: Նա երգել է միշտ Թուրքերէն, կրօնական բովանդակութեամբ. «Մուխէսս»ներով ու «Դաւիթ»ներով լի: Ածել է սազի վրայ: Մեռել է 1840-ական թուականներին:

ԵՐԳԸ.

Իքի նողտայ իւչիւրուֆտըր հէսապ էտդիմ խամայի
Ղալամի օլմիան քեաթիպ նէճա՞ եազար նամայի.
Էյլա բիր ասիրա եթըրդ բաղըատ ջահիլտառը
Ալիֆի բէյի բիլմիան բակեանմազ ուլամայի:

Զամանի ինսան օղլունտայ բէյ ու բազար ղալմատի
Հավըրսի իւզա գիւլիւձի սեօզնա էր ղալմատի.
Ալլահ իչուն սօհյըլամիա պիր էխտիար ղալմատի,
Նալանչի շահիտլար թաձիս էդտըլար մախքեամայի:

Բու Թուջջարի դէօրդ նէմնատան Նարատան սանտան մէտէտ
Ալամի րզղի վերըրձի եա Սուփհան սանտան մէտէտ,
Ղամ տուտթի կիրիպանըմտան էյ Եզդան սանտան մէտէտ
Դարդա դէրման վէրան սան սին նէյնալամ հիւքէմայի:

(անտիպ.)

* * *

7. **Ջիրքիզ-օղլի** (Ջէրքեզի որդի) իսկական անունը Մկրտիչ. Ծնուել է Աստրախանում 1763—64 թուականներին: Պարապում է եղել քնարներ շինելով և նորոգելով: Ասում են որ բացի այդ արհեստից նա պարապել է և հիւանդների համար գիր անելով: Պսակուել է 1811 թուակ. օր. Գայեանէ Ստեփանեանի հետ և ունեցելէ մի դուստր: Ջէրքէզ-օղլին աշուղութիւնը սկսելէ 30 տարեկան ժամանակից. երևումէ իւր սիրահարուած

միջոցին։ Ածել է սազի վրայ։ Մեռել է 1845 Թուականին, Թաղուածէ Աստարխանի գերեզմանոցում։

«Սոխակ» գ. երես 224.

ԵՐԳԸ.

Մենք խօղող ենք անում մեզ համար դամով
Թող ռաղուքն հնայ իւր դարդ ու ղամով.
Ախմթար եմ բաց արա դու իմ նեղ սամով
Երբ համբուրամ բերնէդ համ առայ հոգի։

Մարխամայ ծաղիկ ես գոյնով սպիտակ
Երեսդ լուսնիակ շողքդ արեգակ.
Աչքերդ կ՛վառի փայլուն ես լուսնակ
Ունքերդ, գեղեցիկ կամար ա հոգի։

Ձէյրքէզ-օղլին ասաց նազանի հուրի
Իմ ջիւան աղջէյս մի թող բըեարի.
Էս քու սասափկ սէրդ սիրտս կը վառի,
Մի վառի կեանքս քեզ համար ա հոգի։

«Սոխակ» գ. երես 69

*
* *

8. **Թուրինջ** պ.) (մի տեսակ գոյնէ) իսկական անունը Թորոս. Ծնուել է 1790 Թուականին Շամախու Քալքանջ գիւղում. սրա հայր ոսկերիչ Օհանը և իւր կինը դեռ Թորոսի մանկութեան ժամանակ մեռնում են։ Թորոսը իւր մասնաւոր ուսումն ստացել է Տէր Պետրոս քահանայի մօտ. մի քանի ժամանակից յետոյ Թորոսը թողել է հայրենիքն ու գնացել է Աստարխան և այնտեղ ամուսնացել է։ Թուրինջը պարապել է տապանագրեր գրելով. սրա համար պատմում են որ շատ ծաղրածու և զուարճախօս մարդ է եղել։ Ածել է սազի վրայ և գրել է շատ եր-

գեր բանաստեղծութիւններ և այլն։ Մեծ մասամբ տպուած են «Սոխակի» գ. հատորում։ Մեռել է 85 տարեկան հասակում, թաղուած է Աստարխանում։

«Սոխակ» գ.

ԵՐԳԸ.

Սիրելի ճշմարիտ շատ գեղեցիկ ես,
Չեմ խապար մարդ ես թէ՞ հրեշտակ ես.
Աշխարհս քեզանով լուսաւորուել ա,
Չեմ խապար լուսի՞ն ես թէ՞ արեգակ ես։

Երկրային հալայինք քեզի չ՚հաս են
Չինի՞ ղուղա եկար հրեշտակաց դասէն.
Ելած ա մէկ Յովսէփ գեղեցիկ կասեն
Չեմ խապար ի՞նքդ ես, թէ՞ նմանակ ես։

Դուն մին ծրագկալ ես լաւ ոսկեզօծած,
Բարակ ծիւղներ ունիս դէս ու դէն ծռած.
Իստակ մոմեր վառած մէջլիսում դրած,
Չեմ խապար դու ջա՞հ ես թէ՞ աշտանակ ես։

Դուն մին ջավահիր ես բու գինդ թանգ ա,
Քանի սառափ վրեդ մաթալ ա լանգ ա.
Նաղուլթ թրաշ քարդ ռանգ ռանգ ա,
Չեմ խաբար սոստա՞կ ես թէ՞ դահանակ ես։

Ղալամքեար արխալուխ մէջքիդ քամար,
Դուն հօտով ծաղիկ ես Թուրինջի համար,
Յօղացող բացուած ես ձմեռ ու ամառ,
Չեմ խապար դու վա՞րդ ես թէ՞ մանուշակ ես։

«Սոխակ» գ. երես 40.

9. **Ջուան** (Յովհաննէս) ծնուել է 1800 թուականին Աստրախանում: Նա պարապել է նկարչութեամբ: Ամուսնացել է Աստրախանում և թողել է տղերք և աղջկերք: Աշուղութիւնը ըսկսել է 40 տարեկան հասակում և ածել է սազի վրայ: Նա ոչինչ ուսում չէ ունեցել: Բայց շատ բարի մարդ է եղել. Նրան ճանաչողները մեծ յարգանքով են յիշում նրան: Մեռել է 64—65 տարեկան հասակում. Թաղուած է Աստրախանի գերեզմանոցում.

«Մեղու» գ. երես 225:

ԵՐԳԸ.

Սրտիս դարդերիցն դու խաբար չունես
Աշխարհի մէջիցն ծնուածն կորաւ,
Թէ Սողոմոն իմաստունիցն հարցանես,
Նրանի մեռնողին ծնածն կորաւ:

Աշխարհս եկաւ ինկաւ փիր ու դարուիշին,
Ըռաստ էկաւ չար սատանի փանտուրին.
Վայ պատել է ինձ պէս խեղճ ու անտէրին,
Օրէնք պատուիրանքով սածն կորաւ:

Պահապան հրեշտակն միշտ ախ ա քաշում,
Հոգիս էս չարչարանքն նահախ ա քաշում.
Մարմինս մահիցն միշտ վախ ա քաշում,
Աւազանի միջից հագածն կորաւ:

Խեղճ Ջուանի լեզուն վերջը կը լռուի
Չար գործերն հանդէպուհին կ՚ շարուի.
Թէ ոլորմես Փրկիչ խաչդն կը հալուի,
Էլ չեմ ասել կրկին մեռածն կորաւ:

«Մեղու» գ. երես 102.

10. **Քեշիշ-օղլի** (քահանայի որդի) իսկական անունը Դաւիթ. ծնուել է 1804 թուականին, Թիֆլիսի նահանգում Բորչալուի Շամշուլտա գիւղում։ Նա դեռ երկու տարեկան հասակում կորցրել էր Դաւթի հայրը քահանան, մեռնելուց յետոյ, մայրը որ Շուլաւերի մօտ Կարինճի (Աշքեօրփի) գիւղից էր, Դաւթին առած գնացել է իւր հօր տունը։ Մի քանի տարուց յետոյ Դաւթի մայրն էլ է մեռել։ Քեշիշ-օղլի Դաւիթը որ մանկութիւնից շատ սիրել է աշուղութիւնը, 9 տարեկան հասակում, նրա խնամատարները նրան տուել են Աշըղ-Սէյրանու մօտ աշակերտ. հետզհետէ Դաւիթը առաջադիմութիւն է ցոյց տուել աշուղութեան մէջ և վերջը ամենալաւ սազ ածողներից մինն է եղել. այնպէս որ առանց «փարտի»*) ածել է զանազան եղանակներ։

Քեշիշ-օղլին երբ եղել է 20—22 տարեկան, ինչպէս ամէն աշուղի ցանկութիւնն է որ գնան մուրազատու Ս. Կարապետի գերեզմանը համբուրելու, գնացել է դէպի Մուշ. Ղարսում պատահել է Աշըղ-Թուջջարին, նրա հետ մրցելով յաղթել է։ Թուջջարը տեսնելով Քեշիշ-օղլի Դաւթի այդ Աստուածանից ստացած շնորհքը, նրան շատ սրտանց յարգել է։ Քեշիշ-օղլին հասել է Էրզրում այնտեղ էլ մենամարտելով մի քանի հայ և թուրք աշուղների, որոնց թւումն էր և նշանաւոր Աշըղ-Բադու-Ալահվէրտին յաղթել է և այդպիսով նրա հռչակը տարածուել է ամեն կողմ։ Այդ ժամանակին նրան անուանել են «Ջարուքի»—(պլտանացու) Դաւիթը (Քեշիշ-օղլի Ջարուքին.) Մուշ հասնելով և իւր մուրազատու Ս. Կարապետի գերեզմանը համբուրելով, գնացել է Զմիւռնիա և այնտեղից էլ Կ. Պոլիս։ Քեշիշ-օղլու բախտը այն տեղ եա իրանից չէ հեռացել. մի տաճիկ բէյ որ վաղուց արդէն լսել էր Քեշիշ-օղլու անունը, որ ինքն էլ շատ հետաքրքիր է եղել աշուղներով, երբ տեսնում է նրան շատ մտերմանում է նրա հետ և մի օր էլ ներկայացնում է Սուլթանին։

*) «Փարտա» ասում են այն լարերը, որ աստիճանաբար կապուած են լինում սազի կամ թառի պարանոցին, որոնք ծառայում են ածելու ժամանակ։

Քեշիշ-օղլուն երբ որ հրամայել են ածել և երգել, նա Թուրքերէն լեզուով գովել է պալատը և նրա բնակիչները։ Սուլթանը տեսնելով որ հաստատ լաւ բանիմաց աշուղ է, նրա անունը դրել է Շաւղի (լոյս տուող)։ Քեշիշ-օղլին եղել է նշանաւոր հայ աշուղներից մինը. ծանօթէ մեր հասարակութեանը իւր մի քանի անուններով. բայց ափսոս որ հայերէն ոչ մի երգ չէ ունեցել։ Սիրելի է դարձել հայ մեծամեծներին, էֆէնդիներին, մանաւանդ Յարութիւն Պեզճեանին, որի մահուան վրայ ասել է մի Թուրքերէն երգ։ Քեշիշ-օղլին ազգային գաղափար չէ ունեցել այլ միշտ երգել է կրօնական և սիրահարական, մեծ մասամբ Աստուածաշունչից, այնպէս որ մաշելի լինէր թէ տաճիկ և թէ հայ ժողովրդին։ Քեշիշ-օղլին մեռել է Կ. Պոլսում, իւր տունը, փողերը, կտակելով Գում-Գափուի հայոց եկեղեցուն։

ԵՐԳԸ.

Ղամ չաքմա ղամ եմա դիւանա գէօնուլ,
Սանա պուլանմիան պինձա եար օլսուն.
Պիզտան իւզ չաւուրմիշ հարջայի դիլպար,
Թազատան եար սաւմիշ մուբերէկ օլսուն։

Ջխիմ սահրալարա ղլայիմ զարի,
Թախաթըն քեասըլտի սօյլէյիմ բարի
Բէնի էօզ ջաննտան սէւմիան եարի
Դահի բան սաւմանամ թէպալար օլսուն։

Սան Քեշիշ-օղլի չաքտն տարայա
Շինտի մինախուփլար գեչմիշ արայա
Սանի թափշուրմիշամ Փարուարտիկեարա
Հիւղէր]մանշար գիւնի երըն նար օլսուն։

(Անտէպ)

11. Քեամիլի Տ) (լուսութիւնն առած շնորհալի) իսկական անունը Բաղդասար. ծնուել է 1803 թուականին, Ղարս քաղաքում։ Մանկութեան օրերում նա սովորել է մասնաւոր ուսումնարանում։ 12 տարեկան հասակում հայրը տուել է Բաղդասարին պայտարի մօտ աշակերտ։ Նա ինքնուս կերպով սովորել է սազ ածել, և մի բան նրան մղել է բանաստեղծութիւններ գրելու. այն՝ որ Բաղդասարը սիրահարուել է մի յայտնի մարդու աղջկայ վրայ և հետզհետէ թէ երգելու և թէ ածելու մէջ առաջ է եկել։ Բաղդասարը իւր անունը դրել է Քեամիլի. Նա առաջ թուրքերէն է գրել իւր երգերը, բայց յետոյ իւր սիրուհու թախանձանօք սկսել է հայերէն էլ գրել։ Նրա երգերը մեծ մասամբ սիրահարական և կեանքի կողմից գանգատներ են եղել։

Քեամիլին վերջապէս հասել է իւր նպատակին. պսակուելով իւր սիրած աղջկայ հետ. գործն էլ կանոնաւորապէս կարգի բերելով, սիրելի է դարձել ոչ թէ միայն ժողովրդին, այլ և տեղական փաշային և բոլոր մեծամեծներին։ Քեամիլիի արհեստակից մոլեռանդ թուրքերը նախանձուելով նրա՛ գործի յաջողութեանը, սկսել են զանազան զրպարտութիւններ բարդել խեղճի վրայ։ Բաղդասարը տեսնելով որ այլ ևս դժուար է Ղարսում ապրելը, թողել է Ղարսը և իւր ընտանիքն առած գաղթել է Երևան։ Այդ ժամանակ նա ունեցել է չորս որդի. երկու աղջիկ և երկու տղայ։

Երևանի շոգ կլիմային չի կարողացել Ղարսեցի Քեամիլին երկար դիմանալ. Նա համարեայ իւր գալած երկրորդ տարին սկսել է հիւանդանալ. և օրից օր մաշուելով, 1832 թուականին մեռել է Երևանում, թողնելով իւր գերդաստանը անտէր։ Քեամիլիի որդիքը գաղթել են Ալէքսանդրապօլ, որ և Յովհաննէս որդու զաւակն է այժմեան Աշըղ-Ջամալին։

ԵՐԳԸ.

Շատ մի բացուիր նազլի դիլբար դիպնի կը նազար քեզի,
Էն ղոտր կայնար դիմացս, էրիր գիրիփտար ինձի.

Ղուսուր չունիս հէչ մէկ տեղէդ ամէնքի մօտ տեղեակես,
Աստուածութիւն ամէն դիմաց, տուեր է հունար քեզի։

Մաղերդ թուխ գեօզդ ճերմակ ձեռներդ հինայել ես,
Աստուածութեան իւր ղալամով, սեւ խալերդ դրել ես.
Աստըծու դէրկեահի դռնէն եար շնորհքդ առել ես,
Ման եկայ արարող աշխարհ չ՛ գտայ ույար քեզի։

Քեամիլն ընկաւ զաւղ էնելու չ՛ գտաւ դարտին դարման,
Եղլիմ էլ թամ Լոխմանու քով, ոտքերէս չունիմ գիւման.
Քանի՞ մէկ հասրաթդ քաշեմ եար իսկի չունի՞ս իման,
Քցել ես վառման կրակը գուզես հոգիս առ քեզի։

(Անտիպ)

*
* *

12. **Օվչի-Նաւասի** պ.) (որսորդի որդի. կամ Նուադող որսորդ) իսկական անունը Խաչատուր. Ծնուել է 1810 թուականին Շամախու Մատրասա գիւղում։ Սա մի առաքինի և ճշմարտախօս անձն է եղել և մեր յայտնի աշուղներից մինը։ Ասում են թէ երբ գիւղում երկու մարդու մէջ անբաւականութիւն էր յայտնւում, իսկոյն շտապում էին մահտեսի Խաչատուրի (Օվչի-Նաւասու) մօտ, նա վերջ էր տալիս այդպիսի վէճերին։ Օվչի-Նաւասին երգել է հայերէն լեզուով. շատ երգեր ունի Երուսաղէմի և այլ ուխտատեղիների վրայ ասած։ Օվչի-Նաւասին մեռել է 70 տարեկան հասակում։

«Սոխակ» գ. երես 119.

Սրա երգերից ոչ մինը չ՛կարողացանք ձեռք բերել։

*
* *

13. **Միսկին-բուրջի** (անուշահոտ-բուրջի կամ «ծաղիկ») Իսկական անունը յայտնի չէ. Ծնուել է Գանձակում 1810-ական թուականներին: Սրան Միսկին-Ալլահվերդի էլ էին ասում: Նոյնպէս և յայտնի չէ թէ ինչ գործիքի վրայ է ածել:

ԵՐԳԸ.

Էշխիցդ ջունուն դառած, գիշեր ցերեկ հաղ եմ ասում.
Ոչ թէ երեկ ու այսօր կարելի է վաղ եմ ասում,
Ծոցինդ չեմ ճանաչում մանիշակի թաղ եմ ասում.
Երեսիդ երկու պաչին ինձ արա ղոնաղ եմ ասում,
Անուտել անխմել իմ քէֆս արա չաղ եմ ասում:

Էդ քու սէրդ դառել ա իմ ջանումս փուշի նման
Էնդուր որ էլ չեմ ճարում քու լալադար թուշի նման,
Խօսալդ բիւլբիւլի պէս կերպդ թովուս ղուշի նման,
Ամէն թահրդ տեսնելուս, դառնում եմ աշխուժի նման,
Արիր սրտիս միջին էլ քարին դիպած շուշի նման,
Ջահտ արա կոտրածները կոծկի շինի սաղ եմ ասում:

Ինձ ումուտ ունի որ իմ արդէս անց կենայ քարումը,
Ի՞նչ կանես ղըփլըանդ ա ընկել բէմուրվաթ եարումը,
Ոչ նա ռահմ է անում ոչ ծախում են բազարումը,
Ես ինչպէս այսուհետև ուրախանամ աշխարհումը,
Թուլին հազար ութն հարիւր երեսուն երեք տարումը,
Գեանջեցի Միսկին-Բուջին ես խօսքս Ղարաղաղ եմ ասում:

«Նոր քնար» Ուշ. չէր-Յոլ. կռճ. 2 տ.

*
* *

14. **Նիտայի** ա.) (ձայնաւոր) իսկական անունը Խաչատուր. Ծնուել է 1810-ական թուականներին Տաճկաստանում,

Էրզրումի Հինձ գիւղում։ Մանկութիւնից սովորում է սազ ածելը և երբ խելահաս է դառնում, սկսում է գրել բանաստեղծութիւններ և պարապել աշուղութեամբ։ Նա գիւղից գաղթում է Էրզրում, որտեղ ամուսնանալով ընտանեաց տէր է դառնում։ Շատ չանցած մի զաւակ է ունենում, որի անունը դնում են Իսահակ։

Նիտային շատ էր սիրում իւր որդուն և շատ անգամ մի տեղ գնալիս նրան հետը տանում էր։

Նիտային մեծ հռչակ է ունեցել. համարեայ Տաճկաստանի մեծ մասը նրա անունը տարածուել էր. նա գրում էր Թուրքերէն, բայց շատ կոկ լեզուով։ Սիրելի է եղել թէ հայ և թէ տաճիկ հասարակութեանը։

Մի անգամ Նիտայուն մի քանի մեծամեծ մարդիկ կանչում են և խնդրում են նրան որ մի հանելուկ կախ անէ։ Նիտային մի հանելուկ է պատրաստում այնպիսի հոգով, որ թէ հայերին և թէ տաճիկներին յարմար է եղել։ Շուտով հաւաքւում են հայ և տաճիկ նշանաւոր վարպետ աշուղներ, որ Նիտայու հանելուկի տակ երգեն։

Նիտայու Իսահակ որդին որ մեծ վարպետ էր, տապանագրեր փորագրելու մէջ, շատ էլ փափաք է ունեցել աշղութեան և հօրից ծածուկ սկսել էր սովորել սազ ածելը։

Մի քանի մարդիկ Իսահակին խոստանում են թէ՝ երբ որ դու քո հօրը կարողացար յաղթել, մենք քեզ լաւ կ՚վարձատրենք։ Նա էլ առանց երկար մտածելու թէ ում հետ պէտք է գործ ունենայ, համաձայնութիւն է տալիս և սազն առած ծպտեալ մտնում է հէնց այնտեղ, որտեղ հանելուկն է լինում կախած։ Իսահակը մի երկու աշուղ հեռու է նստում հօրից, և մի հարցասական «դիւանի» է ասում այն ձեւով որ «էվէլ-ախըր», «զինջիլմայ» և «դիլ-թափրամազ» է լինում։ Հայրը քիչ դժուարանում է պատասխանելու. բայց երբ իմանում է որ իւր որդին է, յարձակւում է նրա վրայ ծեծելու. որդին փախչում է տուն և մօրը պատմում ամեն բան. մայրը թէև մի քիչ բարկանում է

որդու վրայ, բայց պահում է նրան տան մի անկիւնում, թէ մի գուցէ ամուսինը բարկացած տուն գայ և պատժէ նրան։ Բայց որքան սխալ լինում նրա կարծիքը. երբ Նիտային տուն է գալիս, որդուն չ՛տեսնելով ասում է «ուր է՞ Իսահակը» մայրը վախեցած պատասխանում է որ տանը չէ։ Նիտային պատմում է կնոջը թէ գիտե՞ս մեր Իսահակը շատ լաւ հասունացել է և առաջ է եկել. վախենում եմ թէ մեր մօտ չ՛ մնայ։ Մայրը տեսնելով որ իւր ամուսնի տրամադրութիւնը մեղմ է, խոստովանում է որ պահել է որդուն։ Իսահակը գալիս ներողութիւն է խնդրում հօրից և նրա ձեռքը համբուրում է ասելով, թէ գիտե՞ս հայր որ ես աշուղութիւն չեմ անելու. այլ երբեմն երբեմն ածում և երգում եմ պարապ ժամանակներս։

Մի անգամ Նիտային քաղաքից բացակայ էր. այդ ժամանակ որ կառավարութիւնից հրամայուած էր, Էրզրումից տանում էին 20—22 տարեկան երիտասարդներին Պոլսի մետաքսագործարանը (փիլէկխանայ) ձրի բանեցնելու. Ի թիւս շատ երիտասարդների տանում են և Նիտայու որդի Իսահակին։ Երբ Նիտային վերադառնում է Էրզրում, լսելով որ իւր որդուն էլ են տարել, երկու երեք ժամ մնալով, ճանապարհ է ընկնում Կ. Պոլիս, ներկայանում է իւր ծանօթ Միւխլիս փաշային որը Բ. Դռան Եպարքոս էր. փաշան երբ տեսնում է որ Նիտային շատ տխուր է, հարցնում է պատճառը։

—Ձերդ գերազանցութիւն. շատ ապրի Սուլթանը, Աստուած տայ նրան երկար կեանք. իմ միակ որդուս է բերել տուած «փիլէկխանայում» աշխատելու. ի՞նչպէս անեմ որ կարողանամ Օգոստափառ Սուլթանից որդիս խնդրել։

Միւխլիս փաշան այս բանը լսելով, յարմար առիթ էր որոնում որ Նիտայուն անձամբ ներկայացնէ Սուլթանին. կանխայայտնելով որ մի շատ վարպետ աշուղ է եկել, որը պատուական գիտէ Տաճկերէն լեզուն և լաւ երգում է։

Սուլթանը հրամայում է կանչել այդ աշուղին և ինքը Թագուհու հետ վարագոյրի ետեւում պատրաստւում է լսելու։

Նիտայլին երբ մտնում է պալատ, այնպէս յուզուած և տը-խուր դրութեան մէջ է լինում որ, երբ մօտենում է Սուլթանի գահին, չոքում է և այնպէս մի ցաւալի երգ է երգում, որ Սուլ-թանը հրամայում է իւրայիններին որ ոչ միայն այդ աշուղի որ-դուն, այլ և բոլոր հայ երիտասարդներին արձակեն։ Նիտայլին ու-րախութեամբ լցուած, գոհութիւն է տալիս Սուլթանին և որ-դու հետ ճանապարհ է ընկնում Էրզրում։

1830-ական թուականներին դրաւի Պասկևիչի ժամանակ Նիտայլին գաղթում է ընտանիքով Ռուսաստան. 4—5 տարի մը-նալով Ախլցխա քաղաքում, կրկին վերադառնում է Կարին։ Մեռել է 1856 թուականին։

ԵՐԳԸ.

Հէր սույի քիշվէրտէ բէնմ էֆէնդըմ,
Թախտի մուձէյյէ Սուլթանի սէն սըն.
Մըրրի մալահատ տէ շահի լէվէնդըմ,
Սալթանաթտա Եուսուֆ քէանհանի սէն սըն։

Բիր թանա պուլամամ օլամ մուրաձա,
Տէսէմ ճիսմի տէրդըմ րավամի րավա.
Նէպէն շէրպէթիտը հէր տէր տէտիվա
Դիլի պիլչարանըն Լօխմանի սէն սըն։

Մէյ շիւշատան սիւզէր լուլուտա քիալ
Վէջհին խուշրէ տանէ տանէ հինտու խալ.
Պաղ իճինտան իչրէ թէօհֆէ նէհիլալ
Վէսմի հիւրիլէրին ղլմանի սէն սըն։

Նիտայլինըն զիքրի սէն լէպի սիւքքէր,
Ծէպինհինտէն տողտի նուրի միւնէվվէր
Պիր երէ ճէմ օլսա սէթ հէզէր դիլպար
Ծիւմլէ դիլպարլարըն խուպանի սէն սըն։

(անտիպ)

15. **Բաղալ** ծնուել է Հին-Նախիջեւանից դէպի արեւելա-հիւսիսային կողմը մօտ 40 վերստ հեռաւորութեամբ գտնուող Նորս գիւղում, 1810-ական թուականներին։ Նրա ծնողները գաղթած են եղել Պարսկաստանից։

Բաղալը մանկութեան հասակում ծաղիկ հիւանդութիւնից զրկւում է իւր աչքերից. ծնողները տալիս են նրան մի աշուղի մօտ աշակերտ, որի մօտ սովորում է սազ ածելը և պարապում է աշըղութեամբ։

Մի քանի ժամանակից յետոյ Բաղալը գաղթում է Ղարաբաղ (Նուշի). երիտասարդ աշուղը այնտեղ սկսում է առաջադիմութիւն ցոյց տալ և հետզհետէ հռչակ է տարածում շրջակայքը. շատ աշուղներ գալիս են Բաղալի հետ մրցելու, բայց յաղթուած յետ են դառնում։

Աշըղ-Բաղալը երգել է միշտ թուրքերէն և իւր անգրա-գէտ լինելու պատճառով նրա երգերը կորչել են. բայց դեռ մինչև հիմա զանազան աշուղներ երգում են Աշըղ-Բաղալի երգերը։

Բաղալը մեռել է 1850-ական թուականներին Նորս գիւղում։

ԵՐԳԸ.

Ազալ ալիֆ բէյ եազմըշամ բէյրուբանըզը եասինա,
Ազբարըմ դիլըմ լէթվինան թէյթալը բամ եասինա.
Աղլամախտան վով վաշիթաք սէյըրգլըդըր եասինա,
Ասլի դէյմազ ջիմ ջհանդա հէյ հա թութար եասինա,
Աջալ կեալսա նուն նա բախար օմուր եոտի եասինա։

Ազալինան բէյլա կեօրտում հէյ հա սըլար բուխարա,
Արզ էյլեիմ վասփի հալըմ միմ մուջարաթ բու եարա,
Ավլան ավլան խէյ խառա գէյլամ լալա թակ բու եարա,
Արար բայկու քեաֆքեամթար դիդալ դալիզդի բու եարա,
Ահուլարդա զըլզըլմըի ռէյ ռաստ եասինա։

Սլագեօղլի սաթ սովդուգում խըզտա սախլա հայեատա,
Աշըղ օլտում թէյ թարսայեա սըռ վէրմանամ հանատա,
Ալ գեօթուրդում զաթ գհարտա դաշի սալամ հայեատա
Աշըղ-Բաղալ գէյ զարուրի ագեար օխուր հաեատա,
Ալլահ չալը ամանաթտի թաաւարինջա եասինա։

(անտիպ)

*
* *

16. **Ազբար-Ադամ** տ. (ազբար կնշանակէ մտքի մէջ պահող.) ծնուել է 1816 թուականին, Երևան նահանգի Փարաքար գիւղում։ Մանկութեան հասակում Ադամը ուսանում էր կարդալ և գրել, յետոյ սկսեց կօշկակարի արհեստ ուսանել. վերջը իւր համար կօշկակարի կրպակ բաց արեց և ընտրուեց ուստապաշի. այսինքն Երևանի կօշկակար արհեստաւորաց գլուխ։ Ադամը իւր ազատ միջոցներին պարապում էր բանաստեղծութեամբ Հայերէն Պարսկերէն և Թաթարաց լեզուով (մեծ մասամբ տպուած են «Քնար Հայկականի» մէջ)։ Ժողովուրդը շատ էր պատւում Ադամի քանքարը. նրան հրաւիրում էին հարսանիքներում երգելու. նա ածում էր սազ։ Վախճանուել է 1841 թուականին։

«Քնար Հայկական»

ԵՐԳԸ.

Ես մի սիրեկան կուզեմ դարդից խաբարդար ընի,
Համ խելօք համ դանանայ. ոչ թէ խելագար ընի.
Կեանքիս հետ կեանք ունենայ ահլի բաֆադար ընի,
Մեր երկըսիս պայմանը էս թաւուր իգրար ընի։

Ամէն փուչ սիրեկանի համար մի ջուան պըտի,
Հաւատարիմ սիրելոյ փիանդալու ջան պըտի.
Ծամփուռը ղուրբան անես օմըրդ բերդան պըտի,

Քաղցր խօսալ ունենայ անուշ սիրեկան սըրտի,
Սրտով սիրի սիրելյս սիրով սիրահար ըլնի։

Մի խօսքը սոահհ նար կուզեմ ու աշխարհքս հաւանին,
Իմանաս էլ ի՞նչ պէտք ա բամփալու սիրեկանին,
Դէմքդ փիանդաղ անենս քո ջանդ ղուրբան ջանին
Որ հոգի տաս չի կորած էս թաւուր գովականին,
Թէ դըրուստ միտք ունենայ քեզ հետ մուղալար ըլնի։

Փուչ սիրեկանի համար պէտք է ախ ու վայ չանես,
Ընկած տեղը ամէն վախտ ուղիղ սրտով սայ չանես,
Հաւատարիմ սիրելդ դոնալի հետ թայ չանես.
Անճար Օզբար-Օղաւի աշխատանքը զայ չանես,
Ջեմ հաւատալ աշխարհս թէ քեզ բարեւար ըլնի։

«Քնար Հայկական» եր. 401. կռձ. 1ու։

*
* *

17. **Մելքիսեթ** իսկական անունը Աղէքսանդր. ծնուել է 1817 թուականին մարտի 9-ին Աստարխանում, նրա հայրը Ագուլեցի սառաֆ Ստեփանի որդի Ղուկասը ունեցել է հինգ որդիք որոնցից ամենափոքրը եղել է Մելքիսէթը (Աղէքսանդր)։ Հանգուցեալ Ղուկասը մեծ նեղութիւններ է տարել, բայց երբէք չէ մոռացել իւր պարտքը որդոց դաստիարակութեան վերաբերմամբ։ Նա միշտ ասելիս է եղել. «Որդիք դուք հոգս մի արէք ես քանի կենդանի եմ ողորմութիւն կու հաւաքեմ բայց ձեզ առանց ուսումի չեմ թողնիլ» և կատարել է իւր խօսքը նայելով իր կարողութեան և ժամանակին։ Մելքիսէթը ամենից առաջ կարդացել է տէր Խաչատուր Ալամդարեանի յետոյ տէր Մելքիսեդէք Իւզբաշեանի մօտ. վերջինի մահից յետոյ տէր Գաբրիէլ Պատկանեանի մօտ. դժբախտաբար վերջինս Աստարխանից հեռանալով Մելքիսէթը չի կարողանում շարունակել իւր ուսումը։ Մի քանի ժամանակից յետոյ մտնում է գիմնազիա և այնտեղ մնում է

վեց տարու չափ։ Մելքիսէթը մեծ ընդունակութիւն է ունեցել Վրացերէն լեզուի, գուցէ և այդ իսկ զարթեցրել է նրա մէջ աշուղութեան սէրը։ *) Այդ ժամանակ մեռնում է նրա հայրը և նա դուրս է գալիս գիմնազիայից, առանց վերջացնելու սահմանեալ ուսումը։ Մտնում է վաճառականի մօտ ծառայութեան և չորս տարուց յետոյ նա գործակատար է դառնում Ղզլարցոց համար և ամբողջ 10 տարի պարապում է այդ գործով։ Երեւում է որ այդ ժամանակ ամուսնացել է։ (Շարունակութիւնը մեզ յայտնի չէ։)

«Սոխակ» գ. եր. 225

ԵՐԳԸ.

Յայտնի ա որ վաղն ինձ մօտ ես գալու,
Մութնով արի ոտիդ մատների վերայ.
Հիմիկուայ մարդիկը չորս ականջ ունին,
Հազարով էլ կախեն պատերի վերայ։

Բամբասելով ջանի աղար կու շինեն,
Լեզուները օձի պաշար կու շինեն.
Թէ մին բան էլ անենք հազար կու շինեն,
Խօսում են մեզնից լաւ շատերի վերայ։

Ինչպէս եկար մօտս կասենք կու լսենք,
Ու ամեն բան իրա կարգով կ՚ սկսենք.
Մեր խորհելու բանը շատ չի վախենք,
Պատճառ շատ ենք խօսել վատերի վերայ։

Քեզնից ի՞նչ ա պակաս թէ լաւ փիքր անես,
Էս մեծ լաւութիւնը հետդ կ՚ տանես.
Թշնամու աչքն էնպէս բանով կ՚ հանես,
Թող բարեկամք խնդլին եատերի վերայ։

*) Մինթէ վրացերէն լեզուն աշուղութեան հետ կապ ունի։
(Աշխատ)

Խոքան ասելով գլուխս դանդ էլաւ
Էշխիցդ հալս սարխոշ ու բանդ էլաւ.
Հ. տառով քու անունդ չոլս վանկ էլաւ,
Մէլէքխէմթը գրաւ քո ղադերի վերայ։
«Սախակ» գ. երես 150.

*
* *

18. **Բունիաթ-օղլի** տ. (Բունիաթեանցի որդի) իսկական անունը Օհանջան ծնուել է 1818 թուականին, Պարսկաստանի Խոյ քաղաքում։ 1828 թուականին Գեներալ Պասկեւիչի ժամանակ Ներսէս Կաթուղիկոս Աշտարակեցին (դեռ եպիսկոպոս) երբ պարսկաստանի հայերը բերում է Ռուսաստան, դրանց թւումն է լինում և Խոյեցի Բունիաթը, (Օհանջանի հայրը) իւր ընտանիքով։ Ռուսաստանի մէջ նրանք բնակութիւն են հաստատում Լոռի գաւառում։ Օհանջանը մանկութիւնից մեծացել է գինեգործութեան մէջ և դրա հետ էլ սովորել է գրել կարդալը։ Նա 40 տարեկան ժամանակից սկսել է սովորել չունգուր ածելը և յօրինել Թուրքերէն և Հայերէն երգեր. այդ ժամանակից նա իւր անունը նշանակում է Բունիաթ-օղլի։

1845 թուականին նա գալիս է Ալէքսանդրապոլ և մինչև վերջին տարիներս պարապում էր գինեվաճառութեամբ. քաղաքացիք նրան ճանաչում են ոչ իբր Բունիաթ-օղլի, այլ իբր «բիձա» որ նշանակում է պապի կամ հօրեղբայր։ Աչա մի քանի տարի է որ Ալէքսանդրապոլից հեռացել է. այժմ նա Վաղարշապատի Թալն գիւղում պարապում է գինեգործութեամբ։ Ունի երկու որդի մեծը Աւագը պարապում է գրագրութեամբ, իսկ փոքրը լուսանկարչութեամբ (Խաչատուր Բունիաթեանց)։

ԵՐԳԸ.

Խօսք առաւօտից մէկ գեօզալ տեսայ,
Մազերը շալուել էր տալ գեարտանին հետ

Նրանի էնտուր որ ինչ քեզ եար կնի,
Քեզ դակեար դեօվլալին անմաննին հետ։

Քու Թայնա խօսքերէն սիրտս խոցուել ա,
Բաղուէն կրակուել ա թացուել ա.
Ակնար ծոցիդ միջին Թազա բացուել ա,
Վարդն ու մանուշակը եասամանին հետ։

Ով քեզ տեսնայ կերթա դին ու իմանը,
Ոչ ով չի դիտենալ մեր սրտի բանը.
Արի Թաքլիփ անենք իմ ապիդ ջանը,
Պիտի տանես դնես եար քո ջանին հետ։

Եարիցս ջոկել էք ինձ ո՞ւր էք տանում,
Մակեար դուք քեափուր էք դարդ չէք իմանում.
Մեր էրկուսին դրէք մէկ խուլփաթ խանում,
Խըճուկ Բունիաթ-օղլուս էն Էղսանին հետ։

(Անտիպ.)

*
* *

19. **Ջահրի** պ.) (Թոյնաւոր) իսկական անունը Կարապետ ծնուել է 1818 Թուականին Յուլիս ամսին, Տաճկաստանի Վան քաղաքից ոչ հեռու Կեմ գիւղում։ Կարապետը երիտասարդ հասակում ինչպէս սովորութիւն է եղել այնտեղի հասարակ դասակարգի երիտասարդներին Կ. Պոլիս մի գործի լինելու։ Նրա բարեկամները տեսնելով Կարապետի յաջողակ ձայն ունենալը և բանաստեղծական շնորհքը, յանձնում են նրան տաճիկ Աշըղ-Նէջմին, որ սովորացնէ Կարապետին աշուղական արհեստի բոլոր բաները։ Կարապետն Աշըղ-Նէջմի մօտ աւարտելով աշուղական կուրսը, դուրս է գալիս արդէն սովորելով լաւ սազ ածել։ Վարպետ աշուղները տեսնելով Կարապետի սուր և ազդու ձայնը նրան Ջահրի մականունն են տալիս։ Ջահրին մինչև իւր 30

տարեկան դառնալը մնում է Կ. Պոլսում։ Բաւականին համակրութիւն է վայելում թէ հայ թէ տաճիկ հասարակ ժողովրդից։ Թուրք բէկերն, աշուղները, նախանձում էին որ այդպիսի մի շընորհքով մարդ քրիստոնեայ է եղել, ուստի նրանք փորձում են որ այդ «գեաւուրին» Իսլամական կրօնն ընդունել տան։ Ջահրին իմանալով այդ, թողնում է Կ. Պոլիսը և փախչում է Ռուսաստան։ Նրա վերջին կայարանը լինում Ալէքսանդրապոլ, որտեղ ամուսնանում է և դառնում ընտանեաց տէր։ 1870-ական թուականներին երբ Ալէքսանդրապոլում յայտնւում են բուն Հայերէն երգող աշուղներ, Ջահրին էլ չէ զլացել իւր կողմից ինքն էլ յօրինել մի քանի Հայերէն երգեր. բայց նրա անգրագէտ լինելու համար ոչ մի հետ չէ մնացել մինչև այժմ. թէ և տեղացի մի քանի մարդկանց բերանում կայ նրա երգերը, բայց բոլորովին աղաւաղած։ Հազիւ կարողացանք ձեռք բերել նրա որդի Աշըղ-Խայաթու մօտից մի Հայերէն երգ, որը մենք առաջ ենք բերում։ Ջահրին մեռել է 1888 թուականին յունվարի 19-ին Ալէքսանդրապոլում։ Երգելիս է եղել աւելի Թուրքերէն քան թէ Հայերէն։

ԵՐԳԸ.

Խնդիրս առ իմ սիրեկան հոգի ջան,
Ծիրոյդ, դառել եմ սիրաքան հոգի ջան.
Սէրդ գլաւեց ինձ անսահման հոգի ջան,
Մի սաստկանար ազնուական հոգի ջան,
Ծառաւեալիս ջուր տես արժան հոգի ջան։

Հուրիդ սիրով մոմի նման հալւում եմ,
Փոխան սիրոյդ բոլոր կեանքս մաշում եմ,
Միշտ բարութեան ճամբիցը սխալւում եմ,
Մորմոքում եմ աղերսում եմ խնդրում եմ,
Միթէ չունիս դու խղճմտանք հոգի ջան։

Որ ըստ օրէ հալ ու մաշ արիր ջանս,
Ի՞նչ պատճառ է չես լսեր աղաչանս.
Վա՜յ սիրահար վայ իմ անբաղդութեանս,
Քաջ սիրովդ ծառաւել է արեանս,
Չես կարծում թէ կայ դատաստան հոգի ջան։

Վարդուհի մէկ ականջ արա գանգատիս,
Փարատիչ դեղ շնորհէ անփարատիս.
Հաստատութիւն կամեցիր անհաստատիս,
Զահրի Կարապետ խղճալի աղքատիս.
Մէկ պռօշտի տուր արմաղան հոգի ջան։

(Անտիպ)

*

* *

20. **Ջահէլ-օղլան.** տ. (պատանի-տղայ) իսկական անունը Ցարութիւն. ծնուել է Աստարխանում 1820 թուականին։ Ցայտնի չէ թէ ուրիշ ինչ գործով է պարապել. իւր կեանքի միջոցում երկար սիրահարութիւններ է քաշել և այդ իսկ ժամանակ սկսել է աշուղութիւնը։ Մեռել է 30 տարեկան հասակում և թաղուած է Աստարխանի գերեզմանոցում։

«Սոխակ» գ. երես 225.

ԵՐԳԸ.

Ե՛կ մուվրաթ արա բէրաֆա դիլբար,
Հերիք չէ՞ ինձ էշխիդ դարդն չարչարի.
Մակեամ քեզ յայտնի չէ՞ ես ինչ եմ քաշում,
Ինչպէս որ բիւլբիւլն վարդն չարչարի։

Միրվաթ արա մին տես իմ քաշած հալս,
Գիշեր ցերեկ էշխիդ արին ողբալս.
Ամէն սհա բոյիդ իմ մաքին գալս,
Մեր արած խըղարին շարթն չարչարի։

Գովասանքդ կանեմ քանի կենդան եմ,
Ենկ մուրվաթ արա ես էլ մին ջան եմ.
Ղուլ խոմ չ'եղամ ես մին Չահէլ-օղլան եմ,
Քաղցր խօսքդ սրտիս դառն չարաչարի։
«Սոխակ» գ. երես 103

* * *

21. **Նիրանի** ա. (կրակոտ) իսկական անունը Յովհաննէս. ծնուել է Վաղարշապատում 1822 թուականին. նա սկսել է ուսանել Գ. Մալխնցովից. յետոյ ականաւոր Հայագէտ Մեսրովբ Թաղիաթեանից, որը և գիտէր Թաթարերէն Պարսկերէն և Անգլերէն։ Վերջը պատուական խոհեմ և աշխատասէր Յովհաննէս Շահխաթունեան արք-եպիսկոպոսի մօտ։ Նիրանին լաւ ուսկերիչ էր և բացի այդ 1835 թուականին առանց վարպետ ուսաւ սազ ածելը։ 1840 թուականին սովորեց չունգուր ածելը և բանաստեղծում էր Հայերէն և Թուրքերէն։ 1842-ին մականուանեցաւ «Շահիրի» (բանաստեղծ). իսկ 1849 թուականին «Նիրանի» տես Русскій инвалидъ 1857 г. № 28

«Նոր քնար»

ԵՐԳԸ.

Ասում ես խեղճ ման գալով բոլորն ինձ արդար են ասում,
Չես գիտում վատ համբաւդ ուրիշ տեղ հազար են ասում.
Լեզուդ չի պահպանելով բնութիւնդ չար են ասում,
Հէնց գիտես շատ խօսացող մարդերին ճարտար են ասում.
Ծաղր են անում խնդում են անմիտ խելագար են ասում։

Այլոց լաւ սենեակիցն քո փոքր տունն է գովելի,
Աշխատելը վատ չի լինիս մարդու անունն է գովելի
Ոչ ով քեզ գրօշ չի տալ թէ ունիս՝ քունն է գովելի.

Անզգամ կնոջ մէնէն տխրասէր շունն է գովելի,
Որքան թակես չի փախնիր Նրան հաւատար են ասում:

Շնորհակալութիւնը ըսկի մարդու տուն չի շինիլ,
Դու դրան հաւանելով քեզ սեփական կայք մի անիլ.
Հազար բեռ էլ ունենաս ոսկի ու արծաթ չի լինիլ.
Նիրանի գուն փող մի տալ էդպէս դադարկ բաներ գնիլ,
Էդպէս բանին հաւատող մարդերին յիմար են ասում:

«Ցնար Հայկական» եր. 571 կտճ. 2.

*
* *

22. **Մալիլ.** ա. (խեղճ տխուր) իսկական անունը Գալուստ. ծնուել է Ղարսում 1823 թուականին: Սրա հայր Սարգիսը բնիկ Ղարսեցի է եղել. ինչ հանգամանքներով գալիս է Ալէքսանդրապոլի Ղանլիճա գիւղը յայտնի չէ. նա հետը բերում է իւր որդի Գալուստին: Գալուստը գիւղի մէջ համարեայ եօթը տարու չափ մնալով պարապում է ջուհլակութեամբ (կտաւ գործող) և դրա հետ էլ սովորում է ջութակ ածելը (երեք թելը): 1833 թուականին Սարգիսը ընտանիքով տեղափոխւում է քաղաք (Ալէքսանդրապոլ) հետզհետէ Գալուստը Ալէքսանդրապոլում իւր ասելով Սուրբ գրոց հետևելով գրում է բանաստեղծութիւններ «ղոշմայ»-ներ և այլն: Եւ աշուղական սովորութեամբ նա իւր անունը կնքում է Մալիւլ:

Կարճ ժամանակից յետոյ նա թողնում է ջուհլակութիւնը և պարապում է պարտիզպանութեամբ և աշուղութեամբ: Նա հիմա ծերացել է. թողել է աշուղութիւնը և օրերն ինչպէս ասում են մթնեցնում է իւր պարտիզում:

ԵՐԳԸ.

Սիրտս նուաղել է հոգիս մաշել է,
Էգ քու գաղտնի այրող կրակդ աշխարհ.

Տաշել է իմ կենաց ծառը տաշել է,
Քու մահերով սրու սև դանակդ աշխարհ:

Ըստ գլոց հին մեղքով չարերով լցուած,
Հազարաւոր թուով դարերով լցուած.
Լցուած ես անհամար օրերով լցուած,
Աւա՜ղ դեռ տղայ է հասակդ աշխարհ:

Քու տարիքդ քեզի պարծանք չի՛ լինիր,
Թանգը էժան էժանը թանգ չի՛ լինիր.
Քեզ սիրողը կենաց ժառանգ չի՛ լինիր,
Որովհետև մահ է փափակդ աշխարհ:

Եղբա՜յր թող մարմնեղէն միտքդ ու լսէ,
Սուրբ հոգիէն եկ նորոգիչ սկսէ.
Վերջը քու տիրոջդ գալուն սպասէ,
Կաղաչէ քու Մալիւլ մշակդ աշխարհ:
(Անուշ) կուծ. 16 տ.

*
* *

23. **Էյրաթի.** (անհիմն խախուտ) իսկական անունը Էլբակ. Ծնուել է 1825 թուականին Տաճկաստանի Հասան-Ղալա բերդաքաղաքում:

1830-ական թուականներին գաղթել է Ռուսաստան և բընակութիւնը հաստատել է Ալէքսանդրապոլում:

Մեծ մասամբ նա պարապում էր որմնադրութեամբ միայն մանուորայէս սովորել էր սազ ածել և իւր անունը նըշանակել էր Էյրաթի:

ԵՐԳԸ.

Բաւական է ուսամ ես էս աշխարհին,
Մնամ առանց գլխջում լեռ. քարի լման.

Հրեղէն սուսերով զինուորների պէս,
Ձէնեցին քեռթեցին խեղճ գառի նման։

Գիշերը չի տանի ախքըրտի քունը,
Նէ օր միտը գյնի իւր խեղճութիւնը.
Հաստատութիւն չունի բնակութիւնը,
Օղերէն ցրուած չատրի նման։

Էյրաթինեմ կտրաւ իղձալիս ակը,
Մէկ օր նոր չ՛տեսայ էս իմ գտակը.
Գիշեր ու ցերեկ մեղ.քիս տապրակը,
Ումուղիս եմ առե ուրարի նման։

(Ա. Նարէկ)

*

* *

24. **Մայիֆ.** պ. (կոյր) իսկական անունը Յարութիւն. ծընուել է 1825 թուականին Պարսկաստանում, Թէյրանի Ղարաղան գիւղում. Նրա հայր Ղազարը որ նոյնպէս եղած է աշուղ, ածելիս է եղէլ սազ։ Դեռ Յարութիւնի մի տարեկան ժամանակ, հայրը մեռնում է և նրա հօրեղբայրը Յարութիւնին և քրոջը հետը առած գալիս է Շամախի։ 1842 թուականին թէև Շամախում Յարութիւնը փոքր ինչ կարդում է, բայց միջոց չունենալով երկար շարունակելու, սկսում է այնտեղի Նորաշէն եկեղեցու վրայ մշակութիւն անել և աշխատած փողերով ընթերցանութեան գրքեր առնել։ Նա մի քանի շաբաթ այդ ծանրակիր մշակութիւնն անելով, նրա աչքերը վնասւում են և շատ չանցած կուրնում են։ Այդ իսկ օրը նա իւր անունը դնում է Մայիֆ։ Ապրուստի միակ միջոց ձեռք բերելու համար նա սովորում է սազ ածելը և պարապում է աշուղութեամբ։

«Սոխակ» դ. երես. 20

ԵՐԳԸ.

Մայրաքաղաք ես դու աղնիւ Հաշտարխան,
Քո գեղեցկութեանդ գովասանք կուտան.
Քեզանում ճարւում է ամեն տեսակ բան,
Առնողն թող առնի կարում է որքան.
Հազար հազարներով թէ կուզի մարդ գան,
Մայրաքաղաք ես դու աղնիւ Հաշտարխան։

Կանայքը դուրս են գամ ման գալը հովում,
Ամենքը զուգուած են Թանգագլին մովում.
Վարդերի պէս բացուած սրտերի պովում,
Կանաֆի ափերը գարուն է Թւում.
Կարետով Փայտոնով դրօշկով կը գան,
Մայրաքաղաք ես դու աղնիւ Հաշտարխան։

Մայրիֆ Յարութիւն այդ յիշատակն հին ա,
Դու Հաշտարխանին նոր ընծայ տու գնա.
Պատճառ աղնիւ քաղաք ա Թանգագլին ա,
Թէ կ՛ ընդունեն այս աշխատանքս մնայ.
Տէրի տուած պարգեւ ինձ ունեմ այսքան,
Մայրաքաղաք ես դու աղնիւ Հաշտարխան։

«Սոխակ» Դ. եր. 166 կտ. 8 տ.

*
* *

25. **Տիրին** պ. (քաղցր անուշ) իսկական անունը Յովհաննէս ծնուել է 1827-ին Կողբ գիւղում (Երեւանեան նահանգ) սա իւր երկու տարեկան հասակում ծաղկացաւի պատճառով զրկուեց իւր աչքերից։

Որովհետեւ մանուկ Յովհաննէսը լաւ ձայն է ունեցել, իւր հօր կարգադրութեամբ ուղարկում են Ալէքսանդրապոլ, որ այնտեղ երգիչ Բաւէի մօտ՝ որը լաւ սազ էր ածում, աշկերտ լինի։

Յովհաննէսը որ իւր ձայնի քաղցրութեան համար ստացել էր Շիրին աշուղական անունը, մի քանի տարի մնալով այդ ալէքսանդրապոլցի երաժիշտ վարպետի մօտ, լաւ սովորում է սազ ածելը։ Յետոյ անցնում է Տաճկաստան. Կարնի մէջ պատահում է տաճիկ աշուղ Ասլի-Էֆէնտուն։ Մի քանի ամսից յետոյ վերադառնում է Կողբ և այնտեղից էլ գնում է Վաղարշապատ։ Շիրինը սկզբում երգում էր Թաթար լեզուով, բայց յետոյ մի քանի բարի մարդկանց խորհրդով սկսեց երգել Հայերէն։ (տես Русскій инвалидъ 1857 № 28.)

ԵՐԳԸ.

Դուշա ջան, քու ցանկալի գեղեցկութիւնդ է գովելի,
Քաղաքավարութիւնդ, խելքդ ու անունդ է գովելի.
Մանաւանդ ազնիւ ու հանդարտ բնութիւնդ է գովելի,
Դու հարազատ ազգէ ես ընտիր արիւնդ է գովելի։

Գիտում եմ որ սիրելի ուրիշի սէր տալ չ'գիտես,
Զափազանց պարդաբերելով տեղից տեղ մանգալ չ'գիտես.
Քաղցր ու պարկեշտ հոգի ես աւել ղալմաղալ չ' գիտես,
Մէկ ծառ ես Եդեմական բարի արիւնդ է գովելի։

Գիտում եմ որ լաւութեանս փոխարէն չար չես անիլ,
Աղաղակս լսելու համար սիրտդ քար չես անիլ,
Քու սէրիդ աղեղովը ինձ նետահար չես անիլ.
Ջուր մի մաշուիլ սենեակս եկ ասութիւնդ է գովելի։

Չեմ սխալուել եթէ քեզ գեղեցկութեան արքայ ասեմ,
Նալութեանս աւետիք, կենդանութեան ըծայ ասեմ.
Եսթերին համանման ես հիմայ քեզ ներկայ ասեմ,
Մարդաշահ խաղաղարար խօսակցութիւնդ է գովելի։

Քեզանից քիչ վախում եմ, դէշ հարևաններ շատ ունիս,
Անունդ սատոր քցելու վատաբերաններ շատ ունիս.

Վարք ու բարքդ մի փոխիր, դու գովասաններ շատ ունիս.
Շիրինի մօտ քու կատարեալ կեցութիւնդ է գովելի:

«Նոր դար» երես 25

*

* *

26. *) **Լաղայ.** պ. (աննման) կամ (դաստիարակ). իսկական անունը Կարապետ. ծնուել է Աստարխանում, բայց յայտնի չէ որ թուականին: Իսկ այժմ էլ ինչպէս գրել է «Սոխակը» այնտեղ պարապում է առեւտուրով:

ԵՐԳԸ.

Ազգայ տըլան աշխարհումն ինչպէս մին բըլըբուլ բաղի մէջ,
Հէնց որ ամուսնացաւ ընկնում է հոգս ու դարդի մէջ.
Թէ լաւին ռաստ եկաւ քոլ ցաւերն անըմա հէչ,
Թէ բնութիւնն վատ է խայտառակւում է ազգի մէջ,
Նամուսու խեղդըւում, է երբ կ՚ լինի իմ վերջ:

Աղջկերք միտք են անում մենք խօ էսպէս չենք մնալու,
Ժամանակն որ կ՚գայ մենք էլ մարդի ենք գնալու.
Կարծում են իրանց մտքով երջանկութիւն են գնալու,
Չեն խաբար որ չար մտքով կորչելու են մեղքերու մէջ:

Թէ գրեմ կանանց բաներն կը լցուի քանի երես,
Նարադըրանք կասեն քեզի պիտի լսես ու համբերես.
Էդ շարադրանքը բաղարից յետ գալիս պիտի բերես,
Թէ չ՚բերես ինչ աչքունք կ՚հանդիպես և ինչ երես,
Տէր դու ինձի ռաստ չ՚բերես էնպէսին չ՚ընկնեմ դարդի մէջ:

«Սոխակ» գ. եր. 177.

---

*) Մենք կ՚ ցանկայինք որ մինչեւ վերջը ժամանակագրական կարգով գրէինք բայց հիմայ որ մի քանիսի ժամանակները յայտնի չեն, դրա համար էլ այդ յայտնի չեղածները մէջ տեղը թողնինք:

27. **Ղազազ-Օսէփ.** Սրա մասին ոչ մի բան յայտնի չէ։

*
* *

28. **Եթիմ-Օղլան.** ա. (որբ տղայ) իսկական անունը յայտնի չէ և բացի այդ՝ հակառակ մեր ցանկութեան չկարողացանք սրա մասին կենսագրական տեղեկութիւններ հաւաքել. միայն այսչափ բան են ասում սրա մասին, իբր թէ Թիֆլիսեցի է եղել։

ԵՐԳԸ.

Գեղեցկութիւնիդ վրէն ես մայիլ իլամ,
Համեմատդ չիլիս աշխարհիս վրէն.
Ես աշուղ իլամ քո սիրույդ վրէն,
Էշխիդ խելքս թռած համար իս իլամ։

Կանաչած բաղ ես անուշ հոտերով,
Ի՞նչպէս դիմանամ քեզի զովելով.
Մի թող աւարայ դու ինձի լալով,
Խօսքերս կասեմ հարիւր հազարով։

Ի՞նչ արել եմ ես քեզ թողար էդ հալով,
Էլի չեմ դիմանալ նամուս անելով.
Եթիմ-Օղլին կասի փիքըր անելով,
Բէլքի մին ճար ըլնի սրա դթալով։

«Սոխակ» գ. եր. 130

*
* *

29. **Ղարա.** ա. (սև գեղեցիկ) սրա ով ըլնելը մեզ չէ յայտնած։

ԵՐԳԸ.

Աշխարհիս լաւութիւն արա,
Գանգատ չունիմ ղալն ի՞նչ անեմ.
Ժամանակով քեզ ճար արա,
Չի լինիլ իխտիար հալ ի՞նչ անեմ։

Շատ է մեր սաղմոսի զօրքը,
Պատիւ անենք պահենք փառքը.
Պէտքը կ'գայ էն աշխարքը,
Դուր ջաւահիր ալն ի՞նչ անեմ։

Սուտ բաներին մի կաց վկայ,
Որդալներին տանջանք չ'կայ.
Վասլու մարդ կայ տուրքն չի տայ.
Ոսկի արծաթ մալն ի՞նչ անեմ։

Ուղիղ սրտով ժամ գնալով,
Գնանք ճանապարհին լալով.
Ձեռնով ողորմութիւն տալով,
Սրտէս չի գալ տալն ի՞նչ անեմ։

Մի թողար մեղքդ շատանայ,
Քեզ կ'խաբի չար սատանայ.
Մէջ գերեզման չես դինջանայ,
Վերադ քաշած սալն ի՞նչ անեմ։

Ըս մեղաւոր Աշըղ-Ղարա,
Փորձած մեղքիս՝ Տէր ճար արա.
Մեղաւորին չինել չարա,
Հագուած շիրմայ շալն ի՞նչ անեմ։

«Սոխակ» գ. երես 28.

*

* *

30. **Խարազ-օղլան.** տ. (կօշկակար տղայ) իսկական անունը յայտնի չէ. որտեղ և երբ է ծնուել դարձեալ յայտնի չէ։

ԵՐԳԸ.

Սրտիս կրակն վառ վառ ա,
Կրակուխս դու բարով դիլբար.
Մալուլ մուշկուլ Թողար ինձի,
Մոլորուխս դու սարով դիլբար։

Էշխիցդ նարա քաշեցիր,
Ձեռքիցդ եկածն արեցիր.
Արդար եղի պէս հալեցիր,
Տապակուես եղովդ դիլբար։

Խարազ-օղլանն եմ Թաւատը,
Ընդունեմ Հայոց հաւատը.
Սազի երեսի սաւատը,
Սազի պէս չորանաս դիլբար։

«Սոխակ» գ. եր. 175 կռճ. 2 տ.

*

* *

31. **Հայաթի.** ա. (կենսատու կենսաբաշխ) իսկական անունը Միքայէլ. ծնուել է Մուշ քաղաքի Բլուր գիւղում, յայտնի չէ թէ որ թուականին։ Սուլթան Մահմետի ժամանակներին, եղել է նրա մօտ երգող և նուագող։ Սրա յօրինած երգերը բոլորը Թուրքերէն են։ Ածելիս է եղել սազի վրայ. երգերից ոչ մի հատ չեն հասել մեզ։

«Փունջ Բ. 2246

*

* *

32. **Բաղդասար** եղել է մշեցի. առաջ պարապել է աշուղութիւնով. լաւ էլ սիրելի է եղել հասարակութեանը. յետոյ ձեռնադրուել է քահանայ. Բայց նա չէ դադարել բանաստեղծութիւններ գրելուց: Ծնուած և վախճանուած թուականները յայտնի չեն:

ԵՐԳԸ.

Յիրեք բանը զօռ է յաշխրքի միջէն,
Մէկ սէրը մէկ սաւդէն, մէկ աղքատութիւն.
Քաշող մարդուն կանցնէ էնթիրիւ գլչէն,
Մէկ սէրը, մէկ սաւդէն, մէկ աղքատութիւն:

Շատի աչքի արտըսունքը չայ էրաւ,
Շատերուն էլ դէօլուաթները փայ էրաւ.
Քանի քանի տղամարդիկ գոյ էրաւ,
Մէկ սէրը, մէկ սաւդէն, մէկ աղքատութիւն:

Ֆարազի ես յիրեքն ըսի պատիժը վէց է
Գնա գիտցիր խաղիս ըսողն էրեց է.
Բաղդասարին յիրեք բանը կերեցէ
Մէկ սէրը, մէկ սաւտէն, մէկ աղքատութիւն:

(անտիպ)

*
* *

33. **Ղարիբ-օղլան** (օտարի տղայ) իսկական անունը և ով լինելը յայտնի չէ, միայն ասում են որ Թիֆլիսեցի է եղել:

ԵՐԳԸ.

Դրացիս դու ի՞նչ ես նստել. արի փոքր խօսի ինձ հետ
Ինձի ու քեզ չէ միայն ամէքին է կապել այս նետ:

Ասդպէս խորին՝ զգացմունքով ինչի վերայ ես մտածում,
Քաղաքս ողջ փչացել է մարդ չի մնացել այս քանդնում,
Տորոնչիքը խարարներին տիկնի տեղ են պար ածում.
Այսպիսի դժբաղդութիւն ողջ չի տեսած ստեղծւածում,
Սորանից պրծում չունինք գերեզման կ'տանինք մեզ հետ։

Փուչ փուչ համբաւներ լսելով ականջներս էլ խուլացաւ,
Ով այսօր հաստատ խօսեց, տեմնում ես վաղն թուլացաւ,
Ինքներս հոգսի ընկանք առուտուրներս ծուլացաւ.
Տորոնն մեզ լաւ դմակ էր վերջն ամօթներս բացաւ,
Էլ չենք տեմնիլ այն օրերը թողեց մեզի գնաց անհետ։

Տօրնի վերայ խօսողներից դու էիր պակաս Ղարիպ-տղայ
Խօսքումդ էլ սխալ չկայ որ փոշմանես ասես մեղայ.
Ինչ է գիփ արդար ես ասել ով լսէ կասէ սարսաղ ա
Բայց դու մոռացել ես ասել թէ տօրոնն ինչի դեղ ա
Եթէ նիրկես քեաֆտառներին, փոխսը կ'ընկնին մէյմունի հետ։

«Սոխակ» դ. եր. 66 կոճ. 10 տ.

*

* *

34. **Բլբուլիկ** սրա անունը ինչպէս երեւումէ «բիւլբիւլ» բառից է, այսինքն սոխակից. ոչ իսկական անունը ոչ էլ ով լինելը յայտնի չէ. միայն Բլբուլիկի մի երգը առաջ ենք բերում այստեղ։

ԵՐԳԸ

Երանի կտամ էն երեկոյին,
Որ իմ դէմ ու դէմ նստած էիր դու.
Մտիկ կտայի քո սեւ աչքերին,
Կարծում էի թէ լուսնեակ ես դու,
Նոր հրաշք ես դու։

Անմեղութիւ՜նը ճակատիդ վրան
Փայլում էր որպէս ժպիտ շրթունքիդ,
Մազերիդ հիւսերն քնքուշ ու երկան,
Նար խեղթուելու ինձ թէ կատես դու,
ՈՀ սիրես ինձ դու։

Սիպտակ ատամներդ վարդ պռօշներդ,
Կէս լուսին ճակատդ հոգի են հանում.
Բայց անուշ ձայնդ գրաւիչ հայացքդ,
Սիրտ է կազդուրում. թէ հրեշտակ ես դու,
Իսկ իմ կեանքս ես դու։

Մոռացայ հանգիստ մոռացայ և քուն,
Դառն է իմ կերածն ըմպածն ամեն օր,
Առանց քեզ ի՞նչ կեանք ի՞նչ հանգստութիւն
Կեանքիս միակ բաղդն ու զարդն ես դու,
Ցաւ ու դարդն ես դու։

Այս սիրուհի մի ծածկիր ինձնից.
Ծանօ՞թ են քեզի վարդն ու սոխակը.
Հանաք մի անիր՝ խոցս է արնալից,
Բեր Բլբուլէկիդ, ցաւին մի ճար դու,
ՈՀ հոգիս առ դու։

«Սոխակ» գ. եր. 179.

35. **Սարի-օղլան.** (չէկ տղայ) իսկական անունը յայտնի չէ. ծնուած թիւն էլ յայտնի չէ, բայց եղել է ղարսեցի։ Պատանի ժամանակ աշակերտել է ենիչերիների մեծաւոր Աբէ-աղայի մօտ ու միաժամանակ բերանով սանտր, *) ձեռքերով սազ, ոտքերով սանթուր է ածելիս եղել։ Գեներալ Պասկեւիչի ժամանակ, Սարի-օղլանը իւր համագիւղացիների հետ, գաղթում է Ալէքսանդրա-

*) Սանտրը մի երաժշտական գործիք չէ, այլ հասարակ սանտրի ատամներին կպցնում են բարակ թուղթ, և բերանով ածում են։

ալը, և բնակութիւն է հաստատում նոյն գաւառի Եկեանլար գիւղում։ Թէև Աբէ-աղայի սրտովը չէ եղել Սարի-օղլանի հեռանալը որովհետև վերջինս շատ զուարճախօս և ծաղրածու մարդ է եղել։

Սարի-օղլանը այդ գիւղի մէջ ամուսնացել է և այդ տեղ պարապել է աշուղութեամբ. երգել է միշտ Թուրքերէն լեզուով, և ածել է սազի վրայ։

Մի քանի տարուց յետոյ գիւղի հասարակութիւնը խնդրել է Սարի-օղլանին որ թողէ տայ աշուղութիւնը, և լինի գիւղի տանուտէր. նա էլ չէ մերժել իւր սիրելի ժողովրդի խնդիրքը. անձն է առել տանուտէր լինելու։ Համարեայ 15 տարի տանուտէր լինելով, վերջերս մեռել է. թողնելով երկու որդի Վարդան և Գրիգոր։

ԵՐԳԸ.

Դունեայ բանա օլտուն արազ,
Եւրը լարան բատան դիւնեայ.
Մանինան դուշմիան զարազ,
Շարուսզ խիլաֆ սաթան դիւնեայ։

Նէչայ Սուլթան նէչայ խաննան,
Նէչայ թախտի Սուլէյմաննան
Բիլդիմ ալ չաքմասան մաննան,
Շէտիտ եախամ տութաան դիւնեայ։

Սարի պու սէօզի դիասըն,
Սախաազ քօյնակ գիյան.
Մանիտա եսան տօյմասըն,
Պիր գեանտընտան ութան դիւնեայ։

(Անտիպ.)

*

* *

36. **Բանգի.** (պիտակաւոր) եղել է Ալէքսանդրապոլի Համամլի գիւղից. Իւր շրջակայ ժողովրդի մէջ լաւ անուն է ունեցել. շատ պատմել է Թուրքերէն հէքեաթներ։ Բանգին ինքը կոյր է եղել և մի կոյր աղջիկ էլ առել է իրան կնութեան, որ չ՛ լինի թէ կինը իրան անհաւատարիմ և դաւաճան դուրս գայ։ Սրա երգերից ոչ մէկը մեզ չէ հասած։

*
* *

37. **Դօնի.** եղել է Նուխեցի, բայց ոչ երգն է մեզ յայտնի, ոչ կենսագրութիւնը։

*
* *

38. **Ալուան-օղլան** (ներկարար տղայ) անունը Գասպար. կենսագրութիւնից ո՛չ մի բան մեզ յայտնի չէ, միայն սրա երգերից հետևեալ չորս տողը կարողացանք գտնել։

Իրկու եարի մէջըն թէ նընդիլ է սէր,
Օվ որ ատըրծասէր է պէտք է խօսի խէր.
Մէկ մէկումէն չ՛ըլին չը ծեան անտէր,
Լաւ օրն անց կու կենայ դիփ ախ ու վա՛յ վա՛յ։
«Սայաթ-Նովայ» երես 20.

*
* *

39. **Օքսուզ-օղլան.** (որբ տղայ) սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ։

Ես քեզ հետ շատ բան ունիմ
Ջարթնի ձուրտերուն օխտը խան ունիմ
«Սայեաթ Նովայ» երես 41.

Օքսուզ-օղլանն ձեր Թարլիքն անըլըս,
Հարփի հարփի վրէն, մէ մէկ դարըսըլըս.
Ձեզ երկուսիդ տեսնեմ մեկշի խօսելիս,
Դու որ կուլում ըլէք ես խօմ հաց կօնիմ։
«Սայեաթ-Նովա» երես. 121

*
* *

40. **Լեզզաթ-օղլան.** ա.) (համով ճաշակով տղայ) սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ. միայն սրա երգերից յայտնի է հետեւեալ կտորը։

Մեռնելուս օրն քիզ գուզեմ վրէն քար ածես յինձ ամա.
«Սայեաթ-Նովայ» երես 47.

*
* *

41. **Նամիյի.** պ.) (անուանի) իսկական անունը Յակոբ. որտեղ և որ թուականին է ծնուել յայտնի չէ. միայն Սուլթան-Աբդուլ-Ազիզի ժամանակներում նա Պոլսում մեծ համակրանք էր վայելում Թուրք իշխաններից և մեծերից։ Տաճկերէն լեզուն լաւ գիտեցել է գրել կարդալ և այնպէս «կօկիկ» երգեր է ունեցել, որ մինչև անգամ տաճիկները զարմացել են նրա շնորհալի տաղանդի վրայ։

ԵՐԳԸ.

Ալթոր վասլըն օլ հիլալ էպրու եէնի այ պաշընա,
Տէօնտի պարի հիճրիլէ գատտիմ խէմիտէ գաշընա.
Պիր ֆէլէկ մէշրէփ օ մէհրուլիմ կիպի կէօրմիւշ միսին.
Թա կէլիճէ էյ սիրիհրի բիրեզէն պու եաշընա։

Կեօզաէ Թիմսալըն միւճէսէմ կեօսթէրիր յնսան իւշ այն,

Աֆէրիմ օրուն նիկարամ նազչխէն նազդաշընա.
Ծերէ կէշմիշ չէրմ իլէ էյ տուրրէլի նայապընալ,
Բէշք խոսալ քեանի պէտէ խշան լալի կէվհէր բաշընա:

Իքի չէշմին նամլյա այնի սատաֆ տէրխապըտըր,
Նուրույի լալա տուսէմ տէ խարաշըր կեօզ խաշընա:

Մ. Արապաճեան Կ. Պոլիս.

*
* *

42. **Խոյի-Վարդան.** Եղել է Պարսկաստանի Խոյ քա-ղաքից. բայց թէ որ թուականին է եղել մեզ չէ յայտնած: Ածել է սազի վրայ, երգել է միշտ Թուրքերէն:

*
* *

43. **Ռուստամ.** Եղել է յայտնի աշուղ, բայց բացի ան-ւանից ուրիշ ոչ մի բան մեզ յայտնի չէ: Միայն սրա մի երգը կարողացանք գտնել.

ԵՐԳԸ.

Ո՛վ սիրելի մի պաշ տուր՝ ինձ մի թողուլ հասրաթ.
Աստուած սիրես մօտ արի, ռահմ արա բի մուրուաթ.

Բէչարա Մաջնունի պէս եղել եմ ջամալիդ մաթ,
Գեղեցիկ ես պանադան, դու ես մէկ գիւրջի թաւաթ,
Կուռս ծիտովս քցեմ, ես դու անենք եխտիլաթ,
Ստեղծողէն ճար անի սէրն ունի շատ լազզաթ:

Անկայ սիրոյդ կրակն, կորաւ խելք ու քեամալս,
Զօրացած վարդի նման սհմիշ էլաւ ջամալս.
Ի՞նչ կուլի ռահմ անես հարցանես արդ ու հալս,

Ծարաւ եմ ջուր եմ ուզում պռնկներիցդ տուր շարբաթ։

Էյ Նազանի ինձ ղօնաղ տար քո տունը մեհման արա
Գուլաբ շաղ տուր մազերիդ հոտով ռէյհան արա.
Սէրդ ինձի սախաթել ա դարդերիս դարման արա,
Եթէ դարման չես անիլ ել գնանք շար ու շարեաթ։

Բօյըդ ինձ լոյս կ'տայ նոր շամ չըրաղի պէս,
Ծիծերդ փարդի կոկոմ ծոցդ բաղչա բաղի պէս.
Բէչարա Ռուստամին պահել ես տուսաղի պէս,
Իմ սիրելի սաղ ըլնես, չեմ ուզել մալ ու դովլաթ։

«Նոր դար» Ռաֆ. Յովհաննիսեան.

*
* *

44. **Նաշխունով.** (Նաշխունեանց) իսկական անունը Ասատուր բնակւում է Թիֆլիսի Հավլաբար թաղում. Նա մինչև այժմ էլ դեռ Թիֆլիսումն է. գրում է հայերէն երգեր։

ԵՐԳԸ.

Նազանի բարի հաւէս արի գուզիմ քեզ ձարի,
Խնդիր ունիմ մօտս արի մի չարչարի մի բերի զարի.
Զարի բերելով ինձ էրէլով շատ զայ իս արի,
Ինձ զայ անելով թշնամանելով ի՞նչ պիտիս ձարի
Գիտեմ ձար չունիս իմըն դուն իս շուտ ռայի արի։

Էշխէդ իս հալի միշտ իմ լալի սիրտս ունիմ եարա,
Իմ եարա ջանիս մէ ռահմ անիս ռահմդ ինձ ձար ա.
Ռահմ չես անում, կամք չե՛ս անում ի՞նչպէս ջիկար ա,
Ջիկարս է եարա, փարա-փարա կանչում եմ հարա,
Հարա կանչելով քեզ ման գալով էկա բեզարի։

Անմահական ծառ իս անուշ բարիս թազա նուբար իս

Լուս անգլմ բար իս շատ պայծառ իս խնդրեմ զարդարիս.
Ինձ քիզ տերացնիս ուրախացնիս էլ չ՛չարչարիս,
Իմ ճարա ջանիս դարման անիս կամքս կատարիս,
Դարմանս դուն ես ջուռաթ չունիս իղար տաս արի։

Եար քու զուլն իմ ես բիւլբիւլ իմ ջունուն իմ դառի,
Քիզմէն ջան չունիմ էլ հայ չունիմ էշխէդ ես վառի,
Էշխէդ վառիլ եմ ալրուել եմ խաստայ իմ դառի.
Միտքս ցրուել է մոլորուել է խելքս իս առի,
Խելքս առած չանիս մէ ճար անիս խօսք ասիս բարի։

Եաղութ եամանն իս լալ մերճան իս շատ աննման իս
Աննմանութենէդ բարկութենէդ ինձի զայ չանիս.
Ինձ Նաշխունովս էշխով դովս Թաք հետդ տանիս,
Կամ չոքիս ջանիս, հոգիս հանիս Թաք ինձ բանդ չանիս,
Ի՞նչ կուզէ անես թէ կուզ սպանես կամիմ քեզ ճարի։

«Սարուխեան եւ Մանուէլ».

*

* *

45. **Անտոն-օղլի.** (Անտոնի որդի) ոչ իսկական անունն է մեզ յայտնի և ոչ որտեղացի լինելը. երգում էր Թուրքերէն։

*

* *

46. **Քուչիկ-նովայ.** (փոքրիկ կամ կարճի սերունդ) սը-րա մասին ոչ մի տեղեկութիւն չենք կարողացել գտնել։

ԵՐԳԸ.

Ջհալ իքեան ջաննաթ Թափտըմ ջաննաթ Թաջ,
Ջան գեալտի օ սահաթտա եասար աջ.
Ջոխաթ ոլէդանտըմ ջանդա չաքտըմ ջաննաթ Թաջ,

Զիաթ օլդում ջամալընդա նաս արաջ։

Ջանըմտա վար ջիւքեամ չոխ վար խանար դիւջ,
Զամ ջափա աթէշտայ չոխ վար եանար դիւջ.
Զանմաթ դեադար Քիւչիկ-Նավա եանար դիւջ.
Զամէյադըմ փէշամ օլդի նա սարաջ.

«Արուտիւն և Մանուէլ.»

*
* *

47. **Սարդարի** այս մասին ոչ մի տեղեկութիւն չէ հասցրած մեզ։

ԵՐԳԸ.

Անգութ մահը ինձի վերայ դատ բացեց,
Իմ ծառը կտրելու տապար ցոյց տուեց.
Իւր բերանը ինձի վերայ վատ բացեց,
Աշխարհից զատուելու խաբար ցոյց տուեց։

Բաբէլոնեան հնոցի պէս բոցոտեց,
Թունաւորած օձերի պէս օձոտեց.
Արիւնարբու զէնուորի պէս խոցոտեց,
Վիրաւորուած սրտիս կապար ցոյց տուեց։

Այս անիրաւ մահն է կարծես կռապաշտ,
Երբէք չի խօսում մարդկանց հետը հաշտ.
Ստէպ ստէպ ինձ կանչում է կռուի դաշտ,
Խեղճ Սարդարիս զէնք ու տապար ցոյց տուեց։

(Ա. Նաւէր)

*
* *

48. Ղալամ-օղլի. (գրչի որդի) ուզում է ասել բանաստեղծի որդի: Սրա մասին ոչ մի կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ:

ԵՐԳԸ.

Էյ աղալար՝ մէկ դըղըմ չորս վանք տեսայ.
Մէկն Հոռոմսիմա Նողոկաթ խանա
Ասին ուռումէլէն խարա՞ճ կու կիտեն,
Մէկն Լուսաւորիչ մէկն Գեարեանա:

Հայլն ղուլլուղ կանէ քիտուն օր պասին,
Լուսն ա՛կամար կապեր քու բեմի դասին.
Գիւլափաթ՝ վարագուր քաշած յերեսին,
Հոգևոր Տէրն պիտի սուրաթն բանա:

Առաւօտից անուշ կու գայ պաշտումի մառը
Հինգ հարուր լիւլայ ա մէկ ոսկէ ճառը.
Անկրակ մեռոնը մատաղհաս գառը,
Կերթայ արև, լուսահոգին բաթանա:

Պատերը անգին քար շարած մարգարիտ,
Շատ մարդ ղուլլուղ կանէ քու մարմար քարիդ.
Զարն խափանեցիր առաջն բարիդ,
Խաչուառ ջուահիր էր մահուդ անդանա.

Խաչուառ ջուահիր էր ինչ կնոջ մերձան,
Դռներն էր ոսկեծեծ ինչ փռանկի բան.
Փուրվառն էր անգին քար դրախտի նման,
Ղալամ-օղլին տեսաւ ղալ եանա եանա:

(Անյայտ)

*
* *

49. **Մէյրան-օղլի** (Մէյրանու որդի) իսկական անունը Սարգիս։ Եղել է Աշըղ-Մէյրանու որդին. ածել է սանթուրի վրայ։

ԵՐԳԸ.

Էշխս ու հաւաս ունիմ որ ժամը խօսամ,
Վարպետից եմ առել դա այբ սէ.
Տէր իմ մեղքս շատ է թողութիւն արա,
Արժանացոյ առնեմ մեն այբ սէ։

Անցաւոր աշխարհքը մարդու կ՚չահէ,
Պատուիրան պահողը զաթի անահ է.
Այլի մարդը պէտք է պատուիրան պահէ.
Որ լինի Աստըծուս խէ այբ սէ։

Մէյրան-օղլի Սարգիս մեղացէն դառնա,
Թէ բարութիւն գործէ չարութիւն մոռանայ.
Վառէն թամամել է քօչը կ՚բառնայ,
Գերեզմանիս վերայ գիմ այբ սէ։

(Անտիպ)

*

* *

50. **Սեֆիլ-գեօֆթարի** (խեղճ խօսուն) իսկական անունը Խաչատուր. ծնուել է Ալէքսանդրապոլի Ղազանչի գիւղում, սազ ածող.

ԵՐԳԸ.

Հինգ բարա ծաղիկ ես դու նազանի եար,
Կանաչ կարմիր սիպտակ գիւլգեազ ալի հեա.
Անուշաֆոտ վարդ ես դրախտի նուպար,
Բլբուլ եմ շատ հասրաթ ես քու տալի հետ։

Ծոցումդ պահել ես էրկու անգին քար,
Բարակ մէջքիդ ի՞նչ կ՚սազի կապես եար.
Էրկու տուտն ալմաստով մարգարտէշար,
Ջաւահիրով շարուած խաւն լալի հետ։

Միննաղաշ քեամարդ դուռ չամ չրաղով,
Ջառ զարբաբ մունթանէդ ոսկէ վարաղով.
Ղօշա չարղաթ քցի գլխիդ նաւրաղով,
Գիւուազը գիւուազի, ալը ալի հետ։

Ցուշըդ միտքդ խելքդ քեամալի բիթուն,
Էս Սեֆիլ-Գէօֆթարի ասածն ես դուն
Մարգարտով շարուած ծամերդ ա ոյղուն,
Սիպտակ բոխաղ կարմիր թուշդ խալի հետ։

«Հանդէս գրական. և պատմ.» գիրք դ.

* * *

51. **Քեամալի** ա) (խելօք շնորհքով) սրա մասին չ՚կարողացանք կենսագրական տեղեկութիւններ հաւաքել։

Քեամալին ունեցել է և տպած երգարան, բայց չ՚կարողացանք գտնել որ գոնէ նրա երգերից մինը այստեղ առաջ բերէինք։

* * *

52. **Արփի-օղլի** (Արփէլի որդի)։ Ծնել է Ալեքսանդրապօլի Մեծ-Քեթի գիւղից, բայց թէ երբ է ծնել մեզ յայտնի չէ։ Ածել է սազի վրայ։ Առաջ ենք բերում Արփէլ-օղլու մի երգը, որ ինչպէս լսել ենք ասել է աշուղների հետ մրցելու ժամանակ։

ԵՐԳԸ.

Ջօշ եմ տալի տալղա տալղա քուռ եմ առաջէս փախի,
Կարծիք չանես սախլա սախլա. ջուր եմ առաջէս փախի.
Հէնց կարծում ես սիլահ չունեմ մերկ առաջիդ կանգնած եմ
Շապկիս տակին զռեխեր ունեմ, հուր եմ առաջէս փախի։

Մէկ պողանի քեարկասան եմ հասածի պէս սուչում եմ
Շատ աշուղներ իմ ձեռքիցս անկեալլամիշ փուչում եմ.
Քեաքեալ քեռքեազ երկնքումը ման եմ գալի թռչում եմ,
Ղայնաղումս դիփմիշ կանեմ ո՛ւրտի ես ուրա փախի։

Արզէլ-օղլին գիւղ եմ գալի էս գիւղերին դիմացի,
Նախավկայ Ստեփանի ծնունդն էլ իմացի.
Թէ բան չիտես սազդ տուր ինձ ըստեղ նստի ու լացի.
Ձեռք մի քցէ փանչայ ունեմ, թուր եմ առաջէս փախի։

(անտիպ)

* * *

53. **Բուչիք-օղլան.** (կարճ տղայ) սրա մասին չ՚ կարողացանք ոչ մի բան իմանալ՝ ոչ իսկական անունը ոչ որտեղացի լինելը։

ԵՐԳԸ.

Տեսէք ինչ բարկութիւն է Աստուածանից կամով քաղաքիս
Ուղիղ սրտով խնդրեցէք կու փրկէ ղամով քաղաքիս,
Զանազան հպարտութիւն յայտնի է բանով քաղաքիս.
Մեղքն վարձքին յաղթել է մէ գորեղ ջանով քաղաքիս,
Զորս կողմ թափոր տալով, քօմահ է ղամով քաղաքիս։

Արդարներ դուք մօտ եկէք Աստուածէմէն սէր ուզեցէք,
Փառք տուէք աղօթք արէք, քաղաքի համար խէր ուզեցէք։

Մեռնողներին հեսաբ չ՚կայ՝ կենդաններուն տէր ուղեցէք.
Քուր ու ախպեր հաւատացէք հալալ սրտով մէր ուղեցէք,
Ո՞ւր է էն զուլլու սաֆէն էլ չ՚կայ դամով քաղաքիս:

Նաչարըս ղարիպ տեղն դարդիս համար հաղ եմ ասում,
Ձեմ գիտում ո՞վ է մեռել, ով կենդանի սաղ եմ ասում,
Մոլորուած քաղքի բանն սրտիս մէջն դաղ եմ ասում.
Կարօտ եմ ճամբորդէմէն ինձ մի խապար տաղ եմ ասում,
Քիւչիկ-օղլանը ազատես բեռաշքի էս դամով քաղաքիս:

«Նոր դար» Ոսկ. Տէր-Յովհան. կուճ. 4 տ:

*
* *

54. **Բեշիկ-Եովասի.** (քահանայի սերունդ) սրա մասին ոչ մի կենսագրական տեղեկութիւններ չ՚կարողացանք ժողովել:

ԵՐԳԸ.

Մատաղ էրթամ քու ջաւահիր արեւուդ.
Մէհջման անեմ հալբաթ գիմ այբ սէ.
Թէպէտ խեղճ եմ՝ լայըղ ալա նազանի,
Մեր սուֆրումն խմիր մի թօ այբ սէ:

Արեւս խաւարի աստղըս թօթափի,
Քար ու թօփը յետ դայ սարեր սարսափի.
Կենդան թաղի վրէս պատան չի չափի,
Թէք դուն չանես ինձ հետ պէ այբ սէ:

Մակեար դու ինսանիս սիրտդ քար ունիս,
Ինձնից ջոկ էլի շատ սիրական ունիս.
Ասա դու իմ աղան չէս դու իմ պարոն չէս,
Բարովն Աստծու է տուն այբ սէ:

Իմ ու քու դիւանը մեր սանդծողն անի,
Ախիր քու ջալալաթիդ ինձ թար չ'սպաննի.
Ուսմամբ քրիստոնեայ եմ անհաղորդ չանի,
Խոստովանիմ առնիմ մեն այբ սէ։

Ջեռնէդ հարայ կանչեմ սուլթան ու խանի
Խղճմտանք արա իմ խեղճ քամբախտ ջանի.
Քեշիշ-Նովասին երբ բարով վաղճանի,
Գաս վրէն կսկըծիս լուն ու այբ ու սէ։

«Սոխակ» գ. երես 133.

*
* *

55. **Աղամ-Նաղաշով** (Ադամ Նաղաշեանց, կամ Ներկարարեանց. եղել է ղարաբաղցի, ածել է սազի վրայ։

ԵՐԳԸ.

Յորժամ եղեւ գարուն արեւ ծագեցաւ
Հարաւ հողմն հնչեց սառն հալեցաւ,
Երկիր կանաչեցաւ ծառն ծաղկեցաւ,
Խմենք եղբայրք գինի մեզ անուշ լինի.
Ածէք խմենք գինի բանն Աստուած շինի։

Ո՜վ եղբայրք նստել էք ծաղկեալ ծառի տակ,
Ձեռներիդ է գինին կարմիր ու յստակ,
Թասի մէջ անկանի ծաղիկ սպիտակ,
Խմենք եղբարք գինի մեզ անուշ լինի,
Ածէք խմենք գինի, բանն Աստուած շինի։

Առէք կարմիր գինին և լցէք շուտով,
Բերէք թազա գառն սինի սարփուշով.
Ղարըու փլաւ ձգէք մեխակով նշով

Խմենք եղբայրք գինի մեզ անոյշ լինի,
Ածէք խմենք գինի բանն Աստուած շինի:

Գնա լաց քո մեղքը Նաղաշով-Ադամ.
Աշխարհքս անցաւոր է չի մնացական.
Դուք կերէցէք խմեցէք եղբայրք սիրական,
Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան:

«Քնար Հայկական» կռճ. 4 տ.

*
* *

56. **Նէազմի.** (խօսքի տէր) իսկական անունը Սիմէօն. եղել է էրզրումցի, գիտեցել է ածել թէ 'ջութակի և թէ սազի վրայ: Սրա մասին աւելի բան չ'կարողացանք հաւաքել, բացի մի երգից, որ արտատպել ենք այստեղ:

ԵՐԳԸ.

Փողի հետ խելք էլ պիտի ինչպէս սոյան մին զարդարանք
Թէ ոչ դու չես առնալ, ոչ խելօք ոչ հարուստ անուանք.
Ամէն մի ծառ բարձրանալով պտուղն ծիրան չի լինիլ,
Ամէն այր ու բեն գլխեցող, մարգարէ Յովհնան չի լինիլ:

Իշին թէ տալու լինիս քաղաքական մեծ կրթութիւն,
Միշտ կու մնայ չորս ոտնանի բանական նման չի լինիլ.
Ագռաւին որ զարդարես դու գոյնզգոյն փետուրներով,
Այն փոքրիկ անուշաերգ սոխակի նման չի լինիլ:

Րէյանի պատկերն թէ թղթի վրայ լաւ նկարես,
Նմանը րէյհան կ'լինի, ինքը րէյհան չի լինիլ.
Բեադասը մարդուն եթէ արքայական թախտ պարգևես,
Քան զՍողոմոն արքայն աւելի նրան դու յարգես սիրես.
Անօգուտ է եթէ կեանքդ էլ զոհ մատուցանես,

Նէաղմի քեզ պէս յօդուտ ազգի, պատրաստ պատասխան չի լնիլ։

«Սոխակ» գ. եր. 13.

* *

57. **Բեշիկ-օղլի.** (քահանայի որդի) իսկական անունը Մկրտիչ. եղել է Թիֆլիսեցի և կոյր է եղել։

ԵՐԳԸ.

Ախ իմ Տէրս իմ Տէրս Քեզ չեն տեսնում աչքերս
Մոլորուել է մտքերս, սև են դառել օրերս,
Քեզ յայտնի է ցաւերս ախ իմ Տէրս իմ Տէրս։

Տէր խնդրում եմ մեզ խրատես, մեր սէրն չի անջատես,
Մեզ հաւատով հաստատես. պարսիկներից ազատես,
Իմ Հայաստան ազգերիս, ախ իմ Տէրս իմ Տէրս։

Տէր Դու ես իմ դատողս իմ բարի կամեցողս
Քեզ խնդրեմ Ստեղծողս հասցնես պտուղներս
Մի չորանայ դաշտերս ախ իմ Տէրս իմ Տէրս։

Շատ ունինք մեզ թշնամի, Տէր Հայոց բարին կամի
Ամեն յունուար ամիսի փախենում եմ Թարշամի
Ծաղիկներս վարդերս ախ իմ Տէրս իմ Տէրս։

Տէր Դու ես մեզ Դատաւոր ամենքս Քեզ պարտաւոր.
Ով իմ Յիսուս Թագաւոր. Բեշիկ-օղլին մեղաւոր.
Դու ջնջիր իմ մեղքերս, ախ իմ Տէրս, իմ Տէրս։

«Սոխակ» գ. եր. 29.

*

* *

58. **Սուլթան.** ա. (տէր, իշխան, արքայ) ոչ իսկական անունն է յայտնի և ոչ էլ ով լինելը. դեռ կարծիք էլ կայ որ աշուղ չ՚լինի։

ԵՐԳԸ.

Ասա հոգիս զի՞նչ առ քեզ մեղանչեցի,
Արիւն չարի մէկ սէրդ թախանձեցի.

Ես քո սիրոյդ կարօտ եմ քո սիրածն եմ,
Ես քո ցաւդ առնողն եմ քո մեռածն եմ.
Ես քո գլխիդ մատաղն եմ քո զոհածն եմ,
Ես քո զանգուր զուլֆիդ հոգով կախուածն եմ։

Արի ման տամ գլխովդ յարաժամ փարուանի պէս
Երեսս փէյանդազ տամ դու կոխկրտիր խանի պէս,
Տես իմ հալս խնամք տար էտքան անգութ մի լինիր։

Ափսոս արի բեր ՚ի միտ անցեալ սէրդ,
Միտք արա տես քանի՞ տարուայ դարտերդ.
Քեզի չի վայելել մի կտրիր էլթիպարդ,
Չի դառն է ինձ մահից մի վատ խաբարդ։

Արի համով նազ արա Սուլթանիդ համազ արա,
Դիր սիրտդ սրտիս վերայ, Թառլանի փարուազ արա.
Ես ղարբալով ղուլ դառնամ, դու առ ժլատ մի լինիր։

«Նոր քնար» Ռուբ. Տէր-Ցոլհան. կռճ. 12 տ.

* * *

59. **Սայեադ-օղլան.** (որսորդի տղայ) սրա մասին ոչ մի բան մեզ յայտնի չէ։

ԵՐԳԸ.

Ո՛վ աշխարհ նայար քեզնէն շնորհակալ մարդ կ՛լենի,
Չեմ կարծում որովհետև ամենումն էլ դարդ կ՛լենի.
Եթէ մարդ փոքր միջից մօրն հանդարդ կ՛լենի.
Սրտումն կուրախանայ մարմնումն զուարդ կ՛լենի,
Շուտ կուզարկես հոգսերն կ՛գայ հետն շարթ կ՛լենի.
Խեղճ մարդուն ուրախ սիրտն մին թառամած վարդ կ՛լենի,
Ամենեցուն պատճառն չարութեան հնարըդ կ՛լենի։

Ո՛վ եղբայրք գիտեմ այժմ դուք ինձի դատաստան կանէք
Կասէք թէ ո՛վ է այդ երք երջանիկն կ՛հարցնէք.
Փառք կ՛տաք միշտ Աստուծոյ թէ փոքր բաւական էք.
Աշխարհից չէք դանդատիլ ընկերներիդ օգնական էք.
Մարմնաւոր նեղութիւնն համբերութեամբ կ՛տանէք,
Աստուած իմ Սայաթ-օղլուն թէ յանցանքն չի հարցնէք.
Հարիւրից մինն պակաս, մոլորեալ ոչխարըդ կ՛լենի։

«Սոխակ» գ. երես 134.

* * *

60. **Զարկեար.** (ոսկերիչ) իսկական անունը Աբրահամ. եղել է շամախեցի. Զարկեարը նշանաւոր աշուղներից մինն է եղել. վերջերս սրա բանաստեղծութիւնները առանձին գրքով հրատարակուեց Բագւում «Զարկեարի քնարը» վերնագրով։

ԵՐԳԸ.

Սէր քեզանից ղահլէս գնաց խնդրում եմ ինձ մօտ չի մնաս
Մատաղ կ՛լիմ ես այն օրին, բռատ իլնես կորչես գնաս.
Մ՛իթէ քեզի խղճմտանք չունիս, քանի՞ մին տաս ինձի վնաս,
Է՛ր չես ուզում յիմարի մօտ մնաս նորանից լեռնաս
Կարողութիւնս հատուել ա եթէ կամիս լաւն խմանաս,

Թէպէտ շատ տարուայ ծանօթ ես, բայց էս մասին չի նեղանաս։

Հաւատիլ անկեղծ եմ ասում ձեռիցդ ըլել եմ բեզար,
Աներես աղքատի նման որ դուռն հասար փայ ուզար.
Որտեղ մեղրի կճուճ տեսար երևակայութեամբ լզար,
Քո երեսից թուք տեսնալդ ես հարիւր անեմ դու հազար,
Մինչի այժմս ինձ խաբելով չալացած միրուքս խուզար
Ժամանակս անց ա կացել ուզում եմ պահեմ ծում ու պաս։

Ջարկեար բեզի չին հաւատիլ մինչև չ՛մեռնիս ու լողանաս,
Կաթի մտած բնութիւնից հնար չկայ որ նեղանաս.
Ո՞ւմ գլուխն ես բարձի դնում, ժամանակ ճարես և գողանաս,
Ծուռ շրջես բոլոր աշխարհն Մայիֆի մօտ չ՛կարանաս.
Այսքան տարի ի՞նչ չաղացար այսուհետև ինչ չաղանաս,
Հաւկթի հաւն դիփ մէկ է եթէ կոտրես մէջն բանաս։

«Սոխակ» դ. եր. 217.

*

* *

61. **Շամչի-բալէ.** (Շամցի կամ դամասկոսցի) իսկական անունը Յովակիմ. ո՛ր թուին է եղել և որտեղացի յայտնի չէ։

ԵՐԳԸ.

Գիշեր ցերեկ անդադար խնդրեցի Աստուածանից,
Էս անիրաւ խմիչքը ձեռք վեր առնի ինձանից.
Դրան գործ անելուցս դլխար չունիմ իմ տանից,
Որ ընկում էր գլուխս ետ էր գցում իմ բանից,
Ինձ տեսնողն ասում էր կորի գնա պլանից։

Մէկ օր հարբած գնալիս ցեխի մէջը թաղուեցի,
Ոտից մինչև գլուխս լաւ կարգին շաղաղուեցի.
Եաւաշ եաւաշ գնացի ծախուին սղողուեցի,
Փոքր որ ցյալացայ միտք արի սարսաղուեցի.

Մի՛թէ ձեռ եմ վեր առել իմ ղալիպ ջիւան ջանից։

Շամչի-բաշէն ստացաւ Տէրից համբերութիւն.
Այսուհետեւ չի անիլ նա խմիչքի սէրութիւն.
Որ գտնւում է էն բանից ամէն տեսակ չարութիւն,
Կամենում է աշխատել իւր մեղաց թողութիւն.
Որով զրկուած չ՚մնար երկնային օթեւանից.

«Սոխակ» գ. երես. 59.

* * *

62. **Քունքար-Նաւէ.** պ. (համրի սերունդ) սրա մասին ոչ մի տեղեկութիւն չեն հասել մեզ. յայտնի չէ թէ ուտեղացի է եղել և որ թուականին։

ԵՐԳԸ.

Ես եմ աշխարհումս անպիտան քիմար,
Ջուն որ ճշմարտութիւն չունիմ իմ ձեռիս.
Ընկամ էս օրիս։

Ի՞նչպէս խոստովանիմ ես սրբս ասեմ,
Ջունիմ մի քրիստոնեայ համնի հաւարիս,
Նստի իմ վայիս։

Վա՜յ ինձ աշխարհումս մնացել եմ քիմար,
Աստուծոյ պատուիրանքից ես եմ բէխաբար.
Ես ի՞նչպէս գտնեմ մի դուզ ճանապարհ,
Պտրտելով ռաստ չի գալիս աչքիս,
Կորաւ իմ հոգիս։

Հոգիս կորաւ մարմինս էլ ինչի՞ տէր ա,
Այլ մարդոյ վրէն աւելի բեռ ա.
Քունքար-նաւէն չունքի միշտ էլ անտէր ա,

Խնդրում եմ Տէր Աստուած առնես իմ հոգիս։
Զուն որ ես եմ փիս։
«Սոխակ» դ. եր. 72.

*
* *

63. **Ջաքէ.** (Զաքարիա) սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ. բայց ինչպէս երեւում է սա գրել է միշտ Թուրքերէն։

ԵՐԳԸ.

Պէան պիր պաղա պաղչան օլտըմ աղալար,
Նարըմ կէյմիշ տալըօյնա սարասար.
Պէան սէարըմի եար եօլնա ղոյմիշամ,
Նէճա՞ ղոյմիշ Ֆահրատ-Շիրին սարասար։

Էյի սուսը էյ դարիա չիմանա,
Արուանձի չակլարն բիր մեշչի մանա.
Պունտա պիր օզկեայ խէր օլմաղ չի մանա,
Հէր սահալն պատի ղընար սարասար։

Աշըղ-Ջաքէ պու դունեատա ջաք էտար,
Նէջանի վար եար էշինա ջաք էտար։
Բախտըն նայհատի վար ջաք էտար,
Զիլիֆ եարն գերտանտան սարասար։

(անյայտ)

*
* *

64. **Թէքմիլի.** ա. (կատարեալ անթերի) իսկական անունը և որ Թուականին լինելը յայտնի չէ. միայն եղել է Աղէքսանդրապոլի Բայինդուր գիւղից։

ԵՐԳԸ.

Ասի դիլպար ուրտից կու գաս,
Ասաւ՝ այտը հաց եմ տարել.
Ասի եախըդ եդ դիքմէքը,
Ասաւ՝ իմ ձեռքով եմ շարել։

Ասի անուշ ես թէ դառն ես,
Ասաւ՝ հերիք խօսքդ խառնես.
Ասի ինձի եար կը բռնես,
Ասաւ՝ քեզմէն լաւն եմ ճարել։

Ասի դիլպար խօսքդ ինձ եար է,
Ասաւ՝ քեզ չառնելս աշքեար է.
Ասի Թէքմիլը սատաքեար է,
Ասաւ՝ թէ պատանքն եմ կարել։

(անյայտ)

*
* *

65. **Ջէյհունի** պ. (այն գետի անունն է որ բաժանում է Իրանը և Թուրանը) Նշել է Մեծ-Քեափանակ գիւղից, (Ալէքսանդրապոլի գաւառ) և կոյր է եղել։

ԵՐԳԸ.

Ցէսօր մէկ դիլպարմ տեսայ զըլիֆները օլրած էր,
Բարև տուի բարև չառաւ մակեար ինձնէն խռոված էր.

Նա հաջել էր ալի նման սիպտակ բոխախ խալի նման,
Տասնըհինգի լուսնի նման էրէսները բոլորած էր։

Ունքեր ունէր կամար կամար, բալակ մէջ.քը ոսկէ քեամար.

Ջէյհունը կերուի նրա համար, խէլքը գլխէն մոլորածէր։

(Անտիր)

*

* *

66. **Լազզօղլի։** (Լեզգու որդի) եղել է Ալէքսանդրապոլի Մեջիտլի գիւղից։ Ածել է սազի վրայ։

ԵՐԳԸ.

Արի նստինք մէջլիսումը.
Դու ես մուշտայ խաղի դիլպար,
Մէկ ես ասեմ մէկ դուն ասա.
Մէջլիսումդ չաղի դիլպար։

Քեզի հետ ունիմ շատ հաւասը,
Հագել ես ատլասն ու խասը.
Ձեռդ ես առէ ոսկի թասը,
Մէջլիսումդ սաղի դիլպար։

Լազզօղլին եմ վայ անըմս,
Խելքս գլխիցս տանըմ ես.
Թէ որ ինձի սպանըմ ես,
Քու ձեռքովդ թաղի դիլբար։

(Անտիր)

*

* *

67. **Բաբաջան** (անուն է) Ցայտնի չէ որտեղացի և որ Թուականին լինելը, բայց կոյր է եղել և սազ ածող։

ԵՐԳԸ.

Զունքի ու մեռնել կայ մեզի,
Սիրունների խաղն ինչ կանեմ.
Ձեմ էղնիլ բէկզատա ու բէկ,
Վրէս քաշած սաղն ինչ կանեմ։

Եղբայրք աչէք սրտիս ցաւը,
Սիրեցի սուֆրէն ու գաւը.
Ինձ պէտք ա հինդ գազ կտաւը,
Եշիլ զարբապ շալն ինչ կանեմ։

Դիրախտ գնաց աղ քատ Ղազար,
Ցօքի դարդն եղաւ հազար.
Քեզ օրինակ Յիսուս Նազար,
Էս աշխարհի մալն ինչ կանեմ։

Բարաջանն եմ էս իմ չարէն,
Եղբարք աչէք սրտիս եարէն.
Մերկ էմ էրթում էս աշխարհէն,
Խասն ու ղումաշ ան ինչ կանեմ։

(Անդրէյ)

*
* *

68. **Ջալալաթ** (լուսաւոր) Եղել է էրզրումցի. ածել է ջութակի վրայ. սրա երգերը մեծ մասամբ Թուրքերէն են. առաջ ենք բերում Հայերէնը։

ԵՐԳԸ.

Ծոցիդ մէջն երկու գիւլ-ջան բացուել է,
Բէյրուդար պիտի տայ բէ այբ րէ.
Սիրոյդ գիրֆտար եմ կերիմ կանցնիմ կը

Սրտիս մէջը վառուի կը նու այբ րէ:

Աշըղը սրտին մէջ ղամէր կ՚բանայ
Իրա սրեկանն ինչպէս կ՚ մոռնայ.
Գիտեմ որ իմ եարս խօսքէն չի դառնայ,
Աստըծու աչքերէն ընկնի վէ այբ րէ:

Էս աշխարհը չունիմ քեզ պէս պատուական,
Առգնին մարգրիտ յունտիկ բերան.
Կարօտ ունիմ եարիս ես էնիմ մէյման,
Ռահմ անէր մէյին գլմ այբ րէ:

Ինձիմէն հէչ չէլէր քու կրակդ էդ,
Կռեհնայ իմ սէրս խօ չես բար ու փէտ.
Սեֆիլ Զալալաթն եմ մէռնիմ կը վրեդ,
Նարս խումար աչքներով լուն այբ րէ:

(անայիտ)

*
* *

69. **Դեարկեաճի:** (դուռ մուտք) սրա մասին ոչ մի բան յայտնի չէ:

*
* *

70. **Տաշչի-զադէ:** (քարտաշի որդի) եղել է մշեցի: Սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չենք կարողացել գտնել:

ԵՐԳԸ.

Քեզանից հարցնեմ վարպետ իմաստուն,
Ո՞վ եղաւ աշակերտ Սուրբ Կարապետին.
Հայրն էր Զաքարիա պապանձուած լեզուն,

Մայրն էր Նշխարքէն Սուրբ Կարապետին։

Զորս բոլոր բաղան էր մէջը կանաչ է,
Քիւմբէթներու գլուխներ ոսկի խաչ է.
Տաճարկու խաչապաշտ դուռդ կ՚աղաչէ,
էն Մշու Սուլթան էր Սուրբ Կարապետին։

Գիշեր ցերեկ ոսկի կանթեղներ վառ ա,
Փակուած դռներ բացուաւ իմ մուրազն առա.
Դարտլի Տաշչի-Զադէն գրուաւ Քեզ ծառա,
Երեսի կնքայհայր Սուրբ Կարապետին. . .

(անտիպ)

*
* *

71. **Նաղաշ-Յովնաթան:** ա. (կարծիկ Յովնաթան) յայտնի չէ թէ որտեղացի և որ թուականին է եղել։ Ունեցել է շատ հայերէն երգեր։

ԵՐԳԸ.

Ոնտի կուգաս քաղցր բլբուլ,
Քեզի բարև ես քեզի ղուլ.
Նիգուդ շաքար սադդ սումբուլ,
Քաղցր լեզուովդ ջուր տուր ինձի։

Վատդ կասեն շատ աննման,
Քեզմէ զատ ել չունիմ գիւման.
Ես ինչ կանեմ հազար թիւման,
Երբ դու եար կու լինիս ինձի։

Նաշխուն երես բոլոր սուրաթ,
Մնացել եմ հեյրան ու մաթ.

Ռահմ արա էյ բէմուրուաթ.
Քանի՞ քարէքար տաս ինձի։

Առաւօտուց բացուել վարդն,
Դու ես գեօզալներու զարդն.
Կրակիդ մէջ ընկող մարդն,
Այլ մեղադիր չ'եղնիր ինձի։

Թուխ ծամ ունիս ղալամ ղաշ ես,
Ինչ որ հագնիս բարով մաշես.
Ծով աչքերովդ զամլաքաշես,
Սուր դանակով կու տաս ինձի։

Ատամներդ սատաֆ ինծի,
Ծոցդ պաղչայ է Թուրինձի.
Ես էղայ սեֆիլ զարինձի,
Էլ ի՞նչ խելք կու մնայ ինձի։

Նաղա՛շ կասեն խիստ բէչարա,
Եկ ինձ մի անիր աջարա.
Այս չափ բաներս քեզ համար ա,
Այլ դու երբ կու խղճաս ինձի։

(անտիպ)

*

* *

72. **Շուքրի.** (շնորհակալէք գոհութիւն) իսկական անունը Աւետիք. եղել է Տաճկաստանի Տրապիզոն քաղաքից։ Շուքրին երգել է Թուրքերէն և ածել է սազի վրայ. սա կոյր էր։

ԵՐԳԸ.

Պախտան ղիլարմ եար պէնէ մէհման օլա պիր գիւն,
Մէհման օլատա ղարդմա ղարման օլա պիր գիւն.

Պաղպանա վարտըմ գիւլ գիւլատամ վերմատի պիր գիւլ.
Գիւն օլաքի գիւլ գիւլպնտա խարման օլա պիր գիւն,
Աշխէ մարն չաքտըճաքի աշխըն ուծունտան.
Նանտի գիւլ բիշտի ջիկեար պիլ եան օլա պիր գիւն։

(անտէր.)

* * *

73. **Ջուլաղ-օղլի** (մաքուրի որդի) Եղել է Ալէքսանդրապոլի Աւդուրէկ գիւղից։ Այս երգը հանելուկ է։

ԵՐԳԸ.—

Այսօր ես մէկ բանմ տեսայ վերնադասէն կախ չունէր,
Ուտել խմել հագնելու մէջ, պակասութեան մ՛ս չունէր.
Տիւ և գիշեր դուրսը կապրէր հէր ու մէր չը ճանաչէր,
Առանց թէպուլ թևաւոր էր մարդկանց մօտէն փախ չունէր։

Հէրն ու մէրը հողեղէն չէր խմացիր եթեր ծնած,
Ամէն տարի կ'թաժանայ առանց հոգի ստեղծուած,
Ջուլաղ-օղլէն իւր միւհամմէն էս անունը կար գրած,
Երկինք գետին բաժանուած էր խօսակցութեան լախ չունէր։

(անտէր)

* * *

74. **Սիւնաւ-օղլի**։ (գեղարդի որդի) յայտնի չէ թէ որտեղացի և որ թուականին է եղել. ածել է սազի վրայ։

ԵՐԳԸ.

Ալրաւոց աշխարհը մեր Տէրը շինեց,
Ամենքը մի բանով գեհնմիշ գլէն.

Գաբրիէլական փողը ու Տէրը փչեց,
Արդարն ու մեղաւորը սէչնմիշ գըլէն։

Ղոմշի ղամաղ մարդու իրեսը սև է,
Բանական սուտ ասող մարդկային դև է.
Քիւֆիւր ջիշուց տուողը խելքէն թեթև է,
Դժողքը տեղէցը տաշընմիշ գըլէ։

(անտէր)

*

* *

75. *)**Մեյրանի:** ա. (զբոսանք զուարձութիւն) Թիֆլիսեցի. ածել է սազի վրայ:

76. **Դեմիրչի-օղլի** (դարբնի որդի) Յովակիմ:

77. **Աղձօ:** Ալաչան. ախալքալակեցի ածել է սազի վրայ:

78. **Իխրարի:** (խոստովանող) Աւետիս. Էրզրումի Ղարա-հան գիւղից. ածել է սազի վրայ:

79. **Բուլմանի:** Յունաստանցի. Հաճի-Ղազար:

80. **Մուրանի.** պ. (երկայնավիզ) Յովհաննէս. Տաճկաստանի Բաբերդ քաղաքից. Ջութակ է ածել:

81. **Նաւնիա** Սամուէլ. Հասան-Ղալեցի. Ջութակ է ածել:

82. **Քեամբարի.** (տկար թոյլ) իսկական անունը Ղազար. Տաճկաստանի Գիւմիշխանից ածել է չունգուր:

*) Հետեւեալ աշուղների ոչ երգը և ոչ կենսագրութիւնը չեն հասել մեզ:

83. **Շաքիրի:** ա. (գոհացնող). իսկական անունը Ղազար: Բուրսացի ածել է սազ, երգել է միշտ Թուրքերէն:

84. **Նիկեահի:** պ. (հայացք) իսկական անունը Գրիգոր. ածել է սազի վրայ:

85. **Փասանդի** (հաւանած) անունը Մարտիրոս. սուսաու-ցի. ածել է սազի վրայ:

86. **Հազր-օղլան** կամ Հազըրի իսկական անունը Աբրա-համ. Թիֆլիսի (Շուլաւեր գիւղից: Ածել է սազի վրայ:

87. **Րամզի** (ծածուկ) իսկական անունը Յարութիւն. սը-ուասացի:

88. **Նաբըքի** ա. (խօսուն) իսկական անունը Նիսթար. ա-ծել է սանթուրի վրայ. ախալցխացի:

89. **Լարչի** (դողացող) իսկական անունը Համբարձում. կողբեցի: Երգել է կոյր և ածել է սազի վրայ:

90. **Խրիտտար** պ: (մուշտէրի այցելու) ածել է սազի վրայ:

91. **Մաւձուրի** կամ Եսիկեար-օղլի. եղել է Թիֆլիսի Դուշէթ գիւղից. ածել է սազի վրայ:

92. **Նիջումի** ա. (աստղ կենդանակերպ) իսկական անունը Յակոբ, Հաճի-Վեզիր:

93. **Ղասաբ-օղլի** (մսագործի որդի) իսկական անունը Ա-լէքսանդր. Քեաֆառցի. ածել է սազի վրայ:

94. **Սաֆֆի** ա. (գունդ ճակատամարտ) Կ. պոլսեցի։

95. **Թիֆիլ** (մանուկ նորածին) Կ. պոլսեցի։

96. **Վանլի-Բօչար** վանեցի։

97. **Գիքօլ.**

98. **Բէկզատէ** (բէկի որդի)

99. **Բէչարա** իսկական անունը Մկրտիչ։

100. **Լիսանի** Վույվույի-Մանչ. իսկական անունը Գաբրիէլ ախլցխացի. ածել է սազի վրայ։

101. **Վալատի** (առաջնորդ) ախալցխացի։

102. **Բաղդ-Ալլահ-Վէրտի** զանգեզուրցի։

103. **Նաջմի** (աստղի անունն է) իսկական անունը Գրիգոր. էրզրումցի. ածել է սազի վրայ։

104. **Տիքեարի** (շնորհալի) Ալէքսանդրապոլի Մէջիդլի գիւղից. ածել է սազի վրայ։

105. **Մահչուբի** (պատանի) Բաղալ. կողբեցի. ածել է ջութակի և սազի վրայ։

106. **Եանղուլի** (հրդեհ) իսկական անունը Յարութիւն. Ալէքսանդրապոլի Մեծ-Քեափանակ գիւղից. ածել է սազի վրայ։

107 **Նալբանդ-օղլի** (պայտարի որդի)

108. **Չախմախչի-եաղուբ** (զէնագործ Յակոբ:)

109. **Սեֆիլ-օղլան** ա. (թշուառ խեղճ տղայ):

110. **Գիւրջի-օղլի** (վրացու որդի:)

111. **Քեօփաճի** (ժապաւէնագործ:)

112. **Նուրալի** ա (լուսաւոր պայծառաւոր):

113. **Նարինջ-օղլան** (շառագոյն տղայ:)

114. **Եաղուզ** (մնուձար):

115. **Արութիւն Բէկում.**

116. **Սատղ** (անխարդախ մտերիմ) իսկական անունը Յակոբ. ալէքսանդրապոլցի. ածել է ջուլթակի և սազի վրայ:

117. **Քիմիյա** ա. (խորամանկ) վաղարշապատցի:

118. **Սալմաստի Ղուլ-Արութիւն** սալմաստցի:

119. **Լիսանի** (լեզուագէտ) սրա մասին ոչ մի բան յայտնի չէ: Երզնկանցի է եղել, ածել է ջուլթակի (3 թել) վրայ:

120. **Լեօն**

---

*) Թէև սրա մասին ճիշտ տեղեկութիւններ չեն հասել մեզ, բայց ասում են թէ սա միշտ երգել է ջերմ կրօնական. այնպէս որ սրա մեռնելուց յետոյ, մոլի և նախապաշարեալ ժողովուրդը ուխտագնացութեան փորձեր են արել: Բայց յետոյ քահանայք գերեզմանը յետ են կանգնել: Մեռել է Սալմաստում:

121. **Նարգիզ**

122. **Քեօրաճի-օղլան**

123. **Օհաննէս**

124. **Յակովբ**

125. **Տոնլայի** (լուսատու փայլուն) Ղազախի Հայտարբէկ գիւղից. անել է սազի վրայ։

126. **Ջիւ՛ան-օղլի**

127. **Խնձայի** (Նուրբ բարակ) շուշաեցի։

128. **Սողքաբէ**

129. **Մեջլի** պ. (սէր ցանկութիւն) Ախալցխայի Ազգուր գիւ-ղից. անել է սազի վրայ։

130. **Սարգիս-օղլի**

131. **Ջրաղ** (աշակերտ)։

132. **Ղազար-օղլան.**

133. **Քեամ՛ալ-օղլան**

134. **Սանամ-նովասի**

135. **Սեֆիլ-Պօղոս**

136. Մեֆիր-Միսակ

137. Ասատուր

138. Բերքչի

139. Սարգիս

140. Բուղաղի

141. Այվազ

142. Ջուտանի (հեռաւոր)։

143. Ակեանի (հասկացող)։

144. Սարուարի (գլխաւոր) բուրսացի։

145. Գեաղանի (աղքատ) Ախալցխայի Ազգուր գիւղից. ածել է սազի վրայ։

146. Ջանտի (ջանասէր) կոյր։

147, Ջարգի (կարուկ)

148. Մեթին գովուած

149. Բունճի-Յակոբ

150. Ցաֆղի Ալէքսանդրապոլու Դուղքեանդ գիւղից։

151. Սիայի Ղազար. Ախալքալակու Կարծախ գիւղից։

152. **Սառայի**

153. **Սողաղի**

154. **Ս՚աքի**

155. **Ղազար** *Թէհրանցի. Մայլիֆի հայրն էր:*

Արևելեան ըսած Հայ ռամկական երգիչք կամ վիպասանք նոր ատեններս աւելի յայտնուեցան կամ հռչակուեցան և ոմանց երգերն այլ հաւաքուելով տպագրուեցան՝ ի բանասիրաց Ռուսա-Հայոց. այս վիպասանք անցեալ կամ ներկայ դարուս մէջ ծաղկած են և աւելի համբաւաւորք են—

«Յուշիկք Հայրենեաց Հայոց» Բ. գիրք երես 123. Ղևոնդ Վ. Ալիշան:

ԲՈՒՆ ՋՈՒՂԱՅԵՑԻՔ.

156. **Էգազ**

157. **Արզունի**

158. **Բազեր-օղլի**

159. **Ղուլ-Սարգիս** (Շիլիշ-կանցի:)

160. **Ամիր-օղլի**

161. **Վանվան**

162. Խուլ-Յովհաննէս

163. Պետրոս ջուղայեցի

1400 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

164. Խաչատուր կեչառեցի

165. Կոստանդին երզնկացի։

166. Մինաս դերջանցի։

1500 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

167. Ամիր-մուսէ Նաղաշ

168. Արթուն (Գրիգոր)

169. Յովասափ սեբաստացի։

1600 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

170. Մինաս եւդոկիացի։

171. Մարտիրոս ղարահիսարցի։

172. Եօնուզ

173. Ներսէս-բեխլու մոկացի։

174. Մկրտիչ տարօնեցի։

175. Թադէոս սեբաստացի։

176. Քուչակ հասկրուանցի։

177. Սպանդիար

178. Ասասպով

179. Ազարիա

180. Զաքարիա ագուլեցի։

181. Խաչիկ կաֆացի։

182. Ղազար (կոյր)։

183. Մ՛ելքոն

184. Մուրատ խիկար։

185. Ներսէս

186. Շամս

187. Քերովբէ

188. Քոթան կամ Քոթնա Խլաթեցի։

1700 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

189. Ասար սեբաստացի։

190. **Արիստակէս** Խարբերդցի։

191. **Խաչատուր** Բաղէշեցի կամ Ջուղայեցի։

192. **Սուքիաս**

193. **Ստեփաննոս** Թոխաթցի։

194. **Երեմիա** Չելեպի Քեօմուրճեան։

195. **Ստեփաննոս** Շատախեցի։

196. **Տատուր** Էրզրումցի։

197. **Դաւիթ** Սալակորեցի։

1800 թուականներին, ինչպէս ասում է Հայր Ալիշանը գրոց լեզուն աւելի մշակուելով ռամկական երգիչք այլ նուազեցան։

*
* *

198. **Հաւէս** պ. (իղձ փափագ) իսկական անունը Թաթէոս. ծնուել է 1830 թուականին Ալէքսանդրապոլում։ Սրա հայրը կտաւագործ Յովհաննէսը փոքրիկ Թաթէոսին տալիս է կարդալու. երբ փոքր ինչ կարդալ է սովորում, սկսում է իր ժամանակը երգելով անցկացնել. մի ժամանակ էլ գրքերը ձեռքն առած փողոցներում ման գալով գրավաճառութիւն է արել։ Մի քանի տարուց յետոյ Ալէքսանդրապոլում բաւականութիւն չգտնելով գնում է Տաճկաստանի մայրաքաղաքները իր փափագը լրացնելու նպատակով։ Վերջապէս մի քանի տարուց յետոյ Պոլիս և Զմիւռնիա մնալուց յետոյ, վերադառնում է Կարին և բաւականին ժամանակ մնում է այնտեղ։ Սա սկզբում երգելիս է եղել Արաբական բար-

բառով խառն Տաճկերէն երգեր. բայց յետոյ սկսել է երգել և շատ Հայերէն երգեր։ Հաւէսին չգիտէ իւր երգերից ձրիապէս սրան նրան տալ. այլ ցանկացողը պէտք է գնէ 25—50 կոպէկով իւրաքանչիւր երգը։ *) Այժմ Հաւէսին կենում է Ալէքսանդրապոլում և պարապում է աշուղութեամբ. ածում է սազի վրայ,

«Սոխակ» Ա. Մխիթար.

ԵՐԳԸ.

Քո նման աշխարհը կը ճարուի սակաւ,
Գեղեցիկ նազելի հրաշանորոգ ես.
Սիրոյ նշան քեզմէն չտեսայ բնաւ,
Դու էդ մասին ի՞նչու համար անհոգ ես։

Աղաչում եմ սրտիս վէրքը ցոյց տալով,
Ձեզ գթալով էդ քո սէրը ցոյց տալով.
Վարձք առան շատերը Տէրը ցոյց տալով,
Մարդիկ կ'կարծեն թէ առանց հրոգ ես։

Հաւէսուն թողել ես անդեղ ու անճար,
Սաղ խօսքս սիրուհի քեզի է յարմար.
Գլուխ երջայնութեան տասն ու հինգ համար,
Ոչ պաղ ես սէրիցը, ոչ ջերմ ու շոգ ես։

(անտիպ)

*
* *

199. **Մարգար** ծնուել է 1830-ական թուականներին, Հին

*) Ճշմարիտ է ասում պ. Ա. Մխիթարեանը որ Հաւէսը մի տարօրինակ մարդ է։ Մենք գնացինք նրա մօտ և խնդրեցինք նրա լոյս չտեսած երգերից մէկը, բայց նա մերժեց մեր խնդիրը ասելով «ես չեմ տալ իմ երգը, և ուրիշներին էլ կասեմ որ երանցը չտան».

Նախիջեւանի Նորս գիւղում։ Սա երիտասարդ հասակում բոլո-րովին առողջ և ամուր կազմուածք է ունեցել, բայց ժամանա-կի ընթացքում սրա կեանքի հետ պատահած հիւանդութիւն-ները առաջացրել են սրան մէջքի հիւանդութիւն։

Աշըղ Մարգարը սկզբից ինքնուս կերպով սովորել է սազ ածելը և երգել է Աշըղ-Բաղալի երգերը, ինքն էլ սկսելով հետ-զհետէ գրել Թուրքերէն երգեր. բայց վերջին տարիներս նա բո-լորովին թողել է Թուրքերէնը և սկսել է գրել Հայերէն լեզուով։

Աշըղ-Մարգարի երգերը ընդհանրապէս եղել են աղօթք-ներ, կեանքից գանգատներ և այլն։

ԵՐԳԸ.

Ա՜խ ինչ ասեմ առաջին ես իմ բաղդից,
Ինձ թողեց ոտատակ սալերու նման.
Հանգստութիւն չունիմ գիշեր ու ցերեկ,
Ինչպէս քամի մտած ծովերու նման։

Աստեղս խաւար է բաղդս կուրացաւ,
Սիրտս տրտմեցաւ կեանքս մաշեցաւ.
Կատարեալ բանական խելքս շաղուեցաւ,
Շիւար եմ վայրենի ձորերու նման։

Ո՜վ Փառաց Թագաւոր ողորմեա Դու մեզ,
Ողբով արտասուելով աղաչում եմ Քեզ.
Այսուհետև ինչու օրինակ եմ ես,
Ծաղիկն թարշամած սարերու նման։

Գարուն եկաւ ծաղկաւ շուշան անթառամ
Շատ մարդկանց ճար եղաւ փրկութիւն առան.
Ես եմ անբախտ անմխիթար Մարգարան,
Շրջում եմ հաւասար ծերերու նման։

(անտիպ)

200. Նիւմայի պ. (առաջնորդ ցուցանող) իսկական անունը Իսահակ. ծնուել է 1833 թուականին Երզրումի մէջ: Սրա հայրը եղել է Տաճկաստանում յայտնի Աշըղ-Նիտային, որի կենսագրութեան մէջ յայտնել ենք Իսահակի յառաջադէմ լինելը: Երզըրումի մէջ Նիւմային պարապել է թէ աշուղութեամբ և թէ գերեզմանաքարեր փորագրելով:

Նիւմային 1858 թուականին գնում է Պօլիս, այնտեղ թէ իւր շնորհքով և թէ հօր անունով բաւականին հռչակ է ստանում և պալատում սկսում է ածել և երգել մեծ եռանդով: Տաճկաստանում շատ տեղեր ման գալուց յետոյ Նիւմային գալիս է Ռուսաստան, Ալէքսանդրապօլում պատահում է Աշըղ-Ջիւանուն որի հետ ընկերանում է կարճ ժամանակով: Նիւմային Ռուսաստանում լսելով որ հայրը մեռել է, շտապում է հայրենիք. Կարին:

ԵՐԳԸ.

Նէ կեօնէ տաւալար կեչըրտմ սէրտէն,
Կօյնիւմիւն սուլթանի պուլընձա դէտէր.
Ֆէրամուշ օլունմազ խանի ճիկէրտէն,
Մէյլի մուհապպէթի օլընձա դէտէր:

Ահի էնին էյլար կիւնի դէմ օլան,
Վար մը պէնճիլէյին չէշմի նէմ օլան.
Սիթարի զեհազ պէղլթի քէմ օլան,
Խօզ կիւնի կէչըրը կիւլընճէ դէտէր:

Էյ Նիւմայի եթէր օտուն պաղրը խուն,
Լէյլայի ֆարաղէթ էյլար Մէճնուն.
Աճըէպա պուն պէօյլէ քի՞մ էթմիշ դէնուն,
Պիւլպիւլ կիւլի պէքլէր սոլընճէ դէտէր:

(անտիպ.)

*

* *

201. **Դուրկեար** պ. (Հիւսն) իսկական անունը Ստեփան. Ծնուել է 1840 Թուականին Աստրախանում։ Սրա մասին մենք չկարողացանք կենսագրական տեղեկութիւններ հաւաքել. միայն աշուղները ասում են որ եղել է Թուրինջի աշակերտը և Աստրախանում պարապում է եղել մանր առևտուրով. ածել է սազի վրայ։

ԵՐԳԸ.

Տեսնամ մէկ բաղչի միջում մին գեղեցիկ ինչպէս լուսին,
Զոյս կողմում գիւլ սուսամբար մաղերն Թափուել էր ուսին.
Աչքերը բորբոքուել էր որպէս ճանճանչները լուսին,
Մոլորուած տարուած մնացիմ կեանքս գնաց էդ նոր կուսին
Գլուխս ղուրբան կանեմ էսպէս նոր ջիւանի մասին։

Քու պատկերահանդ պիտի գրիչն ալմազ ունենայ,
Աչքերիդ ձեւիդ գրողը գրիչը քանց մազ ունենայ.
Պեղուած մուիկ տայ երեսիդ իր ձեռքին էլ սազ ունենայ,
Երգի քեզ գովական բան որ լեզուն հազ ունենայ
Քեզ տեսնողքն մոլորուին հալուին էշխիդ նուաղին։

Լսեցին քու Թարիֆը եկան մեր հին Հայաստանից,
Գեղեցիկները Թաք կացան ամաչեցին քո երեսից.
Պատկերահանդ եկաւ Եւրոպա Փռանգստանից,
Զարմացաւ պեղուած մնաց քու երկու աստղով աչերից
Դուրկեարն եմ ես էլ մայիլ մնացի քու խալերդ լուսին։

«Սոխակ» գ. եր. 129.

*
* *

102. **Հումայի** (բարձր) իսկական անունը Համբարձում. Ծնուել է 1840-ական Թուականներին Տաճկաստանի Կան քա-

ղաքում։ Նա ածել է սազ և բացի աշուղութիւնը նա պարապել է որմնադրութեամբ. բայց յետոյ երբ կուրացել է թողել է որմնադրութիւնը։ Եղել է արբեցող և մոլի մարդ. բախտախնդիր կեանք է ունեցել։ Վերջին տարիներս եթէ չեմ սխալւում 1882 թուականին մեռել է Արտահանից Ղարս տանող ճանապարհի վրայ։ Երգում էր միշտ Թուրքերէն. երգը չենք կարողացել ձեռք բերել։

*
* *

203. **Հազիրի** պ. (պատրաստ) իսկական անունը Համբարձում։ Ծնուել է 1840 թուականին Ալէքսանդրապոլում և վախճանուել է 1876 թուականին Յունիսի 22-ին 36 տարեկան հասակում։ Հանգուցեալի ծնողները քաղաքիս աննշան դասակարգից էին և երկրագործութեամբ էին պարապում, որոնց հետ և Հանգուցեալը այնքան սէր ունէր դէպի ուսումը և այնքան համեստ վարք ու բարք ունէր, որ մի անկիրթ և չզարգացած երիտասարդի համար աներևակայելի իրողութիւն էր։ Մի օր ծնողքը բարկանում են նրա վրայ։ Նա փախչում է իւր քեռի (մօրեղբայր) տիրացու Յակոբի (այժմ քահանայ) մօտ կարդալու։ Նրա համար կարդալն այնքան յաջողւում է որ հազիւ կարողանում է քերականը (այբենարանը) և սաղմոսը կարդալ. այնուհետև դարձեալ ստիպւում է երկրագործութեամբ պարապել։ Տեսնելով որ այլ ևս միջոց չկայ իւր նպատակն առաջ տանելու, նա սկսում է Տաճկերէն երգեր յօրինելով, ժամանակն անցկացնել։ Վերջին ժամանակներս տեսնելով Հայերէն երգերի ընդհանրանալը, ինքն էլ առանց ոչ ոքին աշակերտելու հետեւում է ընդհանուր կանոնին, Հայերէն երգեր յօրինելով։ Հանգուցեալը ժամանակի պահանջին հակառակ վարմունք է ունեցել իւր հեղինակութիւնների իսկական սեւագրութիւնը անխնայաբար ուրիշներին է տուել, չմտածելով որ մի ժամանակ իրան կ'հարկաւորուէր։ Իւր մահուանից մի քանի օր յետոյ հազիւ կարողա-

ցայ տան անկլիններից մի քանի հատ ու կտոր երգեր ժողովել որոնցով հանգուցեալի ինքնակրթութեամբ զարգանալու յիշատակը և միանգամայն պարծանքը պիտի համարուին։

«Սոխակ» Ալէք. Մխիթարեան.

ԵՐԳԸ.

Կենսատու Քրիստոսով հիւանդ հոգիս մեծ դեղ գտայ,
Դեղը դարման, դարման ու ճար, ճարըդ մաքուր եղ գտայ.
Ցրուելու ստուերներս մեկէն շնորհեց լոյս ու ջահ,
Ջահը ղամբար, ղամբար ու լոյս, լոյսը լի կանթեղ գտայ։

Աչքերս լուանալու իսկ նա շնորհեց երկնացող,
Ցող ու անձրև, անձրև ու շաղ շաղը միշտ հեղեղ գտայ.
Գրքերից լաւ հասկացայ ամեն բանից Աստուած է մեծ,
Մեծ ու իշխան, իշխան ու դատ, դատը խիստ ահեղ գտայ։

Կարդալով Սուրբ գրքերը ամենայն բան քննեցի ճիշտ,
Ճիշտ ու ստոյգ, ստոյգ ու նոր, նորը ես լաւ շքեղ գտայ.
Ես տկար Հազէրին եմ քննեցի շատ տաղանդ ու կիրք,
Կիրք ու կանոն, կանոն ու վարք, վարքը յոյժ համեղ գտայ։

«Սոխակ» դ. եր. 130.

*
* *

204. **Եաղուբ-օղլի.** տ. (Յակովբի որդի) իսկական անունը Կարապետ. ծնուել է Ալէքսանդրապոլի Ղշլաղ գիւղում. սրա մասին ոչ մի բան յայտնի չէ. ունեցել է մի ընկեր որի անունը եղել է—

205. **Եաղուբ-օղլի.** տ. (Յակովբի որդի) իսկական անունը Մկրտիչ. սա ինչպէս ասում են եղել է Թիֆլիսեցի։ Եաղուբ-օղլի Կարապետի հետ գնացել են Աստրախան։ 1847-ին մեռնում

է Պարապետը և հետևեալ օրը Մկրտիչը: Նալուբ-օղլիքը իրար հետ շատ սիրով են եղել. Թիֆլիսում լաւ հաշակ և պատիւ են ունեցել բայց երբ Աշըղ-Շիրինը յայտնւում է Թիֆլիսում, նրանք տեսնում են որ այնուհետև չեն կարող մնալ Թիֆլիս. ուզեցել են ժամանակաւորապէս գնալ Աստրախան, մինչև Շիրինը Թիֆլիսից հեռանայ. բայց նրանք Աստրախանում երկուսը մի շաբաթուայ մէջ մեռնում են: Թաղուած են Աստրախանում:

ԵՐԳԸ.

Ինչ մարդ մարդի բարի կուզի,
Աստուած կ՛տայ բարի եղբայր.
Բարի ուղղին բարի կառնի,
Չի հանդիպել չարի եղբայր:

Մարդ պէտք է իրան ճանաչի,
Հէնց բան բռնի չի ամաչի.
Ստեղծողն սրտով կանչի,
Նա չի դիպչել քարի եղբայր:

Ի՛նչ ասացի ի՛նչ խմացար,
Բարեկամ ինձէն հեռացար,
Դու որ ինձի վատ կամեցար,
Ես քեզի ի՞նչ արի եղբայր:

Էս աշխարհս մի՞ է մնալու,
Էս օր կեանք վաղն ենք գնալու,
Նալուբ-օղլուն մեռանալու.
Լաւ բարեկամ ճարի եղբայր:

«Սոխակ» գ. երես 122.

*
* *

206. **Մաղաք.** սրա ծնուած թուականը թէև մեզ յայտնի չէ. բայց մեռել է 1861 թուականին. ածել է ջութակի վրայ երգել է հայ և թուրք լեզուներով: Մաղաքը եղել է Տաճկաստանի Թուշտի գիւղից և Աշըղ-Հայաթու քեռորդին է եղել: Երգը մեզ հասած չէ:

* * *

207. **Շայթի** պ. (քաղցր) իսկական անունը Ստեփան. ծը-նուել է 1840-ական թուականներին Վաղարշապատի Սմա-ղլու գիւղում բողոքական ընտանիքից: Սա մանկութիւնից աշակերտել է Շիրինի մօտ: Շայթին վաղուց արդէն զրկուած լինելով իւր աչ-քերից, պարապում էր աշուղութեամբ և բողոքական լինելով, լուսաւորչականներից շարունակ հալածւում էր: Մի անգամ գիւ-ղացիք ծեծում են սրան և խեղճը չարաչար տուն հասնելով շատ չ՚անցած մեռնում է: Ածում էր սազի վրայ. երգում էր հայերէն կրօնական և ցաւալի երգեր:

ԵՐԳԸ.

Որովհետև աղքատացած ցաւի մէջ,
Հեռացան ինձանից բարեկամներս.
Ընկղմեցան բոլոր տղմուտ զաւի մէջ.
Ազնիւ բիւրեղ շուշան անթառամներս:

Երկնքի լուսինը ծիածան չունի,
Դառն աշխարհում անկեղծ բարեկամ չունի.
Առանց վայ կարդալու մէկ վայրկեան չունի,
Հեծեծանօք անցան բոլոր ժամերս:

Շայթի ո՛վ տեսաւ ձմեռը գարուն,
Բոլոր շրջանիս մէջ չմնաց արիւն.

Դեռ չը եղած տարիներս երեսուն,
Սպիտակեց բոլորովին ծամերս։

(անտիպ.)

*
* *

208. **Մու-ճիւան** իսկական անունը Մկրտիչ. ծնուել է 1840-ական Թուականներին Ալէքսանդրապոլի Ղազանչի գիւղում։ Ածել է սազի վրայ։

ԵՐԳԸ.

Մտածէք աշխարհիս ոչինչ բաները,
Աշխատեցէք անենք սահմանի նման.
Սիրով ընդունեցէք գինին ու հացը.
Իբրև Տէր Յիսուսի կամքանի նման։

Առաւօտուն կելնիք ժամը գնացէք,
Զարուց պաշտօններից հեռու մնացէք.
Մտածէք մեղքերդ եռանդով լացէք,
Աշխատեցէք չ՚մնանք անբանի նման։

Մու-ճիւան աշխարհից փափագս առայ,
Քսան երկու տարուայ վարքերից դառայ.
Դրախտի մէջը կար շատ անմեղ ծառայ,
Տերևներէն կելնի Թռչունի նման։

(անտիպ.)

*
* *

209. **Ղէյրաթի** պ. (գործունեայ ժրաջան) իսկական ա-
նունը Յովհաննէս։ 4—5 տարեկան ժամանակ բերուել է Տաճ-

կատանից Ռուսաստան, որը տասը տարու չափ մնացել է Ախալցխայում։ Յետոյ ծնողները եկել են Ալէքսանդրապոլ։ Յովհաննէսը մանկութիւնից սկսած շատ սէր է ունեցել աշուղութեան և այդպիսով շուտով նա սովորել է սանթուր ածել և գրել Թուրքերէն երգեր։

Ղէյրաթին կրկին գնում է Ախալցխա և այնտեղ տեսնւում է Նիւմայու (Իսահակ) հետ։ Մի քանի ժամանակ ընկերանում է նրա և Ջիւանու հետ և երբ որ Նիւմային գնում է Էրզըում, Ղէյրաթին էլ գալիս է Ալէքսանդրապոլ։ Ղէյրաթին որ բացի աշուղութիւնը պարապում էր և սրճարան բանացնելով, շատ սիրում էր մրցել աշուղների հետ և որտեղ լսում էր որ մի երևելի աշուղ կայ, գնում էր նրա հետ մրցելու։

Ղէյրաթին լսելով որ Էրզըումում մի տաճիկ երևելի աշուղ Հասալի կայ. խառնւում է Սուրբ Կարապետ գնացող ուխտաւորների հետ և ճանապարհ է ընկնում Էրզըում։ Երբ հասնում է այնտեղ տեսնւում է Նիւմայու հետ։ Հասալի աշուղին էլ տեսնելով ծանօթանում է, և մտերմական յարաբերութեամբ գալիս են Ալէքսանդրապոլ, յետոյ Ալէքսանդրապոլից գնում են Թիֆլիս։ Ղէյրաթին կարելի է ասել որ լաւ մարդ է եղել և միշտ տըկարների կողմը պաշտպանելով հպարտներին հալածել է. բայց նա վարակուած է եղել մի ախտով. այն՝ որ նա խաղացել է տեղական խաղեր. թխտախաղ, նարտի, տամա և այլն. վերջապէս նա իւր ունեցած չունեցածը բոլորը տանուլ է տուել։

Ղէյրաթին առաջ երգել է միշտ Թուրքերէն. բայց իւր վերջին օրերում երբ տեսնում է որ աւելի պահանջ է դարձել Հայերէնը, նա սկսել է գրել ռամկական երգեր աւելի Թըքախառն Հայերէն։ Մեռել է 1878 թուականին։ Ահա Ղէյրաթու երգերից մէկը որ նուիրել է Աշըղ-Ջահրունն։

ԵՐԳԸ.

Բարեկամուք դուք իմ մահիս սպասէք,
Ձ՚կայ ասող աւա՜ղ աւա՜ղ եղլա հէյ.

Ղաֆիլ խելքին խաֆէ բերէ մի ասէք,
Դուս է տալիս սաւաղ սաւաղ եալլա հէյ։

Անխրաւ չար գազանի պէս դու կատղէ,
Տես Աբրահամ, Իսակ որդին կ'մատղէ.
Խոնարհացիր գլուխ վար բեր ու պաղէ,
Անպիտան ծառ բարձր ղաւաղ եալլա հէյ։

Էս ըսելով քեզի մէյտան կ'տանեմ,
Ախբէր Ջահրի էս քու վրէդ ալք ունեմ
Արխալու ըս հին է, ես էլ չերկեզկի չունեմ,
Ջուխտամ սափոք ու մէ փափաղ եալլա հէյ։

Քանի ղաւօղը կայ մեզ հուլին ինչ կանէ,
Բաւ է օխտը մահլի. ալ ջուրին ինչ կանէ.
Ղէյրաթը փառ, աթար, ալուրին ինչ կանէ,
Պատառմ հաց թասըմ արաղ եալլա հէյ։

(Ս. Նալեղ)

* *

210. **Սէյեադ** Չէրկեար-օղլի (որսորդ ոսկերչու որդի) Սրա մասին ոչ մի կենսագրական տեղեկութիւն չենք հասցրել մեզ. բայց ինչպէս սա իւր երգումն ասում է 1844 թուականին դեռ ապրում էր։

ԵՐԳԸ.

Թարգմանեց կանոններով հայոց համար զօրաւոր,
Տեսութեանդ կարօտ եմ շամուղամար զօրաւոր
Հրամայեց զօրքերին կապեն սամար զօրաւոր,
Բղխում է լցանի բերնէն ձմեռ ամառ զօրաւոր։

Հայոց մեծ հայրապետն սուրբ Մեսրոպ թարգմանիչն է,
Որ Հայկական տառերի միակ հնարիչն է.
Յարեւելից յարեւմուտ ամենին պահպանիչն է,
Վահան իշխանն է զօրաւոր, էն էլ մէկ սահմանիչ է,
Քառասուն կանգուն հեռի առեց վէմ առ զօրաւոր:

Հողին մեծ ու փոքրի ամէնն իւր բարումն,
Դատաստանին ինչ կանեմ ճար չկայ իմ ճարումն.
Թուլին հազար ութն հարիւր քառասուն և չորս տարումն,
Ջէրկեար-օղլի Սէյեադն չի մնալ աշխարհումն
Որ գնում ես առ Աստուած հոգուս մէկ ճար զօրաւոր:

«Նոր-դար» Ռուք. Տէր-Յովհան. կամ. 2 տ.

* * *

211. **Ջիւանի.** պ. կամ ջիւան (երիտասարդ մանուկ) իսկական անունը Սերոբէ. Ծնուել է 1846 թուականին, Ախալքալակ գաւառի Կարծախ գիւղում: Նրա ութնամեայ հասակի մէջ իւր հայրը Ստեփանը մեռնում է և մանուկ Սերոբէն մնում է իւր հօրեղբօր խնամակալութեան ներքոյ: Սերոբէի հայրը դեռ կենդանի ժամանակ իւր որդուն Ջիւանիկ անուն է տալիս եղել և այդպիսով մինչև այսօր նրան Ջիւանի են ասում, կրճատած «կ» տառը:

Պատանի Ջիւանին գիւղի մէջ մասնաւոր ուսումն առնելով, դուրս է գալիս գիւղացից բայց նիւթական միջոց չունենալով, չի կարողանում գնալ քաղաք ուսումը շարունակելու այլ որպէս գիւղացի նա պարապում է երկրագործութեամբ: Այդ ժամանակներին ինչպէս հիմա էլ ձմեռ ժամանակ գիւղերը ման են գալիս աշուղներ հեքեաթներ պատմելու և հարսանիքներում ածելու, Կարծախում յայտնւում են մի խումբ աշուղներ: Մի անգամ նրանց երգելու ժամանակ պատահում է Ջիւանին և երբ լսում է այդ աշուղների երգն ու նուագածութիւնը, յափշտակւում է նրանց ձայնից և միևնոյն միջոցին յղանում է պատանու սրտի

մէջ երգի և երաժշտութեան վառ զգացմունքը. այդ ժամանակ նա եղել է 15 տարեկան։ Բարեբախտաբար այդ աշուղները վըճռում են ամբողջ ձմեռը անցկացնել այդտեղ, յուսալով որ մեծ գիւղ լինելով, իրանց գործը յաջող կ'լինի։

Ջիւանին սիրահարուած լինելով իւր մտայլութեան վրայ, մեծ դժուարութեամբ ձեռք է ձգում մի հասարակ ջութակ և մի երկու ամսաչափ մնալով դրանց մօտ, ընտելանում է երաժըշտական եղանակների հետ և սովորում է մի քանի եղանակներ ածել։ Վերջապէս մի երկու տարուց յետոյ նա ինքնուս կերպով բաւականին վարժ սովորում է ածելը. դրա հետ էլ զուգնթաց կերպով նա գրում է երգեր և բանաստեղծութիւններ։

Նոյն ժամանակներին, որ մինչև հիմայ էլ մեզանում գիւղական հասարակութեան մէջ սովորութիւն կայ որ պարապ ժամանակներին սայլերով գնում են Թիֆլիս այնտեղից զանազան ապրանքներ բրեհով տանելու շրջակայ գաւառական քաղաքները, Կարծախ գիւղից էլ գնում են Թիֆլիս մի քանի գիւղացիների հետ Ջիւանու հօրեղբայրը և մի քանի ազգականները. 'հետները տանելով և պատանի երգչին. նա էլ չի մոռանում հետը վերցնելու իւր անբաժան ընկերոջը ջութակին։ Երբ՝ առաջին անգամ մտնում է Թիֆլիս, բոլորովին հիանում և զմայլում է, ինչպէս կարող էր պատահել մի՛ գիւղացի տղայի, որ բացի իրեանց գիւղից ոչ մի տեղ չէր տեսել։ Բարեբախտաբար թէ դըժբախտաբար նրանց բրեհը (տանելու ապրանքը) պատահում է դէպի Ալէքսանդրապոլ։ Զ՚նայելով որ սուրհանդակը Թիֆլիսից Ալէքսանդրապոլ հասնում է երկու օրում, բայց մեր խեղճ գիւղացի ճանապարհորդները իւրեանց հայկական սայլերով (հին ձևի) վեց օրուայ հազիւ են կարողանում հասնել և ապրանքները յանձնել իւրեանց տէրերին. այդ լինում է 1864 թուականին Ջիւանու 18 տարեկան հասակում։

Մինչ այս մինչ այն երբ Ջիւանու հօրեղբայրը և ազգականները պատրաստւում են տան զանազան պիտոյքներ ու հարկաւորութիւններ առնելու որ հետեւեալ օրը ճանապարհ ընկնեն,

Ջիւանին իւր ջութակը հետն առած մտն էր գալիս այդ անծանօթ քաղաքի մի քանի փողոցներով, մէկ էլ կանգ է առնում մէկ սրճատան առաջ, լսելով այնտեղից երգի ձայներ, ներս է մտնում և տեսնելով որ վարպետ աշուղներ են երգող և ածողները, մի անկիւն կանգնում և լսում է։ Այնտեղի մարդկանցից մի քանիսը նրան զանազան հարցեր են առաջարկում «Որտեղացի ես» «լաւ ածել գիտես» «անունդ ի՞նչ է» և այլն։ Ջիւանին ամեն մինի հարցերին էլ բաւականացուցիչ պատասխաններ է տալիս։ Աշուղները կանչելով նորեկ երգչին իւրեանց մօտ նոյնպէս հարց ու փորձեր են անում նրանից։

Մինչև անգամ նրանցից մինը առաջարկում է որ Ջիւանին մի երգ երգէ. նա սկսում է երգել Ալէքսանդրապոլում առաջին անգամ իւր յօրինած երգը (տես «Աշուղ-Ջիւանու երգերը» հատ. ա։ № 30.) Վարպետները հաւանութիւն են տալիս նրա թէ ածելուն և թէ երգելուն և իւրեանց սովորութեան համեմատ կամենում են Ջիւանուն մի աշուղական անուն տալ և վարպետ անուանել, բայց նա մերժում է առաջինի համար ասելով որ իւրեն արդէն անունը ստացել է իւր հօրից։

Թէ սրճարանատէրը (Կարապետ Տալեանց) և թէ այդ աշուղները մեծ սէր են ցոյց տուել և սկսել են սրտանց պատուել։ Ջիւանին հետևեալ օրը գալիս է սրճատուն և իւր մի քանի ծանօթներին «մնաք բարով» ասելուց յետոյ իւր հօրեղբօր հետ գնում է Կարծախ։

Ջիւանին մի քանի շաբաթ գիւղի մէջ մնալով տեսնում է որ այնտեղ ասպարէզը սահմանափակ է և չի կարող առաջ գընալ, մի ընկեր գտնելով գնում է Թիֆլիս և այնտեղ սկսում է երգել և ածել իւր մի քանի գիտեցած Հայերէն երգերը։

Այդպէս նա Թիֆլիսում մնում է մօտ մի տարի։ Մի օր Ալէքսանդրապոլի իւր ծանօթ սրճարանատէր Կ. Տալեանից մի նամակ է ստանում թէ «իմ աշուղներն և իմ մէջ վէճ ծագեց. նրանք հեռացան և ես գիտենալով որ դուք Թիֆլիսումն էք և լաւ յաջող ածում և երգում էք, ուստի հրաւիրում եմ Ձեզ

այստեղ իմ սրճարանում երգելու։

Ջիւանին մի երկու շաբաթից յայտնւում է Ալէքսանդրա-պօլում և լաւ ընդունելութիւն է գտնում իւր ծանօթներից. Հետ-զհետէ ծանօթանում է թէ քաղաքի և թէ տեղական ժողովրդի հետ նոր շրջան է բացւում նրան Ալէքսանդրապօլում։ 1871 թուականին նա ամուսնանալով իւր բնակութիւնը հաստատում է այդ քաղաքում՝ և մի խումբ կազմելով շատ անգամ պատահում է հարուստ դասակարգի տներում, և նրանց խնջոյքներում իւր ջութակով ծանօթանում է որպէս բուն Հայ երգիչ։

1875-76-ին Ջիւանին Ալէքսանդրապօլում մի առանձին սե-նեակ է վարձում և հաւաքում է այնտեղ 15-20-ի չափ երի-տասարդներ, պատանիներ և սկսում է սովորեցնել նրանց ջու-թակ ածելը. որոնցից մեծամասնութիւնը կոյր լինելու պատճառով, չէին կարող բացի երաժշտութիւնից մի ուրիշ բանի ձեռք զար-նել։ Բաւականին յաջողւում է նրա այդ ձեռնարկութիւնը այն-պէս որ նրա «շկօլայից» դուրս եկած աշակերտները այժմ կա-տարելագործուել են և առաջնակարգ ածողներն են եղել Ալէք-սանդրապօլում։

Աշըղ-Ջիւանին իւր խմբով ման գալով և երգելով Հայ-կական երգեր, Կովկասի քաղաքներում ինչպէս Թիֆլիս, Բագու, Բաթում, Ախալցխա, Ղարս և այլն. բաւականին ծանօթ է մեր հասարակութեանը. նա մեր ժողովրդից իբրև յարգանք և ան-մոռանալի յիշատակ ստացել է զանազան տեղերից «Ուղերձներ» «Գովասանական թերթեր» և այլն և այլն։

Մենք մի քանիսը հարկաւոր ենք համարում այստեղ առաջ բերել։ 1883 թուականին Թիֆլիսում եղած ժամանակ ստացել է մի «պսակ» որի ժապաւէնի վրայ գրուած է «Ջ ի ւ ա ն ո ւ ն հա-մ ա կ ր ո ղ ն ե ր ի ց» պսակի հետ կայ մի ուղերձ որ հետևեալն է։

ՈՒՂԵՐՁ

ԱՌ ԵՐԳԻՉ ՋԻՒԱՆԻ

Ժողովրդեան մարդն է նա՝ ժողովրդից կեանք առած,
Ժողովրդի մէջ մեծցած՝ ժողովրդեան մէջ ուսած.
Ժողովրդի, որ չունի դպրոց ուսում վարժարան,
Ժողովրդեան, որ կարօտ է ծարաւի է կրթութեան:
Այդ ժողովուրդն ծնաւ Ջիւանի երգիչ,
Որ խրատովքն լինի իւրեանց քարոզիչ:

Ով ինչքան ախորժ և քանի քաղցր է,
Երգերիդ ձայնը, բնարիդ հնչիւն.
Նորանք մեզ վերայ քանի՜ խոր ազդէ,
Որքա՜ն ներգործէ ամուր սրտերուն:
Թող լսէ՝ ձայն սոխակին,
Քանի երգէ ու նուագէ Ջիւանին:

Եւ ժողովուրդը հեռու ուսմունքից,
Ուշադիր լինի բնարիդ ձայնին.
Որքան խօսք խրատ քաղէ նորանից,
Եւ չարդեցնէ իւր ծարաւ հոգին:
Թող դադրին ձայնք տաւիղին,
Քանի երգէ ու նուագէ Ջիւանին:

Եւ այդ երգերն սուրբ սրտից բղխած,
Ռամիկ ամբոխը ոգևորեցին.
Նոքա խանդ տուին սրտերուն մեռած,
Փլատ հարուստի բանկը բացին:
Ով կ՚ուզնի ծածկուած,
Արժանի է պսակաց.
Հետ իւր խմբին բնարին,
Կեցցէ յաւետ ՋԻՒԱՆԻՆ

Տփխիս.   Արամ Մխիթարեան.
1883 Յունիսի 23.

Անցեալ 1890 թուականին երբ Ջիւանին իւր խմբով Թիֆլիսից վերադառնում էր Արտահանով Ալէքսանդրապոլ, այնտեղ նորաբաց ուսումնարանի օգտին երեկոյթ էր տուել և օգուտը յատկացրել ուսումնարանին: Այնտեղի երիտասարդութիւնը 'ի պատիւ նորա և իւր խմբի ճաշ էր տուել: Հէնց այնտեղ ճաշի ժամանակ կարդացուել է այս ճառը:

Պարոնայք

Սրբազան պարտք եմ համարում մի համառօտ բանախօսութիւնով բացատրել ձեզ՝ թէ ինչու համար է այս բազմագումար ակումբի համախմբութիւնը և նորա նշանակութիւնը:

Այո, այս աւուր այս տեղում մեր խմբակը մեզ ամենքիս անսահման հրճուանք է պատճառում, որի նմանը մեր մէջ հազիւ է պատահում:

Պարոնայք, մենք այստեղ կապուտակ երկնակամարի տակ հաւաքուած ենք մեզ հայերիս յայտնի և նշանաւոր ժողովրդական երգիչ Ջիւանուն և անչափ յարգանք ենք տածում դէպի նա: Այո, այս մի ուրախալի երևոյթ է մեզ համար և թէ հայ ժողովրդի յառաջադիմութեան ցոյցերից մինն է: Առաւել ևս ուրախալի է, որ մի այսպիսի փոքրիկ գաղթականական վայրում զանազան երգիչների տեղ կարողանում ենք հաւաքուել և յարգել մեր հռչակաւոր հիւրին Ջիւանուն:

Այո, Ջիւանին կարելի է ասել որ ըստ այլոց մի հասարակ երգիչ է, բայց և միևնոյն ժամանակ նշանաւոր անձնաւորութիւն է. ահա թէ ինչպէս: Քահանայի խրթին քարոզը, իշխանի սպառնալիքը, ուսուցչի խրատական և իմաստալից խօսակցութիւնը այնքան չէ կարող ազդել ժողովրդի վրայ՝ որքան երգչի երգերը:

Այո, Պարոնայք նորա երգերը կենդանի յիշատակներ են թողնում իւրաքանչիւր անհատի սրտում. նորա երգերը ոգևորում դրդում և կենդանութիւն են տալիս ամեն մի հայ անհատի:

Ժողովրդական երգիչը երգում է ազգի անցեալը որով յիշեցնում է մեզ մեր հին փառքը. երգում է ներկայ վիճակը, որով մեզ արթնացնում է մեր դարևոր քնից և ուղեցոյց է լինում զանազան գործերում: Այո սիրելի է մեզ ժողովրդական երգիչը: Նա

երգում է նշանաւոր անձանց կենսագրութիւն. նա երգում է ընութեան սքանչելիքը՝ ձգում է ամէն մի Հայ երիտասարդի սրտում սիրոյ անհանգչելի կայծը և այլն և այլն:

Ահա թէ ինչ է ժողովրդական երգիչը և թէ մենք ինչու պարտաւոր ենք սիրել յարգել նրանց, առաւել ևս այս րոպէիս մեզ մօտ գտնւող ծիւանի անուանուած ժողովրդական Հայ երգչին, որը իւր վսեմութեամբ բարձր է բոլոր երգիչներից:

Երեւակայեցէք որ ամենահին ժամանակներից ևս ժողովրդական Հայ երգիչները մեծ դեր են խաղացել ժողովրդի մտքի վրայ, և միևնոյն ժամանակ մեծ յարգանք են ստացած նրանցից: Վեր առնենք մեր Հայ Թագաւորների ժամանակակից Գողթան գաւառի հռչակաւոր երգիչներին, որոնց մասին մեծ գովեստով է խօսում մեր ծերունի պատմահայրը Մովսէս Խորենացին. որը և նոցա երգերից մեծ օգուտներ է քաղել մեր պատմութիւնը գրելու միջոցին: Ահա այսպէս և ժողովրդական երգերի մէջ պարունակւում և ժամանակից պատմութիւն: 19-երորդ դարի վերջի կիսում ընութիւնը ստեղծեց ժողորդական՝ երգիչ ծիւանուն, պարգևելով նրան երկնային յատկութիւն որը յայտնի է բազմաթիւ երգերի հեղինակութեամբ և իւր զգայուն և աղգասէր սրտիւ և որը այս րոպէիս վայելում է մեր հիւրասիրութիւնը, և ընդունում մեր յարգանաց հաւաստիքը:

Ես թէպէտ համառօտ բայց բաւականաչափ լուծուած եմ տեսնում վերոյգրեալ հարցերը, թէ ինչու համար է մեզ բազմագումար ակումբի համախմբութիւնը և նշանակութիւնը:

Այս վայրկենիս մէջ ընութեան սքանչելեաց տակ թռչնոց դայլայլիկը, թիթեռների վզվզոցը, մարդկանց մեղմ խօսակցութիւնը, երփներանգ ծաղկանց անուշահոտ բուրմունքը, այս սեղանիս վրայ գինու դիւրեկան գոյնը և համը, մեր գաւաթների չխչխկոցը, մի զմայլուք և անսահման ուրախութիւն է պատճառում մեզ ամենիս. և այսպիսի ուրախ տրամադրութեան ներքոյ, խմենք մեր անգին հիւրի ծիւանու կենացը և մաղթենք առ Ամենաբարձրեալն Աստուած պարգևել ծիւանուն և նրա ընկերակցեաց յաջողութիւն, առողջութիւն, նպատակներին իրագործում, և ամենաերկար կեանք:

Ռուբէն կէցցէ երեցս.

Ի դիմաց մեր անդամակից խմբի նուիրում եմ սոյն Ճառը:
Ախալցխաբնակ Մկրտիչ Դ. Վարդապետեանց:

Այս Ճառը տուած է Արտահանում Հայ երիտասարդների կողմից:

'Ի 19 Օգոստոսի 1890 Թ.

Արտահան:

Նոյն ճաշի ժամանակ մի պարոն Յարութիւն Գաթինեան կարդացել է մի ուղերձ (ոտանաւորով) բայց յարգելի պատճառով չենք կարողանում այստեղ յառաջ բերել:

Անցեալ տարուայ 1891 թուականին «Արևելք» լրագրում, մի գեղեցիկ յօդուած էր գրուած «Աշըխ-ճիւան» վերնագրով որը նոյնութեամբ առաջ ենք բերում այստեղ:

ԱՇԸԽ-ՃԻՒԱՆ

(Կովկասեան յիշատակ)

Թիֆլիզի մէջ տեսայ զինքը, կամ աւելի ճիշտ կ'ըլլայ ըսել, լսեցի: Առաջին անգամն էր և դուցէ վերջինը ըլլայ: Բայց այն դէմքերէն էր որք չեն մոռցուիր ու այն ձայներէն՝ որք սրտի թելերուն կ'զարնեն: Իր անունը անծանօթ չէր ինձ արդէն. կարդալով քանի մը շաբաթ առաջ Նահապետի ստորագրած յօդուածը „Աշուղք Հայոց" մտքիս մէջ արթնցաւ այդ աշուղին. Կովկասի այդ ժողովրդական երգչին յիշատակը:

Այնքան բաներ կային տեսնելու և մանաւանդ ուսումնասիրելու միայն եօթնեկին մէջ զոր անցուցի ի Թիֆլիզ 1890-Յունիսին, որ կարելի չէր գծել որոշ ուղեցոյց մը կատարելի պտոյտներու և այցելութեանց, գիշերը ցերեկին խառնելով և զոհելով իսկ միջօրէի քունը, որ հաւան սովորութիւն մը կամ լաւ ևս բնութեան մէկ պահանջը դարձած է այնտեղ ամառուան մէջ, հազիւ կիսովին Ճանչցայ Կովկասեան մայրաքաղաքը: Վասն զի հին Հայկական շէնքերէն ու նկարագեղ վայրերէն աւելի ընկերական կեանքն ու մարդիկը, բարքերն ու սովորոյթք են ուշադրութեան առար-

կայ ուղևորին համար որ շատ անգամ նիւթական հաճոյքը կը գոհէ բարոյականին։ Այսպէս երեկոն մը կը պատրաստէի Թիֆլիզի մօտակայ ջերմուկներն *) երթալ, որք կազդուրիչ ու առողջարար են, երբ բարեկամի մը հանդիպեցայ։

—Աշըխ-ձեւանը լսած ես հարցուց,

—Ո՛չ.

—Ուրեմն մեր տունը եկուր այս գիշեր մեզի հետ է. Կ'արժէ զինքը տեսնել։

Այս հրաւէրին վրայ Կովկասեան ջերմուկը զոհեցի Հայ Աշուղին։ Ու գնացինք։

Քաղաքին պերճ թաղերէն հեռու կ'բնակէր այդ բարեկամս. փայտաշէն, հին ու խարխուլ բնակարանաց շարքի մը մէջէ անցանք նեղ ու մթին փողոցներէ և հասանք իր տունը։ Պատշգամին վրայ հաւաքուած էին հայրը, մայրը ու քոյրը որք շրջապատած էին Աշըխ-ձեւանուն ու անոր երկու ընկերները։— Թիֆլիզի մէջ մեծ թէ փոքր գրեթէ ամէն տուն ունի իր պատշգամն որուն շնորհիւ հարուստ և աղքատ, տէր և մշակ, հաւասարապէս կրնան վայելել իրենց մեծագոյն հաճոյքը՝ թէյ խմել։“

Պոլսոյ սրճարանաց մէջ կամ խանութներու անկիւնը հաւաքուած կերպով մեր հանդիպած աշուղներն ընդհանրապէս անհաշան դէմքեր կըլլան, ողորմելի կերպարանքով. այդ ապաւորութեան տակ կ'մտածէի թէ արդեօք դէմս պիտի ելլէր, քիչ բարեխառնութեամբ վտիտ երիտասարդ մը, կամ կորաքամակ ծերունի մը, գլուխն ուսին դէպի աջ կողմը հակած, ձայնին անսուաղութենէ խռպոտած կեղտոտ դէմքով և գուցէ մի աչանի։ Անակնկալ հաճոյք մը եղաւ ինձ տեսնել քառասուն տարեկանի մօտ անձ մը. բարեձև, բարձրահասակ, աւելի չէկ քան խարտեաշ մազերով, կարմրերակ այտերով, բոցավառ աչքերով, հագած էր սև երկար պարեգօտ մը (չերքեզի) որուն տակին դարձեալ սև ներքնակ մը (արխալուղ) մէջքը կապած էր լայն քամար մը, ըստ տեղական սովորութեան ու գլուխը դրած Ռուսական շլապկա.

Մէկ խօսքով գեղեցիկ մարդ մըն էր Աշըխ-ձեւան։

Իր երկու ընկերները, որոց հետ խումբ մը կ'կազմէր, համեմատաբար տարուօք էին ու ոչ այնքան վայելչատեսիլ. բայց

*) Բնական ծծմբաջրոյ տաք բաղնիքներ, որոնց գլխաւորներն են Հերակլեանի և Մերզոյեանի կոչուածները։

ներդաշնակութիւնը չխանգարելու չափ մաքուր հագուած և բաւական լաւ կ'զարնէին ու կ'երգէին. առանցմէ մին քանո-նի նման նուագարան մը կ'ածէր ու միւսը ջութակաձև բան մը. իսկ վարպետը իր արուեստին վրայ վստահ՝ երաժշտական էն մեղմ ու էն տկար գործին ընտրած էր սազը:*)

—Գալուստ բարի եղէք, Պոլսեցի եղբայր, գաւառացին ա-ռողջ ձայնով ու անուշ շեշտով մը: Ո՞րտեղից ես գալիս և ու՞ր կը գնաս:

Բացադրեցի թէ Սանասարեանցի չուղարկութեանն էի «գալիս» „Արևելքի" կողմից, և թէ շուտով Պոլիս էի «դառնում»:

—Ա՜, դուք „Արևելքի" խմբագիրներէ՞ն էք, ես շատ անգամ կարդում եմ ձեր թերթը, իմ քով պահած ունիմ այն համարը որի մէջ Հրազդան մի լաւ յօդուած էր գրել իմ վերան. Ճանա-չո՞ւմ էք Հրազդանին:

—Պարոնին եղբայրն է պատասխանեց բարեկամս:

—Ուրեմն մէկ էլ տուր ձեռդ դոչեց Աշըղ-Ջիւան գոհունա-նակութեան ժպիտով մը, իր առնական խոշոր ափին մէջ կրկին անգամ սեղմելով ձեռքս որ առաջին սեղմումէն զգացած ցաւը չէր մոռցած տակաւին:

Այս հարց ու փորձ որքան ալ բնական բերմամբ սկսուած չէր համապատասխաներ մեր այցելութեան նպատակին ու կրնար երկարել. ուստի յայտնեցի իրեն թէ ջերմ փափագ ունիմ զինքը մտիկ ընելու: Աղաչել չի տուաւ: Այդ ժողովրդական երգիչը ժո-ղովրդական պարզութիւն մը ունէր. Թափառական բանաստեղծ մըն էր, որ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր շրջելով, կ'նուագէր ու կ'երգէր: Շիրակայ գիւղերէն միոյն մէջ էր ծնած. կենսագրութեան վրայ չ'կրցայ տեղեկութիւն առնուլ: Ծիծաղելի ըլլալ չէր ուզեր փորձելով „ըՙ դ ե ր ե ր Հ ե ե ր Հ Հ ե“ ընել զինքը. չէ՞ մի որ խռամբող կեան-քը իր երգերուն մէջ էր դրած: Տպաւորութիւն մը, ներշնչում մը, զգացում մը մէկէն 'իմէկ իր շրթանց վրայ կ'առեղծէին նոր երգ մը. երաժշտապետներու պէս ընդդատելու երկիւղ կամ զովե-լու փափագ չունենալով դէշ աղէկ եղանակի մը կ'յարմարցնէր իր երգին կամ երգը եղանակի մը ու կ'արձակէր ձայն, բերնէ բերան կ'տարածուէր ն'գիւղօրէս կ'հասնէր քաղաքները ու այսպէս կը ընդհանրանար: Իր բանաստեղծութիւններէն երկու հատոր տպը-ուած են ժամանակաւ, բայց մեծագոյն մասն անտիպ կ'մնան,

*) Ուզում է ասել ջութակ:

այսինքն աւելի բախտաւոր յանձնուած ըլլալով այն մամլոյն, որ հիննալ ու մաշուիլ չ'գիտէ. ժողովրդեան բերանը: Այդ Հայ երգիչը յարգելի է Կովկաս ոչ միայն մերայնոց քով, այլ և Վրացւոց ալ, որք կ'համակրեն անոր:

Մինչ Աշըխ Ձիւան և իւր ընկերք կը լարէին իւրեանց նուագարանները, տանտիկինը պատրաստած էր արդէն պատուական թէյ մը որ կազդուրեց զամենքս: Երկու գաւաթ խմելէ յետոյ, աշուղները ծալապատիկ նստած ու գլուխնին բաց՝ սկսան նուագել հանդարտ մելամաղձիկ նուագածութիւն մը, կէս արեւլեան և կէս Կովկասեան որ աւելի լալիւնի մը կը նմանի քան երգի. մեղմ օրօր հեշտ եղանակ մը, որուն ազդած թմրութիւնը ցրեց յանկարծ Ձիւանի ձայնը, որ բարձրացաւ զօրաւոր ներդաշնակ ու մանաւանդ զգայուն:

Երգած պահուն առաջուան մարդը չէր. ինքն զինքէն դուրս կ'ելնէր կը վերանար հոգեկան բան մը կ'դառնար առանց արուեստի առանց ճիգի կը սահէին երգերն իւր շրթունքներէն, ձայն ու նուագարան քիչ կուգային կարծես իրեն սրտին բոլոր խանդը հոգոյն բոլոր իղձը արտայայտելու. Ճշմարիտ բանաստեղծի ու ժողովրդական երգչի հազուագիւտ տիպար մըն էր, արուեստականութիւն բնաւ չկար իր քով: Երգերը երգերուն կը յաջորդէին անընդհատ, առանց յոգնութիւն պատճառելու. ընդհակառակն հաճոյք ալ ազդելով իրենց իսկ: Հիացմամբ կը տեսնէի այդ երեք դեղջուկներն, որք շատ մը քաղաքացիներ է անհամեմատ բարձր էին հոգով ու սրտով կը քրքրէին իրենց յիշատակները մանկութեան և երիտասարդութեան ծննդավայրի ու բնագաւառի և կը յուզէին նախ՝ իրենք յուզուելով:

Պատշգամին ուր հաւաքուած էինք, կը բարձրանար Կուրի ափանց մօտ: Մեր ոտից տակ կ'սահէր գետը՝ պղտոր ալիքներն յանձնուած իրենց ճակատագրին, որ տեղ տեղ կը թողուր զանոնք հանդարտիկ ու տեղ տեղ կը գլորէր սահանքներէն 'ի վար. անհրապոյր, անմարդաբնակ եզերքներուն մօտ տղայոց համախմբումներ կային որոնց հեռաւոր աղաղակները խառնուելով ջուրց, երբեմնակի խոխոջանքին հետ կը զարնէին մեր ականջին ու իրականութեան կը դարձնէին զմեզ երգերու ազդեցութենէն յոր թողուած էինք: Բարեբախտաբար քաղաքին կեդրոնէն հեռու ըլլալով այդ թաղ, ծխոյին արձագանքը չէր հասներ մինչև 'ի մեզ:

Չ'գիտեմ [illegible] տարի մը ետքը յիշելով յունիսի այդ տօ-

թակէզ երկուսին ու այդ մելամաղձոտ տեսարանը, սարսուռի նման տարտամ բան մը կ'զգամ տակաւին: Աշըխ-ձեւ անիւ ձայնին է որ կ'հնչէ դեռ ականջիս, թէ հալւարայի բառուերները որք կը նկարուէին աչացս առաջև: Բայց սա գիտեմ թէ անհուն տխրութիւն մը կար այդ ամենուն մէջ, որ չի մոռացուիր:

Սազերը վար դրին: Սամաւարը կ'եռար. մեր քովիկ և տանտիկինը լեցուց թէյամանները: Թէյը Ռուսաստանի մէջ կերպով մը նոյն պաշտօնը կ'կատարէ, ինչ որ ունի այստեղ օղին. երկուքն ալ հաւատարապէս հաճոյք կուտան, սա տարբերութեամբ որ առաջինն օգտակար նկատուած էր ու միւսը վնասակար. մէկին գործածութիւնը գոհունակութիւն կ'պատճառէ, իսկ միւսը մոլութիւն կ'համարուի: Այն ողեւորութիւնը որք նուագածուց խումբը կ'ստանայ հոս քանի մը օղի կոնծելով, այնտեղ կստանայ երկու երեք գաւաթ թէյ խմելով: Գէթ ընտանեկան համախումբերու մէջ այսպէս է ինչպէս եղաւ մեր հիւրընկալ բարեկամին համեստ յարկին տակ: „Կեցցէ" ներով ու „շատ ապրիք" ներով յայտնեցինք մեր շնորհակալութիւնը. աղնիւ աշուղներուն որք ժամանակ մը Թէֆլիզ մնալ է ետքը, էջմիածին պիտի ուղևորուէին Միւռոնի օծման հանդիսին ներկայ գտնուելու և այնտեղ համախմբեալ ժողովրդեան մէջ երգելու համար:

Մութը կոխած էր և պարտաւոր էի մեկնել. չուզեցի չարաչար գործ ածել այդ բարի մարդկանց հաճոյականութիւնը քանի մը երգ ալ խնդրելով, բայց Աշըխ ձեւան գուշակեց ներքին իղձս և մեկնելու պահուն ըսաւ:

—Կաց, եղբայր, մէկ թէյ ել խմենք ու քեզ երգեմ Այծեամին երգը:

Իր երգածներուն մէջ ամենէն տխուրն էր այդ: Աւասիկ քանի մը տողեր զոր յուշատետրիս մէջ կը գտնեմ:

ԱՅԾԱՄՆ.

Անհոգ ես չես գիտեր ինչ կայ քո մասին,
Պտտում են քո խեղճ լէ լէ լէ լէ անձիդ վնասին.
Գամբռներով բարակներով միասին,
Փախիր, այծեամ, փախիր որսկանն է գալիս
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս:

Դուրս մի ելլեր դու խիտ անտառից ընաւ,

Քեզ կը վիրաւորեն կըստանաս մեծ ցաւ.
Դաշտումը չես ման գար թէ մտածես լաւ.
Փախիր այծեամ փախիր, որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս։

Որսկանը գութ չունի կանէ կրակը,
Կամ քեզի կսպանէ կամ քո ձուակը,
Ձոր չի անցնիր հրացանի գնդակը։
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս
Ձագուկներդ տխուր լալիս են լալիս․ ․

Նոյն գիշերը քաղաքին ամառնային գլիւպը գնացի․ ․ ․ կէս գիշերն անցած, երբ կ՚հեռանայի ամառնային քլիւպէն, այնտեղի տեսածս Վրացւոց պարն ու զինուորական երաժշտութեան արձագանքը կ՚անհետանային յանկարծ․ վայրկենի մը մէջ կ՚մոռնայի պարտէզին հրապուրիչ տեսարանը, ու անոնց տեղ կ՚յաջորդէր մտքիս ու սրտիս մէջ Աշըխ-Ճիւանի համակրելի պատկերը ու կըկարծէի լսել իր Այծեամին երգը որ Թիֆլիզի լայնարձակ ու ամայացած փողոցներուն մէջ կը հալածէր զիս իր աղբային ուէ լէ լէ լէ"-ներով։

Տիգրան Արփիարեան․
«Արեւելք» 1891 Թիւ․ Մայիսի 18։

Աշըղ-Ջիւանին վերջերումս Ալէքսանդրապոլի աշուղներին և երգիչ-երաժիշտներին նշանակում է արհեստաւորաց գլուխ (ուստաբաշի) նա հիմա իւր խմբի մէջ ունի երկու աշուղ՝ Ջամալի և Իւշարի։

ԵՐԳԸ.

Մի աստղ ծնաւ արևելքէն լոյս ունէր առատ,
Բոլոր աստղերի մէջ մէկ էր չունէր համեմատ։
Սև սև ամպեր շուտ պատեցին չ՚թողին ազատ,
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց․
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց։

Այդ աստղերը հինգ քոյր էին մէկը չունէր լոյս,
Զօրսը արևի շնորհիւ առան խրախոյս.
Առաջինին ոչ մի տեղից տուող չեղաւ լոյս,
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց։

Եօթը փայլուն մեծ մեծ աստղեր ժողովան գումար,
Լուսնից ապարէզ ուղեցին չորս աստղի համար,
Արևելքէն ծնուող աստղը մնաց ի՛շուար։
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,
Աստղագիտած սրտերու մէջ կսկիծը մնաց։

(անտիպ.)

* * *

212. **Ֆիզահի** պ. (լաց աղաղակ) իսկական անունը Գէորգ. Ծնուել է 1847 Թուականին Ալէքսանդրապոլում։ Գէորգը մանուկ հասակում ընտանեկան շրջաններում սովորում է գրել կարդալը։ Աչքերի ցաւը արգելք է լինում շարունակելու իր աղքատիկ ուսումը. Նրա հայրը խեղճ մարդ լինելով տալիս է իր որդի Գէորգին աշուղների մօտ աշակերտ։ Աշուղները Գէորգի անուանում են Ֆիզահ. Նա սովորում է Ջութակ և սազ ածելըն և սկսում է գրել բանաստեղծութիւններ։

Ֆիզահը մի ժամանակ էլ Փուրգունճի (կառապան) է դառնում և անցնում է Տաճկաստան. այնտեղ յաջող գործ է ունենում (որովհետև Փուրգունը դեռ նոր էր յայտնւում այն կողմերում) Տաճկաստանի մէջ երկար ման է գալիս. գնում է Պոլիս, Տրապիզոն և վերջապէս գալիս է նորից Ալէքսանդրապոլ և մինչև հիմա պարապում է աշուղութեամբ։

ԵՐԳԸ.

Ջանք արա, օրերդ իզուր չանցանի,

Մա՛րդ եղիր բանական անբան մի՛ լինիր·
Անմիտ ընկեր, ես քեզ խրատեմ քա՞նի,
Միշտ չար է բանական անբան մի լինիր։

Անբան մարդը որքան որ հարստանայ,
Բանականի գործից բան չի իմանայ.
Նա յիմարաց դասի մէջը կը մնայ,
Գործ ճարէ հիմնական անբան մի լինիր։

Տեսար որ մի մարդից քեզ կ՚գայ վնաս,
Նրա հետ մի խօսի բարեւ էրա պաս.
Ֆիզահու պէս ստոր օրի չ՚մնաս,
Եղիր աստանդական անբան մի լինիր։

([illegible])

*
* *

213. **Ջամալի.** կամ Ճամալ ա. (մարդակերպ նմանութիւն) իսկական անունը Մկրտիչ. Ծնուել է 1848 թուականին, Ալէքսանդրապոլում։ Նա իւր սկզբնական ուսումը ստացել է մի մասնաւոր ուսումնարանում և ապա աշակերտել է կօշկակարութեան իւր հայր Յովհաննէսի մօտ։ Մի քանի ժամանակից յետոյ ունեցել է գինեվաճառի կրպակ, որին կից և մի սրճարան։ Այդ սրճարանում մշտապէս երգելիս է եղել մեր այժմեան Հայերէն բանահիւս Աշըղ-Ջիւանին։ Ջամալին (Մկրտիչը) հետաքրքիր լինելով աշըղութեան արհեստին, սկսում է կամաց կամաց իրանից երգեր յօրինել և միևնոյն ժամանակ սովորում է սազ ածել։ Անցնում է մի քանի ժամանակ և բաւականին տեղեկանում է այդ արհեստին։ 1872 թուականին, Ջամալին որոշում է հաստատապէս պարապելու աշըղութեամբ և այն օրից մինչև այժմ ընկերացած է Աշըղ-Ջիւանու հետ։ Իսկ այժմ ածում է Սանթուրի վրայ։

«Սոխակ» Գ. Աւ. Մխիթարեանց.

ԵՐԳԸ.

Համայն աշխարհի մարդիկը, իրանց եսն ու պատիւն ունին,
Նա և գոյութիւն պահելու համար վէճ ու կռիւ ունին.
Այնպիսիքը բաղդաւոր են, որոնք պաշտպան հովիւ ունին,
Կարգին իբրև մարդ կատարեալ, մարդկութեան մէջ հաշիւ ունին.
Բայց կան շատերը անպաշտպան, իրանց ցաք և ցրիւ ունին,
Եւ երջանիկ կեանքի մէջ չեն իսկ ցաւերը անթիւ ունին:

Մարդը ծնուել է Արարչից, պարգևածը վայելելու,
Աստուածային հրամանով, ճակտի քրտամբ աշխատելու.
Բայց շատերը սովորել են ուրիշի հաշուով ապրելու,
Բռնի ոյժ կամ խարդախութիւն կամ զրկանքներ գործ դնելու:
Համայն աշխարհի և այն.

Մէկը ազնիւ ճանապարհով հազիւ կարող է հաց ճարել,
Իրա տունը գերդաստանը մարդավայել կառավարել.
Միւսը սուտ միջոցներով հարուստ մեծատուն է դառել,
Հազարաւոր մարդկանց կապել կաշկանդել է գերի արել:
Համայն աշխարհի և այն:

Ջամալի Աստուծոյ մօտը բոլոր մարդիկ հաւասար են,
Ազատ ստեղծեց ամէնքին իրանք իրանց ղեկավարեն.
Ոչ թէ ուժովը անոյժին զրկեն գափեն ու աւարեն,
Յետոյ օրէնքի անունով ցոյց տան իբրև թէ արդար են:
Համայն աշխարհի և այն:

*

* *

214. **Սազայի** (արժանաւոր) իսկական անունը Աղաջան. Ծնուել է 1848 թուականին, Նոր-Բայազէդի Դ.շլախ գիւղում: Մանկութեան հասակից Աղաջանը փափակ է ունեցել երգելու և ածելու և նրա ձայնը եղել է քաղցր: Աղաջանին տեղացիք ա-

սում են Փարոյի Արլաջան. նրա մօր անունը Փարի լինելու պատճառով։ Սազային 1867 թուականին Թիֆլիսում պատահում է Ջիւանուն, որի հետ գալիս է Ալէքսանդրապոլ։ Այժմ Սազային Նոր-Բայազէտումն է բնակւում։

ԵՐԳԸ.*)

Ցաւը տարին լրացաւ չունիմ մէկ նամակ ով Ջիւան,
Եթէ ճոխական չ՚կար գոնէ հասարակ ով Ջիւան.
Մէկ նայես պանդխտներին ինչնէ նրանց մխիթարիչ,
Բայց նամակ ի՞նչ ունին սիրոյ վշտատակ ով Ջիւան։

Մեր բաժանման պատճառը ինչ էր հոգով արդար դատէ.
Գուցէ իմ մեղս լինի չեմ ես հակառա՞կ ով Ջիւան
Երկու եռանդուն սէր երբ յանկարծ իրար հանդիպեն,
Այլ նրանց ինչ հարկաւոր լուսին արեգակ ով Ջիւան։

Ես կարօտութեան ցաւակից գիշեր ցերեկ հանգիստ չունիմ
Առաքէ մխիթարիչ քո յոյս փոխանակ ով Ջիւան.
Չես լինում դու Սազայիս երբէք ցաւակից չես լինում,
Թող մնամ ես միշտական թշուառութեան տակ ով Ջիւան։

(տաճկեր.)

* * *

215. **Գեօզալի** պ. (աշուղ, գեղեցիկ, չքնաղ) իսկական անունը Նահապետ. ծնուել է 18 . . թուականին Ալէքսանդրապոլի մեծ-Քեաթանակ գիւղում։ Ածելիս է եղել սազ և բացի աշուղութիւնից պարապելիս է եղել և սափրիչութեամբ։ Անուա-

*) Այս երգի ձև նամակը Սազային 1884 թուականին ապրիլի 17-ին ուղարկել է Աշըղ-Ջիւանուն. ինչպէս մենք գրել ենք թէ աշուղները սովորութիւն ունին իրար նամակ գրելիս, տա-նաւորով գրել.

նացել է Ալէքսանդրապոլում մի այրի կնոջ հետ։ Գեօզալին մեռել է 1887 թուականին Ալէքսանդրապոլում։

ԵՐԳԸ.

Ձեռքես բռնես քովդ տանես,
Նոր գիտեմ որ բանական ես.
Քաղցր լեզու անուշ ջան ես,
Դու ինձ համար միշտ լացեցիր։

Սրտիդ վրայ չունես խնամ,
Վատ խօսքերուդ երբ դիմանամ.
Գեօզալին եմ բան կիմանամ,
Էդ դօշերդ ինչի՞ բացեցիր։

(անտիպ)

* * *

216. Տանիր-Խաչատուր (բանաստեղծ Խաչատուր)
Այժմ Դէրպէնդումն է։ Հակառակ մեր ցանկութեան, սրա մասին ոչ մի տեղեկութիւն չենք կարողացել հաւաքել։ Բայց լսել ենք որ աշուղութեամբ է պարապում։

ԵՐԳԸ.

Առանք ուսում, կրթուեցինք զարգացանք
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք.
Դորա վերջն ի՞նչ կ՚լինի չ՚իմացանք,
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք։

Զարգացումն տուաւ մեզի նուրբ ճաշակ,
Սովորցրաւ կեանքի անուշ եղանակ.
Որի համար չենք գտնում մենք շրջանակ,
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք։

Մանաւանդ ուսումն էլ որ առանք թերատ
Ոչ հնից ոչ նորից եղանք հաստատ.
Անցեալից էլ վիճակներս եղան վատ,
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք, ի՞նչ անենք։

Պէտք է կրթել տղերք, յետոյ աղջիկերք,
Կրթան աղջկերք չը կրթաց տղերք.
Շուարել ենք մնացել ենք հիմի մենք,
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք։

Լաւն էն ա գնանք մօտ Խաչատուրին,
Կարելի է այդ հարցը նա վճռի.
Յանձնենք ինչպէս ուզում է որ գրի,
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք։

Խաչատուրն ի՞նչ վճիռ տայ այդ հարցին,
Անհնար է ճար անել էլ անցածին.
Կենդանութիւն տալ չի լինիլ մեռածին,
Ո՞րտեղ գնանք ի՞նչպէս անենք ի՞նչ անենք։

«Հանդէս գրական. և պատմ.» գիրք դ. կաճ 7 տ.

*
* *

217. **Խուշարի** ա. (արթուն) իսկական անունը Խաչատուր. Ծնուել է Ալէքսանդրապոլում 1850 թուականին։ Պատանի ժամանակ մտնում է մաղմանի (թոկ շինող) աշակերտ. այդ տեղից էլ դուրս գալով մտնում է դարբնի գործարանում։ Այդ տեղ էլ համարեայ բան չհասկանալով դուրս է գալիս։ 20 տարեկան էր երբ սովորեց թառ ածելը և սկսեց պարապել աշուղութեամբ։ 1876 թուականին ամուսնացել է։ 35 տարեկան հասակում նա մի մասնաւոր մարդուց սովորել է գրել կարդալը և հէնց այդ ժամանակից սկսել է գրել երգեր և ոտանաւորներ։

Իւշարին մինչև այժմ էլ Ալեքսանդրապոլումն է. պարապում է աշուղութեամբ: Վերջերս մտաւ Աշըղ-Ջիւանու խմբի մէջ:

ԵՐԳԸ.

Հազար ութը հարիւր սաքսանը հինգ թւին
Մէկ տունմ ունէինք Թուրքի գոռները.
Սխըմիշ կըղնէինք ամէնս մէ թին,
Մէկ քեօշէն մէնք էինք մէկը գառները:

Օրմ մարտի ամսուն փուրղուն շատ էկաւ,
Փուրղունի մէկն էկաւ մեր պատին դիպաւ.
Տունս էն ահաթը ըլաւ վար թափաւ,
Ջեռքս ծոցս մնացել եմ դռները:

Ախպրտիք չը խնդաք, ըսեմ ընտիրը,
Տունս ըլաւ հողը լցուաւ թնտիրը.
Դուռն է մնացել հացիս գնտիրը,
Իլլած չ՚ կայ տանիմ էփիմ փռները:

Թէ որ գառնուկներէս գուզէք պատասխան,
Տունս ըլած տեսան, կայնան զարմացան.
Բոռըռացին ծըվծըռուացին յետ փախան,
Թազմիշ էղան մէկ մէկ յըլան լեռները:

Աստուած էնքան չառնի Իւշարուս հոգին,
Փուրղունձին յաստ գայ ամռան էն շոգին
Բեռը ծանտր էղնի ձիանը շոգին,
Փուրղունը կոտրի մնայ բեռները:

(անտիպ.)

*

* *

218. **Խայաթ** ա. (դերձակ) իսկական անունը Սուքիաս. ծնուել է 1854 թուականին փետրուարի 7-ին։ Դեռ պատանի հասակում Սուքիասը հետեւում է իւր հօր Աշըղ-Ջահրու գրուածքներին եւ այդպէս ինքնուս կերպով առաջ է գալիս։ 10—12 տարեկան ժամանակ Սուքիասը իւր ցանկութեան համաձայն մտնում է մի դերձակ վարպետի մօտ. կարճ ժամանակից յետոյ իւր սեփական կրպակ է բաց անում եւ այնտեղ իւր ազատ ժամերին սովորում է մասնաւորապէս սազ ածել եւ դրա հետ էլ ինչպէս ամեն աշուղ անում է, նա էլ գրել է երգեր բանաստեղծութիւններ. աշուղական ձեւերը վաղուց արդէն սովորած լինելով իւր հօրից։

1873 թուականին նա ամուսնանում է Ալէքսանդրապոլում։

Խայաթը մի ժամանակ էլ Թիֆլիսում է աշուղութեամբ պարապել եւ յետոյ էլ «Մեղուի» խմբագրատանը ծառայել է ցրիչի պաշտօնով։

Վերջին տարիներս 1888 թուականին, նա Թիֆլիսում պարապում էր դերձակութեամբ իսկ հիմայ էլ նոյնպէս Ալէքսանդրապոլում պարապում է դերձակութեամբ եւ մերթ աշուղութեամբ։

ԵՐԳԸ.

Ո՞ւստի յանկարծ ով դու բաղդ աղէտաբեր եկար աւա՜ղ
Մեր միջօրեայ լոյսը դու փոխարկեցիր խաւար աւա՜ղ.
Թանգագին կորուստների ենթարկուեցանք հալածանքից,
Վերստին ձեռք բերելու ոչ յոյս կայ ոչ հնար աւա՜ղ.
Վերքերիս մէկը կեղեւ դեռ չէր կապել, կրկին 'ի քէն
Այնպիսի վէրք ստացանք անբուժելի անճար աւա՜ղ.
Ո՜վ որոշեց անիրաւ այս երկրի մէջ քո կենդրոնդ,
Որ եկար իսկ տանելու կեանքերը մեր աւար աւա՜ղ։
Հինգ դար է լրիւ արդէն մեզ հետ հակառակ վարուելդ,

ՈՀ Խայաթս չեմ տեսած բարիք քեզանից աւմ։

(անտիպ)

*

* *

119. **Պայծառ** Հ. իսկական անունը Վարշամ. ծնուել է 1859 թուականի նոյեմբերի 15-ին Լոռում։ Մկրտուել է նոյն գաւառի Գիւլաքեարակ գիւղում Ս. Աստուածածին եկեղեցում։ Հայրը ալէքսանդրապօլցի Մարտիրոս Տրդատեանց, մայրը Շահինեաններից։ Վարշամին 7 տարեկան հասակում բերում են Ալէքսանդրապօլ. նա սովորում է դպիր Պետրոս Մամնիշեանի (այժմ քահանայ) մօտ։ Աչքացաւը արգելք է լինում Վարշամին ուսումը շարունակելու. Ծնողները տալիս են նրան դերձակութեան աշակերտ. մինչև 12 տարեկան դառնալը սովորում է այդ արհեստը. բայց հասակի փոքրութեան պատճառով (որ չէր կարող առանձին կրպակ բանալ) մնում է վարպետի մօտ։ Վարշամի հայրը իւր որդու հետ խիստ բռնի վարուելու համար, Վարշամը գնում է Ախալքալակ որ այնտեղ բանի իւր արհեստով, բայց երբ լսում է որ իւր Ախալքալակում լինելը ծնողներին յայտնի է, փախչում է Թիֆլիս։ Թիֆլիսում նա երկու տարու չափ մնալով, վերադառնում գալիս է Մեծ-Ղարաքիլիսա գիւղը, 3 տարի էլ այդ տեղ է պարապում դերձակութեամբ։ Դեռ 1876 թուականի վերջերից երբ Ռուս-Թրքական պատերազմը դեռ նոր էր սկսւում, Վարշամի հայրը գնում է Բայազէդ կամաւոր զինուորութեան։ Պատերազմի ժամանակ Վարշամի մայրը իւր ամուսնոյ մասին անհանգիստ եղած և ստացած լուրերին նայելով, հաւատում է որ իւր ամուսինը սպանուած կամ գերի բռնուած կ՚լինի։ Հէնց այդ ժամանակ նա վշտացած կերպով մի նամակ է գրում Վաշամին, յայտնելով նրա հօր ցաւալի մահը և իւր անմխիթար մնալը։ Որդին կարդալով մօր ցաւակցական նամակը, չի կարողանում անհետեւանք թողնել, ուղղակի թողնում է ամեն բան, և աշխատում է շուտով հաս-

նել, իւր մօր մօտ մխիթարելու և միասին սգալու իւր հօր մահուան համար։ Համարեա մի ամիս չ'անցած Վարշամի հայր Մարտիրոսը յայտնւում է. որը մի կերպ կարողացել է ազատուել թշնամու հալածանքերից։ Շատ չանցած հայր և որդու մէջ ընտանեկան երկպառակութիւնները նորից տեղի են ունենում։ Վարշամը չ'կարողանալով տանել հօր խիստ վարմունքները, նորից ձեռք է առնում պանդխտութեան գաւազանը. գնում է Ռուսաց բանակի յետևից։ Այդ ժամանակ Վարշամը 18 տարեկան էր։ Հասնում է Ղարս և այնտեղ մի կրպակ վարձելով, շարունակում է իւր ընդհատուած գործը (դերձակութիւնը)։ Ղարսում նրա գործը յաջող ընթացք է ունենում. բանեցնում է մօտ 10—15 բանուորներ։

Մի օր գործատնից Վարշամը իւր բնակարանը վերադառնալիս յանկարծ մի տան դրան առաջ տեսնում է մի օրիորդ. Նրանք իրար նայելիս օրիորդը ներս է քաշւում իսկ մեր Վարշամը ջերմ կերպով սիրահարւում է այդ աղջկայ վրայ։ Այդ բանը տեւում է մի ամբողջ տարի. ղարսեցիներից շատերը լսում են այդ բանը բայց Վարշամի Ղարսում եղած ազգականները, որոնց մէկի տանը բնակւում էր նա, արժան չեն տեսել որ Վարշամը իւր մտադիր օրիորդի հետ ամուսնանայ. օրիորդի հասարակ դասակարգից լինելու համար։ Ուստի նրանք Վարշամից գաղտնի նամակ են գրում Ալէքսանդրապոլ նրա հօրը ուստա Մարտիրոսին որ երբ իրանք Վարշամին կ'ուղարկեն Ալէքսանդրապոլ, թող նրան արգիլեն։ Վարշամը Ղարսից դուրս գալով, հետեւեալ օրը հասնում է Ալէքսանդրապոլ. մտնում է իւրեանց տունը բարեւում է և հարցեր առաջարկում ծնողներին թէ ինչու համար են կանչել իրան։ Մի քանի ժամ չանցած յանկարծ Վարշամի միտքն է ընկնում իւր սիրուհին և բաժակը թէյով լի առաջը թողած, դուրս է գնում։ Հայրը որդու դիտաւորութիւնը հասկանալով նրա յետևից ուղարկում է իւր փոքր որդուն Յարութիւնին որ երբ Վարշամին տեսնի ասէ թէ «գնանք, քեզ նամակ կայ ստացիր»։

Վարշամի հայրը անմիջապէս պատրաստում է մի նամակ Գիւլաքեարակ գիւղի տէր Յակովբ Նահինեանի ստորագրութեամբ, որը Վարշամի քեռին էր (մօրեղբայր) իբր թէ տէրտէրը նրան կանչել է իւր մօտ մի հարկաւոր գործի:

Վարշամին իւր եղբայրը Ղարսի ճանապարհից յետ է դարձնում յայտնելով որ «քեզ քեզ նամակ է եկել» Վարշամը եղբօր հետ տուն գնալով կարդում է հօր տուած նամակը և տեսնում է որ իւր Գիւլաքեարակ գնալը անհրաժեշտ է, ուստի պատրաստում է և ճանապարհ ընկնում: Վարշամի հայրը հեռագրով իմաց է տալիս տէր Յակովբին որ ինքը Վարշամին ուղարկում է, թող նրան մի գործով պարապացնեն և արգիլեն վերադառնալու:

Վարշամը 6 ամիս մնում է այդ գիւղում խիստ հսկողութեան ներքոյ: Մի օր նա խնդրում է իւր քեռի տէր Յակովբին որ թոյլ տայ իրան գնալ գոնէ Ջալալ-Օղլի այնտեղ դերձակութեամբ պարապելու:

Քահանան ուրախանում է իւր քրոջ որդու այդ բարի առաջարկութեան վրայ, և մի քանի տասնեակ մանէթ տալով, ճանապարհ է ձգում դէպի Ջալալ-Օղլի, որ շատ հեռու չէ. Նրա հետ միասին ուղարկելով և իւր որդի Վահանին, որ հոգայ այնտեղ Վարշամի արհեստին վերաբերեալ բոլոր պիտոյքների ծախսերը: Վարշամը այնտեղ էլ մի առժամանակ գործի եղաւ, բայց բոլորովին չ՚մոռացաւ Ղարսում իւր սիրած օրիորդին, որի սիրուցը և սովորել էր չունգուր ածելը:

Երկու երեք օր անցած արդէն միամտացել էին Նահինեանները և առաջուայ պէս խիստ չէին վարւում նրա հետ: Վարշամը տեսնելով իւր մասնաւոր ազատ լինելը, անտեղից փախչելու հնար էր մտածում:

Մի օր ճաշն անցած Վարշամը չունգուրը ձեռքն առած ինքնիրան մխիթարելու համար իջաւ պարտէզ մի քիչ ածելու: երաժշտութեան ձայնից խորասուզուած, նա կորցնում է իւր քայլերի ընթացքը անցնում է պարտէզի ցանկապատը և հասնում

է անտառ։ Երբ ծառերի խտութիւնը արգելք է լինում նրան առաջ գնալու, Վարշամը նոր է զգում որ շատ հեռացել է. չորս կողմն է նայում տեսնում է որ մարդ չկայ, մտածելով որ լաւ միջոց է փախչելու շտապում է ընկնել ուղիղ ճանապարհը. նա մինչև օրը մութը կոխելը նա հասնում է Համամլի կայարանը։ Գիշերն այնտեղ չէ մնում այլ բարեբախտաբար ալէքսանդրապոլցի մի ճանապարհորդի պատահելով, նստում է նրա կառքն և հետևեալ օրը մտնում է Ալէքսանդրապոլ։ Բոլորովին իւրեանց տունը չհանդիպելով, ընկնում է ճանապարհ դէպի Ղարս։ Վերջապէս կէս հետևակ, կէս բարի մարդկանց կառքերով հասնում է Ղարս և ինչ է տեսնում մեր խեղճ սիրահարը. որ իւր սիրուհին, արդէն նշանել են մի ուրիշ երիտասարդի հետ։ Վարշամը մնում է խելագարի նման ման գալով և որքան կարելի է աշխատում է մոռանալ իւր սիրուհուն, որովհետև արդէն բանը բանից անց էր կացել։ Բոլորովին յոյսը կտրած վերջացնում է այդտեղ իւր խանութը որ առաջ թողել գնացել էր. դուրս է գալիս Ղարսից, և մի քանի երիտասարդների հետ խումբ կազմելով անցնում է Տաճկաստան, և ո՞վ գիտէ էլի ինչու կամ ում վրայ նրանք սիրահարուելով, գնում են Վան և այնտեղից էլ մի քանի տեղեր ման գալով վերդառնում են Ալէքսանդրապոլ։

Երբ Ալէքսանդրապոլում յայտնւում են Վարշամը և իւր ընկերները, մարդիկ հաւաքւում են նրանց գլխին և սկսում են զանազան հարց ու փորձեր առաջարկել նրանց։ Սուքեաս Զահրիևանցը (Աշըղ-Խայաթ) որ Վարշամի վաղեմի մտերիմն էր, նրա հետ միասին մտնում են մի սրճարան։ Այնտեղ նստած են լինում Զահրի, Եանղուլի և Հաւէսի աշուղները, որոնք Վարշամին բարևելուց յետոյ զանազան հացեր են անում նրան. նա էլ իւր գլխի պատահած նշանաւոր անցքերը ու տանաւորի ձևով առաջուց պատրաստած է եղել, ասում է։ Աշուղները բաւականին հաւանում են Վարշամի տաղանդին և գիտենալով որ նա էլ լաւ ածել գիտէ չոնգուրի վրայ, վճռում են մի աշուղական անուն տալ նրան. մանաւանդ որ Վարշամին էլ շատ ցանկալի է

եղել 'այդ բանը։ Նրանք սկզբում առաջարկում են ըստ սովորականին մի քանի Թուրքերէն անուններ, բայց նա մերժում է ասելով որ ես Հայերէն անուն կուզեմ։ Աշուղները պնդում են թէ չի կարող պատահել, որ հայերէն անուն լինի։ Բայց Խայաթը նկատում է թէ՝ որովհետև մեր Վարշամի խօսքերը պարզ են և պայծառ, թող սրա անունը լինի «Պայծառ է» Թէ աշուղները և թէ Պայծառէն (Վարշամը) հաւանութիւն են տալիս անունին և առաջինները օրհնելով վերջինին, ճանապարհ են ձգում։ Պայծառէն ստանալով «աշուղ» անունը, դուրս է գալիս սըր-ճարանից։

Մինչև 1883 թուականը Պայծառէն պարապում էր դերձակութեամբ (միևնոյն ժամանակ ոտանաւորներ գրելով)։ Այդ թուականին ամուսնում է Աղէքսանդրապոլում։

1885 թուականին նա սովորեց թառ ածելը և սկսեց պարապել աշուղութեամբ։ Նա մինչև հիմայ էլ պարապում է Աղէքսանդրապոլում թէ դերձակութեամբ և թէ աշուղութեամբ։ Նա դերձակութեան լաւ վարպետ է. բայց այն ախտը որ բոլոր դերձակներին մանաւանդ «նոր ձևի» կարողներին կարծես ժառանգական բան է դարձել, մի քիչ էլ մեր Վարշամի (Պայծառէի) մօտ կ'գտնուի։ Այդ ժառանգական ախտը դերձակների համար ստախօսութիւնն է։

ԵՐԳԸ.

Իբրև Արաքս ես հոսում եմ,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ.
Չ'ջրուելուդ ափսոսում եմ,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

Ահա անգութ արեգակը,
Քո մէջ լցնում է կրակը.
Այրում է մինչ քո յատակը
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

Ծաղիկներդ խունանում են,
Վարդերդ օտարք տանում են.
Սոխակներիդ վանդակում են,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

Պտուղդ ծառդ չորացաւ,
Մեծ անունդ ստորացաւ.
Միթէ՞ բախտը քեզ մոռացաւ,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

Չ՚կար քեզ նման բուրաստան,
Բայց ծաղիկներդ օտարք տարան.
Սոխակներդ ո՞ւր կ՚կարդան,
Ո՞ւր է պահապանդ պատէզ։

Դու մեծահսքանչ պարտէզ էիր,
Իմ նախնեաց ասպարէզ էիր.
Ծառդ միշտ կանաչ կուղէիր,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

Ինձի փարձել է քո տէրդ,
Որ՝ ժողովեմ ծառներդ.
Նորոգենք հնացեալներդ,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

Պայծառէ Տրդատեանցս մենակ
Քո մասին ողբում եմ անյագ.
Մինչև ե՞րբ մնաս աւերակ,
Ո՞ւր է պահապանդ պարտէզ։

(Անդրէյ)

*
* *

220. **Ֆէրեադի** պ. (աղերսող բողոքող) իսկական անու-նը Խաչատուր. ծնուել է 1867 թուականին Ալէքսանդրապոլի Դիրէքլէր գիւղում: Նա երեք տարեկան հասակում ծաղկացաւից կուրանում է: Ծնողները նիւթական կողմից լաւ միջոց ունենա-լով տուել են որդուն Ղոշավանք գիւղը մի աշուղի մօտ սովո-րելու: Պատանի Խաչատուրը սուր և ըմբռնող ձիրք ունենալով, երկու տարուայ մէջ լաւ սովորում է սազ ածելը. Նա դարձեալ իրան անբաւական համարելով ծնողներին թախանձում է որ ի-րան տան մի լաւ վարպետ աշուղի մօտ: Ծնողները տեսնելով իւրեանց որդու յառաջադիմութիւնը, բերում են Խաչատուրին Ալէքսանդրապոլ և տալիս են նրան Աշըղ-Ֆիղանու մօտ աշա-կերտ: Խաչատուրը սովորում է թէ սազի և թէ ջութակի վը-րայ և դեռ 15 տարեկան ժամանակից սկսում է գրել աշուղական երգեր ու բանաստեղծութիւններ. այդ ժամանակ ինչպէս սովո-րութիւն է եղել ամէն մի արհեստաւոր վարպետի երբ որ ա-շակերտը կատարելագործւում է արհեստի մէջ, նրան «ուստա» են հանում (այսինքն համքարի մէջ վարպետ է ճանաչւում) Աշըղ-Ֆիղանին տեսնում է որ իւր աշակերտ Խաչատուրը այնուհետև ընդունակ է վարպետ կոչուելու, կարգադրում է այդ մասին ա-մէնը ինչ որ հարկաւոր է նրան վարպետացնելու: Հաւաքւում են վարպետ աշուղները, երգիչները և նրան մի վկայական են տալիս աշուղական շրջանի մէջ մտնելու: Օրինակի համար ա-ռաջ ենք բերում այստեղ Խաչատուրին տուած վկայականի պատ-ճէնը առանց փոփոխելու:

ՎԿԱՅԱԿԱՆ

'Ի հազար ութն հարիւր ութանասուն չորս ամի 18 ապրիլի. Ալէքսանդրապոլում:

Ես 'ի ներքոյ ստորին ստորագրեալս Ալէքսանդրապոլի բնա-կիչ Գէորգ Կարապետեանս (Աշըղ-Ֆիղանի) տալիս եմ զայս վկա-յականս սոյն գաւառի Դիրէքլէր գիւղի բնակիչ Խաչատուր Գէորգ-

եանն առ այն զի, նա ծառայելով ինձ մօտ աշուղութեան արհեստին հաւատարմութեամբ, այժմ սովորած լինելով, արժան համարեցինք ուստա հանել և Ներկայ եղեալ 'ի Ներքոյ գրեալ վարպետներն հետ, օրհնեցինք մեր անխափական կարգով և տուինք աշուղութեան մախլաս Աշըղ-Ֆէրեատի: Այլ և խնդրում ենք Ամենակարողն Աստուած՝ տայցէ շնորհ, համբերութիւն և բարի անուն 'ի պարծանս իւր, և մեր արհեստաւորաց ամէն:

Առ որ ստորագրեմք

Գէորգ Կարապետեանց (Աշըղ-Ֆիզահի)
Սէրովբէ Լեոնեան (Աշըղ-Ջիւանի).
Մկրտիչ Տալեան (Աշըղ-Ջամալի).
Կարապետ Կարապետեան (Աշըղ-Ջահրի).
Լեոն Լուսաւորչեան (երգիչ),
Խաչատուր Ալէքսանդրեան (երգիչ).
Յարութիւն Հաշտեան (երգիչ),
Ներկայ եղեալ Խաչատուր քահանայ Քեալաշեանց.

ԿՆԻՔ
ՔԱՀԱՆԱՅԻ

Ֆէրեատին (Խաչատուրը) առնելով աշուղներից իւր ցանկացեալ վկայականը և օրհնութիւնը, 1884 թուականին անցնում է Տաճկաստան: Պատահելով մի քանի հայաշատ քաղաքների, հասնում է Կ.-Պոլիս: Մի քանի ժամանակ Կ.-Պոլսում մնալով, վերադառնում է Ալէքսանդրապոլ: 1885 թուականից նրան ընդարձակ ասպարէզ է բացւում աշուղութիւն անելու. 1888 թուականին ամուսնանում է. այժմ ունի մի որդի:

Աշըղ-Ֆէրեատին թէև առաջ երգել և պատմել է Թուրքերէն լեզուով երգեր, հեքեաթներ, բայց այժմ բոլորովին հեռացրել է Թուրքերէնը: Հիմա երգում և պատմում է Հայերէն. և բացի դրանից պատմում է ժողովրդին Րաֆֆիի «Խենթը» «Ջալալէդդինը» «Սամուէլը» «Կայծերը» և այլն. Ծերենցի «Երկուն-

քը» Պ. Պռօշեանցի «Կուռածաղիկը»։ Նա ամէն մի պատմութեան մէջ յարմարցնելով պատշաճաւոր երգեր, երգում է. մենք անցեալներում «Նոր-Դար»ում գրել էինք Ֆէրեատու մասին (տես. «Նոր-Դար» 1890 № 48)։

Մինչև հիմա էլ Ֆէրեատին Ալէքսանդրապոլումն է և պարապում է աշուղութեամբ. մերթ այցելելով շրջակայ գիւղերը, ռամիկ ժողովրդի մէջ արծարծելու կենդանութիւն. երգելով և պատմելով ընտիր երգեր ու պատմութիւններ։

*

* *

221. **Ջուղալի** (վճիտ) իսկական անունը Յարութիւն կամ Արտեմ. Թիֆլիսեցի. ծնուել է 1865 թուականին. սրա մասին կենսագրական տեղեկութիւններ չեն հասել մեզ։

*

* *

222. **Պատուելի** իսկական անունը Մնոյք. ծնուել է 1866 թուականին. Իգտիրու Հախուերիս գիւղում։ Սրա մասին ոչ մի բան յայտնի չէ մեզ։

223. **Գիւլգեազ-օղլի** Մանուկ. Ալէքսանդրապոլ քաղաքի Թէքնէլի գիւղից։

224. **Բեանզի** (գանձարան) Հին-Նախիջևանցի։

225. **Աֆկեարի**

*

* *

Է.

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՁԵՒԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ։

Ինչպէս որ մեր բոլոր յիշած աշուղների անունները Թուրքերէնին, (բացառութիւն են կազմում մի երկուսը Պայծառէ և Պառուելի) այնպէս էլ Թուրքերէն են իրենց գրած բանաստեղծութիւնների ու երգերի անունները։

Մեր աշուղների անունները Թուրքերէն լինելու պատճառը պարզ հասկացւում է. այն է՝ որ հին աշուղները սկսած 1600 թուականներից ապրելով Թուրքաց երկրում իրենց անունները ընդունել են Թուրք աշուղներից, Թուրքերէն բառեր։ Եւ մինչև հիմայ էլ այդպէս շարունակաբար հայ աշուղները մինչև անգամ կովկասցիները իրենց մախլաս անունները կնքում են Թուրքերէն բառերով։ Հարկաւոր չէ զարմանալ որ ռամկական կամ ժողովրդական երգիչները ինչու լուսաւոր դարի մէջ էլ դարձեալ հետևելով հին կանոնին և նայելով միւս աշուղներին Թուրքերէն անուն են դնում. այդ բանը լինում է և մեր մեծ ուսումնականների մէջ։

Աշուղական երգերի անունները յարմարեցրած է Թուրքերէնին նրա համար, որ Ասիական հին եղանակներով երգուի. այսինքն երգերը յարմարեցած են լինում հին եղանակներին։ Առհասարակ աշուղական մի սովորութիւն է դարձել այս, որ նրանցից ամէն մինը իր յօրինած երգի կամ բանաստեղծութեան մէջ անպատճառ յիշում է իր անունը որպէս զի հասկացուի թէ ում ասածն է։

Աշուղները իրենց բանաստեղծութիւնները գրում են 64 տեսակ «վեզնին» (չափ կշիռ) մենք առաջ ենք բերում այստեղ նրանցից օրինակներ. մի մի տուն։

1. ՄԻՒՍՏԷԶԱՏ.

Երբ որ կը լսեմ իմ նազելուս երգելը մեղմիկ
Ինձ թւում է բամբիռ.

Ձայնը գլաւլիչ հրեշտակային խօսերը մեղմիկ
Սրտիս կուտայ դողդիւ:

Միւստէզատը այսպէս շարունակւում է և բացի այն որ առաջին երկու տողերը՝ օրինակի համար սրանը վերջանում է «իկ» և «իռ» մասնիկներով, միւս տուներու էլ ա. և գ. տողերի վերջի մասնիկները պիտի միակերպ լինին իսկ բ. և դ. տողերի վերջաւորութիւնները ա. տան վերջաւորութեան պէս «իռ»: Սրա ամեն մի տողը կազմուած կ՚լինի 14 վանկից:

2. ՂԷԼԼԷՆՏԵՐԻ ՄԻԽՍՏԷԶԱՏ.

Սրա և «Միւստեզատի» մէջ եղած տարբերութիւնն այն է, որ սրա բոլոր տողերի վերջաւորութիւնը լինում է մի տեսակ վանկից:

3. ՄՈՒԽԷՆՄԷԶ.

Ախ իմ պապի տանիցը ինձ դուրս արաւ Թշնամին,
Եկաւ տեսաւ չը օգնեց իմ սիրելի խնամին.
Ո՛չ, հաւատալ չի լինի հիմիկուայ բարեկամին,
Ինձ այս օրուան հասցրուց նրանից գալած քամին

Մուխէնմէզի ա. բ. գ. տողերի վերջին մասնիկները միակերպ կ՚լինին և դ. տողերի վերջին մասնիկները ես համապատասխան կ՚ լինին միմեանց: Սրա տողերի չափը կ՚լինի 11—15 վանկ:

4. ՂԷԼԼԷՆՏԵՐԻ ՄՈՒԽԷՆՄԷԶ:

Վարդ վարդ ասելով կեանքը գնացել է սոխակին,
Մէկ օր մէկ ժամանակ չէ հասել իւր նպատակին.
Ափսոս հազար ափսոս նրա սիրելի փափագին,
Որ չէ մնայում խղճալի պատանի հասակին.
Դարձել աւաղ ասեմ նրա երգի եղանակին,

Ունայն սիրովը ծաղրատեղ է դառել Թութակին։

Գէլէնների մուխէնմէզի ինչ վերջաւորութեամբ որ վերջանում են ա. տան տողերը, նոյն տեսակ են վերջանում և միւս տուների վերջին տողերը։ Իսկ նրանց առաջին 5 տողերը լինում են ամէն տունը մի տեսակ ոտանաւորով։ Սրա ամէն մի տունը լինում է 6 տողից, իսկ ամէն մի տողը 14 վանկից։

5. ՍԷՄՄԱՑԻ.

Առանց ցաւ աշխարհը երբէք չի լինի այնպիսի մէկ մարդ,
Ամենայն մարդ ունի մէկ ցաւ թէ ծերուկ թէ երիտասարդ.
Սա աշխարհն է ցաւերու զբաղմունքի հոգսի գանձարան,
Սորա ընծաներուն անշուշտ կ՚հանդիպի ամենայն մարդ։

Սէմմայու ա. տան ա. բ. և դ. տողերի վերջաւորութիւնը միատեսակ են, իսկ միւս տուներու բ. և դ. տողերը նոյն վերջաւորութիւնն ունին ինչ որ ա. տունը. միայն ամէն տան գ. տողի վերջաւորութիւնը ինչպէս կուզէ լինի։ Սրա ամբողջ տողը կազմուած է լինում 15-16 վանկից։ Սէմմային հազարացի ճգնաւորների պարերգն է. այդ եղանակը այնտեղից է ծնունդ առել ժողովրդի մէջ։

6. ՄԻՒՍԷՏՏԷՍ ՍԷՄՄԱՑԻ.

Արի իմ նազելի բամբիշ գեղեցիկ քաղցրախօս լեզու,
Դրախտից դուրս եկած յաւերժահարսի պէս սիրուն ես դու
Հոտոտելով հոտով լցուաւ հոտաւէտ մուշկ ծծերդ քու,
Վառած սիրտս զովացուցիր նման պայծառ առաւօտու.
Պռունկներէդ կ՚կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,
Յարաժամ ընթերակայ ես թէ ժամու և տարաժամու։

Միւսէտտէս Սէմմային կ՚ լինի ամէն տունը 6 տող, առաջին տան վերջի երկու տողերը կրկնում են միւս տուներու հետ. իսկ միւս տուներու չորս տողերն էլ վերջանում են

միատեսակ մասնիկով։ Ամէն մի տողը կազմուած է լինում 15 վանկից։

7. ԳԱԶԷԼ.

Ա՜խ պիտի ես շա՜տ սպասեմ իմ սիրելույս գալստեանը,
Խնդրում եմ, ոչ ոք չի տալ այս խօսքերիս պատասխանը.
Ե՛րբ կուգայ ինձ ասացէք վազեմ առաջ երթամ նրան,
Ընդունելութեան համար պատրաստել եմ օթեւանը։

Գազէլի՝ բացի այս ու իւրաքանչիւր տան վերջը պէտք է միատեսակ վանկով լինին, և պէտք է ա. տան ա. բ. տողերի վերջերն էլ միակերպ լինին։ Սրա ամբողջ տողը կազմուած կը լինի 15 վանկից։

8. ՂՕՇՄԱՅ.

Այլոց տունը քեզ օթեւան չի լինիլ,
Աշխատիր քեզ համար օթեւան ճարէ.
Օտարը շատ ունի հաց անուշ գինի,
Քեզ ի՞նչ օգուտ ու քո բանը դժուար է։

Ղօշմայի ա. տան ա. և գ. տողերը միատեսակ բառով կամ վանկով են վերջանում. միւս տուներու ա. բ. և գ. տողերը իրար նման մասնիկով են վերջանում, բայց նրանց դ. տողերը ա. տան, դ. տողի վերջաւորութեան պէս։ Ամբողջ մի տողը կազմուած կ՚լինի միշտ 11 վանկից։

9. ԴԻՒՊԷՅԹ.

Աչք իմ որքան նկուն մնաս,
Սիրտս քեզանից չի զատուի·
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզանից չի զատուի։

Դիւպէյթի ա. տան բ. և գ. տողերը լինում են միևնոյն

նախադասութիւնը, այդ յիշեալ նախադասութիւնը կրկնւում է և միւս տուների վերջում (դ. տողը) միւս տուների ա. բ. և գ. տողերի վերջաւորութիւնը համանման մանիկով կ՚լինի: Դիւպէյթը լինում է ամեն մէկ տողը միշտ 8 վանկ:

10. ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ.

Անպակաս շողշողում է սրտիս վերայ սուր ամեն օր,
Լսում են ականջներս բոթալի վատ լուր ամեն օր.
Օր չեղաւ որ ննջէի հանգիստ խաղաղ առանց ցաւի,
Տրվչական է ինձ մնալ տրտում ու տխուր ամեն օր:

Գազէլ-Դիւանու ա. տան ա. բ. և գ. տողերի վերջաւորութեամբ են վերջանում միւս տուների բ. և գ. տողերը: Բացի այդ, յիշեալ վերջաւորութիւնների վերջի բառերից նախընթացը վերջանում է միևնոյն մանիկով. օր. այս ցոյց տուած Դիւպէյթի մէջ «ուր» բառը «ամեն օրից» առաջ: Սա կազմուած է լինում ամեն մի տողը 15 վանկից:

11. ՔԻՆԻԱԹ ԴԻՒԱՆԻ.

Աշխատիր կեանքիս հասոր աշխարհի մէջ պայծառ լինիս,
Պայծառ արփի արփի արև, արևի պէս վառ լինիս.
Սրբութեան պարկեշտութեան կեանքին հետևիր պատուելի,
Պատուելի մարդ մարդ կատարեալ, կատարեալ ու զատ լինիս:

Ինչպէս այս տունն է, այսպէս կազմուածքով կ՚լինին և միւս տուները. նրանց բ. և գ. տողերն էլ նոյնպէս միատեսակ բառով են վերջանում ինչպէս մեր ցոյց տուած օրինակում «. . . առ լինիս»: Քինիաթ-Դիւանու ամեն տան բ. և գ. տողերի մէջ մի բառը 2 անգամ է կրկնւում և ինչ բառով որ վերջանում է գ. տողը, նոյն բառով էլ սկսւում դ. տողը մեր օրինակ բերած Քինիաթ-Դիւանու մէջ պարզ յայտնի է այդ ամենը: Սրա ամեն մի տողը կազմուած է լինում 16 վանկից:

12. ՌՈՒՊԱՅԻ ԴԻՒԱՆԻ.

Իսկ Արարչից ամէն մարդու մէկ բնութիւն տրուած է,
Որը ազատ որը գերի ցաւերու մէջ խրուած է.
Ճշմարիտ խօսողներու գաղաթները ծակ պէտք է միշտ.
Որովհետև ստի ձեռքից կեղծաւորուած մրուած է։

Ռուպայի-Դիւանին շատ նման է Գազէլ-Դիւանուն, միայն նրա տողերի վերջինի նախնթաց բառերի պէս միատեսակ վերջաւորութիւն չունին այլ վերջանում են զանազան տեսակ։

13. ԹՈՓԽԱՆԱՅ ԴԻՒԱՆԻ.

Քո փափագով վառւում եմ արի սիրական ճրատեղ ես.
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան ճրատեղ ես.
Ճանապարհդ նայելով աչքերումս լոյս չ՚մնաց,
Եկ երևոյթ տեսանեմ ազնիւ սիրական ճրատեղ ես։

Թոփխանայ-Դիւանին էլ իւր կազմութեամբ Գազէլ-Դիւանի է, միայն սրա եղանակը ջոկ է նրանը ջոկ։ Թոփխանայ-Դիւանու եղանակը դուրս է եկել տաճկաց ռմբաձիգ զօրքերի եղանակներից։

14. ՄԻՒՍԷՏՏԷՍ-ԴԻՒԱՆԻ.

Ա՜խ կորաւ հայրենիքիս փառքը բոլոր յատկութիւնը,
Շարժուեց տեղից տունը. կործանուեցաւ հաստատ սիւնը,
Գաղթելով ամբողջ ժողովուրդը օտարաց անկիւնը.
Թողնելով կալուածքները աւերուրը ողջ արդիւնը,
Այլազգունք չեն մեղաւոր մեզնից եղաւ դաւնութիւնը.
Մեր ձեռքով մեր աչքերը հանել տուեց մեր արիւնը։

Միւսէտտէս-Դիւանին՝ ամէն տունը լինում է 6 տող. վերջի 2 տողը կրկնւում է միւս տուներու հետ. իսկ միւս տուներու ա. բ. գ. և դ. տողերի վերջաւորութիւնը լինում են նոյնա-

նման ինչպէս առաջինն է։ Ամէն մի տողը կազմուած է լի-նում 15 վանկից։

15. ԴԱՍԻԹԱՆ.

Առակախօս նախնի հեղինակները,
Ինչ ասել են նրաւ արդար են ասել.
Քննելով մարդկանց նպատակները,
Որին խելօք որին յիմար են ասել։

Դասիթանը շատ նման է Ղօշմային, միայն առաջինը հիւսուած է լինում սովորաբար երկար. 10-100 տուն։ Դասիթանի բոլոր տուների դ. տողերը վերջանում են ա. տան ա. և գ. տողերի պէս և ինչպէս այս օրինակի մէջ երևում է, միշտ «ար» մասնիկը «են ասել»-ից յառաջ։ Դասիթանը աւ հասարակ լինում է առակներ, խրատական խօսքեր և այլն։

16. ՔԵՕՐ ՕՂԼԻ։

Քեօրօղլին էլ միևնոյն Ղօշման է, միայն կազմուած է լինում քաջութեան ոգի ունեցող մոքերով. Քեօրօղլի ասում են նրա համար, որ յայտնի Պարսիկ Քեօր-Օղլին այդ եղանակով է երգելիս եղել իւր դիւցազնական երգերը։

17. ՂԷԼԷՆՏԵՐԻ.

Ով մարդ հեռացիր խաբեբայ խարդախ սիրականից,
Օգուտ չի լինիր խեղճ սիրահար ձախ սիրականից.
Քեզ պէս քանի՜ անձինք խաբելով զրկել է փառքից,
Փախիր ուրեմն անամօթ անվախ սիրականից։

Ղէլէնտերին ինչպէս որ ա. տան ա. բ. և գ. տողերը միատեսակ են վերջանում, օրին. «. . . ախ սիրականից» այնպէս էլ միւս տուներու վերջին տողը լինում է . . . . ախ» մասնիկը «սիրականից» առաջ։ Իսկ միւս տուներու ա. բ. և գ.

տողերը միատեսակ են լինում վերջացած։ Սրա ամեն մի տողը բաղկացած է լինում 14 վանկից։ Դէլէնաները մի տեսակ դերվիշներ կան նրանց եղանակն է։

18. ԹԷՃՆԻՍ։

Իմ տուած յարգանքս պատուելի ընկեր,
Անկեղծ սիրելի պատիւ համարէ
Իմացիր քո սէրդ սրտումս է ընկեր,
Այրիլս քո տեսոյդ, քեզի համար է։

Թէճնիսն էլ միևնոյն Դօշմայի տեսակ է, միայն սրա ամեն տան ա. բ. գ. տողերի վերջերը թէև մի բառով են վերջանում, բայց տարբեր նշանակութեամբ. օրին. այստեղ ա. տան մէջ «ընկեր» բառը և «համարէ» բառը։ Թէճնիսի միւս տուները ա. բ. գ. տողերի վերջերը լինում են միատեսակ բառերով, բայց ջոկ նշանակութեամբ. իսկ դ. տողերը միևնոյն ա. տան, դ. տողի վերջաւորութեան պէս, դարձեալ ամենը մի նշանակութեամբ։

19. ԳԵԱՖ.

Լսիր սիրելի իմ աղաչանքս,
Արժան համար է լուր պաղատանքս.
Կեղծ մի համարիր իմ գովասանքս,
Սրտով սիրում եմ քեզ բարի կեանքս։

Գեաֆի ա. տան տողերի վերջաւորութեան պէս են վերջանում միւս տուներու դ. տողերը, իսկ ա. բ. գ. տողերը իւրաքանչիւր տան մէջ մի տեսակ են վերջանում։ Սրա ամբողջ մի տողը կազմուած է լինում 10 վանկից։

20. ԷՎԷԼԱԽՐ։

Կատարեալ լինելու համար գեղեցիկ,
Կարդա բարոյական գրքերը յատուկ.

Կարող ես նրանով լինել երջանիկ,
Անսարսափ Փրկիչը յիշելով ծածուկ։

Սա էլ միևնոյն Ղօշմայ է միայն «էյվէլ-ախըր» նշանակում է (առաջ և վերջ) այսինքն որ սրա տողերը ինչ տառով որ սկսւում են, նոյն տառով էլ վերջանում են. ինչպէս մեր օրինակում «կ» տառը։

21. ՍԵԼԻՍ.

Մի լինիր ով բնութիւն կեանքիս դաւաճան մի լինիր,
Մի լինիր ինքնահաւան մարդուն սիրական մի լինիր.
Աշխատիր առաքինի նիւթեր ժողովէ անօթդ,
Մնոտի անօգտաւէտ, բառի օթևան մի լինիր։

Սելիսի ա. բ. և դ. տողերը որ ինչ տեսակ են վերջանում, այստեղ « . . . . . ան մի լինիր» այս պէս էլ վերջանում են միւս տուներու բ. և դ. տողերը։ Սրա ամբողջ տողը լինում է 15 վանկից։

22. ՇԷՔԻ.

Ով մարդ արևելեան, բոյս կենդանութեան,
Խրախոյս Հայկական, ցոյց տուր քո տերև.
Կ՚սպասէ քո գարնան, ծառայ և իշխան,
Քեզնից ողջ Հայաստան, խնդրում է պարգև։

Շէքիի ամէն մի տողը բաժանուած է լինում երկու մասի, մի տեսակ ոտանաւորով. և ա. տան բ. և դ. տողերի վերջաւորութեամբ վերջանում են միւս տուներին դ. տողերը. իսկ նրանց ա. բ. գ. տողերը, նոյնպէս երկու մասի բաժանուած, լինում են զոյգ ոտանաւորով։ Ամբողջ մի տողը կազմուած է լինում 11 վանկից որոնք. բաժանում են 6 և 5։

23. ՍԱԹՐԱՆՃ.

Գիտութիւնը մշտապէս ով մարդ առանձին թև կուտայ,

Մշտապէս ո՜վ մարդ առաձին թև կուտայ պարգև կուտայ.
Ո՜վ մարդ առաձին թև կուտայ պարգև կուտայ լաւ ձև կուտայ,
Թև կուտայ պարգև կուտայ լաւ ձև կուտայ խիկ և կուտայ։

Սաթրանճ կնշանակէ ալուսեակաձև, սրա կանոնը լինում է այս տեսակ. բ. տողը լինում է ա. տողի բառերը միայն առաջից մի բառ թողած և վերջից աւելացրած. յետոյ երկրորդ, երրորդ, այնպէս որ ա. տողի վերջին բառը ընկնում է դ. տողի սկիզբը։ Սաթրանճի միւս տուներու վերջերն էլ լինում են ա. տան վերջաւորութեանց պէս. օրին. « . . և կուտայ»։ Սրա ամբողջ տողը կազմուած է լինում 15 վանկից։

24. ՋԻՆՃԻԼԼԱՄԱՑ.

Ջինճիլլամայ, այսինքն շղթայակապ. սրա օրինակ բերելը աւելորդ համարեցինք, որովհետև սա ոչ այլ ինչ է եթէ ոչ կամ Ղօշմայ կամ Դիւանի, կամ ինչ որ լինի, միայն ա. տան վերջին բառով սկսւում է բ տունը. իսկ բ. տան վերջինով գ. տուն ը, այսպէս շարունակաբար մինչև վերջը։

25. ԲԱՀՐԻ-ԹԱԻԻԼ

Բահրի-Թաւիլ. այսինքն ծովի տեսակ ալեքաւոր, Սրանից օրինակ բերելը աւելորդ համարեցինք. Բահրի-Թաւիլը լինում է մի գրուածք որի տողերի կազմութիւնը լինում են մինչի 160 կամ աւելի վանկերից, միայն մէջ տեղերը մանր ոտանաւորներ։

26. ԳԻԻՋԱԼԼԱՄԱ

Գիւզալլամայ, սա էլ ինչ տեսակ ուզում է լինի գրուած, միայն թէ սիրահարական լինի։

27. ԱԼԻՖԼԱՄԱ.

Այս էլ լինում է այբ ու բենական կարգով. առաջին տու-

նը կ՚սկսուի ա. տառով. երկրորդը բ. տառով մինչև վերջը։ Այդպէս է գրել Ներսէս Շնորհալի հայրապետը իւր «Առաւօտ լուսոյ» գլխերային երգը։

28. ՂԱՓՈՒԼԼԱՄԱՑ.

Այս էլ լինում է այնպիսի երգ որ հարցասական մտքով (հանելուկի ձևով) է յօրինուած, որ շատ հարցեր կ՚պարունակէ իւր մէջ։

29. ԴՕՏԱԽ-ԴԷԿՄԷԶ.

Դօտախ-Դէկմէզ, այսինքն շրթունքները չ՚դիպչող. ինչպէս ասել ենք արդէն մեր գրքի նախընթաց գլուխներում այս երգը գրում են այնպէս, որ ասելու կամ երգելու ժամանակ ամենևին շրթունքները չ՚ դիպչին իրար։

30. ԴԻԼ-ԹԱՓՐԱՄԱԶ.

Դիլ-Թափրամազ (լեզուն չ՚շարժւող) այս էլ լինում է այնպիսի բառերով կազմուած, որ կարդալու կամ երգելու ժամանակ լեզուն չի շարժուիլ տեղից։

31. ԻՑԶԱ.

Իցզան լինում է ամեն մի տունը երեք տող. այդ երեք տողերի վերջերն էլ միատեսակ են լինում և վերջինի նախընթաց բառերն էլ միատեսակ մասնիկներով են վերջանում, ամեն տողը լինում է 15 վանկ։

Մենք ասացինք որ մեր աշուղները իւրեանց բանաստեղծութիւնները գրել են 64 տեսակ կանոններով. մենք ցոյց տուինք միայն 31 հատը. իսկ մնացածները մեզ յայտնի չեն։ Գուցէ մինն էլ այս լինի, որ աշուղները մի տեսակ սովորութիւն ունին որ երգի ամեն տան առաջին տառերով կ՚կազմեն մի որևիցէ մարդու անուն. օրինակ մի երգ նուիրուած է լինում Արամ անունով մի մարդու. այդպէս այդ երգը կ՚լինի չորս տուն. առաջին տու-

նը կ՛սկսուի «Ա» տառով բ. տունը «բ» տառով գ. տունը «ա» տառով և դ. տունը «մ» տառով։

Ը.

ԱՇՈՒՂԸ ՈՐՊԷՍ ԳՐՈՂ.

Մեր յիշած աշուղների մէջ կան այնպիսիները որոնք գրել են բաւականաչափ երգեր, բանաստեղծութիւններ և բաղդ են ունեցել նրանց լոյս աշխարհ հանելու։ Մենք յիշում ենք այն աշուղների գրուածքները որոնք լոյս էն ընծայուել կամ առանձին գրքերով կամ մի որ և է հրատարակութեան մէջ։

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ. սրա բանաստեղծութիւնները առանձին գրքով լոյս են տեսած 1852 թուին. Պ. Գէորգ Ախվերտեանի հրատարակութեամբ. տպուած է Մոսկուայում Վլադիմիր Գոտեէի տպարանում։ Բացի այդ Սայեաթ-Նովի երգերից մի քանիսը տպագրուած են «Քնար-Հայկականի» մէջ։ (ժողոված. Մ. Միանսարեան)։

ՋԷՐՔԷԶ-ՕՂԼԻ։ Սրա երգերը տպագրուած են Բաքւում, բարեկրօն Գրիգոր քահանայ Գրիգորեանի հրատարակութեամբ լոյս տեսած «Սոխակ-Հայաստանի» լիակատար երգարանի գ. հատորում։

ԻՒԱՆ։ Սրա երգերը նոյնպէս վերոյիշեալ հրատարակութեան մէջ։

ԹՈՒՐԻՆՋ։ Սրա երգերը նոյնպէս վերոյիշեալ հրատարակութեան մէջ։

ԱՋԲԱՐ-ԱԴԱՄ. Սրա երգերը «Քնար-Հայկականի» մէջ և Յով. Տէր-Ոսկանեանցի «Նոր.Քնար» հրատարակութեան մէջ։

ՄԷԼՔԻՍԷԹ. Սրա երգերը «Սոխակի գ. հատորում։

ՋԱՀԷԼ-ՕՂԼԱՆ. Սրա երգերը վերոյիշեալ հրատարակութեան մէջ։

ՄԱԼԻԽԻ։ Սրա երգերը առանձին գրքով լոյս տեսան Բագւում 1884 թուականին «Սխոնի երգեր» վերնագրով. տպագրուած է Ալէք. Ղասաբեանի տպարանում։ Մալխւլի երգերը տպագրուած են և «Սոխակի» հատորներում։ Ունի և նոր երգեր անտիպ որ մտադրութիւն ունի տպագրելու։

ՇԻՐԻՆ։ Սրա երգերը թէև մի ժամանակ տպագրուած են եղել, բայց բոլորովին հետքերը կորելու մօտ էր երբ վերջերս Շուշում Զ. Սարգսեանը հրատարակեց «Նոր Քնար» վերնագրով. տպագրութիւն Միրզ. Մհտս. Յակովբեանի, 1891 թ։ Բացի այդ Շիրինի երգերը տպագրուած են և «Քնար-Հայկականի» մէջ։

ՇԱՀԻՐ-ԽԱՉԱՏՈՒՐ. Սրա երգերը անցեալներում լոյս տեսան «Շահիր-Խաչատուրի երգերը» վերնագրով։

ԶԱՐԿԵԱՐ. Սրա երգերը անցեալներում Բագւում լոյս տեսան «Զարկեարի-քնարը» վերնագրով հրատ. Գր. քահան. Գրիգորեանի։

ՍԱԶԱՅԻ. Սրա երգերը եթէ չեմ սխալւում պէտք է որ տպագրուած լինի առանձին գրքով. սա ունի և մի Տաճկերէնից փոխադրած հեքեաթ «Ամրահ և Սալվի» վերնագրով. տպագրուած «Արօր» տպարանում։

ՖԻԶԱՀԻ. Սրա երգերը լոյս է տեսած 1889 թուականին «Աշըղ-Ֆիզահու երգերը» վերնագրով, Թիֆլիս Ռօտինեանցի տպարանում։

ՋԻՒԱՆԻ։ Սրա երգերը «Աշըղ-Ջիւանու երգերը» հատոր ա. վերնագրով տպագրուած է 1882 թուականին Ալէքսանդրապոլում, Գ. Սանոյեանցի տպարանում։

«Աշըղ-Ջիւանու երգերը» 1886 թուականին նոյն տպարանում, հրատարակութիւն Տ. Թումանեանցի։

«Աշըղ-Ղարիբ՝ հեքեաթը» փոխադր. Տաճկերէնից. տպագրուած է Ալէքսանդրապոլում 1887 թ. նոյն տպարանում։

«Աշըղ-Ղարիբ՝ հեքեաթը» Թիֆլիս Մ. Վարդանեանի տպ-

պարանում 1889 թ. բ. տպագր. ինքնուրոյն երգերի յաւելուածով:

«Քեարամի և Ասլիի հէքեաթը» փոխադր. Տաճկերէնից տպագրուած է Ալէքսանդրապոլ Գ. Սանոյեանցի տպարանում, տպարանատիրոջ հրատարակութեամբ:

«Չորս երգ» (բրոշիւր) տպագրուած է Թիֆլիսում Մ. Վարդանեանցի տպարանում. հրատարակութեամբ Յ. Կապլանեանցի. 1890 թ.

Մամուլի տակ են «Աշըղ-Ղարիբի հէքեաթը» գ. տպագր. Ալէքսանդրապոլ Գ. Սանոյեանցի տպարանում և

«Ձայնագրեալ երգարան» Ս. Էջմիածնում. Ասիական եղանակներով ձայնագրեց Արշակ Բրդեան:

«Ջուլթակ» բոլորովին լոյս չտեսած երգեր. պատրաստ է տպագրութեան համար:

«Աշըղ-Ջիւանու (անտիպ) երգերը» մի յարգելի պատճառով առ ժամանակ յետաձգուած է:

Շահ-Իսմայիլի հէքեաթը» փոխադր. Տաճկերէնից պատրաստ է տպագրութեան:

Բացի սրանցից Աշըղ-Ջիւանու երգերից շատերը շարունակաբար տպագրւում են «Սոխակի» հատորներում:

ՋԱՄԱԼԻ. Սրա երգերը տպագրուած են «Սոխակի» դ. հատորում: Կարծեմ մտադրութիւն ունի լոյս ընծայելու: Ցանկանում ենք յաջողութիւն:

ԽԱՑԱԹ. Սրա երգերը Ալէքսանդրապոլում լոյս է տեսած 1890 թւին Գ. Սանոյանցի տպարանում. «Անձայն Կիթառ» վերնագրով: Տպագրութեան պատրաստ ունի եւ մի աշխատութիւն «Արբեցութեան հետեւանքը»

Մենք այստեղ յիշեցինք այն աշուղների գրուածքները որոնք կամ առանձին գրքով և կամ մի ուրիշ հրատարակութեան մէջ՝ Թուով շատ երգեր են ունեցել. թողնենք նրանց, որոնք մի կամ

մի երկու երգ բաղդի բերմամբ ունին տպագրուած մի որեւ է հրատարակութեան մէջ։

Թ.

ԱՇՈՒՂԸ ՈՐՊԷՍ ԵՐԳԻՉ-ԵՐԱԺԻՇՏ.

Ինչպէս գրքիս առաջին գլխում Նշանաբանը ցոյց է տալիս որ «ամեն աշուղ երգիչ է» մենք այդ մասին կարող ենք մի քանի խօսք ասել թէ ինչ կ՚ նշանակէ երգ և երաժշտութիւն.

> Ազգումն երաժշտական եղանակին . . . ընդոստուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին, քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ ուրախութիւն կամ ի տրտմութիւն, որպէս զերգոցն ձայն յորժամ որպէս պարտն է լինիցի վասըն այնօրէնկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն:
>
> Ներսէս Լամբրոնացի.

Թէ ինչ մեծ օգուտ են տուել ժողովրդական երգերը մեր պատմագիրներին այդ մենք գիտենք և թէ մի քանի դար առաջ երգիչները ինչ են եղել որ ժողովրդի ծէսերը աւանդութիւնները շարունակ երգելով և բերնէ բերան տալով այժմ հասել են մինչև մեր ժամանակը։ Երգ և երաժշտութիւնը շատ մեծ ազդ ունի ոչ միայն մարդու, այլ մինչև անգամ կենդանիների վրայ։ Մենք շատ օրինակներ լսած կամ կարդացած կ՚լինինք այդ մասին. մի շատ լաւ յօդուած գրուած կայ «Սոխակի» ե. համարում արժ. Ղազարոս քահանայ Յովսեփեանի «Երաժշտութեան ազդեցութիւնը» վերնագրով. որտեղից մենք միայն քաղում ենք հետևեալ կտորը. «Երբ որ բանաստեղծ Որփէոսը երգում և նուագում էր տաւղի վերայ, ծառերը, գետերը, ծովի կատաղի ջրերը, և վայրենի անասունները դադարում էին շարժւելուց և հիացած Որփէոսի գեղեցիկ նուագածութիւնն էին լսում»։ Ինչ-

պէս յայտնել է «Ս ո խ ա կ» ում որ այդ մասին աւելի ընդարձակ տեղեկութիւն տպուած կայ 1884 թուի «Նոր-Դար» ամենօրեայ թերթի №№ 167-198 համարներում բանասիրական բաժնում «Երաժշտական բնախօսական (Փիզիօլիական) ազդեցութիւնը»:

Աւելի գեղեցիկ օրինակ մենք տեսանք գրքիս Զ. գլխում թէ Աշըղ-Նիտային երգի և երաժշտութեան ազդեցութեամբ ի՜նչպէս շարժեց գաղանաբարոյ Սուլթանի խիղճը, որ այդ ածական կարծես Տաճիկ Սուլթանների համար մի առանձին յատկութիւն է:

Մեր գրքում յիշած աշուղների մէջ եղել են լաւ ձայն ունեցողներ և լաւ ածողներ, որոնք կարելի է ասել որ եղել են բուն երգիչներ և երաժիշտներ:

Ժ.

ՄԻ ԹԵԹԵՒ ԱԿՆԱՐԿ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՆ.

Մենք յիշել ենք աւելի քան 200 աշուղներ, բայց ցաւօք սրտի պէտք է ասենք որ նրանցից կէս մասի երգերը հաղիւ կարողացանք ձեռք բերել: Բայց պէտք է խոստովանել որ մեր աշուղների մէջ եղել են այնպիսի գրողներ, որոնց երգերի վրայ արժէ առանձին ուշադրութիւն դարձնել: Բայց մենք ընդհանրապէս կ'խօսենք բոլոր այն աշուղների վրայ, որոնք մեր հասարակութեանը և մասամբ էլ գրականութեանը յայտնի են եղել իւրեանց երգերով:

Աշուղական երգերը մենք կ' բաժանենք երեք մասի. Ա. կան մի տեսակ երգեր, որ թէև կէս ռամկական կամ գաւառական բարբառով և աշխարհաբար ոճով ու դարձուածքներով են գրուած, բայց շատ սահուն է և «համով» է կարդացւում: Բովանդակութեամբ մեծ մասամբ կրօնական, սիրահարական և մասամբ խրատական, բարոյական, փորձեր և այլն: Այդպիսի երգերի հեղինակներին պատկանում են Սայեաթ-Նովէն, Աղբար-Ադամը,

Մխկին-Բուրջին, Նարաշ-Ցոմնաթանը, Քեշիշ-Նովասին, Շամցի-Բալին, Նաշխունովը, Սէֆիլ-Դեօֆթարին, Զարկեարը, Մելքխէթը, Զահել-Օղլանը, Իւանը, Շիրինը, Մալխուզը և Փիղահը։

Բ. Կան մի ուրիշ տեսակ երգեր էլ որ հետզհետէ յարմարեցրած է գրականական և գրաբառ ոճին. թէև թողել են ռամկականը, բայց էլի բուն ժողովրդական բովանդակութեամբ՝ մեծ մասամբ խրատներ, փորձեր, առակներ, յետոյ ազգային և մասամբ սիրահարական։ Այդպիսի երգերի հեղինակներին պատկանում են. Աղամ-Նաղաշովը, Բլբուլեկը, Մալիֆը, Ղարիբ-Օղլանը, Ջիւանին, Զամալին, Խպաթը, Փէրիատին, Սաղային, Շահիր. Խաչատուրը Պայծառէն։

Յիշեալ աշուղները թէ աշուղական հին կանոնի ձևերով են գրում իրանց երգերը, թէ հետզհետէ նոր տեսակ (ուսումնական) ձևով։

Գ. Կան մի ուրիշ տեսակ երգեր էլ, որ հեղինակներն աշխատել են միայն տողերի վերջաւորութիւնները տեղը բերելու իսկ ինչ վերաբերում է երգի նիւթին, բովանդակութեանը այդ մասին ամենևին ուշադրութիւն չեն դարձրել. մինչև անգամ ոտանաւորը տեղը գալու համար այնպիսի բառեր են գործ ածել որ այդպիսի բառ ամենևին չկայ։

Բովանդակութեամբ աւելի սիրահարական են քան մի ուրիշ բան։ Այդպիսի երգերի հեղինակներին պատկանում են։ Խարաղ-Օղլանը, Ալուան-Օղլանը, Ղարան, Աբել-Օղլին, Շամցի-Մելքօն, Զուլալ-Օղլին, Դէյրաթին։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Սկզբից մի տեղից տեղեկացանք որ Գերահռչակ և պատուարժան Հայր Ղևոնդ Ալիշանը հայ աշուղների մասին տեղեկութիւններ ունի հաւաքած: Յայտնեցինք նրան մեր մտադրութիւնը և խնդրեցինք նրանից որ մեզ նիւթեր ուղարկէ. շատ չը անցած Յարգելի Հայրիկից ստացանք հետևեալ նամակը:

Վենետիկ Ս. Ղազար 7 Հոկտ. (25 Նոյեմբերի) 1891

Ազնիւ Պարոն

Քսան եւ աւելի տարիներ առաջ՝ իմ հրատարակած Յուշիկք Հայրենեաց գրոց երկրորդ հատորին մէջ կայ «Վիպասանութիւնք Հայոց» վերնագրաւ յօդուածմ ալ որոնց վերջերը յիշած եմ քանի մի ինձ յանուանէ ծանօթ Աշուղներ, այն է ծեր յիշածն: Առանձին տպագրուած չէ այդ. կ'յուսամ որ կրնաք այդ տեղ գտնել մէկու քով այդ գիրքը եւ քննել. եթէ այդ անկարելի ըլլայ գտնել 'ի տեղդ կամ 'ի Թիֆլիզ իմացուցէք եւ եթէ հարկ համարէք խաւրեմք երկու հատորներն ալ վասն զի առանձին չեն դատուիր:

Այս առթիւ կ'ողջունեմ պատուական հայրդ եւ յուսամ որ Շիրակայ դաշտերն եւ մերձաւոր Արագածն երկար տարիներ ալ ներշնչեն իրենց անուշակ եւ աջողակ երգեր: Եւ մնամ քու գեղեցիկ մտածութեանդ կատարելութեամբ տեսնել տպագրութեամբ:

Հ. Ղևոնդ Մ. Ալիշան.

Յարգելի վարդապետի այս նամակը մենք ստանալուն պէս, իսկոյն ձեռք բերինք «Յուշիկք Հայրենեաց Հայոց» պատուական գիրքը և բաւականին նիւթեր կարողացանք օգտուել:

Մեր խորին շնորհակալութիւնը յայտնում ենք և հետեւեալ անձանց որոնք մեզ նիւթեր հաղորդելով կարելոյն չափ օգնեցին մեր գրքի հարուստ նիւթեր ունենալուն:

Աշըղ-Մալուլին.

Աշըղ-Փիրահուն.

Աշըղ-Փէրիեատուն.

Երգիչ պ. Տիգրան Զաքարեանին.

Ուսուցիչ պ. Շմաւոն Յովսէփեանին:

[4ռ.]

Աշող
729

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080814

Արգուլ
728-729